Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունները

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի, Գեղարքունիքի, և Սյունիքի մարզերում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ իրականացվող «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ԱԺ, ՄԱԶԾ, ՕքսԵՋեն և Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամների հետ համագործակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2020

Երևան 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 5
Ներածություն 6
Մեթոդաբանություն 7
Համահամայնքային քննարկումների ձևաչափը 7
Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 9
Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 12
Կոոպերացիայի ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա 12
Բնական աղետների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների և պարենային անվտանգության վրա 13
Գյուղատնտեսական ապահովագրության ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա 14
Ֆինանսների մատչելիության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 15
Ենթակառուցվածքների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 16
Գյուղատնտեսական տեխնիկայի հետ կապված խնդիրները եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում 17
Գիտելիքի, խորհրդատվության, ծառայությունների և տեխնոլոգիաների ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 18
Որակի ապահովման խնդիրները գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման հարցերում 19
Իրացման, արտահանման, եկամուտների և հարկման ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա 19
Կառավարման, կոոուպցիայի և վստահության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա 21
Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք 22
Ա. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ 22
Բ. ԱՂԵՏՆԵՐ 28
Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 30
Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 34
Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ 41
Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ 48
Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 51

Ը. ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 54
Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ 55
Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 63
4. Սոցիալական երկխոսություն 72
Ա. ՀՈՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ 72
Բ. ԱՂԵՏՆԵՐ 78
Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 81
Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 84
Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ 89
Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ 94
Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 97
Ը. ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 103
Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ 104
Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 113
Հավելված 1. Գունային կոդավորում 119
Հավելված 2. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավոր զարգացումների քննարկման սցենարները 119
Սցենար 1. «Մայրիկը հենց այսպես էլ նկարագրում էր քեզ…» («Տղամարդիկ») 119
Սցենար 2. «Բա կարծում ես մի մարդով եզ շուռ տալը հե՞շտ է» («Մենք ենք, մեր սարերը») 121
Սցենար 3. «Կեղնի՞ մե օրմ, օր տեսնիմ էս աշխարհն ինչի՞ է ըսպես ծուռ…» («Մեր մանկության տանգոն») 123
Սցենար 4. «Էդ մեքենան ինչքան քոնն է, էդքան էլ իմն է, հասկացա՞ր…» («Խոշոր շահում») 125
Սցենար 5. «Ուրեմն ես՝ Փարսադանի տղա Մուրադս, գամ հասնեմ էստեղ՝ ինձ ասեն «նյե՞տ»…» («Հարսնացուն հյուսիսից») 126
Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 128
Հավելված 4. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով 129
Հավելված 5. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները 130
Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը 133

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում ՀՀ երեք մարզերում գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ համահամայնքային քննարկումների կազմակերպմանը: Շնորհակալ ենք նրանց մասնակցության, կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամին» և Շվեդիայի կառավարությանը՝ սույն քննարկումներն ու ամփոփումն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՄԱԶԾ «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի թիմին մշտական օժանդակության և անմիջական աջակցության համար:

Քննարկումների նախապատրաստման և իրականացման համար ոգեշնչման աղբյուր են դարձել գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք կառույցների և գործիչների եռանդուն ջանքերը: Անցած տարիներին նրանց հետևողական և նվիրված աշխատանքի արդյունքում ձևավորված գյուղատնտեսության ոլորտում հանրային քաղաքականության բարեփոխման օրակարգը հնարավոր դարձավ ամբողջականացնել և ներկայացնել քաղաքացիների, ֆերմերների, կոոպերատիվների, գյուղմթերք արտադրողների, վերամշակողների և արտահանողների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, սպառողների և ֆինանսական աջակցություն տրամադրողների շահագրգիռ քննարկմանը, լսելի դարձնել նրանց ձայնը և ամփոփել նրանց բարձրաձայնած կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները սույն փաստաթղթում:

Խորին շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարազդատ Կարապետյանին քննարկումներին մասնակցելու և արժեքավոր տեսակետներ հայտնելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ Սյունիքի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզային և համայնքային իշխանություններին քննարկումներին ակտիվ մասնակցության և բովանդակային շահագրգիռ ներդրման, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև «Արմավիրի զարգացման կենտրոն», «Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն», «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություններին, որոնց անմիջական գործուն դերակատարման շնորհիվ հնարավոր դարձավ հանրապետության երեք մարզերում ապահովել գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման խնդիրների վերաբերյալ քննարկումներին շահագրգիռ քաղաքացիների մասնակցությունը:

Ներածություն

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ իրականացվող «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ԱԺ, ՄԱԶԾ, ՕքսԵՋԵն և Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամների հետ համագործակցությամբ, ՀՀ երեք մարզերի համայնքներում 2020թ. սեպտեմբերին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման, ՀՀ պաշտպանության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումներին մասնակցել են հանրապետության շուրջ 250 քաղաքացի՝ ՀՀ Գեղարքունիքի, Արմավիրի և Սյունիքի մարզերից:

Քննարկումներն իրականացվել են գյուղատնտեսության ոլորտում վարվող պետական քաղաքականության փաստաթղթերի, ընթացիկ ծրագրերի և նախագծերի, մասնագետների հետ քննարկումների, մամուլում հրապարակումների, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄԶՄԿ փորձագետների կողմից մշակված գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման հինգ հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Համահամայնքային քննարկումների ՄԶՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄԶՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ http://www.ichd.org հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և վստահելի տեղեկությունների աղբյուր են գյուղատնտեսության զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և աղքատության հաղթահարմանն ուղղված հանրային քաղաքականության բարեփոխումների մշակման պատասխանատուների և շահագրգիռ պետական, համայնքային, հասարակական, մասնավոր հատվածի կազմակերպությունների և միջազգային զարգացման գործընկերների համար:

Մեթոդաբանություն

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների:

Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն

ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Պայմանավորված ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համաճարակի բռնկումով՝ սույն համահամայնքային քննարկումներն իրականացվել են առցանց տարբերակով՝ հնարավորինս պահպանելով ավանդական կամ ֆիզիկական մասնակցությամբ քննարկումների մեթոդաբանությունն ու միջոցները:

Առցանց քննարկումներն իրականացվել են Zoom հավելվածի միջոցով՝ ներգրավելով մինչև 100 մասնակից համահամայնքային յուրաքանչյուր քննարկման ժամանակ: Մասնակիցները բաժանվել են մինչև 10 հոգանոց վիրտուալ խմբերի Zoom հավելվածի առանձին վիրտուալ սենյակներում՝ ավանդական քննարկման նմանությամբ:

Zoom հավելվածին զուգահեռ կիրառվել է ՄՋՄԿ համահամայնքային քննարկումների THM հավելվածը, ինչի միջոցով գրառողի կողմից յուրաքանչյուր սենյակում առանձին-առանձին արձանագրվել են քննարկման մասնակիցների արտահայտած մտքերը, տեսակետները, կարծիքները: Բոլոր համակարգիչները THM հավելվածի միջոցով առցանց կապակցվել են կենտրոնական ադմինիստրատորի համակարգչին, ինչը հնարավորություն է ընձեռել համախմբել, խմբագրել, ամփոփել և արտածել վիրտուալ սենյակներում հնչած մտքերը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ ՀՀ երեք մարզերի քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների վրա. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների (Հավելված 5) և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը,

---

[1] Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրո առարկայի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

[2] Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքը առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների քննարկումը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ հնարավորությունների զարգացման նախաձեռնությունները կարող են դուրս գալ ուղեգծերից[3]:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 6): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք[4] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունները հիմնախնդիրների (Հավելված 5) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենա գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման այս կամ այն հնարավորությունը առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության

[3] Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

[4] Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Կոոպերացիայի ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա

«Մեր համայնքում կա ավտոպարկի կոոպերատիվ, որը նորմալ աշխատում է: Դրական փորձ արդեն իսկ կա»:

Քննարկման մասնակիցները, ընդհանուր առմամբ, դրական են գնահատում կոոպերատիվների դերը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման գործում: Մասնավորապես, քաղաքացիները նշում են կոոպերատիվների միջոցով անհրաժեշտ գյուղտեխնիկա ձեռքբերելու, տեխնիկական պարկ շահագործելու, տեխնոլոգիական նորարարություններ կիրառելու և նոր մշակաբույսեր մշակելու, իրացման գործընթաց կազմակերպելու և ֆինանսական միջոցներ ներգրավելու, ինչպես նաև արդյունավետ պլանավորում իրականացնելու առավել մեծ հնարավորությունների մասին: Քննարկման որոշ մասնակիցներ էլ նշում են առանձին կոոպերատիվների հաջող գործունեության օրինակներ՝ ընդգծելով կոոպերատիվների ներդրման դեպքում լավագույն փորձի ուսումնասիրության և տեղայնացման կարևորությունը:

«Կոոպերացիաներն ու հողերի խոշորացումն արհեստականորեն չեն կարող ստեղծվել, պարտադրանքով հնարավոր չէ: Դեպքեր ունենք, երկու եղբայր միասին չեն կարողանում հող մշակել, ոռոգման հարց չեն կարողանում լուծել»:

Քաղաքացիների մեկ այլ խումբ դեմ է արտահայտվում կոոպերացիաների ստեղծմանը՝ պատճառաբանելով արդեն իսկ գոյություն ունեցող կոոպերացիաների անարդյունավետությունը: Ըստ մասնակիցների՝ կոոպերացիաները ստեղծվում են արտաքին դերակատարների նախաձեռնությամբ, չեն հիմնվում գյուղացիների գիտակցված և հստակ ձևակերպված կարիքների վրա և անարդյունավետ աշխատանք են ծավալում: Կոոպերատիվների անարդյունավետ աշխատանքի պատճառների շարքում առավել հաճախ նշվում են գյուղացիների շրջանում համատեղ աշխատելու մշակույթի, շահույթն ու ռիսկը կիսելու ցանկության բացակայության ու ոչ բավարար վստահության գործոնները: Ըստ որոշ մասնակիցների՝ գերակշռում է սեփականությունը կորցնելու, հարկային դաշտ մտնելու և բյուրոկրատական քաշքշուկների մեջ ընկնելու վախը, ինչի արդյունքում նույնիսկ հողերը վաղուց լքած գյուղացիներն են դեմ արտահայտվում կոոպերատիվի ստեղծման գաղափարին: Պակաս կարևոր չեն գործող կոոպերատիվների կառավարման և համակարգման խնդիրները, կոռուպցիոն ռիսկերը:

Որոշ մասնակիցներ մատնանշում են գյուղատնտեսության ոլորտում առկա այնպիսի խնդիրներ, որոնց լուծումն առավել առաջնային է և պետք է նախորդի կոոպերատիվների ստեղծմանն ուղղված լայնածավալ ջանքերին: Նման խնդիրների շարքում են ոռոգման համակարգի արդիականացումն ու աշխատուժի համալրումը, ճանապարհների կառուցումը, գյուղմթերքի իրացման պայմանների ստեղծումը:

«Պետությունը կոոպերատիվների աջակցության տարբեր ծրագրեր է անում, բայց սայլը տեղից չի շարժվում, համակարգային փոփոխություն չի տեղի ունենում»:

Որպես կոոպերատիվների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ քայլեր քննարկումների ընթացքում նշվում են օրենսդրական բարեփոխումները, հարկային արտոնությունների և սուբսիդավորման մեխանիզմների սահմանումը, արդեն գոյություն ունեցող կոոպերատիվների փորձի, հաջողության կամ ձախողման գործոնների ուսումնասիրությունը, գիտելիքի և խորհրդատվության տրամադրումը, ոչ միայն արտերկրից, այլև մեր իրականությունից կոոպերացիաների լավագույն փորձի կիրառումը:

«Ես նախընտրում են իմ հողատարածքը մշակել, քան տալ մի մեծահարուստի, որ մեծ չարչարանքի դիմաց վեց հազար դրամ է տալու, առանց գրանցումի, առանց արտոնությունների, առանց սոցիալական փաթեթի»:

Մասնակիցների մի նշանակալի խումբ անդրադառնում է դեռևս 90-ական թվականներին տեղի ունեցած սեփականաշնորհման գործընթացի արդյունքում առաջացած հողերի մասնատվածության խնդիրներին: Փոքր հողակտորները, ըստ մասնակիցների, անհնար են դարձնում գյուղատնտեսական գործունեությամբ նշանակալի շահույթի ստացումը և արդյունավետ ագրոտեխնիկական սպասարկումը: Բացի այդ, մեծ մասշտաբ են ընդգրկում անմշակ հողերը՝ որոշ համայնքներում կազմելով հողերի 50

տոկոսը: Ընդ որում, քաղաքացիների մի խումբ անհրաժեշտ է համարում ներդնել անմշակ հողերի օգտագործման հնարավորություն ընձեռող մեխանիզմներ: Որպես նման մեխանիզմներ առաջարկվում են երկարաժամկետ վարձակալությամբ հողերի տրամադրումը, հողի սեփականության իրավունքի հանձնումը համայնքին կամ պետական մակարդակով սեփականաշնորհման նոր գործընթացի անցկացումը: Քաղաքացիների մեկ այլ խումբ նշում է, որ նման հարկադրական մեխանիզմների գործարկումը մարդու սեփականության իրավունքի կոպիտ խախտում է, և կոոպերատիվի ձևավորումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ առկա է բնական կարիք և հարգվում է անդամների սեփականության իրավունքը:

«Խոշորացումն արդեն իսկ ընթանում է գյուղերում. նա, ով կարողանում է մշակել, մշակում է, ով՝ ոչ, վաճառում է»:

Ընդհանուր առմամբ, մասնակիցներն ունեն հակասական վերաբերմունք հողերի խոշորացման և փոքր գյուղացիական տնտեսությունների՝ հողերը վաճառելու աճող միտումների նկատմամբ: Որոշ մասնակիցներ պնդում են, որ վաճառելով հողակտորը և աշխատանքի անցնելով մեծ գյուղացիական տնտեսությունում՝ գյուղացին իր բարեկեցությունն ապահովելու առավել մեծ հնարավորություն է ստանում: Մասնակիցների մեկ այլ խումբ էլ պնդում է, որ այս գործընթացի՝ ինքնահոս լինելու դեպքում գյուղացիները կարող են հայտնվել առավել բարդ սոցիալ-տնտեսական վիճակում:

Բնական աղետների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների և պարենային անվտանգության վրա

«Մեր համայնքում հարյուրավոր հեկտարներով ծիրանի այգի էր ստեղծվել, կարկուտը, սակայն, ամբողջ տարվա բերքը ոչնչացրեց»:

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման վրա բնական աղետների բացասական ազդեցությունը քննարկելիս մասնակիցները հատկապես նշում են կարկուտի պատճառով առաջացող վնասները և կարևորում հակակարկտային կայանների արդյունավետ գործարկումը: Նշվում է հակակարկտային կայանների քանակի ավելացման և դրանց խիտ տեղադրման, պետություն-համայնք համագործակցության կայացման անհրաժեշտության մասին:

«Կարկտակայաններ կան, որոնք ԱԻՆ-ի հետ չեն համագործակցում. մեկը զանգում է, թե անձրև է գալու, նոր կրակում են, կամ ամպերը գալիս-գնում են, նոր կարկտակայանն աշխատում է»:

Մասնակիցների մեկ այլ խումբ էլ, հղում կատարելով գյուղատնտեսական ոլորտի իրենց փորձին, նշում են հակակարկտային կայանների ցածր օգտակարության և կարկուտի դեմ այլընտրանքային լուծումներ մտածելու անհրաժեշտության մասին: Ըստ որոշ քաղաքացիների՝ կայանները տեղադրված չեն նպատակային վայրերում, վերջիններիս աշխատանքը համաձայնեցված չէ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հետ և չի հիմնվում օդերևութաբանական կանխատեսումների վրա, ինչի արդյունքում, օրինակ, վնասվում են կայանի շրջակա այգիները: Ըստ որոշ քաղաքացիների՝ քիչ չեն նաև կարկտաբեր ամպերի վրա սխալ հեռավորությունից կրակելու դեպքերը, ինչը մասնագիտական ցածր պատրաստվածության արդյունք է հանդիսանում:

Ի տարբերություն հակակարկտային կայանների, քաղաքացիների մի խումբ կարծում է, որ հակակարկտային ցանցերն արդյունավետ չեն և հանդիսանում են որոշ բիզնես կազմակերպությունների համար շահույթ ստանալու միջոց: Քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ փոքրամասշտաբ տարածքներում, այգիներում հակակարկտային ցանցերն արդյունավետ կարող են լինել, բայց հարյուրավոր հեկտարների պարագայում կայաններ են պետք: Միևնույն ժամանակ, որպես հակարկտային կայանների լայնածավալ կիրառմանը խոչընդոտող գործոններ նշվում են նաև գյուղացիների՝ հակակարտային ցանցերի մասին տեղյակ չլինելու և այդ ցանցերի թանկ լինելու հանգամանքները: Այս առումով, որոշ մասնակիցներ կարծում են, որ պետության սուբսիդավորման և ներդրումների կարիք կա, նշելով, որ գյուղացու մասնակցությունը ևս կարող է կարևոր լինել՝ ցանցերի և կայանների շահագործմանը պատասխանատու մոտենալու առումով:

Որոշ մասնակիցներ ընդգծում են բնակլիմայական վատ պայմանների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեության արդյունավետության և հատկապես հացահատիկային կուլտուրաների մշակման վրա: Այս առումով, թեև կարևորվում է ջերմատնային տնտեսությունների հիմնադրումը, սակայն նշվում է եղանակային պայմաններն ու գոտիականությունը հաշվի առնելու կարևորությունը:

«Քաղաքային տնտեսությունները ներկայում գրեթե չեն օգտագործում վառելափայտ, գյուղական տնտեսություններն էլ պետք է սովորեն վառելափայտը օգտագործել՝ նվազագույն վնաս տալով բնությանը»:

Քննարկման մասնակիցներն անդրադառնում են նաև գյուղատնտեսական գործունեության արդյունքում առաջացած բնապահպանական խնդիրներին, հատկապես անտառային տնտեսությունների պահպանման մարտահրավերներին: Նշվում է վառելափայտի օգտագործման ծավալները նվազեցնելու և այդ նպատակով այլընտրանքային էներգիայի օգտագործումը խթանելու անհրաժեշտության մասին: Այս առումով, քաղաքացիների մի խումբ կարևորում է գյուղական համայնքներում արևային էլեկտրակայանների կառուցումը, ինչպես նաև անհատների և կազմակերպությունների կողմից արևային էներգիայի օգտագործումը խրախուսող պետական ծրագրերը: Քաղաքացիների մեկ այլ խումբ էլ ընդգծում է անտառային տնտեսություններն արդյունավետ կերպով կառավարելու անհրաժեշտությունը և միայն վնասված ծառերը՝ որպես վառելանյութ օգտագործելու հնարավորությունները: Հատկանշական է, որ որոշ մասնակիցներ համարում են, որ վառելանյութն առկա պայմաններում չի կարող փոխարինվել էներգիայի այլ աղբյուրներով, քանի որ առավել մատչելի է և հասանելի գյուղացիներին:

Գյուղատնտեսական ապահովագրության ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա

«Ապահովագրությունից գյուղացին անպայման կշահի»:

Քննարկումների մասնակիցները կարևորում են գյուղատնտեսական գործունեության վրա բնական աղետների բացասական ազդեցության նվազեցման գործում ապահովագրական մեխանիզմների ներդրումն ու զարգացումը: Ավելին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, քննարկումներին մասնակցած քաղաքացիների մի մասի կարծիքով պետք է ներդնել գյուղատնտեսական գործունեության պարտադիր ապահովագրման համակարգ: Չնայած պարտադիր ապահովագրության նշանակալի ֆինանսական բեռին, ինչպես նաև ակնկալվող հանրային դժգոհությանը, որոշ քաղաքացիներ, հաշվի առնելով ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության փորձը, համարում են, որ գյուղատնտեսական գործունեության պարտադիր ապահովագրության օգուտները ավելի մեծ կլինեն:

«Կուզեի, որ ապահովագրությունն էլ ավելի մատչելի ու համապարփակ լիներ»:

Ընդ որում, մասնակիցների կարծիքով, պետք է ապահովագրվեն գյուղատնտեսության բոլոր ոլորտներն ու գործընթացները, մշակաբույսերի բոլոր տեսակները, ինչպես նաև անասնակերը: Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների միայն աշխատանքի ապահովագրումն արդյունավետ չէ ըստ քաղաքացիների: Վերջիններիս կարծիքով բնակլիմայական աղետների, շուկայում գնի տատանումների բացասական հետևանքները մեղմելու համար պետք է ապահովագրել ստացվող բերքը:

«Մեզ ապահովագրություն առաջարկող չի եղել: Ես մեքենայի ապահովագրության գրասենյակում հարցրել եմ, ասում են՝ գյուղապահովագրություն չեն անում»:

Մի խումբ քաղաքացիների կարծիքով, հատկապես կարևոր է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների գիտելիքի բարձրացումն ապահովագրության ոլորտում: Այս հարցում կարևորվում է նաև ապահովագրական ընկերությունների դերը՝ հանրային իրազեկման միջոցառումներ իրականացնելու և

քաղաքացիներին գյուղատնտեսական գործունեության ապահովագրության հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում: Ընդ որում, քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով ապահովագրական ընկերությունները ակտիվորեն ներառվում են իրազեկման ծրագրի մեջ, միևնույն ժամանակ, մասնակիցներից ոմանք էլ նշում են, թե ապահովագրական ընկերություններից շատերը գյուղատնտեսության ապահովագրման փաթեթներ չեն առաջարկում:

«Պարտադիր ապահովագրությո՞ն, ո՞վ պարտադրի, պետությո՞ն»:

Քննարկման մասնակիցները բարձրաձայնում են նաև ապահովագրական համակարգի ներդրման խոչընդոտներն ու սահմանափակումները: Մասնավորապես, քաղաքացիների կարծիքով ապահովագրական համակարգի ներդրման գլխավոր խոչընդոտը ապահովագրության բարձր վճարներն են և փոխհատուցման փոքր գումարը: Ոմանք նկատում են, որ այսօր էլ շատերը կմիանան գյուղատնտեսության կամավոր ապահովագրության միջոցառումներին, սակայն ֆինանսական բեռը մեծ է: Կառավարության և ապահովագրական համակարգի նկատմամբ վստահության ոչ բարձր մակարդակը, գյուղացիական փոքր տնտեսությունները, բյուրոկրատական քաշքշուկները ևս պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման խոչընդոտներ են, կարծում են քաղաքացիները:

Ֆինանսների մատչելիության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«Էդ խելացի անասնագոմերի իմաստը ես էլ չեմ հասկանում, ավելի լավ ա գյուղացուն փողը տան, ինքն իր իմացած անասնագոմը կառուցի»:

Քաղաքացիների կարծիքով, պետական սուբվենցիոն ծրագրերը և արտոնյալ պայմաններով վարկերը կխթանեն գյուղատնտեսական գործունեության և հարակից ոլորտների զարգացմանը: Քննարկումների մասնակիցները բարձրաձայնում են պետության կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում տրամադրվող սուբսիդավորման հարցը: Մասնակիցներն անհրաժեշտ են համարում պետության գործուն մասնակցությունը գյուղատնտեսական գործունեության և հարակից ոլորտների զարգացմանն ուղղված ներդրումների և ծախսերի ֆինանսավորումը, վարկային ռեսուրսների մատչելիությունն ապահովելու նպատակով: Ընդ որում, ինչպես նկատում են մասնակիցներից ոմանք, գյուղատնտեսական վարկերը պետք է տրամադրվեն արտոնյալ պայմաններով՝ ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ, քանի որ Հայաստանում գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է:

Միաժամանակ, քաղաքացիների մեծամասնությունը բարձրաձայնում է գյուղատնտեսական գործունեության զարգացմանն ուղղված պետական սուբսիդիաների և վարկային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման հարցը: Այսպես մարդիկ վարկերը ծախսում են ոչ նպատակային, չկարողանալով ժամանակին կատարել վճարումները, ինչի արդյունքում հայտնվում են բանկերի «սև ցուցակներում» և զրկվում նոր վարկ վերցնելու կամ պետական աջակցության ծրագրերից հետագայում օգտվելու հնարավորություններից: Ուստի, քննարկումների մասնակիցների մի խումբ կարծում է, թե պետությունը պետք է մեծացնի վերահսկողությունը աջակցության ծրագրերով տրված միջոցների արդյունավետ օգտագործման հարցում:

Քաղաքացիներն բարձրացնում են նաև պետական աջակցության ծրագրերի հասանելիության և մատչելության հարցերը: Ինչպես նշում են մասնակիցներից ոմանք, պետական աջակցության ծրագրերին դիմելու ընթացակարգը բավականին բարդ է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների համար, մարդիկ խուսափում են փաստաթղթային քաշքշուկներից և արդյունքում չեն օգտվում պետական ծրագրերից: Քննարկումների մասնակիցների մի խումբ էլ գտնում է, թե բավականին բարձր գրավի շեմ է սահմանված պետական աջակցության ծրագրերին դիմելու համար:

Միաժամանակ, բարձրացվում է նաև պետական աջակցության ծրագրերի հասցեականության հարցը: Ինչպես նկատում են մասնակիցներից ոմանք, ֆինանսական միջոցներ հիմնականում տրամադրվում են արդեն կայացած, խոշոր տնտեսություններին, մինչդեռ փոքր, նոր ձևավորող տնտեսություններն ավելի

շատ օժանդակության կարիք ունեն: Քաղաքացիների կարծիքով՝ պետական ծրագրերի արդյունավետություն ապահովելու համար սուբսիդավորումը պետք է թիրախավորված լինի. անհրաժեշտության դեպքում ֆինանսավորել սկսնակ գյուղատնտեսական գործունեությունը, իսկ որոշ դեպքերում էլ նախապատվությունը տալ արդեն կայացած տնտեսությունների զարգացման ծրագրերի ֆինանսավորմանը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով գյուղատնտեսության զարգացման կարևոր գրավականներից մեկը անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումն է: Ըստ մասնակիցների՝ գյուղտեխնիկայի ձեռք բերման համար տրամադրվող լիզինգային պայմանագրերը պետք է լինեն երկարաժամկետ՝ տաս և ավելի տարի, և նախատեսեն ցածր տոկոսադրույքներ: Հակառակ դեպքում լիզինգային պայմանագրերից կարողանում են օգտվել միայն խոշոր տնտեսությունները:

Ենթակառուցվածքների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«Ջուր չլինելու պատճառով մարդիկ փարեցփարի թողնում են իրենց փարածքները»:

Քննարկումների մասնակիցների կարծիքով գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման համար մեծ դեր ունի ենթակառուցվածքների զարգացումը: Մասնակիցները հատկապես առանձնացնում են ոռոգման համակարգի և ջրամատակարարման խնդիրները: Քաղաքացիների կարծիքով մշակվող հողերի ոռոգելիության մակարդակը անբավարար է, ինչը նաև ջրատար մայրուղիների, ջրանցքների, ոռոգման ներքին ցանցերի ոչ բարվոք վիճակի հետևանք է: Մասնակիցների կարծիքով ոռոգման ջրերի ծավալի նվազեցման վրա մեծ ազդեցություն ունեն նաև գետերի վրա տեղակայված հէկ-երը: Ըստ քաղաքացիների, հէկ-երի կառուցումից հետո նույնիսկ գետերի մոտ գտնվող բնակավայրերում կրճատվել են ոռոգման ջրերի ծավալները, ինչը մեծապես վնասել է գյուղատնտեսական գործունեությանը:

«Ձուկը պետք է աճի էնտեղ, որտեղ բերք ու բարիք հնարավոր չի աճեցնել»:

Քննարկման մասնակիցները նշում են, թե ձկնաբուծարանները ոռոգման ջրամատակարարման համար խոչընդոտ են: Ինչպես նկատում են բնակիչները, ձկնաբուծարանները կառուցվել են հիմնականում Արարատյան դաշտավայրում, ինչի արդյունքում գյուղատնտեսությունը մեծ վնասներ է կրել: Քաղաքացիները գտնում են, թե ձկնաբուծարանները պետք է տեղակայվեն այնպիսի վայրերում, որտեղ ոռոգման ջրի մեծ անհրաժեշտություն չկա:

«Թող ժողովուրդը սոված մնա, բայց պետությունը ջրամբարը կառուցի»:

Քննարկումների մասնակիցների մի խումբ էլ գտնում է, թե նոր ջրամբարների կառուցումը հնարավորություն կտա ոչ սեզոնային ամիսներին կուտակել ջրի անհրաժեշտ պաշարներ՝ մեղմելով ոռոգման ջրի պակասը: Քննարկումների մասնակիցների մի մասն էլ կարծում է, թե ջրի ռեսուրսներն արդյունավետ և խնայողաբար օգտագործելու լավագույն տարբերակը կաթիլային ոռոգման համակարգին անցնելն է: Քաղաքացիներից ոմանք նշում են, թե կաթիլային ոռոգման համակարգը հնարավորություն է տալիս ոչ միայն տնտեսել ջուրն, այլև բարձրացնել հողի բերքատվությունը: Միաժամանակ, մի խումբ բնակիչներ էլ գտնում են, թե կաթիլային ոռոգման համակարգը ոչ բոլոր մշակաբույսերի և հողի տեսակների դեպքում է արդյունավետ՝ առաջարկելով համակարգը ներդնել միայն նոր ստեղծվող այգիներում:

«Ավելի լավ է մտածել խոտը, ոչ թե անասունին տեղափոխելու մասին»:

Քննարկումների մասնակիցներից ոմանք գյուղատնտեսության զարգացման կարևոր գրավականներից մեկը համարում են բարեկարգ ճանապարհների առկայությունը: Ընդ որում, քաղաքացիները, առաջին հերթին, բարձրացնում են միջհամայնքային և միջպետական ճանապարհների կարևորության հարցը, նշելով, թե բարեկարգ ճանապարհներն էականորեն կնվազեցնեն ապրանքների ինքնարժեքը: Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով էլ, պետք է ուշադրություն դարձնել դաշտամիջյան

ճանապարհներին և ճանապարհի եզրով անասունների խնամքի համար անհրաժեշտ ենթակառուցվածքներին:

«Սպանդանոցի հիմնական նպատակը մսի շուկան հարկային դաշտ տանել էր»:

Քաղաքացիներն անդրադառնում են նաև սպանդանոցների խնդրին, նկատելով, թե սպանդանոցի միտքն ինքնին շատ լավն է, բայց լուրջ խնդիր է դրանց տեղակայման վայրի, ինչպես նաև կենդանիներին սպանդանոց տեղափոխելու հարցերը: Բնակիչներից ոմանք գտնում են, թե պետք է ստեղծվեն շրջիկ սպանդանոցներ, ինչը կհեշտացնի տեղափոխման գործընթացը: Միաժամանակ, քննարկումների մասնակիցների մեկ այլ խմբի կարծիքով սպանդանոցները ստեղծվում են մսի շուկան հարկային դաշտ տեղափոխելու համար, ինչը անխուսափելիորեն կհանգեցնի գյուղացիների եկամուտների և հետևաբար երկրում անասնապահության ծավալների կրճատմանը:

Գյուղատնտեսական տեխնիկայի հետ կապված խնդիրները եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում

«Գյուղատնտեսության արդիականացումն ու վերազինումը պարտադիր պետք է, հատկապես տեխնիկապես վերազինումը, քանի որ մեր հողերը շատ քարքարոտ են»:

Քաղաքացիները նշում են, որ Հայաստանում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու գլխավոր խոչընդոտներից մեկը գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունն է կամ ընդհանրապես դրա բացակայությունը: Ըստ մասնակիցների, տեխնիկայի մաշվածության պատճառով զգալիորեն նվազում է դրա օգտագործման արդյունավետությունը, մեծանում են ծախսերը: Չնայած վերջին տարիներին ձեռնարկվող որոշակի քայլերին, մասնակիցներից ոմանք կարծում են, թե գյուղտեխնիկայի թարմացմանն ուղղված քայլերը պետք է լինեն պետական և համայնքային քաղաքականությունների գերակա ուղղություններից մեկը:

Միաժամանակ, քննարկումների մասնակիցներից ոմանք ընդգծում են գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման և վերանորոգման մասնագետների պակասի հարցը, նշելով, թե սպասարկող անձնակազմի միջին տարիքը բավականին բարձր է: Ըստ մասնակիցների՝ մի քանի տարի հետո առաջանալու է մարդկային ռեսուրսի մեծ խնդիր և քիչ են լինելու այն մարդիկ, ովքեր կկարողանան շահագործել կամ վերանորոգել տեխնիկան:

«Գյուղտեխնիկան օգտագործվում է առաջին տարին, մյուս տարի այն դառնում է մետաղի ջարդոն: Այդ տեխնիկայի մասերը թանկ հաճույք են, որ գյուղացին իրեն չի կարող թույլ տալ»:

Քննարկումների մասնակիցներն ընդգծում են նաև նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման և պահպանման դժվարությունները: Ինչպես նկատում են քաղաքացիները, նոր տեխնիկա ձեռք բերելն անհատ գյուղացու համար առաջացնում է ֆինանսական դժվարություններ, պետական սուբսիդավորումը չի բավարարում, իսկ վարկային բարձր տոկոսադրույքները նոր տեխնիկայի ձեռքբերումը դարձնում են ոչ շահավետ: Միևնույն ժամանակ, որոշ քաղաքացիներ բարձրացնում են տարբեր աջակցության ծրագրերով տրամադրված գյուղատնտեսական տեխնիկայի որակի հարցը, նշելով, թե տեխնիկան անորակ է, իսկ պահեստամասերը բավականին թանկ արժեն:

«Մենք գումարներ ենք մուծում համայնքի բյուջե, միգուցե այդ գումարները հնարավոր լիներ օգտագործել անհրաժեշտ պետական ավտոպարկ ստեղծելու համար»:

Մասնակիցներից ոմանք ընդգծում են, թե հատկապես խոշորացված համայնքներում տեխնիկան չի բավարարում, իսկ մասնավոր շահագործողները շահագրգռված չեն համայնքի մյուս բնակիչներին տրամադրել իրենց տեխնիկան: Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ առաջարկում է համայնքային բյուջե կատարվող հարկային վճարներից գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերել համայնքի կարիքների համար:

«Առանց տեխնոլոգիաների և գյուղատնտեսական սարքավորումների մենք հետ ենք մնալու համաշխարհային տենդենցից»:

Քննարկումների ընթացքում բարձրացվեց նաև նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակահարմարության հարցը: Քաղաքացիները նկատում են, թե առանց ժամանակակից տեխնոլոգիաների և գյուղատնտեսական սարքավորումների հնարավոր չէ ապահովել գյուղատնտեսական ոլորտի նշանակալի զարգացում: Միևնույն ժամանակ, բարձրացվում է Հայաստանում նորագույն տեխնոլոգիաների ձեռքբերման խոչընդոտների հարցը, ինչը կապված է հատկապես մասնագիտացված խանութների բացակայության, ինչպես նաև տեխնոլոգիաների բարձր գնի հետ:

Գիտելիքի, խորհրդատվության, ծառայությունների և տեխնոլոգիաների ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«Պետք չէ խելացի ֆերմա սարքել, այլ պետք է խելացի անասնապահ ունենալ»:

Քննարկումների մասնակիցների մեծ մասը վստահ է, որ արդյունավետ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու գրավականներից մեկը «գրագետ» տնտեսության վարումն է: Ընդ որում, ինչպես նկատում են քաղաքացիները, նոր գիտելիքի և տեղեկատվության կարիք կա, ինչպես գյուղատնտեսության վարման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների և նյութերի, այնպես էլ տնտեսությունը ճիշտ կառավարելու և արտադրանքը իրացնելու հարցում: Քաղաքացիների մի մասը կարևորում է նաև իրավական գիտելիքի տրամադրումը գյուղացիներին, ինչի շնորհիվ բնակիչները կտիրապետեն սեփական իրավունքներին և կկարողանան պաշտպանել իրենց շահերը: Մասնակիցները գտնում են, որ ոլորտի ուսումնասիրությունների, համապատասխան կրթության և խորհրդատվության շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել գյուղատնտեսական գործունեության միջոցով ստացվող եկամուտները, կատարել ճիշտ պլանավորում՝ կրճատելով գյուղատնտեսական ապրանքների ավելցուկի կամ դեֆիցիտի խնդիրները:

«Գյուղացին հող մշակել չգիտի, դրա համար եկամուտ չի ստանում, այլ գոյատևում է: Եթե գյուղացին հասկանա՝ ինչպես ճիշտ վարել իր հողը, ապա նա կարող է մեծ եկամուտներ ստանալ մեր երկրում»:

Մասնակիցների մեծ մասը գտնում է, թե պետության, պետական համապատասխան կառույցների՝ նախարարությունների, մարզպետարանների և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ պետք է մշակվեն գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների կարողությունների զարգացման ծրագրեր: Ոմանք կարծում են, թե ֆորմալ կրթության ապահովումը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավասությունն է: Ուստի նախարարությունը պետք է մշակի համապատասխան դասընթացների ծրագիր գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների համար: Ընդ որում, որոշ քաղաքացիներ բարձրացնում են մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթության որակի հարցը՝ նշելով բուհերում ոլորտային ուսումնասիրությունների և պրակտիկ կրթության խնդիրների մասին: Միաժամանակ քաղաքացիների մեկ այլ խումբ նկատում է, թե մարդկանց գիտելիքի փոխանցման լավագույն մեթոդ կարող են դառնալ առանձին հաջողությունների պատմությունները:

«Երիտասարդներին պետք է բացատրել գյուղատնտեսության հնարավորությունների, իրենց անձնական շահի, հեռանկարների մասին, շահագրգռել վերջիններիս, որպեսզի զբաղվեն գյուղատնտեսությամբ»:

Ըստ քննարկումների մասնակիցների՝ գյուղերում օրհասական է երիտասարդ մասնագետների ներգրավման խնդիրը, քանի որ գյուղատնտեսների և գյուղատնտեսության հարակից ոլորտների մասնագետները ծերանում են, իսկ երիտասարդները չեն ցանկանում մնալ գյուղերում և զբաղվել գյուղատնտեսությամբ: Հետևաբար, երիտասարդների մոտիվացիայի և կրթության հարցը ևս կարևորվում է քննարկումների ընթացքում: Այս խնդիրը լուծելու համար պետությունը բացի կրթական ծրագրերից, պետք է քայլեր ձեռնարկի երիտասարդներին գյուղատնտեսության հնարավորություններն ու հեռանկարները ներկայացնելու ուղղությամբ:

«Գյուղում ապրելը դեռ չի նշանակում, որ դու ամեն ինչից հասկանում ես»:

Մասնակիցներից ոմանք նշում են կրթական ծրագրերին զուգահեռ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին արդյունավետ և նպատակային խորհրդատվության տրամադրման

անհրաժեշտության մասին: Ընդ որում, ինչպես նկատում են քաղաքացիները, խորհրդատվություն անհրաժեշտ է ինչպես տնտեսությունը արդյունավետորեն վարելու, այնպես էլ սուբսիդավորման և աջակցության այլ ծրագրերից օգտվելու, սեփական իրավունքները պաշտպանելու հարցում:

«Նորությունները միշտ գյուղացիների կողմից ընդունվում են կասկածամտորեն, քանի որ գյուղացին սովոր չէ, որ պետությունն իր համար լավ բան պետք է անի»:

Քաղաքացիները կարևորում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսական գործունեության մեջ: Սակայն, ինչպես նկատում են մասնակիցներից ոմանք, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողները գիտելիքի պակասի, ինչպես նաև նորարարությունների նկատմամբ անվստահության պատճառով թերահավատորեն են վերաբերվում նոր տեխնոլոգիաների հնարավորություններին: Հետևաբար, քաղաքացիները կարծում են, թե նորագույն տեխնոլոգիաների ներդրումը պետք է իրականացնել քայլ առ քայլ և մանրամասն բացատրելով:

Որակի ապահովման խնդիրները գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման հարցերում

«Միջազգային շուկա դուրս գալու միակ ճանապարհը մաքուր արտադրանք տալն է»:

Ըստ քննարկման մասնակիցների՝ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, սննդի անվտանգության հարցը մտահոգիչ է: Սակայն, ինչպես նկատում են քաղաքացիներից ոմանք, մեր երկիրն ունի պոտենցիալ որակյալ և մաքուր արտադրանք ապահովելու սննդի անվտանգության և որակի հստակ չափանիշներ կիրառելու դեպքում: Ինչպես նկատում են որոշ քաղաքացիներ, Կալավան համայնքն ունի օրգանական մեղրի սերտիֆիկացման փորձ, որը կարելի է զարգացնել և կիրառել այլ ոլորտներում ևս:

«Սերմերի վիճակն է շատ վատ, շատ անհասկանալի սերմեր են»:

Քաղաքացիները կարծում են, որ սերմերի որակը վերահսկելու նպատակով նույնպես անհրաժեշտ են ավելի արդյունավետ լուծումներ: Մասնակիցներից ոմանք գտնում են, թե պետք է զարգացնել տեղական սերմնաբուծությունը, իսկ ներկրվող սերմերի նկատմամբ սահմանել չափորոշիչներ և վերահսկել դրված պահանջների կատարումը: Ներկայում ներկրվող սերմերը հաճախ ոչ միայն բերք չեն տալիս, այլև վնասում են հողը, նկատում են քաղաքացիները:

«Առանց կրծողների դեմ պայքարի անասնապահության զարգացման մասին խոսք չի կարող լինել»:

Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ կարևորում է արոտավայրերի և խոտհարքների որակի պահպանման հարցը: Քաղաքացիները նշում են, թե հողի որակի համար կարևոր նշանակություն ունեցող պարարտանյութերը հատկապես վերջին տարիներին բավական անորակ են, հաճախ օգուտ տալու փոխարեն վնասում են: Պարարտանյութերի որակի չափանիշներ պետք է սահմանվեն, և պետությունը քայլեր պետք է ձեռնարկի այդ չափանիշներին համապատասխան պարարտանյութ ներկրելու կամ Հայաստանում դրանց արտադրությունն ապահովելու հարցում, կարծում են քաղաքացիները: Պարարտանյութերից զատ քննարկումների մասնակիցները բարձրացնում են նաև կրծողների դեմ պայքարի հարցը, նշելով, թե կրծողները արոտավայրերին մեծ վնաս են հասցնում, և առանց դրանց դեմ պայքարի անիմաստ է մտածել անասնապահության զարգացման մասին:

Իրացման, արտահանման, եկամուտների և հարկման ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա

«Լավրենտ ջան, ի՞նչ ա նշանակում մի փոքր դժվարություն ունենք իրացման հարցում: Ես կասեի, իրացումն ամենամեծ պրոբլեմն է: Հիմի որ մտնենք ձեր գյուղ հիսուն տոննա խնձոր կա մնացած-փչացած, ափսոս չի՞ էդ բերքը»:

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման վրա ազդող գործոնների շարքում քաղաքացիները մեծապես կարևորում են իրացման խնդիրը: Քննարկման մասնակիցները, որպես օրինակ, նշում են բրդի, խաղողի մթերման, կաթի և հացահատիկի իրացման ընթացքում առաջացող դժվարությունները: Նշվում է, որ կոնկրետ մշակաբույսերի իրացման խնդիրների բախվելով՝

գյուղացիները հրաժարվում են դրանք մշակելուց, ինչի արդյունքում, օրինակ, շուկայում անհետացել են խաղողի և սոխի որոշ տեսակներ: Ըստ որոշ մասնակիցների՝ պետք է լինի հստակ տարանջատում գյուղարտադրանքի մշակման և իրացման գործառույթների միջև. արդյունավետության բարձրացման համար գյուղացին պետք է զբաղված լինի միայն մշակմամբ:

«Նոր բիզնես եմ հիմնադրել, ջերմոցում լավ որակի սերմերից սածիլներ ենք արտադրելու և վաճառելու գյուղացիներին՝ պայմանավորվելով, որ իրենց ստացած ողջ բերքը մենք գնելու ենք: Նմանատիպ մեխանիզմներն աշխատող են և գյուղացիները մեծ պատրաստակամությամբ մասնակցում են»:

Քննարկման մասնակիցները ընդգծում են նաև գյուղատնտեսության ոլորտում պահանջարկի և առաջարկի միջև առկա անհամապատասխանությունը: Ըստ գերակա կարծիքի՝ գյուղացու առջև կանգնած ամենալուրջ մարտահրավերներից է տարվա սկզբում կոնկրետ գյուղարտադրանքի իրացման հնարավոր ծավալները կանխատեսելը և դրա հիման վրա համապատասխան մշակաբույսերն աճեցնելը: Որպես կանոն, նման կանխատեսումը հիմնվում է նախորդ տարվա իրացման ծավալների և շուկայում առաջարկված գնի վրա: Եթե, օրինակ, նախորդ տարի բարձր է եղել սմբուկի գինը, գյուղտնտեսությունները համատարած սկսում են մշակել սմբուկ, որի գինը գերարտադրության արդյունքում կրկին ընկնում է: Որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ որոշ մասնակիցներ առաջարկում են գյուղացիներին տրամադրել սպասվող պահանջարկի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն: Քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ պլանավորման և իրացման գործառույթներն արդյունավետորեն կազմակերպելու համար մթերող կազմակերպություն-գյուղատնտես փոխգործակցությունը պետք է դրվի ինստիտուցիոնալ և արդյունավետ հիմքերի:

«Էն «Մենք ենք մեր սարեր»-ի նման, որ ասում է. «Ես ոչխար ծախող չեմ, պետությունն է առնողը»: Պետք է այ էս իրացման հարցը լուծել»:

Օգտակար կարող է լինել նաև պետության՝ որպես գյուղատնտեսական արտադրանքի պատվիրատու հանդես գալը, օրինակ, բանակի կարիքների բավարարման համար:

Մթերող կազմակերպությունների հետ համագործակցության առկա խնդիրներին անդրադառնալիս՝ քննարկման որոշ մասնակիցներ նշում են մթերող կազմակերպությունների սակավաթիվ լինելու, վերջիններիս կողմից վճարումներն ուշ կատարելու և գյուղացիական տնտեսությունների հետ երկարաժամկետ պայմանագրեր չկնքելու հարցերը: Միևնույն ժամանակ, նշվում է, որ պետության կարգավորիչ դերը կարող է դրական ազդեցություն ունենալ՝ մթերող կազմակերպություններին արտոնություններ տրամադրելու կամ կոնկրետ քանակությամբ բերք մթերելու պարտավորություն սահմանելու և պայմանագրային պարտավորությունների իրականացումը վերահսկելու միջոցով:

«Մեզ մոտ ոչխար են պահում, ժամանակին կով շատ էին պահում, բայց կաթը ջրից էժան է, դրա համար իմաստ չունի, մեկին-մեկ տակ ա տալըմ»:

Այս համատեքստում քննարկման մասնակիցները նշում են մթերող և վերամշակող կազմակերպությունների կողմից գյուղմթերքի գնման ոչ տրամաբանական գների սահմանումը, երբ, օրինակ, մի շիշ ջուրը 120 դրամ է, մի լիտր կաթը՝ 80 դրամ: Վերամշակման գները, ըստ մասնակիցների, անհրաժեշտ է վերանայել և վերահսկել: Մասնակիցների մի խումբ հնարավոր լուծում է համարում գյուղատնտեսական որոշ մթերքների իրացման համար երաշխավորված գների սահմանումը, ինչի կիրառումը թույլ կտա առավել կանխատեսելի դարձնել գյուղատնտեսական գործունեությունը և կանխել գյուղմթերքի գնի սեզոնային մեծ տատանումները: Այդ պարագայում կարևոր է հատկապես շուկայական գնին մոտ և գյուղատնտեսի համար ձեռնտու գնի ֆիքսումը: Մասնակիցների մեկ այլ խումբ համարում է, որ երաշխավորված գինը հաշվի չի առնելու գյուղմթերքի որակը և սահմանելու է հնարավոր ամենացածր գինը:

«Գեղարքունիքը շուկայից հեռու է: «Գեղեցկուհի» տանձը 300 դրամով աշտարակցին գնում է, արագ վաճառում: Մենք դա չենք կարող անել հեռավորության պատճառով՝ սառնարանից հանեցիր, արագ պիտի վաճառես, չէ՝ ստիպված ես թափել»:

Մասնակիցների մի խումբ գյուղարտադրանքի իրացման հնարավորություններն ընդլայնելու տեսանկյունից կարևոր է համարում գյուղերի մերձակայքում տաղավարների և մեծածախ շուկաների կառուցումը: Նման կերպ, ըստ քաղաքացիների, կարող են լուծվել ապրանքը երկար ճանապարհ տեղափոխելու, վերավաճառողներին հանձնելու և արհեստականորեն բարձրացված գնով վաճառելու խնդիրները:

«Շուկայում վաճառվում են բրազիլական արտադրության հավեր, մինչդեռ կարելի է խթանել նույն մթերքների տեղական արտադրությունը, սովորեցնել մարդկանց»:

Քաղաքացիների մեկ այլ խումբ էլ կարծում է, որ թիրախավորած պետական միջամտություն է անհրաժեշտ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալներն ընդլայնելու ուղղությամբ: Ընդ որում, կարևորվում է նաև գյուղացիներին համապատասխան խորհրդատվության տրամադրումն ու անհատական արտահանման խթանումը: Տեղական արտադրությունը խթանելն ու արտասահմանյան արտադրանքի նկատմամբ այն մրցունակ դարձնելը նույնպես համարվում է առաջնային: Իրացման խնդիրների լուծման հնարավոր տարբերակների շարքում նշվում է նաև սառնարանային տնտեսությունների հիմնադրումը, ինչը թույլ կտա մթերքը պահեստավորել և առավել հարմար ժամանակ իրացնել:

Կառավարման, կոռուպցիայի և վստահության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա

«Մարդիկ գյուղատնտեսական վարկերը վերցնում են, գնում Քոբուլեթի»:

Քաղաքացիները հիմնականում վստահ են, որ գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունի պետական աջակցությունը: Քննարկումների ընթացքում հատկապես բարձրաձայնվում է փոքր գյուղացիական տնտեսություններին աջակցություն տրամադրելու կարևորությունը, քանի որ, ըստ մասնակիցների, ներդրումների և սուբսիդավորման մեծ մասն աջակցություն է խոշոր հողատերերին:

Քննարկման մասնակիցները հատկապես կարևորում են պետության կողմից գյուղացիական տնտեսությունների հասցեական սուբսիդավորումն ու տրամադրված միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը: Մասնակիցների մեկ այլ խումբ էլ գտնում է, որ գյուղացիական տնտեսությունը պետք է ունենա տրամադրված միջոցները որոշակի ազատությամբ տնօրինելու հնարավորություն: Ընդ որում, ըստ քաղաքացիների, սուբսիդավորումը պետք է ունենա ոչ միայն գյուղատնտեսության զարգացման, այլև սոցիալական խնդիրների հասցեագրման բաղադրիչ:

Քաղաքացիները կարևորում են նաև պետության վերահսկողությունը մթերման և սերմերի տրամադրման գործընթացներում: Առանձին մասնակիցներ կարևորում են գյուղատնտեսության և հարակից ոլորտների զարգացման երկարաժամկետ կենտրոնացված պլանավորումը՝ հողում կատարելով ԽՍՀՄ փորձին: Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, թե նման մոդելը հաշվի չի առնում համայնքների առանձնահատկությունները. պետության միջամտությունը պետք է սահմանափակվի միայն համայնքների հետ սերտ աշխատանքով, ենթակառուցվածքների զարգացմամբ և իրացման շուկաներ գտնելով:

«Կլիման, պահանջմունքները, շուկան անընդհատ փոխվում են. անհատական մակարդակով հաջողություն ունենալը անհնար է, համընդհանուր մոտեցում է պետք ձևավորել»:

Մասնակիցներից ոմանք դրական են գնահատում պետության ջանքերը գյուղատնտեսության և հարակից ոլորտների զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, որոշ քաղաքացիներն ընդգծում են սպանդանոցների ներդրումը, ոռոգման համակարգի բարելավումը որպես գյուղացիական տնտեսության

զարգացման կարևոր պայմաններ: Մասնավոր հատվածի ակտիվ ներգրավումը գյուղատնտեսության զարգացման գործում ևս կարևորում է մասնակիցների կողմից:

«Էդ խելացի անասնագոմերի իմաստը ես էլ չեմ հասկանում, ավելի լավ ա գյուղացուն փողը տան, ինքն իր իմացած անասնագոմը կառուցի, մանավանդ մանր անասնապահությամբ զբաղվողը»:

Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խմբի կարծիքով գյուղատնտեսության ոլորտում առկա են համակարգային խնդիրներ, որոնք պահանջում են համալիր լուծումներ, իսկ պետությունը և համապատասխան կառույցները բավականաչափ ակտիվ չեն: Մասնավորապես չի իրականացվում բարեփոխումների արդյունքների, առաջացած խնդիրների և դրանց պատճառների, գյուղացիական տնտեսությունների իրական կարիքների, առկա ռեսուրսների (մարդկային ներուժ, տեխնիկա, ոռոգման համակարգ, անասնակեր) և տեղանքի առանձնահատկությունների (գոտիականություն, բնակլիմայական պայմաններ, հողի տեսակ և կտրտվածություն, արոտավայրեր) խորքային ուսումնասիրություն, ինչի արդյունքում մեծաթիվ ջանքեր և ֆինանսական ռեսուրսներ ներգրավված ծրագրերը նշանակալի արդյունք չեն տալիս:

Քննարկման մասնակիցները կարևորում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր օղակների ակտիվ և համակարգված գործունեությունը: Ըստ որոշ քաղաքացիների՝ գյուղատնտեսության նախարարությունն է այն լիազոր կառույցը, որ պետք է վերհանի համակարգի առկա խնդիրները, մշակի և իրականացնի ոլորտի համալիր զարգացման ծրագրեր: Քննարկման մասնակիցներն անդրադառնում են նաև մարզպետարանների, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների և ՏԻՄ-երի դերին գյուղատնտեսության և հարակից ոլորտների զարգացման գործում: Տեղական ինքնակառավարման խնդիրների շարքում որոշ քաղաքացիներ բարձրաձայնում են խոշորացված համայնքների բյուջեի անհավասար բաշխումը բնակավայրերի միջև:

«Մարդիկ նախընտրում են երկու կիլոգրամ կարտոֆիլ գնել, քան մշակել այդ կարտոֆիլը, որովհետև ներդրվող ջանքն ու ռեսուրսը չեն համապատասխանում ստացված շահույթին»:

Քննարկման առանձին մասնակիցներ համարում են, որ գյուղատնտեսությամբ զբաղվող յուրաքանչյուր անձ, կամքի և աշխատասիրության առկայության դեպքում, կարող է զգալիորեն ավելացնել եկամուտներն առանց պետական աջակցության: Մյուս կողմից, ըստ մասնակիցների, գյուղատնտեսությունը չի դիտարկվում որպես շահավետ և ցանկալի գործունեության ուղղություն: Էականորեն ցածր է գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության և իրականացվող միջոցառումների նկատմամբ վստահությունը: Արդյունքում, գյուղական համայնքների բնակիչները, հատկապես երիտասարդները նախընտրում են վարձու աշխատանքը, հաճախ մեկնում քաղաքային բնակավայրեր կամ արտերկիր: Հատկանշական է, որ քննարկումների ընթացքում ևս մասնակիցները բարձրաձայնում են իրենց համայնքներում աշխատատեղեր ստեղծելու և գործարաններ հիմնելու անհրաժեշտությունը՝ որպես ժողովրդագրական խնդիրների լուծման կարևոր քայլ: Մասնակիցներից ոմանք առաջարկում են նաև որոշակի արտոնություններ տրամադրել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կանանց և երիտասարդներին:

Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք

Այս բաժնում ամփոփված են խնդրի շուրջ քննարկումների մասնակից քաղաքացիների ընկալումները և վերաբերմունք՝ ներկայացնելով նրանց կողմից բարձրաձայնված շահերը, դիրքորոշումները, մտադրությունները, զգացմունքները, վախերը, մտահոգությունները, արժեքները, կարծրատիպերը և համոզմունքները: Գունային կոդավորմամբ տարբերակված են մարզային քննարկումների արդյունքները, մասնավորապես.

ՀՀ Արմավիրի մարզ, 23 սեպտեմբերի, 2020թ.
ՀՀ Սյունիքի մարզ, 24 սեպտեմբերի, 2020թ.
ՀՀ Գեղարքունիքի մարզ, 25 սեպտեմբերի, 2020թ

Ա. ՀՈՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՊԵՐԱՑԻԱ

Մենք ունեցանք հողերը վաճառելու շատ տխուր դեպքեր, երբ մարդիկ ուղղակի լքեցին գյուղը և հայտնվեցին ավելի աղքատ վիճակում:

Եթե կոոպերատիվները հավելյալ հարկեր չվճարեն, դա կխթանի, որ ֆերմերները միավորվեն, ստեղծեն կոոպերատիվներ:

Հողերի խոշորացումը կտանի ինտենսիվ այգիների զարգացմանը, բայց դրա համար պետք է սուբսիդավորել:

Պետությունը կոոպերատիվների աջակցության տարբեր ծրագրեր է անում, բայց սայլը տեղից չի շարժվում, համակարգային փոփոխություն չի տեղի ունենում: Այսինքն պետությունը ոչ թե փող պետք է տա, որ ստեղծվեն կոոպերատիվներ ու հետո չաշխատեն, այլ հասկանա, թե ինչի չեն դրանք աշխատում, ինչ համակարգային փոփոխություններ են պետք:

Կոոպերացիան բավականին դժվար կլինի հողերի խոշորացման դեպքում. մարդիկ հավասար պայմաններում չեն կարող ներգրավվել, ամեն մեկը մի բան է մշակում:

Հողերի խոշորացման հետ կապված ինչքան որ շփվել եմ ֆերմերների հետ, իրենք ձգտում են խոշորացմանը, որովհետև ծախսերի կրճատում է լինում, բայց նաև էդ միավորումները համակարգելու խնդիր կա, որովհետև համակեցության կանոնները չեն կարողանում սահմանել ու արդյունավետ չի լինում, էստեղ գուցե հաջող փորձ պետք է տեսնել կամ վերապատրաստումներ անցնել: Իրականացնելու ձևի խնդիր կա, թե չէ ցանկություն կա:

Մեր վարկային կազմակերպությունը կոոպերատիվներին միշտ արտոնյալ պայմաններով էր վարկ տալիս: Մենք ունեցել ենք ֆոնդեր ու ցածր տոկոսներով վարկեր ենք տրամադրել:

Կոոպերացիաներն ու հողերի խոշորացումն արհեստականորեն չեն կարող ստեղծվել, պարտադրանքով հնարավոր չէ: Դեպքեր ունենք, երկու եղբայր միասին չեն կարողանում հող մշակել, ոռոգման հարց չեն կարողանում լուծել:

Կոոպերատիվների ստեղծման և գործուն աշխատանքի պարագայում կկարողանան համատեղ ձեռք բերել տեխնիկա և օգտագործել:

Խոշորացումն արդեն իսկ ընթանում է գյուղերում. մեկն, ով կարողանում է մշակել, մշակում է, ով՝ ոչ, վաճառում է:

Համատեղ սեփականությունը սեփականություն չի, դա ոչ ոքինն է...

Կոոպերատիվների դեպքում լավագույն փորձի ուսումնասիրություն և տեղայնացում է պետք: Մարդկանց պետք սովորեցնել, կոոպերատիվը կառավարում և համատեղ սեփականության տնօրինում է պահանջում:

Փոքր հողակտոր ունեցողները, որոնք վաճառում են իրենց հողերը, դառնում են աշխատող և իրենց ավելի լավ են զգում: Ցանկացած ֆերմեր ավելի լավ պայմաններ է ստեղծում գյուղացու համար ու ավելի բարձր գումար վճարում:

Գյուղացիները կես հեկտարը մշակելով ոչ մի արդյունքի չեն հասնի, եթե խոշորացում է նախատեսվում, պետք է լինի փոխշահավետ:

Գյուղացին հողը չի կորցնում, ստեղծում է կոոպերատիվ և համատեղ է տնօրինում:

Կոոպերատիվների ու իրենց աշխատանքի օրինակներ պետք է բերվեն ոչ թե արտերկրից, այլ մեր իրականությունից: Մեր մոտ էլ կա նման փորձ կոոպերատիվի միջոցով ցեղատեսակներ ընդլայնելու, կաթնամթերք արտադրելու...

Կոոպերացիա պետք չի ստեղծել, կարելի է ուղղակի խոշորացված համայնքներում ունենան իրենց տեխնիկան ու ժամանակ առ ժամանակ տրամադրեն փոքր հողակտորներ ունեցողներին, ովքեր հնարավորություն չունեն ո՛չ լիզինգ վերցնել, ո՛չ տեխնիկա վարձակալել:

Կոոպերատիվների ստեղծման դեմ լինելու միակ պատճառը մարդկանց հոգեբանություն է, քանի որ ամեն մեկը չի ուզում կրի ուրիշի ռիսկը ու կիսի իր շահույթը:

Միակ գյուղացին, որ մասնակցում էր այս քննարկմանը, ես եմ: Դուք խոսում եք գրքային լեզվով, մենք չունենք լավ խոսք, բայց խնդրում եմ մեզ հետ խոսեք: Ես հենց նոր եմ մշակել մեկ տոննա խաղող, ինչքան փող եք տալու ինձ: էդ վեց հազար դրամով ես ինչ կարող եմ անել, որ խոսում եք կոոպերացիաների մասին, դուք հարցրե՞լ եք գյուղացուն՝ ինը դա ուզում է, թե չէ: ես նախընտրում են իմ հողատարածքը մշակել, քան տալ մի մեծահարուստի, որ մեծ չարչարանքի դիմաց վեց հազար դրամ է տալու, առանց գրանցումի, առանց արտոնությունների, առանց սոցիալական փաթեթի:

Համախմբվելն ու կոոպերացիա ստեղծելն այսօր շատ ռիսկային է, քանի որ մարդուն ձեռ է տալիս հնարավորություններ ստեղծվի իր համար ինքն իր տեխնիկայով իր գործը միայնակ անի, քան մեկ այլ մարդու հետ:

Կա սեփականության իրավունք: Երբ ասում ես, վաճառիր քո սեփականությունը, կարծես արհամարհում ես մարդու սեփականության իրավունքը: Կոոպերատիվ պետք է ձևավորվի, եթե բնական կարիք կա, եթե դրա անդամների սեփականության իրավունքը հարգվում է:

Պետությունը ոչ մի կերպ, անգամ արտոնությունների տեսքով, չպետք է խառնվի կոոպերատիվների ստեղծման գործընթացին:

Գյուղացին էսօր շատ գործառույթներ ունի, մտածում է՝ ոնց պլանավորի, մշակի, ոնց բերքը հավաքի, ոնց իրացնի: Եթե կոոպերատիվը պլանավորելու և իրացնելու խնդիրը վերցնի, գյուղացու համար ավելի հեշտ կլինի:

Այսօր խոշորացման տենդենց կա, բայց ինչո՞ւ են պարտադրում գյուղացուն վաճառել իր հողատարածքները՝ տարբեր գործոններով արդարացնելով դա, օրինակ՝ գյուղտեխնիկայի բացակայությամբ:

Փոքր գյուղատնտեսական տնտեսությունները աստիճանաբար վերանում են գյուղից:

Օրինակ, մենք տեխնիկայի խնդիր անընդհատ ունենք, խոշոր տեխնիկա չունենք մեծ հողակտորների դեպքում: Իսկ ավտոմատ ոռոգումը, ավտոմատ տեխնոլոգիաները, կաթիլայինը և այլն արդյունավետ կլինեն, եթե խոշորանան, միավորվեն ու դա պետք է էնպես արվի, որ մարդը չվախենա միանալ էդ միավորմանը, որ փոքրը չտուժի:

Պետությունը պետք է կարողանա օգնի, աջակցություն ցուցաբերի, բայց դա չլինի համախմբման, կենտրոնացման միջոցով: Այդ մեթոդները օգտագործվել է և օգուտ չի տվել:

Մարտունիում գյուղատնտեսությունը սիրողական մակարդակի վրա է, մի քանի հոգի է դրանով զբաղվում: Առաջին պատճառը հողերի սեփականաշնորհումն էր 90-ականներին, երբ մանր-մանր կտորներով բաշխվեցին հողերը:

Գեղարքունիքում անասնապահությունը միշտ գերակշռել է: Բուսաբուծությունը միշտ, այսպես ասած, կողմնակի գործունեություն է եղել, և մարդիկ չեն համարձակվում մեծ ֆերմաներ ստեղծել՝ հողակտորները կտրտված են, փոքր են:

Գյուղատնտեսության ոլորտում երկու կարևոր խնդիր ունենք: Հողերի հետագա ճակատագիրը խիստ սուր է, դեռևս իննսունականներից՝ հողի սեփականաշնորհումից, հողերը նշանակալիորեն մասնատվել են, չեն օգտագործվում նշանակալի քանակությամբ հողեր: Երկրորդ, ինչ-որ մեխանիզմներով պետք է չմշակվող հողերը, անգամ եթե ունեն սեփականատերեր, մշակվեն այն գյուղացիների կողմից, ովքեր դրա ցանկությունն ու կարողությունն ունեն:

Մենք զարգացնելու փոխարեն ոչնչացրինք կոլեկտիվ գյուղատնտեսությունը, երբ մեծ ֆերմերները իրենց ձեռքը վերցնեն ոլորտի զարգացումը կկարգավորվի:

Հողերի միավորումն արդյունավետորեն կազմակերպելու համար պետք է ուղղակի հրաման տալ, որ բոլոր այն հողերը, որոնք չեն մշակվում, հետ են տրվում համայնքին՝ առանց որևէ փաստաթղթային և ֆինանսական բեռի:

Կոոպերատիվների առկայության դրական երևույթը այն է, որ դրամական շարժը մեծ է ու դրա շնորհիվ կկարողանան ապահովել իր մասնակիցների խնդիրների լուծումը:

Կոոպերատիվների հիմնումը լավ գաղափար է, բայց մեր համայնքում հողերը խիստ մասնատված են, խնդիրը լուծելու համար պետական ծրագիր է պետք, որ նորից բաժանում անեն:

Կոոպերատիվը չի կայանում մեր մտածելակերպի պատճառով, մենք չենք ուզում համատեղ աշխատել: Երբ ասվում է կոոպերատիվ, մարդիկ վախենում են, մտածում են հետ ենք գնում սովետական միություն, իրենց ձեռքից հողը վերցնելու են:

Անգամ իրենց հողերը վաղուց լքած մարդիկ են ընդվզում կոոպերատիվի գաղափարևին, ասում են կգանք մի փուշ կցանենք, սեփականությունը կորցնելու վախը գերակշռում է: Կրթության և բացատրելու խնդիր կա:

Եթե այդքան լավ է կոլեկտիվ համատեղ գյուղատնտեսությունը, ինչն է խանգարում կոլեկտիվները կայացնել, նույն մաքուր անասնագոմերը հիմա ունենալ:

Պետական աջակցությունը կոոպերատիվներին տրամադրվում է այսօր, բայց պետական ծրագրերից շատ քչերն են օգտվում: Պետք է հասկանալ իրական պատճառը:

Մեր մարզում կոոպերատիվների փոխարեն վերամշակող տնտեսություններ կարելի է ստեղծել, բայց միևնույն է, մենք իրացնելու խնդիր ենք ունենալու: Եթե պետությունը օժանդակի ապրանքը դուրս բերել երկրից, մենք պատրաստ ենք սկսել:

Պետությունը պետք է աջակցի գյուղատնտեսությանը: Մարտունիի տարածաշրջանում շատ հողեր չեն մշակվում. երբ ես գնում եմ սեփականատիրոջը ասում՝ տուր հողդ մշակեմ, ասում է չէ: Պետությունը պետք է որոշակի լուծումներ գտնի: Շատ մարդիկ կան, որ պատրաստ են վարձակալությամբ վերցնել, բայց երկարաժամկետ: Եթե այս մարդկանց հնարավորություն տրվի, հաստատ հարյուր հա տարածքի համար ոռոգման խնդիր էլ կլուծեն:

Եթե գյուղացիները չեն համաձայնվում իրար հետ աշխատել, ոչ մեկը չի կարող գալ դրսից, ստեղծել նրանց միջև գործուն համագործակցություն:

Կոոպերատիվի համար իրացումն ավելի հեշտ է, քան անհատի համար: Բացի այդ վերամշակող ընկերությունները կնախընտրեն մեկ պայմանագիր կնքել կոոպերատիվի հետ, քան հինգ-վեց պայմանագիր առանձին գյուղացիների հետ:

Գյուղական տարածքներում մարդիկ շատ գիտելիքի պակաս ունեն: Կոոպերատիվները պետք է հիմնեն ավելի հմուտ մարդիկ ու համակարգեն ողջ գործընթացը:

Մարդիկ կկարողանան իրար հետ համագործակցեն, ստեղծեն կոոպերացիա, եթե տեսնեն, որ արդյունավետություն կա էտ ամենից:

Կոոպերատիվների համար լավագույն տարբերակն այն է, որ ստեղծվի բարեկամների ու հարազատների կողմից:

Աշխատուժ չկա այսօր գյուղերում: Ընդունենք կոոպերատիվն ուզում է 300-400 գլուխ անասուն պահել: Ո՞վ պետք է խնամքի ու կաթնամթերքի մշակման ողջ գործընթացը կազմակերպի և անի:

Իրականում ճիշտը մեծածավալ արտադրություն կազմակերպելն է, մենք ունենք մեծագույն խնդիր, հողերի կոնսոլիդացման հետ կապված, կոոպերատիվների ստեղծումը ընդամենը մեծածավալ արտադրություն կազմակերպելու ճանապարհներից մեկն է, բայց այս ամենը լուծելու համար օրենսդրական կարգավորումներ պետք է իրականացվեն:

Կոոպերատիվների խնդիրն այն է, որ ժողովուրդը չի հավատում: Խնդիրներից է այն, որ խնամի-ծանոթ-բարեկամների համար առաջնահերթություն է տրվում: Չկա ուժեղ ղեկավար, ով կկարողանա ճիշտ կառավարել կոոպերացիաները: Մենք պատրաստված կառավարիչների կարիք ունենք:

Կոոպերատիվների չաշխատելու պատճառներից է, որ կոոպերատիվների անդամները պահանջատեր չեն: Մարդիկ պետք է պահանջատեր լինեն :

Կոոպերատիվներ մեզ մոտ կան, ստեղծվել են պետական ծրագրերի շրջանակներում և կան տարբեր համայնքներում: Հատուկ ուսումնասիրության թեմա պետք է լինի այն, թե այս գործընթացներն ինչ արդյունքների են հասցրել: Եթե մենք խոսում ենք այն մասին, որ համայնքները պետք է խոշորանան, այսինքն գյուղատնտեսությունը ևս պետք է խոշորացման գնա:

Ճանբարակում լեռնային պայմանների պատճառով հասանելի չէ ոռոգումը: Ինչպես նաև տեխնիկայի խնդիրը, կոոպերացիաները չեն գալիս այն մակարդակի, որպեսզի կարողանանք որակյալ աշխատանք իրականացնել: Գյուղացին անդադար «վազում է» տեխնիկայի հետևից: Պետք է տեխնիկայի կառավարման պարկը ճիշտ համակարգել, որպեսզի սեզոնին գյուղացին իր ճիշտ հերթն իմանա:

Կամավոր կոոպերացիան մեզ մոտ անհնար է՝ հողերը կտրտված են, հարևանների հետ միավորել չի ստացվի:

Յուրաքանչյուր կոոպերատիվ միշտ լուծարվում է, քանի որ անհատները տեխնիկան կանգնեցնում են իրենց բակում ու գնի ոչ հստակության պատճառով գյուղացին չի կարողանում հողը մշակել:

Որակյալ կաթի պահանջարկը չի բավարարվում, որովհետև տնտեսությունները փոքր են:

Մենք խնդիր ունենք փոքր, մասնատված հողակտորների: Ագրոտեխնիկական սպասարկումը փոքր հողակտորների վրա կազմակերպելու համար դասընթացներ են պետք: Ո՞նց կարող է մարդը փոքր հողակտորից եկամուտ ստանալ:

Վաղաշենում 4100 բնակիչ կա, բայց մարդիկ շատ փոքր հողակտորներ ունեն, որոնք միավորելը շատ բարդ է. մարդիկ մի տեսակ չեն վստահում իրար: Այս տարի աշխատանքային միգրացիան տուժեց, բայց

գյուղատնտեսությամբ մարդիկ չզբաղվեցին, որովհետև անընդհատ սպասում էին, թե երբ ճանապարհները կբացվեն:

Գյուղնշանակության վարելահողերի միավորման ժամանակ մոտ 15% դառնալու է ճանապարհ, գյուղացին ինչո՞վ է շահագրգռված լինելու իր սեփականությունը հանձնել այդ նպատակով:

Խնդիրը պետության աջակցության մեջ չէ, պետությունը չի կարող վերցնել մարդու հողը, սա մարդու սահմանադրական իրավունքների խնդիր է: Պետությունը չի կարող ստիպել նաև մարդուն վարձակալության տալ, դա սեփականության իրավունքի խախտում է:

Ամբողջ հողերի 70%-ի դեպքում ժառանգության խնդիր կա, որն ազդելու է հողերի միավորման վրա՝ ավելացնելով ժառանգորդի ֆինանսական բեռը:

Եթե համատեղ աշխատանքի դրական օրինակներ լինեն, մարդիկ միգուցե սկսեն կրկնօրինակել, իրենք էլ միանալ և միասին մշակել հողակտորները:

Սեփականաշնորհման արդյունքում մարդկանց փոքր հողատարածքներ բաժանվեցին, մեր մարզում բավականին մեծ թեքության վրա: Դրանք չեն միավորվում, որովհետև մարդիկ չեն վստահում իրար, մի քիչ էլ նախանձում են, համատեղ աշխատելու փորձ չունեն:

Խոշոր ֆերմերը օգնության կարիք չունի, ինքն իր գլխի ճարը տեսնում է, թույլերին պետք է օգնել, պետությունը սովորական գյուղացուն պետք է օգնի:

Այն ինչ ընդունելի է քաղաքացու համար, երբեմն անընդունելի է գյուղացու համար. գյուղացին 10սմ հողի համար կարող է եղբոր հետ կռիվ տալ: Ու զարմանալի չէ, որ ինքը պատրաստ է 10000 դրամով իր մի քանի քառակուսի մետրը պահել մինչև վերջ՝ մշակի այն, թե ոչ:

Արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծումը շատ դրական քայլ էր, սակայն կան շատ իրարամերժ հարցեր: Որոշ փոքր գյուղերը կոոպերատիվները մեծ շահութաբերությամբ աշխատում են, գումար են վաստակում, իրենց միջոցներով նոր տեխնիկա են ձեռքբերում: Սակայն կան նաև կոոպերատիվներ, որ ի սկզբանե ձեռքբերած գույքն էլ չեն կարողացել նորմալ օգտագործել: Ամեն ինչը կախված է ճիշտ և արդյունավետ կառավարումից:

Կոոպերատիվները մեր համայնքներում անօգուտ են ու երբեք չեն կարող աշխատել, քանի որ կոռուպցիոն ռիսկերը, միևնույն է, կան:

Ցանքաշրջանառությունը մեծ հողեր ունեցողներն են ապահովում, փոքրերն անընդհատ նույն բանն են ցանում:

Ընկերներ եմ ունեցել, որ ոսկին վաճառել են ու երկու տարի ավելի լավ ոսկի են գնել: Եթե այդ պահին հողի մշակումը չի ստացվում, ինչ անենք, թող աշխատեն, ուրիշ բան փորձեն:

«Եղունգ ունես, գլուխդ քորի». ոչ ոք չի մտածում միանալու մասին, միասին հոգսը կիսելու մասին: Մարդիկ հեռանկար չեն տեսնում միավորման մեջ: Ինքս փոքրիկ տնտեսություն եմ ստեղծել, փորձում եմ ինքնուրույն ինչ-որ բան անել: Հարջիսը կտրված համայնք է: Պետական մայրուղուց մոտ ինը կիլոմետր ներքև է գտնում, միջհամայնքային տրանսպորտ չկա, և միգուցե սա էլ է թևաթափ անում մարդկանց:

Հողերի սեփականաշնորհումը ճիշտ չի արվել. հողերի կտրտվածությունը չի նպաստում դրանց ինտենսիվ մշակմանը: Օրինակ Տեղ համայնքում հողերի հիսուն տոկոսն անմշակ է մնացել:

Կոոպերատիվներ չեն կարող ստեղծվել, քանի որ մարդիկ միմյանց նկատմամբ վստահություն չունեն, պատասխանատվություն կիսել պատրաստ չեն:

Քարահունջ գյուղում տեխնիկայի մեծ խնդիր կա: Կոոպերացիա չենք ստեղծում ֆինանսական խնդրի պատճառով:

Կոոպերատիվները հնարավորություն չեն ունեցել տեխնիկա գնել, քանի որ բանկերի պահանջներին չեն կարողացել բավարարել:

Կոոպերացիայի վերաբերյալ ընկալումների ու տեղեկացվածության խնդիր կա: Մարդիկ վախեր ունեն, սխալ պատկերացումներ՝ պայմանավորված սակավ տեղեկություններով:

Մեր գյուղը վերջին հիսուն տարվա ընթացքում ոչ մի տեխնիկա ձեռք չի բերել, փորձ ենք արել կոոպերատիվի միջոցով տեխնիկա ձեռքբերել, ընկել ենք քաշքշուկի մեջ, մինչդեռ հողերի մեծ մասը չեն մշակվում:

Տեխնիկական պարկի պահպանումն ու շահագործումը բավականին բարդ է, ուստի դա հնարավոր է իրականացնել միայն կոոպերատիվ ստեղծելով, հատկապես փոքր համայնքների դեպքում:

Տեղ համայնքում կա ավտոպարկի կոոպերատիվ, որը նորմալ աշխատում է: Դրական փորձ արդեն իսկ կա:

Էլոլան սառնարաններ է տեղադրել գյուղերում, որով կաթի որակը զգալիորեն բարելավվել է: Միջնորդները, օրինակ՝ կոոպերացիաները, կարող են բարձրացնել կաթի գինը: Մեզ համար ավելի շահավետ է աշխատել մեծ ֆերմերների հետ, բայց քանի որ տարածաշրջանում նրանք շատ չեն, մենք աշխատում ենք բոլորի հետ:

Բ. ԱՂԵՏՆԵՐ

Կարկուտի դեմ պետք է մի նոր բան մտածել, թե չէ ամեն տարի մի համայնքում ուժեղ կարկուտ է լինում:

Ես իմ ներդրումը արել եմ էնպիսի տեղում, որտեղ կարկուտի ռիսկ չկա, ես թանկ եմ տվել, առել էդ հողերը:

Գյուղացու համար միակ խնդիրն իրացումը չի, մի քանի տարի առաջ գյուղապետի հետ էինք, կարկուտ էր եկել ու ամբողջ գյուղը վնասել, գյուղապետը թողեց կոնֆերանսը ու շտապեց գյուղ: Չէի ուզի կենտրոնանայինք ու նշեինք միայն իրացումը:

Հակակարկտային կայանները շատ ժամանակ արդյունավետություն չեն տալիս, որովհետև նրանք տեղադրված չեն նպատակային վայրերում կամ նրանց արդյունավետությունը չի եղել: Դեպքեր են եղել, որ կայանի շրջակա այգում կարկուտը ամեն ինչ վերացրել է:

Գազագեներատորային համակարգերը ձևավորված կարկուտը փորձում են հալեցնել, այսինքն՝ կախված կարկտային ամպերի չափերից, հնարավոր է կարկուտ տեղա, կամ չտեղա: Իսկ սովետական համակարգերը կարկուտը ցրում էին:

Զենիթային համակարգերը պետք է այնքան խիտ դրվեն, որ հինգ հարյուր մետրի վրա կարողանան պաշտպանել կարկուտից:

Պետք է հակակարկտային կայաններից ավելի հզոր գործիքներ դնել գյուղերում, որոնք ավելի արդյունավետ լինեն, օրինակ ԽՍՀՄ-ում գործող «Պուշկաները»:

Հակակարկտային կայաններով փոխարինել հին «հրանոթները» ամենամեծ սխալն է:

Հակակարկտային ցանցերի տեղադրումը պետք է մի փոքր էժանացնել, որ բոլորը կարողանան հնարավորություն ունենան տեղադրել:

Պետությունը պետք է հակակարկտային ցանցերի գնման հիսուն տոկոս ծախսը իր վրա վերցնել, եղած սուբսիդավորումը շատ քիչ է:

Հակակարկտային կայանները պետք է ավելացնեն ինչքան հնարավոր է շատ, միգուցե այդ դեպքում այդ կայաններն ինչ-որ չափով օգտակար լինեն:

Գյուղացիք բողոքում են, որ կրակում են էդ կայանները, երկու իրար կողքի գյուղերի դեպքում մեկին հաստատ վնասում են:

Թուրքիայի սահմանից էն կողմ, Կողբի սարի վրա, որ ամպ եղավ, ինձ մոտ անձրև ա գալիս, մի սմ էն կողմ եղավ էդ ամպը, անձրև չի գա: Հարցը էն ա, որ հակակարկտային կայանների տեղադրումը չեն համաձայնեցրել օդերևութաբանական կայանների վիճակագրության հետ:

Կարկտակայաններ կան, որոնք ԱԻՆ-ի հետ չեն համագործակցում. մեկը զանգում է, թե անձրև է գալու, նոր կրակում են, կամ ամպերը գալիս-գնում են, նոր կարկտակայանն աշխատում է:

Պետք է ճիշտ հետևեն թե կարկտաբեր ամպերը ինչ հեռավորության վրա են ու ճիշտ կրակեն որպեսզի օգուտ լինի: Միայն կայանի առկայությունը քիչ է, պետք է դրանց ճիշտ օգտագործման մասնագիտական օժանդակություն էլ լինի:

Սովետի ժամանակ, Քարակերտում հրանոթները աշխատում էին, կրակում էին, բայց հարցն էն ա, որ ով ծանոթ ուներ, բերեց էդ կայանը դրեց իրա հողի մեջտեղը, պիտի դնեն ամպի ճանապարհին, որտեղ ամպերը կազմավորվում են:

Ունենք շատ խորքային հորեր: Թեև դրանց համատարած օգտագործումը նույնպես կարող է շատ լուրջ բնակլիմայական խնդիրներ առաջացնել: Սրանով կարող ենք օգտագործել այն հողերը, որոնք ավանդաբար անմշակ են եղել:

Պետք է անպայման լինի պետություն - համայնք համագործակցություն, որպեսզի հակակարկտային կայանները նորմալ աշխատեն:

Գորիսում չկան հակակարկտային կայաններ: Պետք է պետությունը ներդրում կատարի ու կայանները տեղադրեն. գյուղացիները չպետք է գումար հավաքեն դրա համար:

Սյունիքի մարզում չկան ո՛չ հակակարկտային ցանցերը, ո՛չ հակակարկտային կայաններ: Առաջարկում ենք, որպեսզի պետությունը գյուղացու տված հարկերից գումար տրամադրեն ու ստեղծեն մեր ցանցերը ու կայանները, բայց գումարի մի փոքր մասը պետք է գյուղացին տա, որպեսզի պատասխանատվություն ունենա ցանցերի և կայանների նկատմամբ:

Հարժիսում բավականին մեծ ցանքատարածություններ են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել: Գյուղտեխնիկայի և ժամանակի խնդիր ևս կար:

Կլիմայական պայմաններն էին վատ, ցորենը չհասցրեց բարձրանալ, որ մեքենան բռնի, նորմալ քաղեն, անասնակեր խոտն էլ չի եղել էս տարի, լուրջ խնդիր են մարդիկ ունենալու

Դաշտավարությամբ զբաղվելու դեպքում բնական աղետներից տուժում ենք, բայց չէի ասի, թե դրանք հաճախակի են:

Կարկտապաշտպան ցանցերից նույնպես չեն օգտվում գյուղացիները՝ քանի որ տեղյակ չեն, և ձեռնտու չի գյուղացու համար:

Սյունիքի մարզում կարկտահարության դեմ պայքարի որևէ միջոց չկա. կարծես խորթ ծնողի երեխա լինենք:

Մեզ մոտ՝ Գորիսում ընդհանրապես թութ չկար, մյուս բոլոր մրգերը նույնպես շատ քիչ են: Մեղվապահներն են բողոքում, ունեն մեղուների կորուստ:

Անտառային տնտեսությունը կարող է վարվել գրագետ կերպով. վառելիք կարող են դառնալ վնասված ծառերը: Քաղաքային տնտեսությունները ներկայում գրեթե չեն օգտագործում վառելափայտ, գյուղական տնտեսություններն էլ պետք է սովորեն վառելափայտը օգտագործել՝ հնարավորինս քիչ վնաս տալով բնությանը:

Գյուղատնտեսությունը ՀՀ-ում գերակա ուղղություն է, և եղանակային այս կատակլիզմների պարագայում մտածելու կարիք կա. մենք բոլորս պետք է մասնակցենք առաջին հերթին շրջակա միջավայրի պահպանության, և հետո՝ գյուղատնտեսական բարիք ստանալու գործին:

Մարդիկ ստիպված են օգտագործել և ունենալ վառելափայտ: Գազը կարող է կտրվել, թանկանալ, այդ պատճառով մարդիկ նախընտրում են փայտ վառել: Խնդիր է այն, որ փայտը թանկացավ, թեև գազը, վառելիքը չէին թանկացել:

Փայտանյութ քիչ սպառելու համար պետք է գյուղացուն այլընտրանքային էլեկտրաէներգիա առաջարկել, օրինակ արևային էներգիայի կայաններ օգտագործել:

Որոշ գյուղացիներ իրենք են որոշում արևային էներգիան օգտագործել, բայց դեպքերի մեծամասնությունում աջակցություն և արտոնյալ պայմաններ պետք է առաջարկվեն գյուղացիներին՝ արևային էներգիայի օգտագործումը խթանելու համար:

Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրությունից գյուղացին անպայման կշահի: Օրինակ՝ 2015թ. կարկուտից գյուղը զգալի վնաս կրեց, սակայն պետությունը միայն փող տվեց, որով գրեթե ոչինչ հնարավոր չեղավ անել... Միայն չորս տարի հետո նոր ծառերը սկսեցին բերք տալ, իսկ այդ ընթացքում գյուղացին ուղղակի տուժում էր, որովհետև տրված գումարով գրեթե ոչ մի վնաս չկարողացանք փակել:

Պարտադիր ապահովագրությունը կախված է գումարի չափից, օրինակ էնպիսի գումար չսահմանեն, որ մարդիկ չկարողանան վճարել:

Ապահովագրությունը անում են ցրտահարություն, կարկտահարության, հրդեհի համար առանձին: Շատ այգիների համար սա ձեռնտու չէ: Եթե ես ցրտահարության համար եմ պայմանագիր կազմել, եթե կարկուտ է գալիս, ես ոչինչ չեմ ստանում: Այնպիսի միջինացված բան է պետք մտածել, որ գյուղացին կարողանա ճիշտ օգտվել:

Ապահովագրություն-գյուղացի-կառավարություն համակարգ է պետք կազմել. մենք վերցնենք գումարը, տանք ապահովագրողին, ով բանկում կփակի մեր գումարը: Այսինքն մտցնել սուբսիդավորվող համակարգ:

Պարտադիր ապահովագրության դեպքում գյուղացին լուրջ խնդիրներ կունենա:

Շուկայում ապրանք ունեցողը գնում ա վաճառողի մոտ, չէ՞, ես ունեմ հինգ հա ծիրանի այգի, որից 410 կգ եմ հավաքել, անցած տարի 24 տոննա եմ ունեցել, ցրտահարվեց էս տարի, ապահովագրական ծառայությունները չեկան ինձ ասեն՝ Գևորգ ջան, քո գումարը տուր, քո ապրանքը ես ապահովագրեմ:

Կամավոր ապահովագրություն ցանկացողները այսօր էլ շատ են, բայց գումարի խնդիր ունեն:

Գյուղատնտեսության ապահովագրությունը տարբեր համայնքների համար տարբեր ցուցանիշներ են գործում, սա պետք է վերանայվի:

Փոխհատուցումը վնասի չափից է կախված լինելու. պարզ է, որ ապահովագրողները հարյուր տոկոսով չեն փոխհատուցի վնասը: Բայց սանդղակը կախված պետք է լինի ներդրված աշխատանքից ու կրած վնասից: Օրինակ՝ այս տարի ցրտահարություն եղավ, և շատ լավ էր, որ որոշ չափով ծիրանից կրած վնասը փոխհատուցվեց:

Եթե անգամ սպասվող բերքի 30-40% արժեքը փոխհատուցեն, գյուղացին շատ գոհ կլինի:

Մեզ մոտ երրորդ սովխոզ կա, իրենք ապահովագրել են, բայց ապահովագրողները չեն համագործակցում, ապահովագրողները տեղյակ չեն ես ինչ ծախսեր եմ արել:

Մեքենայի ապահովագրությունն էլ սվիններով դիմավորեցին, բայց աստիճանաբար մարդիկ հասկացան, որ դա ճիշտ քաղաքականություն էր: Նույնն էլ լինելու է գյուղատնտեսական ապահովագրության դեպքում:

Գյուղացու համար կարևոր և նպատակային ձև է ապահովագրությունը, որովհետև գյուղատնտեսությունը մեծ ռիսկայնություն ունի: Վատ է այն, որ ապահովագրական գումարը միանգամից են ուզում գյուղացուց, պիտի փուլային սարքեն, որ կարողանան վճարել:

Պարտադիր ապահովագրությու՞ն, ո՞վ պարտադրի՝ պետությու՞նը, մենք էսօր ուզում ենք անթիվ անհամար ծառեր դնենք, ես հինգ հազար ծառ ունեմ խփած, ոչ մեկը ինձ չի ասում ապրես, արի քեզ տարեկան մի դրամ փող տամ: Ես ինչքա՞ն թթվածին եմ ստեղծում իմ 17 հա այգով:

Ծիրանի դեպքում մարդիկ 40-50 հազար դրամի ներդրում արեցին ապահովագրության համար, բայց ցրտահարության դեպքում անգամ մինչև 70 հազար դրամի փոխհատուցում ստացան:

Ճիշտ կլինի, որ անցնեն բերքի ապահովագրությանը, ոչ թե ծախսի ապահովագրությանը:

Ապահովագրությունը բոլոր տեսակ աղետների դեպքում պետք է առաջարկվի, ոչ թե ինչ-որ մի բնական աղետի դեպքում:

Ապահովագրում է ոչ թե բերքը, որը գյուղացին պետք է ստանա, այլ քո աշխատանքը: Այս դեպքում ապահովագրությունը շատ անիմաստ է ստացվում: Ապահովագրությունը փոխհատուցում է միմիայն կատարված ծախսերը, այլ ոչ հավանական ստանալիք բերքի ողջ գումարը, իսկ դա գյուղացու համար ձեռնտու չէ:

Եթե ապահովագրում են միայն հրդեհի դեպքում, դա վտանգավոր նախադեպ կարող է լինել, քանի որ երբեմն փոխհատուցման գումարներն ստանալու համար մարդիկ կարող են նաև վառել իրենց այգին:

Պետք է ոչ թե ապահովագրություն տան գյուղացուն, այլ անվերադարձ գումարներ՝ իրենց հողատարածքը մշակելու համար:

Եղել են մարդիկ, որ ապահովագրել են, իրենց աշխատանքի գումարն է փոխանցվել, այլ ոչ թե բերքի համար վճարվող գումարը: Գյուղացին եթե մի տոննա բերք ունի, դրա համար պետք է ստանա գումար:

Աշխատանքի ապահովագրությունից գյուղացին ոչ մի օգուտ չի ստանում:

Մարդիկ այնքան շատ են պարտքերի տակ, որ հողերը վաճառելու միտում եմ նկատում, բայց չի կարելի էս գործընթացն ինքնահոսի թողնել, որովհետև գյուղացին կարող է որևէ այլ կերպ չկարողանալ իր զբաղվածությունն ապահովել:

Ապահովագրականից մեզ մոտ էլ են եկել, հանդիպել են, բացատրել են, շատ մարդիկ էին ցանկանում, բայց գումար չունեին, թեկուզ տարատեսակ վճարում լիներ, մարդիկ գուցե չվախենային ապահովագրել:

Սպանդանոցների իրավիճակը շատ նման է ապահովագրության ներդրմանը. ինքնըստինքյան դա լավ քաղաքականություն է, պետք է ներդրել, որովհետև դա առնչվում է սննդի անվտանգությանը:

Ցրտահարության հետ կապված ոչ մի խնդիր պետությունը չի կարող լուծել: Դրա համար ապահովագրական շահավետ տարբերակներ է պետք մտածել:

Կուզեի, որ ապահովագրությունն էլ ավելի մատչելի ու համապարփակ լիներ, որ գյուղացիները օրինակ կարկուտից շատ չտուժեն:

Հակակարկտային կայանները շատ արդյունավետ են, իսկ հակակարկտային ցանցերը պարզապես բիզնես են:

Այգիների համար ձեռնտու է հակակարկտային ցանցեր լինեն, բայց բարձր գնի պատճառով ձեռ չի տալիս գյուղացուն, պետք է գնի վերանայում տեղի ունենա:

Մարտունու տարածաշրջանում ո՛չ ԽՍՀՄ տարիներին, ո՛չ հիմա չկան հակակարկտային կայաններ, բայց իհարկե, դրանց առկայությունը խիստ կարևոր է:

Հակակարկտային կայանները ոչ միշտ են արդյունավետ, մյուս մարզերի փորձից կարող եմ ասել:

Հակակարկտային կայանները ընդհանուր առմամբ օգտակար կլինեն, եթե իրականում աշխատեն:

Շողակաթ համայնքում հարյուրավոր հեկտարներով ծիրանի այգի էր ստեղծվել, կարկուտ սակայն ամբողջ տարվա բերքը ոչնչացրեց: Որոշ տարածքներում հակակարկտային ցանցերն արդյունավետ են, բայց հարյուրավոր հեկտարների պարագայում կայաններ են պետք:

Ջերմատնային տնտեսությունները սուբսիդավորելը լավ է, բայց պետք է Հայաստանի եղանակային պայմանները, գոտիականությունը հաշվի առնել: Մեզ մոտ դա կա՛ մ չի աշխատի, կա՛մ շատ թանկ կլինի:

Ապացուցված փաստ է, որ կարկտացրող կայանները քիչ ՕԳԳ ունի, պետք է դադարեցնել այդ ծրագրերի իրականացումը և մտածել այլընտանքային ծրագրեր:

Մարտունու տարածաշրջանում մենք տարեցտարի, եղանակով պայմանավորված, խնդիրներ ենք ունենում. տարին չորային էր, գարունը ուշ սկսվեց և խոտը հինգ անգամ պակաս ստացվեց, անցած տարի էլ էր նույն խնդիրը, էս տարի էլ ունենք անասնակերի խնդիր, էլ չեմ ասում, որ գինն էլ է թանկացել:

Գյուղացու ամենագլխավոր խնդիրներից է ցանքսերի պահպանության խնդիրը:

Կալավանը, օրինակ, հասկացավ, որ ծառը բնի վրա ավելի շահեկան է, քան եթե կտրեն: Դրա համար էլ իրենք գնացին անտառահատների դեմ, ճանապարհ փակեցին:

Անտառահատումների մասին: Պավլովյան ծառատեսակի մասին էի ուզում ասել, որ կարող են օգնել հողերի մաքրմանը, ինքը դեգրադացված հողերի վրա է աճում ու սողանքների դեմն է առնում իր խորը գնացող արմատներով: Լավ կլինի ուսումնասիրենք, հասկանանք՝ ինչ կարելի է տնկել:

Ընդհանրապես էկոլոգիական հարցերը, անտառների պահպանման հարցը շատ լուրջ է, ես կուզեի, որ էկոհամակարգը թույլ տա, որ ես ապրեմ Սևանում, ոչ թե գամ ապրեմ Երևանում: Եթե մենք ձգտում են տնտեսական աճի, պետք է անպայման մտածենք շրջակա միջավայրի մասին:

Հարցն էն ա, որ մենք պետք ա ունենանք լավ էկոլոգներ, Սևանի դեպքում էդ պակասը զգացվում է, նայեք մեր Մանկավարժականի էկոլոգիականի ուսանողները ինչ են անում, գուցե արտասահմանի մեր հայրենակիցներին՝ էկոլոգներին հրավիրենք աշխատելու, Սևանը աղետալի իրավիճակում է, հենց էդ արհեստական կերի պատճառով նաև:

Ձուկը ձվադրման ժամանակ բարձրանալու է ձվադրավայր, բայց չի կարող գնալ, բնադրավայրերի վրա ՀԷԿ-եր են կառուցված:

Էկոհամակարգերի խնդիրները լրջագույն են: Անհրաժեշտ է շատացնել ծառատունկերը հատկապես այն տարածքներում, որտեղ հողն անմշակ է: Փայտը կարելի է ներկրել դրսից կամ օգտագործել այլ բիովառելիք: Բիովառելիքի գնային քաղաքականությունը պետք է վարվի այնպես, որ մարդիկ կարողանան օգտվել:

Ապահովագրությունը միայն խոշոր ֆերմերին է ձեռնտու, ո՞նց կարող է փոքր հողակտոր ունեցողը մտնել էդ բյուրոկրատիայի տակ, էդ գումարների տակ: Ոչ մի անհատ, իմ կարծիքով, չի ապահովագրում իրեն:

Հիմա ասեմ, որ ապահովագրությունը աշխատի, նախ պետք է պարզեցվեն բոլոր փաստաթղթերը, չլինի էնպես, որ հսկայական պայմանագիր գրեն էն վարկայինների նման, որ չես էլ կարդում, պիտի շատ մատչելի լինեն ու կարճ, տասներորդ դասարանցու մակարդակի, մոռանում ենք, որ մեր մարդիկ էդքան գիտելիք չունեն:

Գեղարքունիքի տարածաշրջանում ոչ միայն կարտոֆիլ և կաղամբ ենք մշակում, այլև այլ կուլտուրաներ, օրինակ՝ լոբի, որոնց որակը չի վերականգնվում: Մեկ այլ օրինակ՝ այս տարի շատ չորային էր եղանակը, խոտ չկա, մեկ տուկը, որը նախկինում 600դրամով էր վաճառվում, այս տարի 1000-1600 են գնում դաշտից: Եթե ապահովագրություն լիներ, նման խնդիրների առջև չէինք կանգնի:

Ինչպես մեքենաների ապահովագրության դեպքում, այնպես էլ գյուղատնտեսության պարտադիր ապահովագրության ներդրումը դժգոհություն է առաջացնելու, բայց մարդիկ հիմա արդեն տեսնում են առաջինի օգուտները: Կդժգոհեն, հետո կհասկանան նաև սրա օգտակարությունը:

Գեղարքունիքի մարզում տարվա կեսը ձմեռ է, կեսը կիսաձմեռ է: Երկրագործությունը շատ ռիսկային է, վերջին տարիներին անոմալ եղանակները շատ են խանգարում, նույնիսկ ամռան ընթացքում կարող է ցրտահարություն գրանցվել: Ապահովագրությունը կարող է լուծում լինել:

Զարգացած ապահովագրության համակարգն այն գլխավոր գործոնն է, որը կարող է լուծել գյուղացիների շատ խնդիրներ:

Այսօր ոչ մի գյուղացի ռիսկ չի անի ապահովագրության համակարգի մեջ մտնի, քանի որ տնտեսությունները փոքր են:

Պետության կողմից տրված փոխհատոցումները գյուղացուն աննշան են լինում:

Գյուղերում ապահովագրությունից չեն օգտվում, որովհետև բոլորի տարածքները փոքր են և ապահովագրման անհրաժեշտություն չկա:

Ապահովագրությունից գյուղացիները չեն օգտվում, քանի որ թերահավատորեն են վերաբերվում կառավարությանը:

Գորիսի տարածաշրջանում ապահովագրության վերաբերյալ ինֆորմացիայի պակաս կա: Մարդիկ չգիտեն, թե ինչ չափով են ապահովագրելու, ինչ պայմաններով:

Գյուղատնտեսական ապահովագրությունն իհարկե ռիսկային է, և վտանգները տարբեր են՝ քամի, կարկուտ, անձրև: Ապահովագրության դեպքում գյուղացուն հնարավորություն են տալիս շարունակել

իրենց գործունեությունը: Այս ապահովագրությունը նման է մեքենայի ապահովագրությանը. այն պետք է պարտադիր լինի, թեև կարող է որոշ դժգոհություն առաջացնել սկզբում:

Ապահովագրության ծրագրի շուրջ այսօր մեծ աշխուժություն կա. ապահովագրական ընկերությունները ևս ակտիվորեն ներառվում են ծրագրի մեջ, ավելացվում են մշակաբույսերի տեսակները:

Մոտ 200000 դրամի հասնող ապահովագրության պարտադիր վճարը մոտ 10000 դրամ կարող է լինել, ասենք 1-2%: Սա կարող է դիմադրություն առաջացնել: Օրինակ՝ եթե գարի ես ցանել, կամավորի դեպքում սկսելու ես մտածել, որ մեծ գումար է: Իսկ եթե պարտադիր լինի ապահովագրությունը, դժգոհելով կվճարես, բայց մեծ հաշվով օգուտը մեծ կլինի:

Եթե հնարավոր լինի գյուղատնտեսությունը որոշ ոլորտներով ապահովագրել, գյուղացին ռիսկի պատճառով հետ չի մնա գործունեություն ծավալելու ցանկությունից:

Ապահովագրությունը վերաբերել է խաղողագործությանը, բայց դե գիտեք, Սյունիքում խաղողագործություն չկա:

Կերի գնային տատանումներից կուզեինք ապահովագրություն լիներ, համաճարակներից գոնե ապահովագրվեինք:

Մեզ ապահովագրություն առաջարկող չի եղել: Ես մեքենայի ապահովագրության գրասենյակում հարցրել եմ, ասում են՝ գյուղապահովագրություն չեն անում:

Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Սկզբնական շրջանում պետք է կամավոր լինի ապահովագրությունը, պետությունը պետք է որոշ չափով օգնի, **մասնակցի**, մինչև գյուղացին ոտքի կանգնի:

Ցանկալի է, որ պարտադիր գյուղապահովագրությունը լինի պետական **հովանավորությամբ**:

Ապահովագրությունը սկզբնական շրջանում պետք է պարտադիր լինի, և պետությունը **սուբսիդավորի** ապահովագրության վճարի մի մասը:

Պետությունը պետք է մի քանի տարի գյուղացուն **սատար** կանգնի, մինչև ապահովագրական ծառայությունները բարելավվեն:

Սուբսիդիաներով վարկը ռիսկ չի լինի գյուղացու համար, եթե ունենանք ապահովագրություն:

Պետությունը ապահովագրության հիսուն տոկոսը թող **սուբսիդավորի**, մյուսը թողնի գյուղացին որոշի:

ՋՕԸ-ի **սուբսիդավորումն** անարդար է, քանի որ սրանք նախատեսված են իբր շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պրակտիկան այլ բան է ցույց տալիս. դրանք գնալով հարստանում են: Մինչդեռ պետք է սուբսիդավորել հենց անհատ ջրօգտագործողին:

Ջրի կորուստները նվազեցնելու համար կաթիլային ոռոգումը խրախուսելու համար, անտոկոս **վարկեր** պետք է տալ սրա համար:

ՋՕԸ-ի **սուբսիդավորումն** անարդար է:

Մեզ մոտ հարցերի հարցը ոռոգումն է, և պետությունը պետք է զբաղվի կաթիլային ջրամատակարարման հարցերով, պետությունը պետք է դա ամբողջությամբ ֆինանսավորի և ոչ թե **սուբսիդավորի**:

Ո՞վ է տալիս կաթիլային ոռոգման համար ցածր տոկոս վարկեր, գյուղացին այդպիսի **վարկերից** տեղյակ չեն:

Պետք է **սուբսիդավորել**, որ կոոպերացիաները զարգանան. դա կշահագրգռի գյուղացիներին միավորվել:

Կարևոր է քննարկել, թե **սուբսիդավորման** դեպքում ոնց է կոոպերտիվին վարկ տրվելու, գրավ են ուզելու, անդամներից ում բնակարանը պետք է գրավ դնել, նման հարցերը պետք է հասկանալ նաև:

Կոոպերատիվներին պետությունը **ֆինանսավորում** է ամբողջ աշխարհում, մեզանում դա ևս պետք է արվի, որ կարողանան կոոպերատիվները կայանան:

Սուբսիդավորումը լավ բան է, բայց մարդիկ ամեն դեպքում խուսափում են **վարկ** վերցնելուց:

Սուբսիդավորումները ընկալվում էին որպես փող աշխատելու միջոց:

Ցանկալի է, որ **սուբսիդավորման** փոխարեն ապառիկ գումար ձևակերպվի:

Պետք է **սուբսիդավորել** կոնկրետ գյուղացուն, ոչ թե ավելի մեծ միավորումներին, գյուղերին, համայնքներին:

Տարբերակված մոտեցում է պետք **սուբսիդավորման** համար՝ խոշորին՝ խոշոր, փոքրին՝ փոքր:

Հավասար պետք է լինի **սուբսիդավորումը**: Օրինակ՝ ես մի կով ունեմ, դա ավելի թանկ է, քան խոշոր ֆերմերի մի քանի տասնյակ կովերը:

Սուբսիդավորման 70 տոկոսը տեղ չի հասնում:

Մեր մոտ մի հեկտարի վրա մեկ միլիոն երկու հարյուր հազար ծախս է արվում, իսկ Գեղարքունիքում էդպիսի տեղ չկա, որ նման ծախս արվի: Իհարկե, տարբերակված պիտի լինի **սուբսիդավորումը**:

Այսօր մենք մեր մարզում, **սուբսիդավորման** շնորհիվ, ունենք ջերմոցներ, որոշել ենք գաճաճ կեռասի ծառեր աճեցնել:

Վերջին երկու տարին վառելիքի **սուբսիդավորում** չի եղել:

Սուբսիդավորված պարարտանյութը շատ անորակ է:

Եթե **սուբսիդավորեն** մենակ թույլերին, մի տարի հետո բոլորը թույլ կդառնան:

Սուբսիդավորման ապրանքները համայնքապետը բաժանում է ծանոթ բարեկամներին:

Միայն մեծերի **սուբսիդավորումը** կբերի նրան, որ փոքրերը կսկսեն հողերը վաճառել:

Դրսի ներկրածը մեր տեղականի կեսն արժի՞... առանց **սուբսիդավորման** տեղականը չենք կարողանա ապահովել:

Նախկին իշխանության ժամանակ կոռուպցիան սխեմաների պատճառով գյուղացուն **սուբսիդավորվող** պարարտանյութը վերջնական սպառողին թանկ էր հասնում:

Սուբսիդավորումները բոլորին պետք է հասանելի լինի՝ և՛ մեծ տնտեսություններին, և՛ փոքրերին:

Պետությունը պետք է առաջնահերթ **սուբսիդավորի** պարարտանյութը, թունաքիմիկատները, սերմը, վառելիքը:

Սուբսիդավորված վարկերը բնական աղետների պատճառով դառնում են բեռ:

Վարկային կազմակերպությունը տալիս է **սուբսիդավորված** վարկ ցածր տոկոսներով, բայց գյուղացու եկամուտը այնքան քիչ է, որ ծանրաբեռնվում է վարկերով:

Պետությունը պետք է **սուբսիդավորի** առանց գրավադրման, բայց մեծ պատասխանատվությամբ հետևի:

Ես բանկ եմ դիմել **սուբսիդավորվող վարկի** համար, բայց մերժել են անասուն չունենալու պատճառով:

Սուբսիդիան ձևի համար հայտարարվում է, օդի մեջ անհետանում:

Ահռելի փողեր են գնում **սուբսիդիաների** վրա, ավելի ճիշտ կլինի այլ տեղ ներդնել:

Ցանկալի է հակակարկտային միջոցներ ձեռք բերելու վարկային միջոցներ կամ **սուբսիդիաներ** լինեն:

Եթե **սուբսիդիան** տրամադրվի պարարտանյութ ներկրող կամ վաճառողին և նա «նիսյա» մեզ տա բերքը ստանալուց հետո վճարենք:

Սուբսիդիաները թող ուղղվեն կարկուտից պաշտպանված ցուցադրական այգիներ հիմնելուն:

Հակակարկտային ցանցերը ճիշտ տեղադրելու համար կարևոր է պետության **սուբսիդավորումը**:

Գոտիականությունն էլ պետք է հաշվի առնել կազմակերպելու համար գյուղատնտեսությունը, օրինակ Էջմիածնի տարածաշրջանում ջերմոցներ, Արմավիրում այգիներ, մշակաբույսեր, Բաղրամյանի

տարածաշրջանում ավելի շատ անասնապահությունը: Նման հարցերը պետք է հաշվի առնի պետությունը **սուբսիդավորման** ուղղություններն ընտրելիս ու նախապատվությունը տալ նրան, որտեղ ինչը լավ է լինում:

Պետությունը պետք է **սուբսիդիա** տրամադրի կաթիլային համակարգի ստեղծման համար:

Պետությունը **սուբսիդավորում** է անասնաբուժության չորս ծառայություն: Իսկ մյուս մասը մնում է գյուղացու վրա:

Գյուղացուն ամեն ինչի համար էլ անհրաժեշտ է **սուբսիդավորել**՝ օբյեկտիվ ուսումնասիրությունների պայմաններում: Չեմ ասում 1 հա ունեցողը գնա ասի տեխնիկա տուր ինձ:

Կոռուպցիայի պատճառով **սուբսիդավորվող** տեխնիկան գյուղացուն վաճառվում է անհամեմատ թանկ գնով:

Հակակարկտային ցանցերի գների և **սուբսիդավորված** վարկերի մասին գյուղացին իրազեկված չի:

Անտառ կտրելն արգելված է, մյուս կողմից էլ գյուղացու վրա փաստացի բարձր տոկոսով **վարկեր** են թողնում: Փակուղային է վիճակը:

Սահմանադրությունն ինչի՞ հետ համեմատելով ընդունեցին՝ Ֆրանսիայի: Եկեք **վարկերն** էլ ֆրանսիականի հետ համեմատենք: Մեզ մոտ շատ բարձր են տոկոսները:

Եթե **վարկը** ձևակերպում են, տան անձամբ գյուղացուն, առանց միջնորդ կազմակերպության ու հենց գյուղացուն էլ հսկեն:

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով **վարկ** տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, խաբեբայության նման մի բան էր սա:

Բանկը այնպիսի պայմաններ են առաջարկում, որ գյուղացին երբեք չի կարող ապահովել ու ցածր տոկոսով **վարկը** միֆ է, հետո կարող են զանգել ւ ասել, որ կարանք ավելի բարձր տոկոսով վարկ տանք. տեխնիկա է ինչ-որ սա:

Եթե բարձր տոկոսով **վարկերը** մինչև հիմա փակել ենք, մինչև 24%-ով, ցածր տոկոսով ինչի չպետք է ուզենք ու չկարողանանք:

Գյուղատնտեսական **վարկերը** վերցնում են ու նպատակին չեն ծառայեցնում, պետք է լինի լուրջ վերահսկողություն:

Գյուղացին իրեն տրամադրված **վարկը** ոչ նպատակային է իրացնում: Կով գնելու փոխարեն հեռուստացույց է գնում:

Պետությունը գյուղացուն տալիս է հինգ տոկոսանոց **վարկ**, բայց նվազագույն շեմը երեք միլիոն դրամ է: Գյուղացին, որին մեկ միլիոն դրամ է պետք, չի կարողանում օգտվել:

Բանկերը պետք է ճիշտ ձևով տրամադրի **վարկը**: Շատ գյուղացիներ և ֆերմերներ բողոքում են բանկերում առաջացող խնդիրներից:

Ով անասուն չունի, ռիսկային է դառնում նրան **վարկ** տրամադրելը:

Գյուղացին **վարկերի** տակ է ինչպես բնության և պետության քաղաքականության, այնպես էլ միջոցների ոչ ճիշտ կառավարման պատճառով:

Վարկերը տրամադրելուց գյուղացին խաբվում է:

Մեր մեծ սխալը գյուղացուն ֆինանսական աննորմալ վիճակի մեջ դնելն էր: Գյուղացու համար չպետք է լինի նման **վարկավորում**:

Գյուղացուն չպետք է տալ կարճաժամկետ **վարկեր**:

Բանկերը մտածված գյուղացուն գցում է բարձր ռիսկայնության շահառուների ցանկում, որպեսզի **վարկերը** բարձր տոկոսադրույքով տան:

Քանի՞ տարի պետք է աշխատեմ, որ հակակարկտային ցանցերի **վարկերը** փակեմ:

Նախ պետք է պահենք հողը, լավ հող ունենանք, պետք է պետությունը կես գին դարձնի կալիումական աղի և ֆոսֆորաթթվի գինը, որ հողը նորից իր գործը անի: Պետությունը միայն **վարկ** տալու համար չէ: Գյուղատնտեսությունը պետք է ճանաչվի առաջին ռազմավարական ուղղություն:

Սառնարանային տնտեսությունները պետք է լինեն բոլոր մարզերում: Մարդիկ սեփականաշնորհում են դրանք, բայց չեն կարողանում օգտագործել, որովհետև **վարկ** չեն տալիս:

Պարարտանյութի ու վառելիքի փոխարեն թող **գումարը** տան:

Գյուղացիները տարիներ շարունակ ֆինանսական մեծ բեռի տակ են, քանի որ տոկոսադրույքները շատ բարձր են:

Ապահովագրությունը պետք է լինի պարտադիր, բայց միևնույն ժամանակ պետությունը պետք է անպայման **աջակցի**, հատկապես սկզբից:

Կամավոր պետք լինի ապահովագրությունը, որոշակի կայուն **աջակցություն** էլ պետք է տրամադրվի պետության կողմից:

Պետությունը թող ապահովագրական կազմակերպությանը վճարի որոշ **գումար**, վերադարձնելու պայմանով, երբ որ այդ ընկերությունը կայանա:

Ապահովագրություն ներդնելուց առաջ պետությունը պետք է որոշակիորեն իր վրա վերցնի բեռը. օրինակ՝ **սուբսիդավորման** միջոցով: Իսկ ներդրումը պետք է կամավոր լինի, գոնե սկզբնական փուլում:

Եթե պետությունը **չաջակցի**, ոչ մի մասնավոր ապահովագրելու ռիսկին չի գնա: Պարտադիր պետք է լինի, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Գյուղացիներին պետք է **սուբսիդավորել** ըստ գյուղացու փաստացի զբաղվածության ոլորտի, այսինքն գյուղացին էդ սուբսիդիան օգտագործի այն ոլորտում, ինչը որ ինքը կարողանում է անել:

Հիմա **սուբսիդիա** են տալիս գյուղացուն, սելիտրա, սերմեր, վառելիք: Բայց արդյունք չկա, չենք իմանում ում հասավ կոնկրետ:

Վարկերի տրամադրման կանոնները վերանայման կարիք կա՝ մասնավորապես ժամկետների մասով:

Պետությունը արտոնյալ **վարկեր** է տալիս ինտենսիվ այգիների համար, բայց մարդիկ միևնույն է խուսափում են այդ վարկերից, քանի որ գումարն է մեծ ստացվում՝ քսանհինգ միլիոն դրամ մի հեկտարին:

Սուբսիդավորվող վարկերը, բացի կաթիլային և ցանցային ոռոգումը, բավականին մեծ տոկոսներ են պահանջում, որն արդեն անարդյունավետ է դարձնում նման վարկերից օգտվելը:

Կաթիլային ոռոգման ու հակակարկտային ցանցերը **սուբսդիավորելիս** պետությունը չպիտի ուղղորդի ումից առնել: Թող ֆերմերը որոշի ումից ձեռք բերի:

Թող պետությունը **սուբսիդավորի** ոռոգումը: Ոռոգումը դառնա ձրի:

Գինին սարքելուց անմիջապես հետո չի վաճառվում: Գոնե երկու տարի պիտի պահես, որ շշալցնես: Կաթիլային ոռոգման դեպքում հինգ տարով են առաջարկում վարկը, իսկ գինու արտադրության համար՝ մեկ տարով: Որքանո՞վ է սա խելքին մոտ: **Սուբսիդավորվող** վարկն առնվազն երեք տարվա համար պետք է տրվի գինեգործության համար:

Պետությունը **սուբսիդավորում** է գյուղատնտեսական վարկերը, բայց մեզ վարկ չեն տալիս, անգամ գրավի դիմաց:

Մեզ պետք է, որ **սուբսիդավորումը** լինի դրամական, այլ ոչ թե, ասենք, դիզվառելիքի տեսքով:

Պետք է ապացուցես որ գյուղատնտեսությամբ զբաղվում ես, որ **սուբսիդավորվող** վարկ ստանաս: Պահանջում են մեծ տարածքներ, անասունների մեծ գլխաքանակ:

Սուբսիդավորումը շատ կարևոր է, բայց ավելի մեծ կոոպերատիվների համար:

Սուբսիդավորման ցանկացած տարբերակ օգտակար լինել, կարևորը կոռուպցիա չլինի:

Եթե մարդը չի կարողանում կամ ուզում աշխատել, ոչ մի **սուբսիդիա** չի օգնի:

Սուբսիդիա ստանալու լավագույն տարբերակը հողերի խոշորացումն է:

Միայն դիզվառելիքի վարկը պետք է **սուբսիդավորել**:

Սուբսիդավորման համակարգը այնքան կոռումպացված է այսօր, որ զրո էֆֆեկտիվություն ունի:

Պետությունը բերում է անորակ սերմեր, **սուբսիդիայով** տալիս են մեզ և մրցունակ արտադրանք չի ստացվում:

Դիզվառելիքի գները անընդհատ փոխվում են: Ասենք, էսօր դրա գինը տասը հազար դրամ է, և քեզ սուբսիդավորված ութ հազարով են տալիս: Հետո որոշ ժամանակ տևում է, մինչև վառելիքը բերեն հասցնեն քեզ: Երբ հասնում է քեզ, պարզվում է դիզ. վառելիքը արդեն շատ ավելի էժան է՝ ասենք, յոթ հազար դրամ: Էդ **սուբսիդիան** դառնում է լրիվ անիմաստ:

Մեզ **սուբսիդավորում** պետք է տնտեսությունը կայացնելուց: Դրանից հետո, սուբսիդիա պետք չէ:

Սուբսիդիան պետք է տալ շատ խիստ ուսումնասիրված տնտեսությանը, որը իսկապես այդ գումարով կարող է զարգանալ և դրա կարիքն իսկապես ունի:

Սուբսիդիաների որոշ մասն է հասնում գյուղացուն: Կամ գյուղացին սուբսիդավորված վարկը այլ նպատակներով է օգտագործում:

Պետությունը վարկը **սուբսիդավորելու** փոխարեն, թող լավ անասուններ ներմուծի:

Պետք է մոնիտորինգ անցկացնել գյուղում, որ տեսնեն, թե ով ինչպես է աշխատում, հետո նոր **սուբսիդիա** տան:

Սուբսիդավորում կա ինտենսիվ այգի ստեղծելու համար, սակայն բանկը վարկը տալիս է ինչ-որ կազմակերպության, որը որոշում է ինչ-որ անհասկանալի մշակաբույս արտադրել, իսկ գյուղացու համար, որը գիտի ինչը երբ ու որտեղ ավելի լավ կաճի, այդ ֆինանսական միջոցները հասանելի չեն:

Գյուղացի կա, որ ծույլ է, ի՞նչ իմաստ ունի իրեն **սուբսիդիա** տրամադրել:

Պետությունը պետք է գյուղացուն **սուբսիդավորի** փոքր տոկոսադրուքով վարկեր տա: 16-24 տոկոսանոց վարկերով անհնար է աշխատել:

Վայոց ձորում հողի մեկ հեկտարի մշակման մասով գներն ամենաթանկն են, մոտ հիսուն հազար դրամ: Տեխնիկան թեև **սուբսիդավորված** է ձեռք բերում տերը, բայց գինը չի էժանացնում:

Գյուղատնտեսությունն այնքան անկանխատեսելի է, որ շղթայի բոլոր օղակներն էլ պետք է **սուբսիդավորվեն**:

Հողերը պետք է միավորել, որպեսզի **սուբսիդավորումն** ավելի արդյունավետ լինի: Խոշորացումը հնարավորություն կտա մշակել նաև անմշակ հողերը, որոնք այսօր ձեռքից գնում են:

Սուբսիդավորումը պետք է տարբերակված լինի: Արտադրողին այլ չափի տան, իսկ մշակող գյուղացուն՝ այլ:

Սուբսիդիաները պետք է նպատակային տրվեն: Գործից հասկացող մարդկանց պետք է տան:

Սուբսիդիան պետք է նպատակային բաժանվի, ոչ թե ձևական:

Գյուղատնտեսական տեխնիկայի **լիզինգի** ժամանակահատվածը պետք է երկարացնել մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ:

Վարկը պետք է անտոկոս լինի գյուղացու համար, կամ շատ ցածր լինի, այնքան էլ ընթացիկ ծախսեր ես անում, որ անիմաստ է լինում այդ վարկը վերցնել:

Վարկի տոկոսը պետք է իջեցնել, գյուղացուն գիտելիքով զինել, վարկերի ժամկետներն էլ երկարացնել:

Վարկերի տոկոսադրույքը այնքան բարձր է, որ գյուղացին չգիտի աղետի դեպքում ինչպես պիտի փակի վարկերը:

Քանի որ կոոպերատիվի նախագահը բարձ, վտանգավոր տարիքում է, **վարկ** չեն տրամադրում:

Գյուղացուն առանց գրավի հակակարկտային ցանցի համար **վարկ** չեն տալիս:

Ես երեք միլիոն դրամ **վարկի** համար դիմել էի, բայց արդեն մի քանի ամիս է, չեն տալիս:

Գյուղացուն **վարկ** չեն տալու որ մեծ հողատարածք ցանի ու անձամբ վաճառի Ռուսաստանում: Եթե մեծ հողատարածք ունենամ կվաճառեմ դրսում:

Կայուն շուկայի ստեղծումն ու երկարաժամկետ ցածր տոկոսով **վարկերը** առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ են:

Բանկերը հրաժարվում են կոոպերատիվներին **ֆինանսավորել**: Նրանք գիտեն, որ սրանք չաշխատող կառույցներ են:

Մեզ համար կարևոր է ցածր տոկոսով երկարաժամկետ **վարկերի** տրամադրումը:

Ով կարողանում է, ասենք, տասը միլիոն **վարկ** վերցնի բանկից, զբաղվում է ծիրանի արտահանմամբ, հետո գնում Լարսում մնում բերքը փչացնում է, գալիս ասում է՝ մենք պետք է ծիրանը հիմա հարյուր դրամով գնենք, որ փչացածի տեղը հանենք: Գյուղացին էլ ընտրության հնարավորություն չունի, ստիպված էժան տալիս է:

Բարձր տոկոսով վարկերը շատ **լավ** է, դա ստիպում է գյուղացիներին ավելի զգոն լինել:

Այնքան թուղթ են ուզում մի հատ **վարկ** տալու համար, որ մի հազար անգամ գնալ-գալուց հետո այնպես ես հիասթափվում, որ դու ես պատրաստ լինում վճարել, որ քեզ այլևս վարկ չտան:

Գյուղատնտեսության մեջ ցանկացած ներդրում պահանջում է առնվազն երեք տարի որպեսզի արդյունքը տեսնենք, հետևաբար **վարկերը** պետք է սկսենք մարել երեք տարի հետո:

Բնական աղետների դեմ պայքարի շատ լավ միջոցներ կան, բայց անգամ ամենաէժանները **ֆինանսապես** հասանելի չեն միջին վիճակագրական գյուղացուն:

Դիզվառելիքի, պարարտանյութի սուբսիդավորում ես չեմ ընդունում: Խոշոր գումար պահանջվող դեպքերում է ինձ պետք, որ պետությունը օգնի: Ընդհանրապես օգնել պետք է ըստ կոնկրետ ծրագրի:

Դեմ եմ փող տալուն: Փողը թուլացնում է աշխատողին: Ոնց որ նպաստ ստանալը օրինակ: Գյուղացին ոչինչ չի անում, որ միավորը չբարձրանա, նպաստից չկտրվի:

Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, լիզինգով կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես 12 ամիս պիտի վճարեմ **լիզինգը**:

Սուբսիդիաների տրամադրման ժամանակ, բոլորը օգտվում են բացի գյուղացուց ու պետությունից:

Ես գումար եմ վճարել երեք ամիս առաջ, մի կերպ ստացել եմ իմ պարարտանյութը գյուղապետարանի միջոցով. մի քանի օր հետո նույն պարարտանյութը խանութում ավելի էժան եմ տեսել. էլ ինչիս էր պետք այդ օգնությունը:

Նախորդ տարիներին սերամցու տվեցին, նորմալ չաճեց, բայց ֆերմերին ստիպեցին վճարել:

Գյուղատնտեսության **վարկերը** մարելու համար գյուղացին ստիպված գնում է Ռուսաստան:

Բնակլիմայական պայմանների շարունակական վատթարացումը ապահովագրությունն ավելի անհրաժեշտ է դարձնում, բայց բնակչության մեծ մասը հնարվորություն չունի, գոնե կեսը պետք է **սուբսիդավորվի** պետության կողմից:

Պետությունը թող **սուբսիդավորի** ապահովագրական համակարգի վճարները:

Պետք է **սուբսիդավորել** համակարգերի ներդրումը՝ ապահովագրություն, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Կոոպերացիան պետք է խնդիրների գիտակցումից սկսվի. **սուբսիդիա** տալով կոոպերացիա չես ստեղծի:

Պետությունը պետք է **սուբսիդիա** տա արդեն կայացած կոոպերացիաներին:

Սուբսիդիաները վառելիքի, ցանքի, ցույց տվեց, որ մարդիկ սկսեցին ընդլայնել իրենց գործունեությունը:

Պետությունը նախապես պետք է **սուբսիդավորի**, հետագայում աստիճանաբար նվազեցնի սուբսիդավորման աստիճանը:

Գյուղատնտեսության **սուբսիդավորումը** մինչև հիմա հարստացնում էր օլիգարխներին. սուբսիդավորվում էր դիզվառելիքը, քիմիկատը: Պետք է սուբսիդավորել ցանքսի հեկտարը:

Ենթակառուցվածքի ստեղծումը երբեք հոգս չի, հոգսն այն է, որ հասցնենք սպասարկել ենթակառուցվածքներն ու ծառայությունները: Ենթակառուցվածքների շահագործումն ու պահպանությունը պետք է իրականացվի պետության **սուբսիդավորմամբ** անպայման:

Առանց **սուբսիդիայի** մի կերպ աշխատում ենք:

Սուբսիդավորումը ճիշտ է, եթե ճիշտ է իրականացվում, առանց ծանոթ-բարեկամի, առանց կոռուպցիայի:

Սուբսիդավորումը լավ բան է, ազատում է ռիսկերից:

Պետությունը **սուբսիդավորում** է, բայց գյուղացին հաճախ նպատակային չի օգտագործում վարկը, որովհետև չկա վերահսկողություն:

Մինչև 70 տոկոս ոռոգման կորուստ կա, **սուբսիդիայի** մեծ մասը գնում է դրան:

Սուբսիդիան պետք է տրվի հող մշակողին: Դիզվառելիքին, պարարտանյութին, սերմնացուին պետք է տալ սուբսիդա:

Կյանքը ցույց տվեց, որ սուբսիդավորումը բլեֆ էր. **սուբսիդավորման** գումարը գնում էր Ֆլե-ին ու մյուս օլիգարխներին:

Կարելի է **սուբսիդավորել** խոշորացողներին:

Վառելիքը պետք է **չսուբսիդավորվի**, քանի որ մեխանիզատորը էժան գնով գնում է, բայց գյուղացուն ասում է գին՝ հաշվարկված շուկայականով ու գյուղացին չի զգում, որ սուբսիդիա կա:

Եթե ապացուցվի, որ տարիների **սուբսիդավորման** արդյունքում ցանքատարածություն է ավելացել կամ գյուղացու եկամուտն է ավելացել, ես կփոխեմ իմ անունը:

Սուբսիդիա պետք է ստանա հաջողակ գյուղացին. նա եկամուտ կարող է ստանալ, անհաջողակը գնում iPhone է առնում:

Եթե 1 հա ցորեն մշակեմ, ապա պետք է հասկանալ տվյալ գոտում դա ինչ ծախսեր է ենթադրում ու ըստ դրա **սուբսիդավորեն** հող մշակողին: Պետք չի առանձին-առանձին վառելիք, պարարտանյութ ֆինանսավորեն, որ թափանցիկ չլինի:

Եթե գյուղացին սխալ տեխնոլոգիա կիրառի, ի՞նչ օգուտ կարող է տալ **սուբսիդավորումը**:

Պետք է փորձնական **սուբսիդավորել** ցորենի ցանքը (ոչ թե վառելիքը կամ պարարտանյութը), իսկ վերահսկողության համար, ասենք, օգտագործել դրոններ՝ տեսնել ցանքը իրոք կա, թե չէ:

Սուբսիդիան պետք է տալ հող մշակողին, ոչ թե ուժեղ ու թույլ, հարուստ ու աղքատ նայել:

Սուբսիդավորումը պետք չէ նախապես անել, պետք է տեսնել ով ինչ է անում, ըստ դրա տալ:

Պետք է **սուբսիդավորել** բոլորին անկախ նրանից բարվոք բնակլիմայական պայմաններում է հողատարածքը, թե վատ:

Մեր երկրում ռեսուրսի կեսը չի օգտագործվում, նա ով կարողանում է ճիշտ աշխատել, կարել հենց նրան **սուբսիդավորել** և նրան տալ մնացած չմշակվածը:

Դասընթացներ են անցկացնում, հետո խոսք տալիս **սուբսիդավորված** վարկ, բայց հետո գնում ես բանկ, ասում են՝ դու գերծանրաբեռնված ես, քեզ չենք կարող սուբսիդավորված վարկ տալ, պետք է մեծ տոկոսով սովորական վարկ վերցնես:

Որտեղ պետությունը գումար ավելի շատ է կորցնում, այդ տարածքներում քիչ պետք է **սուբսիդավորում**, ավելի բարվոք պայմանների պետք է նայել նախապատվություններ տալուց:

Սուբսիդավորումը պետք է ուղղվի կայացած ֆերմերներին և տնտեսություններին:

Սուբսիդիան պետք է հավասար տրվի, եթե գյուղացին հող է մշակում, չպետք է նայել ինքը ինչ պայմաններում է գտնվում:

Սուբսիդավորման համար մրցակցային նորմալ պայմաններ չեն ստեղծված: Տեղ չի տրվում սկսնակ ֆերմերներին: Պետք է լինի քաղաքականություն, որը նոր սկսող ֆերմերին **սուբսիդավորի**:

Սուբսիդավորման մինիմալ գումարը՝ երեք միլիոնը, հասանելի չէ բոլորին:

Պետությունը թող **սուբսիդավորի** բոլորին հավասար՝ խոշորին էլ, փոքրին էլ:

Գյուղացուն **սուբսիդավորելը** սխալ է: Դա նման է Փարոսին, չեն աշխատում, որ նպաստ ստանան:

Պետք է գյուղացիներին օբյեկտիվ դասակարգել ու ըստ այդմ **սուբսիդիա** տրամադրել, արդար կլինի:

Տոհմային ցեղերի **սուբսիդավորումը** կարևոր է, բայց վատ է, որ 25-ից պակաս չեն տալիս:

Գյուղացուն ավելի ձեռնտու է ոչ թե **սուբսիդիա**, այլ ապրանքը իրացնելու օգնություն:

Մարզի կտրվածքով առաջնահերթություններ են. գյուղտեխնիկայի թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ թունաքիմիկատների **սուբսիդավորում**, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Վարկային բեռը, միևնույն է, մնում է գյուղացու ուսերին:

Նորմալ **վարկերի** քա՞նի տոկոսն է ծառայում բուն նպատակին:

Վարկավորման տոկոսադրույքները շատ բարձր են:

Կարտոֆիլի համար գոնե երեք-հինգ տոկոս պետք է լինի **վարկի** տոկոսադրույքը:

Բանկին դիմել եմ, ասել եմ, որ իրավիճակը փոխվել է երկրում, ինձ ուղարկել են դասընթացի, բայց մեկա բանկը **վարկ** չի տալիս, չի հանել սև ցուցակից:

Գյուղատնտեսական **վարկերը** ինչպես և մյուս վարկերը պետք է վերահսկողություն ունենան:

Մեր կոոպերացիան այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց հարկային և **վարկային** բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս:

Մարդիկ մեծ **վարկեր** են վերցնում, թանկարժեք սերմ գնում, բայց կարկտահարության պատճառով ամբողջ բերքը կորցնում են:

ACBA բանկը, որ գյուղատնտեսական բանկ էր, հիմա ձևը փոխել են, 3.000.000-ից ոչ պակաս **վարկ** չի տալիս, իսկ ինձ՝ գյուղացուս համար դա մեծ բեռ է, ինչ եմ անում այդքանը:

Մենք չենք կարողանում մինիմալ պայմաններ ստեղծել, որպեսզի Սևան զբոսաշրջիկ բերենք, չունենք այդ հնարավորությունները, թող մեզ օգնեն, լավ պայմաններով **վարկեր** տան:

Գյուղացուն այսօր ոչ թե **վարկ** է պետք տալ, այլ սովորեցնել, թե ինչից ինչ է պետք ստանալ:

Գյուղվարկերի համար մեծ խնդիր է դոլարի և դրամի տատանումները:

Պետք է գյուղացու համար այնպիսի **վարկ** տրամադրել, որ նա գերադասի այդ վարկը հենց գյուղատնտեսության համար վերցնի:

Տարերային աղետների պատճառով բերքի վնասի դեպքում **վարկային** մարումների հարցում պետական աջակցության կարիք կա:

Ավելի լավ է **վարկեր** տան, ամեն գյուղացի իր հարցերը լուծի:

Ես **վարկ** եմ ուզում կաթիլայինի համար, ինձ ասում են՝ կտան, բայց էն դեպքում, եթե տվյալ կազմակերպությունը անցկացնի այդ համակարգը: Ինձ փողը տվեք, ես ինքս ամեն ինչ կկազմակերպեմ:

Ինձ ձեռք չի տա **լիզինգով** գյուխտեխնիկա գնել:

Աքբա բանկով **լիզինգով** հնարավոր է գումարներ վերցնել, բայց տեխնիկան անմատչելի է, ամբողջ կյանքդ չես կարող փակել:

Գյուղտեխնիկայի քանակի խնդիր գրեթե չունենք, հնացած էլ կա, նորերն էլ՝ **լիզինգով**:

Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ

Ոռոգման ջրի հետ կապված ամենագլխավոր խնդիրը կորուստներն են: Կորուստների հարցը եթե կարողանանք կառավարել, լավ կլիներ:

Մյասնիկյան համայնքում ջրի խնդիրը կա, մեր հողատարածքների 30 տոկոսն է ոռոգվում, համ ջուրն ա քիչ, համ համակարգն ա վատ, եթե Մաստարայի ջրամբարը կառուցվի, ջրի խնդիրը կլուծվի:

Կաթիլային ոռոգման համակարգի օգտակարությունը չի երևում նույնիսկ փորձարկման փուլում:

Գյուղատնտեսությունը զարգացնելու համար խիստ կարևոր է ոռոգման ջրի տնտեսումը:

Ջուր չլինելու պատճառով մարդիկ տարեցտարի թողնում են իրենց տարածքները և գերադասում են գնալ վարձով աշխատել:

Համայնքի բնակիչների ներուժը կհերիքի անմշակ բոլոր հողերը մշակել, եթե ոռոգման խնդիրը ամբողջական լուծում ստանա:

Ես առաջարկում եմ, որ ջուրը տեղափոխելու հարցում մրցակցություն լինի, ֆերմերները սուբսիդավորվեն, ինչպես կաթիլային համակարգի համար են սուբսիդավորվում, որ ջրի կորուստ չլինի:

Կաթիլային համակարգը ոչ բոլոր մշակաբույսերի համար է հարմար կիրառել:

Անհրաժեշտ է փոխել խողովակների համակարգը, որովհետև մինչև ջուրը հասնում է, մեծ կորուստներ են լինում: Դրա համար մեծ գումարներ է պետք ներդնել:

Երվանդաշատում ամենագլխավոր խնդիրն այն է, որ գյուղացիները հնարավորություն ու թույլտվություն չունեն մոտենալ նույնիսկ Արաքսի ափին:

Ես ընդունում եմ կաթիլային համակարգը, դա արդարացված է, ջուրն էլ խնայողաբար կօգտագործվի, բայց մենք ուրիշ պրոբլեմներ ունենք, որ բերքի ավելացումը միայն ջրից չի կախված. պարարտացում, բերքի իրացում և այլն...

Փոքր տարածքներում կաթիլային համակարգը հարմար է, բայց պետք է ջրի կորուստը նվազեցնել, խողովակները փոխել:

Ինքնահոս ոռոգման ջրագծերի բարելավումը խիստ կարևոր է Հայաստանում գյուղատնտեսությունը զարգացնելու համար:

Եղել են դեպքեր, երբ գյուղացիները չեն կարողացել հողերը մշակել, վաճառել են խոշոր հողատերերին՝ ուրախանալով, որ ոռոգման համակարգ է քաշվելու, իրենք էլ կօգտվեն: Էն էլ չգիտեին, որ ոռոգման համակարգը փակ է լինելու, առանց ջուր են իրենք մնալու:

Թող արևային համակարգով, հոսանքով տաքանան, մեխանիզմներ պետք է ստեղծել, որ մարդիկ գոմաղբը չվառեն ու դա հող վերադառնա, որովհետև գոմաղբը նաև չի թողնում, որ ջուրը գոլորշիանա, խոնավությունն է պահում:

Նոր ջրամբարներ պետք է կառուցենք: Շատ համայնքներ ունենք մեր մարզում, որոնք ունեն բնական ու արհեստական ջրամբարներ, որոնք այս եղանակին արդեն դատարկ են: Մինչդեռ այդտեղ կարելի է ջուր կուտակել:

Ոռոգման ջուրը ձմռան ընթացքում չպետք է կտրվի, մեր մոտ նոյեմբեր ամսին փակվում է, մինչդեռ այդ ջուրը կարող է լցվել այդ ջրամբարները:

Գյուղատնտեսության համար ջուրը պետք է բավարար լինի, եթե ձկնաբուծությունն է դրան խանգարում, պետք է այնպիսի բան մշակել, որ ոչ մեկը չտուժի:

Արարատյան դաշտավայրում ջուրը շատ մոտ է, ամբողջ ձկնաբուծությունը կենտրոնացրեցին մարզում, բայց դա խիստ վնասեց գյուղատնտեսությանը: Հեշտ ձևը գտել էին, շահագործում էին դաշտավայրի ռեսուրսները:

Պետական աջակցության լավ ծրագրեր կան, օրինակ՝ ջրատար առուներ են սարքում: Աստիճանաբար այդ ծրագրերը կընդլայնվեն:

Հողից ջրատարներ կան, որոնց մինչև 50% կորուստ են տալիս: Մինչև դրանք չփոխվեն, ջրի խնդիրը մնալու է:

Կիսախողովակների հարցը շատ կարևոր է ջրօգտագործողների համար, քանի որ դրանց առկայությամբ ջրի կորուստը աննկարագրելի շատ է:

Օրինակ՝ նոր ջրատար սարքեցին, բայց ջրի ծավալն այնքան քիչ էր, որ արդյունավետությունը չնչին էր: Փոխարենը կարելի է գյուղերի ջրագծերը փոխել:

Մեր համայնքները սնվում են Ախուրյանի ջրամբարից, օղորմի Սովետական միությանը, Արագածի ջուրը թունելով եկավ ինքնահոս: Թուրքիան երկրորդ մեծ ջրամբարն է կառուցում, դրա համար Ախուրյանում ջուր չմնաց: Թող ժողովուրդը սոված մնա, բայց պետությունը ջրամբարը կառուցի:

Խնդիրները շղթայական են. ջուր չլինելը մի խնդիր է, ջուրն օգտատերին հասցնելը մի այլ խնդիր: Ջրի կորուստը հսկայական է:

ՋՕԸ-երը միայն փող հավաքող կազմակերպություններ են: Ոչ մի ներդրում, մի խողովակ անգամ չեն փոխել մեր գյուղում: Ես սպասարկման գումար եմ տալիս, ես ջուրը բացում եմ, լցվում է դաշտը, բա ինքն ի՞նչ է անում...

Նոր տեխնոլոգիաները լավ են, ոգևորիչ են: Ես՝ որպես համայնքի ղեկավար մասնակցել եմ նման ծրագրի ներկայացումներ: Օրինակ խնձորի ինտենսիվ այգու գաղափար կա, կաթիլային ոռոգմամբ, որը սակայն ենթադրում է հսկայական գյուղատնտեսական վարկեր վերցնել, որը գյուղացին իրեն չի կարող տալ:

Պետք է մտածենք ոռոգման համակարգի արդիականացման մասին: Մեր առուների մեծ մասը հողային հունով առուներ են, և ջրի մեծ կորուստ է լինում: Ոռոգման համակարգի վրա ներդրումներ չեն արվում, մինչդեռ ոռոգման ջրի կորուստն ամենալուրջ խնդիրներից է:

Բաղրամյանի շրջանում ոռոգման ջրերն Ախուրյանից են գալիս, խորքային ջրերի հետ կապված խնդիրներ չունենք:

Այսօր Արմավիրում համար մեկ խնդիր ոռոգման խնդիրն է, սա պետք է լինի պետության առաջնահերթությունը: Բարձր տեխնոլոգիաների կիրառումը առաջիկա տաս տարվա համար չեն կարող լինել առաջնահերթություն: Գյուղացին հասարակ տեխնիկա ձեռք բերելու և աշխատելու խնդիր ունի էսօր:

Ունենք շատ խորքային հորեր: Թեև դրանց համատարած օգտագործումը նույնպես կարող է շատ լուրջ բնակլիմայական խնդիրներ առաջացնել: Սրանով կարող ենք օգտագործել այն հողերը, որոնք ավանդաբար անմշակ են եղել:

Ջրատարների հիմնական խնդիրը որ լուծվի, կաթիլային ոռոգման պրակտիկան ավելի կընդլայնվի:

Կաթիլային ոռոգման հետ կապված Զարթոնքի բնակիչը չէր կարողանում արդյունք ստանալ, գնաց Էջմիածնի տարբեր գյուղերում հողեր է վարձում, կաթիլային ոռոգմամբ մշակում ու արդյունք է ստանում: Քաղաքի բնակիչներն էլ օրը վեց հազար դրամով վարձով աշխատում են իր մոտ:

Մեր մարզում անհրաժեշտություն է կաթիլային և հակակարկտային համակարգը, լուրջ ներդրումներ են պահանջվում այս ուղղությամբ:

Մեծածախ շուկաներ տանող ճանապարհների խնդիր կա: Օրինակ Մեյմանդարի շուկա տանող ճանապարհին այնքան շատ «պառկած ոստիկաններ» կան, որ բեռնված մեքենաները հաճախ փչանում են:

Գյուղացին սպառման մասին չպետք է մտածի, դրա համար պետք է մեխանիզմներ մշակել ճանապարհների, վերամշակողների հետ կապված:

Մեր մարզում անհրաժեշտություն է կաթիլային և հակակարկտային համակարգը, լուրջ ներդրումներ են պահանջվում այս ուղղությամբ:

Մեր մարզում անհրաժեշտություն է կաթիլային և հակակարկտային համակարգը, լուրջ ներդրումներ են պահանջվում այս ուղղությամբ:

Ոռոգման համակարգերում ունենք տեխնոլոգիաների խնդիր: Կառավարության սուբսիդավորումը լավ է, բայց արդյունքը տեսնելու ենք տարիներ անց: Կարող ենք արձանագրել, որ ճիշտ ուղու վրա ենք:

Ոռոգման համակարգի, պարարտանյութերի և այլ գործողությունների համար, պետք է լինի կենտրոնացված համակարգ, այսինքն մարդը հստակ տեղեկացված լինի, թե գյուղաշխատանքները երբ պետք է իրականացնի: Գյուղմասնագետների մեծ պակաս ունի գյուղը:

Մենք Մարտունիում ունենք մոտ 300 հեկտար լավ հող, որը չի մշակվում, դրա պատճառը հողերի մասնատվածությունը և ոռոգման բացակայությունն է:

Ոռոգման խնդրի պատճառով անմշակ են մնում մեծ հողատարածքները, քանի որ մեծ հողատարածքի դեպքում գյուղացին պետք է իր միջոցներով իրականացնի ոռոգումը ու իրացման խնդրի պատճառով գյուղացին ռիսկի չի դիմում:

Մենք ոռոգման խնդիր չունենք, օրինակ, ծովի ջրով, նասոսով ոռոգում ենք, բայց մենք խնդիր ունենք գյուղտեխնիկայի մասով: Քաղի սեզոնը գալիս է, տեխնիկա չկա, որ քաղես, սա պետական մակարդակով պետք է լուծվի:

Կաթիլային ոռոգման ծրագիրը պետք է ակտիվացնել հողամասերում, իսկ դաշտերում ու արտերում այդ ծրագիրը իրականացնելը կարելի է համարել անհնար:

Երկրորդը ոռոգման խնդիրն է, ԽՍՀՄ-ի տարածքում ունեցել ենք ոռոգման զարգացած համակարգ, այս համակարգը այսօր քանդված է, պետք է քայլեր ձեռնարկել, ջրամբարներ կառուցել, շեշտը դնել ինքնահոս ջրամատակարարման վրա: Այսօր մենք բնական տարբեր ջրամբարներ ունենք, որ արդյունավետորեն կարող են օգտագործվել:

Ջերմոցատնտեսության մեջ կաթիլային ոռոգման անցնելը ձեռնտու է: Տեղեկատվության պակասի պատճառով շատերը չեն օգտվում ծրագրից:

Հասանելի ջրի դեֆիցիտ ունենք: Ունենք մեծագույն խնդիր մենեջմենթի առումով: ՋՕԸ-երի աշխատանքը պետք է ճիշտ համակարգվի:

Կարելի է ստեղծել համակարգող մարմին՝ չմշակվող, բայց ոռոգելի հողերը հաշվառելու ուղղությամբ: Խորհրդատվություն տրամադրի, թե այդ տարածքներով ինչ տեսակի մշակաբույսեր աճեցնի: Պետությունը կարող է նաև պարտավորություն վերցնել համապատասխան մշակաբույսերի որոշակի քանակություն իրացնելու ուղղությամբ:

Մարտունիում մարդիկ կամ տնամերձ հողերն են մշակում կամ մի քանի անասուն պահում: Ոռոգման ջրի խնդիր չունենք, բայց մեխանիկական միջոցներով ենք ոռոգում, ինչը ջրի գինը թանկացնում է, արդյունքում՝ գյուղատնտեսությունն այդպես էլ չի զարգանում:

Ճանբարակում լեռնային պայմանների պատճառով հասանելի չէ ոռոգումը: Ինչպես նաև տեխնիկայի խնդիրը, կոոպերացիաները չեն գալիս այն մակարդակի, որպեսզի կարողանանք որակյալ աշխատանք իրականացնել: Գյուղացին անդադար «վազում է» տեխնիկայի հետևից: Պետք է տեխնիկայի կառավարման պարկը ճիշտ համակարգել, որպեսզի սեզոնին գյուղացին իր ճիշտ հերթն իմանա:

Ծովինար համայնքում ոռոգման ջրի խնդիր չունենք: Երիտասարդներին խրախուսելու կարիք կա, օրինակ՝ սուբսիդավորմամբ: Բայց երիտասարդներին վարկեր չեն տրամադրում՝ ասելով, թե վարկային պատմություն չունես, կամ նայում են ընտանիքի այլ անդամների պատմությանը և մերժում, թե «հայրդ վատ վարկային պատմություն ունի»:

Օրինակ, մենք տեխնիկայի խնդիր անընդհատ ունենք, խոշոր տեխնիկա չունենք մեծ հողակտորների դեպքում: Իսկ ավտոմատ ոռոգումը, ավտոմատ տեխնոլոգիաները, կաթիլայինը և այլն արդյունավետ կլինեն, եթե խոշորանան, միավորվեն ու դա պետք է էնպես արվի, որ մարդը չվախենա միանալ էդ միավորմանը, որ փոքրը չտուժի:

Պետությունը պետք է աջակցի գյուղատնտեսությանը: Մարտունիի տարածաշրջանում շատ հողեր չեն մշակվում. երբ ես գնում եմ սեփականատիրոջը ասում՝ տուր հողդ մշակեմ, ասում է չէ: Պետությունը պետք է որոշակի լուծումներ գտնի: Շատ մարդիկ կան, որ պատրաստ են վարձակալությամբ վերցնել, բայց երկարաժամկետ: Եթե այս մարդկանց հնարավորություն տրվի, հաստատ հարյուր հա տարածքի համար ոռոգման խնդիր էլ կլուծեն:

Մեր գյուղատնտեսությունում շարժ նկատվում է, ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Ցանքս էլ չենք անում, որովհետև ոռոգման խնդիր ունենք, նախկինում ջուրը պոմպակայաններով էին վերցնում, տալիս մեզ, հիմա որ ՀԷԿ-երը կառուցել են, ջուր էլ չունենք:

Ոռոգման համակարգում փոփոխելու շատ բան կա. տեղեր կան, որ ջուրը գնում կորում է, իսկ տեղեր կան՝ ջուրը չի հասնում ոռոգման համար:

Մենք էլ հող ունենք, 20 տարի է չենք մշակում, ժամանակին կտավատ ենք ցանել, կարտոֆիլ, բայց բերք չէին ստանում, բաց տարածք էր, չէր պահպանվում, անասունները վնասում էին, բացի այդ ոռոգման ջուր չկար: Ու նման կերպ շատերը հրաժարվեցին այդ տարածքում մշակելուց: Հիմա եթե ինչ-որ մեկ ուզի վարձակալությամբ վերցնել, ես կտամ: Եթե պահպանության ու ջրի հարցը լուծվի, մարդիկ հաստատ կմշակեն:

Ոռոգման ջուրը Վաղաշենում մեծ խնդիր է դեռ խորհրդային տարիներից: Մինչև չապահովենք, ինչպե՞ս պիտի պահանջենք, որ գյուղատնտեսությամբ զբաղվեն:

Ձուկը պետք է աճի էնտեղ, որտեղ բերք ու բարիք հնարավոր չի աճեցնել, ձուկը պիտի Սևանում աճեցնել, Արարատյան դաշտին պետք է հանգիստ թողնել, ոչ թե ստեղից ջուր տանել, էնտեղ աճեցնել:

Մեզ մոտ կաթիլային ոռոգում իրականցվում է Արարատյան դաշտում, որովհետև խորքային հորերից է ջուրն ստացվում: Իսկ Գեղարքունիքում ինքնահոս համակարգեր են պետք: Այստեղ ոռոգման ներքին ցանցը բաց ցանց է, կաթիլայինին անցնելու համար պիտի փակ ցանցից օգտվելու հնարավորություն տաս գյուղացուն: Ժապավենները 1-2 տարի ես կարողանում շահագործել, իսկ դրա համար մաքուր, ֆիլտրված ջուր է պետք. չտաս, փչանում են:

Գյուղացուն պետք է ցույց տալ, թե ինչպես կարելի է ավելի արդյունավետ տնտեսություն վարել: Օրինակ՝ ես հակակարկտային ցանցով պատված ազնվամորու դաշտ եմ մշակել, կաթիլային համակարգով: Իմ

արածի արդյունքն եմ ուզում ցույց տալ, և դրա հիմքի վրա մյուսներին խրախուսել, թփեր տալ ուրիշներ, կաթիլային համակարգի մասին ուսուցանել:

Օրինակ, մենք տեխնիկայի խնդիր անընդհատ ունենք, խոշոր տեխնիկա չունենք մեծ հողակտորների դեպքում: Իսկ ավտոմատ ոռոգումը, ավտոմատ տեխնոլոգիաները, կաթիլայինը և այլն արդյունավետ կլինեն, եթե խոշորանան, միավորվեն ու դա պետք է էնպես արվի, որ մարդը չվախենա միանալ էդ միավորմանը, որ փոքրը չտուժի:

Մեր գյուղատնտեսությունում շարժ նկատվում է, ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Սովետի ժամանակ, կոլխոզ-սովխոզներն իրենց ճանապարհները սարքում էին, դե խոտհարքները բարձրլեռնային հատվածներում են, հիմա էդ ճանապարհները պետք է բացել, մարդիկ առաջ լեռնային հատվածներում ցորեն ունեին ցանած, ճանապարհը էնպես էր սարքած, որ կոմբայնը բարձրանում էր, հիմա ճանապարհ չկա, սա պետությունը պետք է անի:

Ժողովուրդն իր կենդանիների «ձեռքը կրակն» է ընկել: Պետք է ստեղծվի շրջիկ սպանդանոցներ, որպեսզի գյուղացին չտանի անասունը սպանդանոց, այլապես եկամուտ չի ստանա:

Հողերի կտրվածությունը, որակյալ սերմացուի և տեխնիկայի բացակայությունը, ոռոգման համակարգերի բացակայությունը լուրջ խնդիրներ են:

Որպես կաթնամշակման գործարանի տնօրեն, կարող եմ ասել, որ ոռոգման խնդիրները մեզ այնքան էլ չեն հուզում: Փոխարենը հարկային դաշտի հետ կապված խնդիրներն առաջնային են:

Մեր համայնքում հազար հինգ հարյուր հեկտար տարածությունից ոչ մի հեկտարը չի ոռոգվում, անջրդի հողեր են, իսկ մյուս մասն էլ չի մշակվում սողանքների պատճառով:

Ոռոգման ջրի նորմալ մատակարարման դեպքում գյուղացին հնարավորություն կունենա տարբեր մշակաբույսեր ցանել:

Մեր բնակավայրերից մեկում լավ զարգացած է հացահատիկային բույսերի մշակումը, բայց ոռոգման համակարգը լավ վիճակում չէ: Եթե լինի լավ համակարգ, մեծ պոտենցիալ ենք տեսնում այդ ոլորտի զարգացման հարցում:

Տաթևի համայնքում լոբի, կարտոֆիլ, վարունգ, պոմիդոր, գրեթե ամեն ինչ կարելի է աճեցնել, բայց ոռոգման ջրի բացակայության պատճառով ավելին չենք կարող անել: Տնամերձերը մոտ 1000 քառակուսի մետր են, բայց կան նաև չօգտագործված հողեր, որոնք կարելի է մշակել:

Մեր գյուղում բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ ենք զբաղվում, բայց ոռոգման համակարգի խնդիր ունենք. սեզոնային ընդհատումներ են լինում, արդյունքում՝ օգուտ չենք ստանում, ինչքան էլ որ ներդրում ենք անում:

Ես աշխատում եմ կանանց ռեսուրս կենտրոնում, ամուսինս զբաղվում է այգեգործությամբ, խոզաբուծությամբ, նաև հացահատիկային կուլտուրաներ ենք մշակում, մեր հացահատիկայինը անջրդի է, ոռոգման խնդիր ունենք, քանի որ Տեղ համայնքում է գտնվում, իսկ այգիները խմելու ջրով ենք ջրում: Մենք, օրինակ չգիտեինք, որ կառավարությունը ֆինանսավորում է ինտենսիվ այգիներ ստեղծելու ծրագիր: Վարկային ծրագրերից էլ չենք օգտվել, թեև հետաքրքրված ենք

Էսօր մեր կողքով Արաքսն է գնում, բայց մենք իսկի նասոսներ չունենք ջրելու համար: Արդյո՞ք պետք է խոսել կաթիլային ոռոգման մասին:

Կաթիլային ոռոգում պետք է կիրառվեն նոր այգիներում, հին այգիների պարագայում այս մեխանիզմը հնարավոր չէ կիրառել:

Գորիսի շրջակա գյուղերի բնակիչների հետ որ խոսում եմ, իրենց համար ոռոգման խնդիրը ամենաառաջնայինն է, հատկապես Տաթև և Տեղ համայնքների համար, Խոզնավար բնակավայրը նաև, իրենք ոչ միայն ոռոգման ջրի խնդիր ունեն, այլ նաև խմելու ջրի խնդիր ունեն: Օրինակ Գորիսի խնդիրը հիմնականում խողովակաշարերի վիճակի հետ է կապված Վեոլիա ջուրը չի կարողանում ապահովել, իսկ ոռոգման խնդիրը ջրային կորուստների պատճառով է, դարձյալ խողովակաշարերի վիճակն է վատ:

Կաթիլային ոռոգումը հնարավոր է դարձնում ջուրը խնայել:

Ոռոգման համակարգի խնդիրների լուծում առայժմ չեմ տեսնում Գորիսին կից համայնքներում: Եղածը ոչ բարվոք վիճակում է: Մեր ոռոգման ցանցը Որոտան ԳԷՍ-ից է գալիս, անցնում է մի քանի համայնքներով, մինչև մեզ է հասնում, արդեն ոռոգման ջուր էլ չի լինում: Մայիս-սեպտեմբեր ենք միայն ոռոգման ջուր ունենում, որն ազդում է բերքի վրա: Խնձորեսկում որոշակի աշխատանքներ անելուց հետո խնդիրը կարող է լուծվել, բայց առայժմ որևէ նախաձեռնություն չկա:

Եթե ամբողջ տարին ջուր լինի, երկրորդ, անգամ երրորդ բերք կարող ենք ստանալ, բայց ջուր չունենք: Թե՛ ներքին, թե՛ մայր ջրագծի խնդիր է:

Հարժիս բնակավայրում՝ Տաթևի համայնք, ընդհանրապես ոռոգման ջուր չկա: Մարդիկ չեն էլ կարող գյուղատնտեսությամբ զբաղվել: Ով որքան կարողանում է, խմելու ջրով մի փոքրիկ հատված է մշակում: Կաթ ենք մշակում, պանիր, իսկ մնացած գյուղատնտեսական ապրանքները փոխանակման միջոցով ենք ձեռք բերում:

Մեր ամենամեծ խնդիրը ոռոգման ջուրն է, ջրագիծը հին է, բայց աշխատում է, գետի վրա էնքան ՀԷԿ են դրել, որ մեզ ջուր չի հասնում, նոր տնկած ծառերը չորանում են: Գորիսում տասնհինգ-քսան գյուղ ջուր չունի, գրաֆիկով մի քիչ առավոտ, մի քիչ՝ երեկոյան ջուր են տալիս, մարդիկ սկսում են կենցաղային նպատակով օգտագործման համար հավաքել, էլ ժամանակ չի մնում, որ ոռոգման համար էլ հավաքես:

Մենք, ունենալով այսքան բերրի հողեր և քաղցրահամ ջուր, ցավոք սրտի, ավելի շատ ներմուծում ենք, քան՝ տեղում արտադրում:

Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղում հիմնական խնդիրը ջուրն է, ջուր ունենք, բայց նասոսներ չունենք:

Ենթադրենք՝ մարդ տնկել է ծառ, տասնհինգ տարի ջրել է առուներով: Եկել է պահ, որ ջուրը սուղ է, պետք է ջրենք կաթիլային ոռոգմամբ: Այդ ծառի արմատային համակարգն այնպես է զարգացած, որ կաթիլային ոռոգմամբ, հնարավոր է, այլևս բերք ստանալ չկարողանանք:

Խողովակը կողքներովս գնում ա, ջուր չունենք:

Գոնե էդ ՀԷկ-երը ջրի մի մասը վերադարձնեն հուն, ինչ-որ գիծ սարքվի, որ մարդիկ կարողանան ջրել: Դուք պատկերացնու՞մ եք գյուղ, որ բանջարեղեն էլ չկարողանա իր դռան առաջ ցանել: Սրանից հետո էլ մեծ բաներից, գյուղատնտեսություն զարգացնելուց չենք կարող խոսել: Օրինակ, Շինուհայրում ամբողջ գյուղը բողոքում է, բայց բանի տեղ դնող չկա:

Ամենամեծ խնդիրն էն է, որ ջրովի հող չունենք, ամբողջն անջրդի է: Միայն Որոտանի հատվածում յոթ-ութ ՀԷԿ կա դրած:

Եթե գյուղամիջյան ճանապարհները ևս վերակառուցվեն, գյուղմթերքի ինքնարժեքը կիջնի:

Նախիրը չպետք է ասֆալտով գնա, ծրագրի շրջանակներում հարյուր քսան կմ երթուղի է նախատեսվում անասունների համար: Ճանապարհի եզրով անասունների խնամքի համար անհրաժեշտ բոլոր

ենթակառուցվածքները պետք է լինեն, անասունները այդ ճանապարհները պետք է անցնեն մեկ ամսում: Նման մոտեցմամբ արոտավայրերի խնդիրը որոշ չափով կլուծվի:

Սպանդանոցների ծրագիրը արվում է գյուղացու հաշվին, գյուղացին միշտ տուժում է:

Սպանդանոցները մեր համայնքում շահավետ չեն, քանի որ մենք մեր անասուններին վաճառում ենք մինչև մորթելը:

Սպանդանոցները պետք է գյուղերին մոտ տարածքներում լինեն:

Սպանդանոցների առումով մարդիկ շատ թերահավատ էին սկզբում. ինչպե՞ս եմ հասցնելու ապրանքը սպանդանոց, ես իմ բակում եմ ամեն ինչ կազմակերպում, թող գան, վերահսկեն, ինչո՞ւ եմ ես գնալու... Առայժմ մեր համայնքում դեռ չի ներդրվել այս քաղաքականությունը, տեսնենք ինչ կստացվի:

Սպանդանոցի միտքն ինքնին շատ լավն է, բայց կարևոր խնդիր է անասունների մորթի ժամանակի և տեղափոխման հարցը: Առաջինը հատկապես կապված է վարկերի մարման հետ: Օրինակ՝ գյուղացին կարող է անասունը մորթել, վարկը փակել:

Այսօր գյուղական համայնքներում գերխնդիր է անասնաբույժների հարցը: Նրանք ծառայություն են մատուցում, բայց շատ քիչ են վճարվում: Գյուղացին դեռ չի հասել այն մակարդակին, որ հասկանա՝ ամեն ինչի համար պետք է վճարել:

Արոտավայրերը գյուղից հեռու են, այդ իսկ պատճառով կան սորտեր, որոնք չեն կարողանում մեր համայնքում գոյատևեն:

Անասունին հարյուր կմ քշես, քաշ է գցելու: Ավելի լավ է մտածել խոտը, ոչ թե անասունին տեղափոխելու մասին:

Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ

Գյուղտեխնիկայի հարցը ևս խնդիր է, սկզբից բերեցին ու կոոպերատիվներին տվեցին ու հարմար էր անցան մի քանի տարի լիզինգով սկսեցին տրամադրել ու գրեթե երկու անգամ թանկ:

Տեխնիկա ունենք, դրանից չենք նեղվում, ավելի շատ մասնագետների վճարելիության հարցն է: Դա մտել է հարկային դաշտ:

Պետության տրամադրած դիզվառելիքը անորակ է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում **տեխնիկան**:

Գյուղապետարանն էլ որ ձեռք է բերում տեխնիկա, ԽԾԲ-ով են տրամադրում:

Գյուղտեխնիկան ներմուծում են մոնոպոլիաները, ինչ գին ուզում դնում են:

Մեծ հողատերերին 20 հա ու ավելի ձեռք կտա տեխնիկա առնել, հակառակ դեպքում գումարով վարձում են:

Վարչապետը որ լինեի, կբերեի գյուղապետին կտայի երկու տրակտոր, որը կծառայի ամբողջ գյուղին, պետությունը պետք է գյուղացուն դուխ տա:

Մասնավոր ձեռնարկատիրոջը պետք է ազատել հարկերից և ուղղորդել, որ գումարները ներդնի **գյուղտեխնիկայի** ձեռք բերման մեջ և վարձակալությամբ աշխատի գյուղացու համար:

Տասը տոկոսն է ապահոված տեխնիկայով, թանկ հաճույք է:

Համայնքին թող գումար տրամադրվի, տեխնիկա գնի համայնքը:

91 թվականից հետո նոր տեխնիկա ձեռք չի բերվել: Պետությունը պետք է օգնի, որպեսզի տեխնիկայի օգտագործման սանդղակ ձևավորվի: Օրինակ՝ մեկ հեկտարը վարելու համար 40,000 փող են ուզում: Մինչդեռ 20,000 է նման ծառայության գինը: Այսօր մասնավորն է թելադրում գինը:

Գյուղտեխնիկան ընդհանուր մաշված է:

Կողմ եմ որ մեքենաների պարկ ստեղծվի պետության կողմից, ֆերմերը պայմանագիր կնքի հետը և բերքը ստանալուց հետո վճարի:

Այսօր մեծ խնդիր է գյուղտեխնիկայի մաշվածությունը: Պետք է գյուղտեխնիկայի կենտրոնական պարկ ստեղծել:

Սովխոզտեխնիկայի պես կառույց է պետք, որը գյուղացիներին կապահովի գյուղտեխնիկայով:

Տրակտոր ու **տեխնիկա** ամբողջովին մասնավորի ձեռքին է. գնագոյացումն ամբողջովին կամայական է:

Ռազմավարական ծրագրի ներկայացուցիչները ասում են պետք է լինի **տեխնիկա**, որպեսզի սկսեն շինարարությունը, մյուս կողմն էլ նշում է մինչև շինարարությունը չվերջանա, տեխնիկա չենք տա: Սա մի փակ շղթա է:

Տեխնիկա ձեռք բերելու համար կոոպերատիվները շատ հարմար են, բայց հետագա աշխատանքը՝ կախված՝ մեր մենթալիտետից չի աշխատի:

Կոոպերատիվները ստեղծվում են, որպեսզի ինչ-որ մեկի համար ձեռք բերեն **տեխնիկա** և վերջ:

Տեխնիկան երբ բերվում է կոոպերատիվ, այն օգտագործվում է բոլորի համար:

Ով շահագրգռված է **տեխնիկա** ձեռք բերել, մտնում է կոոպերատիվի մեջ:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող գին պարտադրել: Համայնքի սեփականություն **տեխնիկան** ամենաճիշտն է:

Գյուղատնտեսությունը ցիկլային գործընթաց է. ամեն մեկի ձեռքում մի բան է, **տեխնիկան** մեկի ձեռքում է, հողը մյուսի, նույնը նաև դեղերի դեպքում է, այդ շղթան պետք է լինի մի հոգու ձեռքում:

Գյուղատնտեսական **տեխնիկայի** լիզինգի ժամանակահատվածը պետք է երկարացնել մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ:

Մենք խոշորացած համայնք ենք, ունենք ավտոպարկ, որը մեզանից քսան կիլոմետր հեռու է և արդյունավետ չի: Մեզ ասում են՝ ձեզ տեխնիկա տվել ենք, բայց այդ **տեխնիկան** մեր մոտ չի կարող հասնել:

Գյուղացին պատրաստ չէ **գյուղտեխնիկա** գնի: Պետք է պետությունը զբաղվի այդ հարցով:

Գյուղտեխնիկան մաշված է, թարմացման կարիք կա:

Տեխնիկաները բարոյապես, ֆիզիկապես մաշված են, նոր տեխնիկայի խնդիր ունենք: եթե նոր տեխնիկան մեկ հեկտարը կվարի մեկ ժամում, մենք օրերով ենք վարում:

Տեխնիկան պետք է պետությունը տա համայնքին, համայնքում աշխատի գյուղացու համար, հետո բերքահավաքի վերջում գյուղացուց գանձվի այդ գումարը:

Տեխնիկան տվել են խոշոր համայնքներին, բայց որևէ մեկը հաշվի չի առել, դա կհերիքի բոլոր գյուղերին, թե ոչ:

Գյուղտեխնիկայի մաշվածությունը լուրջ խնդիր է, մեծ ծախսեր ենք անում վերանորոգելու համար:

Գյուղատնտեսական **տեխնիկայի** ձեռքբերումն անհատի կողմից նպատակահարմար չէ, այն պետք է ստեղծվի պետության կամ կոոպերատիվների կողմից, որպեսզի կամայական գնագոյացումից չտուժենք:

Գյուղտեխնիկան շատ թանկ է, գյուղացին չի կարող մենակ գնել տեխնիկա, իսկ կոոպերատիվում վստահություն չկա, որ բոլորով պատասխանատու կլինեն վարկի համար:

Բոլոր համայնքներում առնվազն հինգ հարյուր հեկտար հող չի մշակվում: **Տեխնիկան** բերենք, ի՞նչ անենք: Գյուղացուն երաշխիք է պետք պետության կողմից իրացվելիության: Այդ դեպքում այդ հողերն էլ կմշակվեն ու հավելյալ ու նոր տեխնիկան իմաստ կունենա:

Տեխնիկայի օգտագործումն էլ է ծանոթ-բարեկամներով, այդպես չպետք է լինի:

Պետք է հարևանությամբ գտնվող մանր հողակտորները, նույն մշակաբույսով զբաղվեն կամ, ավելի լավ է, խոշորացում իրականացվի, որպեսզի **տեխնիկայի** օգտագործումը իմաստ ունենա ու ընդհանուր ծախսերը պակասեն:

Կրծողների դեմ պայքարը պետք է կենտրոնացված լինի, որովհետև եթե ես ինչ-որ կերպ իմ մկների դեմն առնեմ, հարևանի հողից են մտնելու... Ինչպես կան տրակտորային պարկեր, որոնցից բոլորն օգտվում են, այնպես էլ բուժման կենտրոններ են պետք, որոնք կմշակեն որոշակի ժամանակացույց, որով կկատարվի համայնքի բոլոր գյուղատնտեսական հողերի բուժումը:

Մեքենա-տրակտորային պարկեր պետք է սարքվեն:

Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, լիզինգով կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես 12 ամիս պիտի վճարեմ լիզինգը:

Երկար տարածքի վրա, միանգամից մի քանի գյուղ մի կոմբայն է սպասարկում: Այն էլ մաշված:

Եթե կոոպերատիվներին ես տրամադրում **տեխնիկան**, իրենք շատ սրտացավ են լինում, շատ ավելի արդյունավետ են օգտագործում:

Մեր գյուղում երկար ժամանակ չէր մշակվում, հիմա սկսել են մշակել, գյուղում **կոմբայն** չկա, կողքի գյուղից բերելու ենք, կարող է կամայական գին ասել:

Եթե պետությունը կոոպերատիվ է ստեղծել, բայց կարիքները հաշվի չի առնում, ասում ենք այս սարքավորումն է մեզ պետք, բայց մեզ տալիս են ուրիշ **տեխնիկա**, որովհետև ասում են ծրագրով դա է նախատեսված, իմաստը էլ որն է, որ քննարկենք մեր կարիքներն ու կարծիքները:

Կոոպերատիվները պետք է վերացվեն, քանի որ ոչ մի օգուտ չեն տալիս ու չեն կատարում իրենց ֆունկցիան՝ կոոպերատիվի անդամներին ավելի էժան գնով **տեխնիկա** չի տրամադրում:

Համայնքի բնակիչը տեղյակ չէ, որ իր համայնքում գոյություն ունի կոոպերատիվ ու կարող է իրեն **տեխնիկա** տրամադրել:

Կոոպերատիվները ստեղծվելու ընթացքում կոլեկտիվ **տեխնիկան** մտել է գյուղ ու դարձել մենաշնորհ:

Կոոպերատիվներին **տեխնիկա** տալուց ոչ միայն պետք է կարիքը հաշվի առնել, այլև պայմաններդ, ռելիեֆդ, քանի որ ունենք դեպքեր, երբ տրված **տեխնիկան** մեր հողում ու պայմաններում չի աշխատում:

Կոոպերացիաների ստեղծումը կանխեց **գյուղտեխնիկայի** աշխատանքի գների աճը, սպասարկումը դարձրեց գյուղացու համար ավելի մատչելի:

Կոոպերատիվին տրված **տեխնիկան** եթե չես էլ օգտագործում, բայց դրա վարձավճարը մեկ է մուծում ենք. մենեջմենթի խնդիր կա:

Տեխնիկան պետք է կենտրոնացնել. թող մի կազմակերպություն դա իրականացնի ու ոչ պետական լինի:

Հողերի խոշորացումից առաջ, նախ պետք է **տեխնիկական** պարկեր լինեն:

Տեխնիկան ու հողը առանձին են: Պետք է միանան:

Մարզի կտրվածքով առաջնահերթություններ են. **գյուղտեխնիկայի** թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ թունաքիմիկատների սուբսիդավորում, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Ինձ ձեռք չի տա լիզինգով **գյուխտեխնիկա** գնել:

Աքբա բանկով լիզինգով հնարավոր է գումարներ վերցնել, բայց **տեխնիկան** անմատչելի է, ամբողջ կյանքդ չես կարող փակել:

Գյուղտեխնիկայի քանակի խնդիր գրեթե չունենք, հնացած էլ կա, նորերն էլ՝ լիզինգով:

Այսօր **գյուղտեխնիկայի** հարցը լուրջ է, որովհետև փչանալու դեպքում մասնագետ չկա: Չկա ինժեներ պատրաստող որևէ օղակ:

Գլխավոր խնդիրը **գյուղտեխնիկայի** թարմացումն է:

Համայնքի ղեկավարի կողմից սխալ ցուցակագրում է տեղի ունենում և **տեխնիկայի** օգտագործման սխալ վերաբաշխում:

Պետությունից խնդրում ենք մի փոքր աջակցություն նոր **տեխնիկայի** տեսքով:

Հին **տեխնիկայի** պատճառով հացահատիկի վերամշակման ժամանակ 40 տոկոս կորուստ է ունենում գյուղացին, իսկ նոր տեխնիկայի վարձակալության գինը թանկ է և այդ գործով զբաղվում է գյուղապետի եղբայրը:

Գյուղտեխնիկայի բացակայության պատճառով այլ գյուղից է տեխնիկա բերելու համար գյուղացին մեկ հեկտարի համար կրկնակի է վճարում, քան այն գյուղերում որտեղ տեխնիկա կա:

Գյուղ **տեխնիկայի** մոնոպոլիան նույնպես հանգեցնում է գների աճին:

Պետք է լինի գյուղապետարանին կից **գյուղտեխնիկայի** հավաքակայան, որը պետք է վճարովի հիմունքներով տեխնիկա տրամադրի բոլորին անխտիր:

Գյուղատնտեսական **տեխնիկան** մասնավոր է և շատ հին:

Այսօր բացակայում է այն օղակը, որը կօգնի գյուղացուն **գյուղտեխնիկայի** օգտագործման հարցում:

Ռազմավարական քայլ՝ ստեղծել հնարավորություններ չմշակվող վարելահողերի մշակման համար, որոնք այսօր կազմում են շուրջ 40000 հեկտար, որի համար անհաժեշտ է **գյուղտեխնիկայի** թարմացում, էժան վառելանյութ, որակյալ սերմնացու և իրացման շուկայի կարգավորում, արտահանման շահավետ պայմաններ:

Թող ստեղծեն մեքենա-տրակտորային պարկեր առաջվա նման, տրակտորիստը ուղղակի աշխատավարձ ստանա, ոչ թե կամայական գնով սպասարկի գյուղացուն:

Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Գյուղացու տեխնիկան հնացած է, բայց կառավարությունն ու բանկերը մեզ աջակցում են լիզինգի միջոցով տեխնիկա ձեռք բերել:

Մեր համայնքում այս պահին թարմացված չի ավտոպարկը: Հին տեխնիկայով գյուղացիները շատ դժվար են աշխատում:

Հույս ունենանք, որ կգա մի ժամանակ, երբ լիզինգային վարկավորումը ավելի ձեռնտու կլինի ու բոլորը կկարողանան թարմացնել իրենց տեխնիկան:

Քարակերտում մի չորս-հինգ մեծ հողատերեր կան, որ մինչև հիսուն հա ունեն, բոլորը նոր տեխնիկա ունեն, իրենց գործն անում են:

Ամեն համայնք պետք է ունենա մեկ երկու մեխանիզմներ, որոնք պետք է նոր լինեն ու ժամանակակից, որոնցից կարող են օգտվել համայնքում բոլորը:

Այս պահին շատ վատ վիճակում է տեխնիկական բազան ու շատ մեծ խնդիրների առաջ ենք կանգնում այդ տեխնիկայի բացակայության պատճառով:

Տեխնիկայի հարցը ամենաարդիական հարցն է: Մեր համայնքում տեխնիկան շատ քիչ է: Օրինակ խոտքաղի ժամանակ մեր համայնքի տեխնիկան չի բավարարում:

Գյուղացին սեփականությունից կառչած մարդ է: Ես մի 400 քառակուսի մետր հողատարածք ունեմ, որն ասում են եղած տեխնիկայով մշակել չի լինի: Բայց դա այդպես չէ: Կա նման տեխնիկա, բայց այնքան թանկ է, որ գրեթե անհնարին է ձեռք բերել:

Փոքր հողատարածքների մշակման համար նախատեսված տեխնիկան մոտ 3000 դոլար արժե, սակայն մեզ մոտ վաճառվում է 10000-ով: Պետությունը պետք է սա վերահսկի:

Ես գյուղացի եմ ու հասկանում եմ բարձր տեխնոլոգիաներից: Ոչ մի գյուղացու վարկ չի հասնում, քանի որ նախկին վարկը չի վճարել: Եթե ես ունեմ հինգ միլիոն դրամ, կբերեմ ու կկիրառեմ բարձր տեխնոլոգիա, ավելի քիչ չարչարանքով ավելի մեծ արդյունք կստանամ:

Գյուղատնտեսության արդիականացումը ու վերազինումը պարտադիր պետք է, հատկապես տեխնիկապես վերազինումը, քանի որ մեր հողերը շատ քարքարոտ են:

Բացի ավտոպարկը թարմացնելուց, պետք է ներդնել նաև այնպիսի համակարգ, որ երիտասարդներին կդրդի որպեսզի սկսեն սովորել մեքենավարությունը և տեխնիկայի սպասարկումը: Սա օրհասական խնդիր է մեր գյուղերում, քանի որ մասնագետներն արդեն ծերանում են, իսկ նոր մասնագետներ չկան. մեր երիտասարդներին հետաքրքիր չէ այս մասնագիտությունը:

Գյուղացուն պետք է նոր տեխնոլոգիաներին ծանոթացնել, եթե օրինակ կա մի կազմակերպություն, որ հեշտ ձևը գտել է, մարդիկ չեն հավատում, իրենց պապական մեթոդներով են շարունակում անել:

Մեզ մոտ, Քարակերտում, կա «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը, 2003թ-ին ես իրենց ներկայացրի, որ մեքենատրակտորային կայան ստեղծվի, էն ժամանակ 70 000 դոլարի պատմություն էր: Տերովին տերն ա տարել, անտերին՝ գելը:

Համայնքների մեծ մասում չկան կոմբայններ:

Մյասնիկյանի համայնքապատկան ՄՏԿ կա, անտեր մնացած, գցած ա, կողքից անցնում ես, ցավդ գալիս ա:

Էսօր գնային առաջարկից բացի, կա նաև մեխանիզմի որակ: Ես Բելառուս ունեմ, որ խաղողս վարում եմ ընդամենը 10 լիտր սալյարկայով: Պետք է մեխանիզմն էլ մրցունակ լինի:

Գյուղատնտեսական մեծ տարածքներ ունեն, որոնք անմշակ են: Հող մշակելու համար թե՛ մարդ չկա, թե՛ տեխնիկա: Օրինակ՝ տարեցների և փոքր տարածքների համար հարմարեցված տեխնիկա չկա: Երիտասարդների համար ընդհանրապես հրապուրիչ չի գյուղատնտեսությունը:

Երիտասարդներին գյուղում պահելու համար պետք է նրանց համար գայթակղիչ պայմաններ ստեղծել. օրինակ՝ սերմացուի, պարարտանյութի, վառելանյութի, տեխնիկայի վարկավորման հնարավորություններ ընձեռել:

Էսօր գյուղացին շատ խղճալի վիճակում է, քանի որ տեխնիկայի խնդիր կա, համակարգման խնդիր կա:

Տեխնիկայի արդիականացման շնորհիվ գյուղացիներն ավելի շատ ու սիրով կկատարեն իրենց աշխատանքը:

Լեռնային գոտիներում հարցի լուծումներն են՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրում, հարմարված սերմերի մշակում, նաև արտադրանքի դիվերսիֆիկացիա:

Այսօր գյուղատնտեսությունը պետք է ժամանակակից տեխնիկա ունենա, որ բերքատվությունն ու որակն ավելանան:

Փոքր հողամասերում աշխատելու համար տեխնիկա գրեթե չկա:

Տեխնիկայի հետ հարցերն այժմ լուծման մեջ է, եթե համեմատենք տաս տարի առաջվա հետ, ապա տեխնիկան մաշված էր: Փոքր լիզինգային ծրագրի շնորհիվ ոչ թանկ տեխնիկան հնարավոր է ձեռք բերել:

Գյուղտեխնիկայի խնդիրը ոչ միայն դրա առկայությանն է վերաբերում, այլև դրա շահագործմանն ու պահպանմանը, որը ևս բավականին բարդ խնդիր է. օրինակ՝ պահեստամասերի ծախսը:

Մեր գյուղատնտեսությունում շարժ նկատվում է, ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Գյուղերի մեծ մասն ունի կոմբայնի հետ կապված խնդիր, ինչպես քանակի, այնպես էլ՝ մաշվածության:

Մեխանիզմների արդիականացումը օրհասական խնդիր է:

Միակ մտավախությունս այն է, որ բարձր տեխնոլոգիաների կիրառումը կարող է հանգեցնել աշխատուժի կրճատման:

Շատ լավ կլիներ, եթե համայնքում ավտոպարկ լիներ, գումարը մուծեի, բերքահավաքի ժամանակ ինձ օգնեին հավաքել բերքը: Բերքահավաքի ժամանակ բերքի կեսը մնաց դաշտում...

Քարահունջը Գորիսի համայնքի մեջ է մտնում, մենք գումարներ ենք մուծում համայնքի բյուջե, միգուցե այդ գումարները հնարավոր լիներ օգտագործել անհրաժեշտ պետական ավտոպարկ ստեղծելու համար:

Գյուղտեխնիկան օգտագործվում է առաջին տարին, մյուս տարի այն դառնում է մետաղի ջարդոն: Այդ տեխնիկայի մասերը թանկ հաճույք են, որ գյուղացին իրեն չի կարող թույլ տալ: Եթե մարդ վարկ է վերցրել, ու չի կարողացել բերք ստանալ, ինքը չի կարողանա այդ ծախսերը հոգալ:

Սահմանամերձ գյուղերում քայքայվել է գյուղատնտեսությունն ու տնտեսությունը: Դաշտերը դարձել են անմշակ, բերքատվությունը՝ խիստ ցածր: Դե դուրս եկեք, դաշտերը նայեք, հին տեխնիկան նայեք: Թեև այսքանից հետո սահմանամերձ համայնքի բնակիչները պայքարում են:

Տեխնիկայի մաշվածության առումով և վարկերի ոչ նպատակային ծախսերի հետևանքով գյուղացին շատ է տուժում:

Մեր հիմնական խնդիրը գյուղտեխնիկայի հնությունն է:

Նորագույն սարքավորումներ չենք կարողանում ձեռք բերել, քանի որ սարքավորումներ արտադրող ընկերությունների մեծ մասը Հայաստանում չունեն ներկայացուցչություններ, օրինակ՝ բրդի մշակման համար սարքավորում:

Հարժիսում բավականին մեծ ցանքատարածություններ են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել: Գյուղտեխնիկայի և ժամանակի խնդիր ևս կար:

Գյուղատնտեսությունը մարվում է, մարդիկ գյուղերը լքում են: Ապագայի հանդեպ վստահություն չկա: Տեխնիկան էլ՝ թանկ է:

Լիզինգային ծրագրի դեպքում յուրաքանչյուր տեխնիկայի գինը հիսուն տոկոսով ավելանում է:

Մարդը ունի մի քանի հեկտար հող, լիզինգի համար պետք է լիքը քաշքշուկի մեջ ընկնի: Կհավաքի բոլոր թղթերը, կվազվզի, վերջում կպարզվի, որ մի կետով չի համապատասխանում: Մարդկանց պետք է օգնել թե թղթարարության, թե տեխնիկա ու վարկեր ձեռքբերելու հարցում, թող գան նստեն գյուղապետարանում ու մարդկանց ուղղություն ցույց տան:

Հայաստանում բոլոր համայնքները ունեն գյուղտեխնիկայի պակաս, գյուղերում առկա տեխնիկան չեն հերիքում երբեք:

Տեխնոլոգիաների առումով աշխարհն այսօր գնում է գլոբալացման: Առանց տեխնոլոգիաների և գյուղատնտեսական սարքավորումների մենք հետ ենք մնալու համաշխարհային տենդենցից:

Գյուղացին ունի կանխավճարի խնդիրը ու չի կարողանում նույնիսկ լիզինգով տեխնիկա ձեռք բերի:

Գյուղացին փոքր հողակտորներ ունի, բայց տեխնիկա չունի: Մինչև կողքի համայնքից տեխնիկա ենք բերում, բերքը փչանում է:

Երբեմն որպես օգնություն տեխնիկա են տրամադրում, կարճ ժամանակ անց տեխնիկան չի աշխատում, որովհետև որակյալ չէ:

Մասնավորն իր տեխնիկան օգտագործում է նախ իր հողերը մշակելու ու բերքը հավաքելու համար, հետո տրամադրում է այլ գյուղացիներին:

Ը. ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Պարարտացումն է շատ կարևոր. մեր տարածաշրջանում պարարտացում չի արվում, գոմաղբը այրվում է, մարդիկ ձմեռը գոմաղբ են այրում, իսկ դուք պատկերացնում ե՞ք դա ինչ նշանակություն կարող է ունենալ հողի համար:

Վերամշակման դեպքում սննդի անվտանգության և վերահսկողության խնդիր կարող է առաջանալ, ալկոհոլային վերջին թունավորումը դրա օրինակ էր: Մարդը գրանցված բիզնես չէր, համապատասխան թեստավորում չէր անցել, ինչը մարդկային կյանքեր արժեցավ:

Սերմերի վիճակն է շատ վատ, շատ անհասկանալի սերմեր են, սերմը պիտի սերտիֆիկատ ունենա, որ մարդիկ իմանան ինչ են օգտագործում, մարդը պիտի իմանա իր հողին ինչ էլեմենտներ են անհրաժեշտ:

Սերմնաբուծությունը պետք է զարգացել մեր գյուղատնտեսությունում, քանի որ այն օգնում է ավելի արդյունավետ ու նպատակային օգտագործել մեր հողատարածքները:

Գեղարքունիքում մկները սարերում արոտավայրերը փոքրիկ հողակտորների են վերածել. առանց կրծողների դեմ պայքարի անասնապահության զարգացման մասին խոսք չի կարող լինել: Նախկինում աշնանն սկսվում էր դրանց դեմ պայքարը, հիմա ոչինչ չի արվում:

Կառավարությունը պիտի աջակցի, որ տեղում էլիտար սերմեր արտադրվեն: Տասը տարի առաջ Ծովագյուղում մի խելացի ֆերմեր տեղական սորտերից էլիտար սերմացու էր ստացել, բայց էդ մարդուն ոչ մեկը չօգնեց, որ զարգացներ: Իսկ դրսի սերմացուն գենետիկորեն մոդիֆիկացված է հիմնականում:

Առաջներում սերմացուն կարող էին չորս-հինգ տարի օգտագործել, իսկ հիմա մեզ էնպիսի սերմացու են առաջարկում, որ մի տարի ես օգտագործում, հետո բերքատվությունն ընկնում է: Կառավարությունը ինչ-որ ծրագիր պիտի մշակի, որ էնպիսի սերմացու ստանանք, որ գյուղացուն էլ ձեռնտու լինի, ամեն տարի չմտածի սերմացուի մասին:

Խոտհարքների բարելավման, կրծողների դեմ պայքարի խնդիր ունենք Վաղաշենում:

Արոտավայրերի և խոտհարքների հետ կապված, երևի իննսունականներից հետո, մեր տարածաշրջանում ոչ մի անգամ վնասատուների ու կրծողների դեմ պայքար չի եղել: Հիմա որ գնաս, դաշտերում ամբողջությամբ մկան բներ են: Թեև երկոտանի կրծողներ էլ ունենք, բայց դե գոնե էն մյուսների դեմ պետք է պայքարել, որ որակյալ անասնակեր ունենանք, դա մասնավորը չի կարող անել, դա պետությունը պետք է անի:

Մեզ մոտ աստիճանաբար զարգանում է պտղաբուծությունը: Զարգացումը հեռանկարային է, հիմա ամբողջ աշխարհը նորմալ սննդի հարցի առաջ է կանգնած, իսկ Հայաստանն ունի այդ պոտենցիալը:

Հայաստանում միայն Կալավանում է, որ մեղրի ունի օրգանիկի սերտիֆիկատ, իրենք հողի, օդի, ջրի անալիզներ արեցին ու կարողացան շատ լավ դա կազմակերպել, պետությունը կարող է իր գիտական ոլորտը ներգրավի էդ գործի մեջ, անալիզներ անեն: Ուսանողների դիպլոմային աշխատանքները, որ կարդում ես, հրաշալի առաջարկներ կան, բայց մնում են թղթի վրա:

Երաշխավորված գները թույլ կտան, որ գները գոնե ինքնարժեքից չընկնեն: Բայց անգամ այսքան փոքր Հայաստանում ինքնարժեքը շատ է տարբերվում՝ օրինակ, էկոլոգիապես մաքուր պոմիդորի ու մեծ քանակով արտադրված պոմիդորի գները շատ տարբեր են:

Ես մարդիկ գիտեի, որ իրենց մեղրը արտահանում էին Ֆրանսիա, որովհետև ստուգված էր, սերտիֆիկատ ուներ: Ֆրանսիայում նորից ստուգում էին, եթե համապատասխանում էր սերտիֆիկատին, էդ մարդը ստանում էր իր փողը, եթե չէ՝ թափում էին, կամ քիչ էին վճարում: Նույնն էլ մեզ մոտ է պետք անել:

Միջազգային շուկա դուրս գալու միակ ճանապարհը մաքուր արտադրանք տալն է:

Կաթի գնագոյացման համար շատ կարևոր է կաթի որակը, օրինակ՝ գինը պետք է արտահայտի կաթում յուղայնության կամ օրինակ՝ սպիտակուցների պարունակությունը: Գինը պետք է տարբերվի ըստ այս չափանիշների:

Մենք որ տուրիստներ ենք ընդունում, իրենք շատ հետաքրքրված են մաքուր սննդով, տեղական խոհանոցով, սա կարելի է զարգացնել ֆերմերների հետ աշխատելով:

Կաթնամշակման գործարանի համար կաթը գյուղացուց ենք հավաքում, բայց հիմնականում ապրանքափոխանակություն ենք անում, չենք ներկայացնում կաթի որակի նկատմամբ չափանիշներ:

Լավ կլիներ, որ կերերի որակի պետական ստանդարտ լիներ:

Հացահատիկի սերմի ներկրումը պետք է պետությունը աներ, այլ ոչ թե մասնավորի ձեռքը տար, որը սովոր է խաբելուն:

Այս տարի Հայաստան լավ պարարտանյութ չի ներմուծվել:

Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ

Հարցեր կան, որ գլոբալ պետք է լուծվեն, օրինակ, ես միշտ դեմ եմ եղել, որ արտադրողը տանի իր ապրանքը ծախի: Շատ ընտիր սցենար եք գրել, ես երեք օր ա, կարդում եմ:

Սև սալորի այգիների հիմնադրումն է թափ ստանում, քանի որ սկսել են չրեր պատրաստել: Գյուղացիները սկսել են վերամշակել իրենց արտադրանքը, նախընտրում են վերամշակել, քան էժան գնով հանձնել արտահանողին: Բայց դե չիրը պատրաստեցինք, հետո՞ ինչ անենք:

Հիշում եմ՝ գյուղացիները ձմռանը տանջվելով կաղամբ աճեցրին, գարնանը թափում էին ճամփեքին: Պետք է ճիշտ կազմակերպել: Հիշում եմ ժամանակին թթու էին պատրաստում, բանակին մատակարարում, նույնը կարելի է հիմա անել:

Մթերող կազմակերպությունները, Երևանի կոնյակի գործարանը մթերող կազմակերպությունների պայմանագրերը հիսուն տոկոսով կրճատել է, մինչդեռ այս տարի բերքը շատ է: Պռոշյանի մթերող գործարանը ավելի էժան է մթերում, եթե Արմավիրի տեղամաս այցելեք, բեռնատարների մեծ հերթ կտեսնեք: Այլ մթերող ընկերություններ վճարումները ուշ են կատարում: Սա աղետ է այն մեծ թվով գյուղացիների համար, ովքեր ֆինանսական և վարկային պարտավորություններ ունեն

Այսօր գյուղացին մեծ քանակությամբ խաղող ու պղպեղ է արտադրել, բայց ներքին շուկայում չի կարողանում սպառել: Արտահանման մասին խոսք չկա անգամ: Պետությունն ունի՞ ինչ-որ ծրագրեր, որոնցով կկարողանա օգնել գյուղացուն նման ճգնաժամային պայմաններում:

Եթե որոշակի արտադրատեսակների համար նախապես երաշխավորված գների սահմանում լինի, տնտեսությունը ավելի կայուն, կանխատեսելի կդառնա, դրա հաշվին կկարողանա ընդլայնել իր գործունեությունը:

Խաղողի սեղանի սորտերի բերքը ևս հնարավոր չէ պլանավորել: Շատերն ունեն բազմամյա խաղող, սրա խնդիրն արտահանումն է: Էսօր սահմանը փակ է: Եթե գյուղացին որոշում է արտահանել, պետք է բերքի հետևից հասնի Ռուսաստան:

Մթերող կազմակերպությունները, Երևանի կոնյակի գործարանը մթերող կազմակերպությունների պայմանագրերը հիսուն տոկոսով կրճատել է, մինչդեռ այս տարի բերքը շատ է: Պռոշյանի մթերող գործարանը ավելի էժան է մթերում, եթե Արմավիրի տեղամաս այցելեք, բեռնատարների մեծ հերթ կտեսնեք: Այլ մթերող ընկերություններ վճարումները ուշ են կատարում: Սա աղետ է այն մեծ թվով գյուղացիների համար, ովքեր ֆինանսական և վարկային պարտավորություններ ունեն

Վերամշակող գործարանների ծավալը չի բավարարում: Խաղող արտադրողն ստիպված 40-50 դրամով խաղող է մթերում, բայց որտե՞ղ, ինչպե՞ս, ի՞նչ որակով... Թիրախային ծրագրեր կառավարությունն իրականացնելո՞ւ է արդյոք:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

Այսօր գյուղացին մեծ քանակությամբ խաղող ու պղպեղ է արտադրել, բայց ներքին շուկայում չի կարողանում սպառել: Արտահանման մասին խոսք չկա անգամ: Պետությունն ունի՞ ինչ-որ ծրագրեր, որոնցով կկարողանա օգնել գյուղացուն նման ճգնաժամային պայմաններում:

Պետության դերը շատ մեծ է արտահանման շուկաներ գտնելու հարցում:

Հիմա, օրինակ, արաբները մեզ մոտ ֆրստրխ են խփում, դրա գինը արաբական երկրներում ահագին թանկ ա: Օրինակ, ես սալորը տալիս էի հարյուր դրամով, ինձնից եկան սալորի կորիզը հարյուր դրամով տարան: Գիտեի՞ք, որ սալորի կորիզը օծանելիքի և էդ տիպի արտադրության մեջ է օգտագործվում:

Երաշխավորված գների համակարգը չի աշխատում:

Ստորները մեր խաղողի հյութը ծախում էին վրացուն, որը իրա գինու անվան տակ է վաճառում, ես ի՞նչ ճզմիչ կայան սարքե՞մ, ծախե՞մ վրացուն, որ իրա գինու անունը հռչակվի, ցիստեռներով հյութը գնում է Վրաստան:

Համայնքներում պետք է լինեն շատ շուկաներ, ինչի շնորհիվ կաճի մրցակցությունը: Շուկաների բազմազանությունը գյուղացու համար միայն օգուտ է:

Նվազագույն գների հետ կապված ասեմ, որ պետությունը պետք է առաջնային դեր ունենա: Պետությունը ուղղորդողի դերում պետք է լինի, բայց մեծ շուկաներում էլ ապրանքը ստանդարտներ ունի, պիտի էդ ստանդարտով արտադրես:

Կառավարությունը ուշադրություն պետք է դարձնի գյուղապրանքների գնային տատանումներին և թույլ չտա տարբեր սեզոններին մինչև 500 տոկոս տատանումները:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

էսօր Քարակերտում մոտ հինգ հարյուր տոննա խաղողի ավելցուկ կա:

Իմ ծիրանից ես չիր չեմ սարքի, որովհետև դա քո գործն ա, դու պիտի գաս ինձ փայփայես-տանես, նույնն էլ խաղողն է, իմ գործը աճեցնելն է, կոնյակի գործարանը մեզ քաշեց, չի կարելի մի տարի գլուխս շոյի, մյուս տարի քացով տա հետևիս:

Պետությունը գնի համար պատասխանատու չէ, բայց լիցենզիա տալիս պայմանագիրը պետք է կապի այնպես, որ գյուղատնտեսական ճյուղը զարգանա, օրինակ նշում անի՝ ամեն տարի կոնկրետ քանակի բերք պետք է ընդունես, որ բիզնեսն իր կամքը չթելադրի գյուղացուն:

Մեծածախ շուկաների կենտրոնացումն այնքան էլ նպատակահարմար չէ: Ներկայում երեք շուկա կա, որը մրցակցություն է ստեղծում, իսկ գնորդին հնարավորություն է ընձեռում ընտրել իրեն ամենահարմար շուկան:

Գյուղացու համար խնդիր է նույնիսկ ցածր գնով ապրանքը վաճառելը: Գինն էական չէ այս պահին:

Պետք է խթանել անհատական արտահանումը, միջնորդավորված արտահանման դեպքում գյուղացին չի կարողանում գին թելադրել:

Երաշխավորված գինը հասկանում եմ այսպես, կաղամբը հարյուր դրամից պակաս չպետք է լինի: Գինը այստեղ ամենակարևորն է, եթե ռեալ գին լինի, կաշխատի:

Անցյալ տարի ես ունեցա խնձոր, յոթ հարյուր կգ, զանգեցի Կարբի, տնկի տվողին ասացի, դու ինձ կարո՞ղ է քաշես, ասաց, հանգիստ եղիր, մյուս տարի քառասուն տոննա խնձոր ունեցա, սառնարան սարքեցի, շուխուր գցեցի, որ գան խնձորս տանեն, մեկը եկավ, որ խնձորս տանի, մետրն ու դանակը ձեռքին: Ասում է՝ 65մմ-ից պակաս չպիտի լինի: Ասում է՝ ռուսական շուկայում ստանդարտը էսպես ա ու ինքը ուներ երեք ստանդարտ:

Հիմնական միրգը դրսում է վաճառվում, դրա համար դրսի հավաքագրողների հետ է պետք պայմանավորվածություններ ձեռք բերել: Ով ծանոթ ու կապեր ունի, կարողանում է ապրանքը ծախել:

Երաշխավորված գնումների քաղաքականությունը շատ արդյունավետ կլինի. օրինակ՝ նախկինում կարագը, կաղամբն ու սոխը ռազմավարական ապրանքատեսակ էին համարվում: Հիմա միգուցե պետք է ընդլայնել ցանկը, ներառել խաղողն ու սպիրտը:

Պետությունը մթերող կազմակերպություններին վարկեր է տրամադրում, այդ վարկերը պետք է տրամադրվեն գյուղացիներին, օրինակ ամեն կգ-ի դիմաց կարող է հիսուն դրամ տրամադրվել:

Վերամշակող գործարանների ծավալը չի բավարարում: Խաղող արտադրողն ստիպված 40-50 դրամով խաղող է մթերում, բայց որտե՞ղ, ինչպե՞ս, ի՞նչ որակով... Թիրախային ծրագրեր կառավարությունն իրականացնելո՞ւ է արդյոք:

Մեր կառավարությունը շատ լավ որոշում կայացրեց, որ հայկական կոնյակը պիտի արտադրվի միայն հայկական խաղողից, բայց կոնյակի գործարանը գալիս ա իմ խաղողը հավանում է, բայց պլան ունի, իր պլանը հարյուր տոննա է, իմ խաղողը՝ քառասուն, բայց ամեն օր խաղող եմ հավաքում, արդեն ցայտնոտի մեջ եմ, թե ինչ անեմ իմ խաղողը:

Խաղողի մթերումն է այսօր խնդիր, այլ գյուղմթերքների իրացումը: Մթերող կազմակերպություններում լարված վիճակ է, ամբողջ ծավալով չեն մթերում: Եթե էսպես մի երկու ամիս շարունակվի, աղետի առաջ կկանգնենք: Պետական այրերն ու պատասխանատուները չեն մասնակցում էս խնդիրների լուծմանը, լուծման մոտակա ուղիներ չեն երևում:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

Երկու հազար թվականներին գյուղացին էլի կանգնած էր խաղողի մթերման խնդրի առջև, կային խաղողի տեսակներ, որ խմիչքի պատրաստման համար չէին օգտագործվում: Այդպիսին էր մեղրաբույր սորտը, մենք հրաժարվեցին էդ տեսակից, սկսեցինք ուրիշ սորտեր աճեցնել: Չիրացնելու դեպքում մարդիկ կհրաժարվեն բերք մշակելուց:

Հոկտեմբերյանի մեր պահածոների գործարանն ուներ իրացնելու մեծ հնարավորություններ, այսօր այն չի աշխատում: Մեր հայկական կարմիր սոխը կհիշեք՝ համով ու որակով, մատակարարում էին բանակին, էսօր վերացրել են: Եթե մթերումը չկազմակերպվի, խաղողի այգիներն էլ են վերանալու:

Այս տարի բերքատվությունը բարձր է, բայց իրացումը գլխավոր խնդիրն է, պայմանագրային պարտավորությունները գնորդները չեն կարողանում կատարել: Կառավարությունը պետք է արագ գործի:

Շատ կարևոր է հասկանալ գյուղատնտեսական արտադրանքի և դրա իրացման շղթան: Օրինակ՝ մեր գյուղում այգիներ կային, որոնք վերջին մի հինգ տարվա ընթացքում գյուղացիները դարձրեցին բերրի, իսկ հիմա կանգնել են արդեն իրացման խնդրի առջև:

Սպիտակ սոխը մշակելն ավելի հեշտ է, դրա համար բոլորն անցան սպիտակ սոխին: Այն ժամանակ, երբ ճանապարհները փակ էին, արտադրանքը իրացվում էր երկրում, ավելի էժան գներով:

Գյուղացու միակ խնդիրը իրացումն է, ուրիշ պրոբլեմ մենք չունենք, պրոբլեմներ սահմանելուց առաջ խոսեք մեզ հետ:

Ապրանքը մթերում են պարտքով, վարկերի տակից դուրս չեն գալու գյուղացիք, սև ցուցակից են դուրս չեն գալու:

Խաղողի մթերման հետ կապված երկու խնդիր կա՝ առաջին՝ հերթերը, երկրորդ՝ որ մթերողները առաջնահերթություն են տալիս գինիների համար պիտանի խաղողին:

Գյուղացին պետք է գյուղմթերք արտադրող լինի, ոչ թե գյուղմթերք ծախող: Գյուղացին չպետք է չքնի, ու մտածի, ոնց իրացնի, ինչ անի:

Գյուղացու հիմնական խնդիրը ապրանքի իրացումն է: Բոլոր քայլերը դառնում են անիմաստ, եթե գյուղացին վերջում չի կարողանում վաճառել իր ապրանքը: Գյուղացին իր մշակն իրականացնելուց պետք է չմտածի՝ ոնց է վաճառելու:

Պետք է ընդունման կետեր լինեն, եթե կաղամբը հիսուն դրամով էսօր մթերվի, ոչ մի գյուղացի չի բողոքի:

Երաշխավորված գինը պետք է շուկայական գնին մոտ լինի: Ու եթե անգամ որևէ մթերող կազմակերպություն փորձի էժան մթերել, գյուղացին պետք է իմանա, որ պետությունն ավելի բարձր գնով գնելու է:

Մթերող գործարանները գումարների վճարումները կատարում են մեծ ինտերվալով, որը գյուղացուն գցում է վարկի մարման դժվար խնդրի առաջ: Պետությունը պետք է վերահսկի այդ գումարների վճարումը նույնպես:

Վերամշակող գործարանների ծավալը չի բավարարում: Խաղող արտադրողն ստիպված 40-50 դրամով խաղող է մթերում, բայց որտե՞ղ, ինչպե՞ս, ի՞նչ որակով... Թիրախային ծրագրեր կառավարությունն իրականացնելո՞ւ է արդյոք:

Խաղողի սեղանի սորտերի բերքը ևս հնարավոր չէ պլանավորել: Շատերն ունեն բազմամյա խաղող, սրա խնդիրն արտահանումն է: Էսօր սահմանը փակ է: Եթե գյուղացին որոշում է արտահանել, պետք է բերքի հետևից հասնի Ռուսաստան:

Օգտվում են էն արտահանողները, որոնք դրսում ունեն կապեր, ռեսուրսներ, այդ կազմակերպությունները գին են թելադրում:

Երբեմն վերամշակող ընկերություններ են հիմնադրում, վերջիններս սկզբում գյուղացիներից են գնում, հետո նախընտրում են իրենց հողերն առնել, իրենք էլ մշակում են գյուղմթերքը, տուժում են գյուղացիները:

Խաղողի մթերումը մեզ մոտ օրախնդիր է: Հարց եմ տալիս, ինչու մեր զինվոր սեղանին չպետք է լինի խաղող, եթե մենք ունենք աննախադեպ բերք: Ծիրանը նույնպես կարող է լինել սեղանին՝ հյութի տեսքով:

Մեզ մոտ եզդիները ոչխար են պահում, ժամանակին կով շատ էին պահում, բայց կաթը ջրից էժան է, դրա համար իմաստ չունի, «մեկին-մեկ տակ ա տալըմ»:

ԵԱՏՄ-ով պայմանավորված պարզեցումները դրականորեն են ազդել արտահանման վրա:

Նոր բիզնես եմ հիմնադրել, ջերմոցում լավ որակի սերմերից սածիլներ ենք արտադրելու և վաճառելու գյուղացիներին՝ պայմանավորվելով, որ իրենց ստացած ողջ բերքը մենք գնելու ենք: Նմանատիպ մեխանիզմներն աշխատող են և գյուղացիները մեծ պատրաստակամության մասնակցում են:

Ես ապրում եմ գյուղում, արտադրում եմ, մշակում: Նոր մշակաբույսեր եմ մշակում, որոնք մեր տարածաշրջանում շատ լավ աճում են: Ամենամեծ խնդիրն այն է, որ գյուղացին գարնանը մշակում է ու չգիտի՝ ինչ է լինելու իր մթերքի ճակատագիրն աշնանը: Մարդիկ հաճախ թափում են իրենց աճեցրածը:

Գյուղատնտեսության խնդիրների հաղթահարման տեսանկյունից հատկապես կարևոր է իրացման խնդրի լուծումը: Որպեսզի գյուղացին շահագրգռված լինի մշակել, պիտի անպայման ապահովված լինի իրացման հարցում:

Մեր հիմնական խնդիրն աշխատուժն է, դժվար ենք մարդ գտնում, իսկ իրացումը մեր միջոցներով ենք անում:

Մեր մեղրի անունը, որպես լավ անուն ունեցող, արդեն դուրս է եկել, հնարավոր է էդտեղից բռնել ու զարգացնել դա:

Գյուղատնտեսության զարգացում շղթայական խնդիրների լուծում է, միայն մշակելը չէ, պետք է պատվիրելու հարցն էլ լուծվի:

Տարբեր կուլտուրաների գներն այնպիսին են, որ չես էլ ուզում դրանք աճեցնել. արված գործն ու դրա դիմաց վարձատրությունը ոչ մի կերպ չեն համապատասխանում իրար:

Պետք է առկա լինի գյուղատնտեսական արտադրանքի պատվեր, որպեսզի գյուղատնտեսությունը զարգանա: Խորհրդային միությունում, օրինակ, պատվիրատուն պետությունն էր:

Գեղարքունիքում մեծածախ շուկայի առկայությունը հիմնականում օգտակար է գնորդի համար:

Մարտունու շուկան հերիքում է իրենց ունեցած գյուղարտադրանքի համար, բայց մյուսները մեծածախ շուկաների կարիք հաստատ ունեն:

Գեղարքունիքը շուկայից հեռու է: «Գեղեցկուհի» տանձը 300 դրամով աշտարակցին գնում է, արագ վաճառում: Մենք դա չենք կարող անել հեռավորության պատճառով՝ սառնարանից հանեցիր, արագ պիտի վաճառես, չէ՝ ստիպված ես թափել:

Եթե ծիրանի դեպքում արտահանում կա, ապա կաղամբի պարագայում խնդիր է: Այսօր գյուղացին արտադրելու խնդիր չունի, եթե ինքն իմանա, որ արտադրածը վաճառվելու է, անպայման անհրաժեշտ ֆինանսական միջոցները կհայթայթի:

Գյուղատնտեսությամբ զբաղվելու հիմնական խոչընդոտը գյուղմթերքի իրացման խնդիրն է: Տեղափոխումն ու մթերումը հատկապես մեծ խնդիր են:

Մենք պետք է մեր կառավարությանը հասցնենք մի բան. ժողովրդին ասում ենք մշակեք, վերջում մի երկու մեծահարուստներ նույն ապրանքից դրսից էժան գնով բերում են, մեր գյուղացու արտադրանքը չի իրացվում: Պետք է թույլ չտալ, որ դրսի արտադրանքը տեղականին դուրս մղի շուկայից:

Երիտասարդները գաղջեթների մեջ մտած չեն էլ մտածում գյուղատնտեսությամբ զբաղվելու մասին, չգիտեն հողին ինչպես մոտենալ, ինչպես բերք մշակել, ինչպես հավաքել, մշակել ու իրացնել այդ բերքը: Այդ իսկ նպատակով Ծովագյուղում նոր դպրոց ենք հիմնում՝ այս խնդիրներին գործնական լուծումներ տալու նպատակով:

Մարտունու տարածաշրջանում բացօթյա շուկաները բավականին լավ են աշխատում, և մյուս մարզերում պետք է նման շուկաներ ստեղծվեն: Իրացման հարցով մեծ խնդիրներ կան, քանի որ տեղափոխման ժամանակ միջնորդներ են առաջանում, ովքեր գինն արհեստականորեն բարձրացնում են:

Եթե մարդը զբաղվում է գյուղատնտեսությամբ, իրա համար ամենադժվար խնդիրը այժմ իրացումն է: Պետք է այնպիսի աջակցություն լինի պետության կողմից, որ Մարտունուց կամ հեռու մարզերից գյուղացին չհասնի մայրաքաղաք ու վաճառքը տեղի պետք է ունենա տեղում:

Կորոնավիրուսի հետևանքով արտագնա աշխատանքի մեկնողներ չեղան, մարդիկ այստեղ սկսեցին հող մշակել, արդյունքում՝ բերքն ավելացավ, բայց իրացումն ավելի բարդացավ:

Էն «Մենք ենք մեր սարեր»-ի նման, որ ասում է. «Ես ոչխար ծախող չեմ, պետությունն է առնողը»: Պետք է այ էս իրացման հարցը լուծել:

Պիտի աշխատենք նվազեցնել կլիմայի վրա ազդեցությունը և կարողանանք հարմարվել էդ կլիմային: Լճաշենում պատկերը շատ տարբեր է Մարտունիից, մեր մոտ ավելի շատ անասնապահությամբ են զբաղվում, բայց քանի որ կլիման թույլ է տալիս, շատ գյուղացիներ արդեն սկսել են ունենալ կեռասի այգիներ ու մեզ մոտ հասնում է էն ժամանակ, երբ որ Արարատյան դաշտում վերջացած է լինում և մենք իրացման խնդիր չունենք:

Մարդիկ իրենց կաթնամթերքը ինքնուրույն են մշակում, իսկ եթե սարերում սառնարաններ լինեն, կաթը մթերվի, անասնապահությամբ զբաղվելն ավելի արդյունավետ կլինի:

Գյուղմթերքի հիմնական շուկան Երևանն է: Գեղարքունիքում մեծածախ շուկա ունենալու դեպքում անգամ արարատցին իր բերքն այստեղ մեծածախ գներով չի վաճառելու:

Որակյալ կաթի պահանջարկը չի բավարարվում, որովհետև տնտեսությունները փոքր են:

Մեր մարզն ամենամեծն է, ու շատ դժվար է էս մարդկանց համար գնալ Մարտունու շուկայում ու առևտուր անել, լավ կլիներ, որ օրինակ, նույն Սևանի կամ Ճամբարակի համար շուկա լիներ, համ էլ դրանից նաև Տավուշի մարզը կօգտվեր:

Պետությունը պետք է աջակցի անհատներին, որպեսզի նրանք կարողանան իրենց ապրանքը վաճառել արտասահմանյան շուկայում:

Անհատը չի կարողանում արտահանել իր արտադրանքը, քանի որ տեղեկատվության պակաս կա:

Էլոլան սառնարաններ է տեղադրել գյուղերում, որով կաթի որակը զգալիորեն բարելավվել է: Միջնորդները, օրինակ՝ կոոպերացիաները, կարող են բարձրացնել կաթի գինը: Մեզ համար ավելի շահավետ է աշխատել մեծ ֆերմերների հետ, բայց քանի որ տարածաշրջանում նրանք շատ չեն, մենք աշխատում ենք բոլորի հետ:

Քրոջս ընտանիքը զբաղվում է մրգային օղիների արտադրությամբ: Գորիսում հիմնականում դա բիզնես է, թեև առանց փաթեթավորման: Մենք որոշել էինք որպես բիզնես դա զարգացնել, այգիներ ունեցող բնակիչներից թութ էինք առնում: Կորոնավիրուսի պատճառով շատ տուժեցինք ու փակեցինք բիզնեսը: Ալկոհոլային խմիչքների արտադրություն էն ոլորտն է, որը ամենաքիչն է օգտվում պետական աջակցության ծրագրերից:

Իրացման խնդիր չունենք, ոչ պանիրն ա ավել լինում, ոչ լոբին, ոչ էլ մնացած գյուղմթերքները:

Պետությունը շատ լավ բաներ է ասում, բայց մի գլխավոր խնդիր կա. իրացման շուկա չունենք: Պետությունը չգիտես ինչի չի մտածում նաև իրացման մասին: Պետությունը բերում է նոր ծրագրեր է ներդնում հետո «տեր չի կանգնում:»

Շաքի գյուղի մոտ մայրուղու վրա շուկա որ կառուցվեր, հարակից գյուղերի բնակիչներն իրենց ապրանքի սպառումը կապահովեին:

Մարդիկ կան, որ տանում են Երևանում վաճառում, բայց ոչ բոլորն ունեն այդ հնարավորությունը:

Մեր երկրում բրդի մթերում չկա ընդհանրապես, դրա համար էդ ցեղատեսակներն էլ են փչացել: Դրա համար ոչխարաբուծությամբ էլ ձեռնտու չի զբաղվել:

Երաշխավորված գները մեր երկրում հենց հիմա հիմք չեն կարող համարվել: Հեռուստացույցով տեսնում ենք, թե ինչպես մարդկանց ցածր գին են առաջարկում խաղողի դիմաց. ասում ՝ էս ա, ուզում ես ուզի, չէ՝ հետ տար: Էդպիսի մի բան էլ լինելու է երաշխավորված գների համակարգը:

Բրենդինգի առումով որակ է պետք ապահովել, որ մրցունակ լինենք:

Գյուղացիների համար շուկաներ պետք է կառուցի Էկոնոմիկայի նախարարությունը, որը նմանատիպ տաղավարներ կառուցում է Երևանում:

Բրենդինգը բարդ ընթացակարգ ու կապեր է ենթադրում, դրա մեջ մասնակցություն պետք է ունենան նաև դիվանագիտական ներկայացուցիչները:

Պետք է գնի ֆիքսում տեղի ունենա, պետք է պայմանագրով ամեն ինչ լինի, որպեսզի գյուղացին վստահ իմանա, որ հետագայում ֆիքսված գնով կգնեն իր արտադրանքը:

Մեր տարածաշրջանում խնդիրն այն է, որ միայն Գորիսում կա 130 հզ խոշոր եղջերավոր անասուն: Նախկինում յորղան-դոշակ էին սարքում բրդով, հիմա պահանջարկը մեծ չէ, թափում են, աղտոտում են շրջակա միջավայրը: Մինչդեռ բուրդը խիստ թանկարժեք ապրանք է:

Մենք սպառելու ծանր խնդիր չունենք, սպառողը նախքան արտադրելը պետք է մտածի, կկարողանա՞ սպառել իր արտադրանքը, թե՞ ոչ: Իրենց սահմանած գինը լինելու է այն հնարավոր ամենացածր գինը, որին ես միայն ծանր հանգամանքներում եմ հիմա համաձայնում: Լավ ու վատ նռան դիմաց նույն գինն են առաջարկում:

Կաթի հավաքմամբ զբաղվող ընկերությունները չեն կարողանում շուկայում իրացնել իրենց ապրանքը, այդ իսկ պատճառով ընկերությունն էլ չի կարողանում վճարել գյուղացուն կաթի համար:

Կաթնամթերքի արտադրանքի 20% արտահանում ենք: Սուպերմարկետների կողմից ԱԱՀ-ի պահանջը չենք կարողանում բավարարել:

Պետությունը պետք է խրախուսի սառնարանային տնտեսությունների հիմնադրումը, դա պետք է դիտարկվի որպես բիզնեսի առանձին ձև: Մթերքը կարելի է պահեստավորել և արտահանել ավելի հարմար ժամանակի: Մեծ բիզնեսների ներգրավումը այս առումով շատ օգտակար կարող է լինել:

Կաթնամթերքի վերամշակման համար կաթը վերցնում ենք բոլորից. փորձում ենք կաթ վերցնել և՛ նրանից, ով շատ քիչ ունի, և՛ նրանից, ով շատ է արտադրում: Փորձում ենք օգնել ում կարող ենք: Հայաստանում շատ դժվար է գյուղատնտեսությամբ զբաղվելը:

Պետությունը պետք է պարտավորություն վերցնի, որ նա կիրացնի գյուղացու արտադրանքը, ցույց կտա շուկաների տեղը, այլապես ինքը պետք է գնի գյուղացու արտադրանքը:

Երաշխավորված գներ ունենալու պրոբլեմը մեզ մոտ չկա. երբեք մեղվաբույծները ճանապարհ չեն փակել այն պատճառով, որ չեն կարողանում մեղրը իրացնել:

Ավելի լավ է, որ գյուղացին լինի գյուղմթերք արտադրող, այլ ոչ թե մտածի, թե ոնց է իրացնելու:

Իրացման հարցը ցավալի հարց է գյուղացու համար: Օրինակ մենք ցորեն ունենք, տեխնիկայի պատճառով որակը ցածր է, իրացումն էլ, բնականաբար, դժվար: Գյուղացին բնամթերքի ձեռքը կրակն է ընկել:

Նախանցած տարի Ծառուկյանը հանդիպել էր գյուղացիներին, գյուղացիները լացում էին, որ տոննաներով իրենց խաղողը չեն կարում իրացնեն: Ծառուկյանը խոստացավ 140-ով վերցնել: Հիմա հո չեն գոռում՝ ուռա-ուռա: Լուրջ եմ ասում, լացս եկավ:

Սյունիքի մարզում շատ մեծ է բրդի իրացման խնդիրը:

Մսամթերքի իրացման խնդիր ունենք: Մեր համայնքի ամենահեռավոր գյուղն է, անասունին սպանդանոց հասցնելը պրոբլեմ է: Զանգում եմ մի անասունի համար, ասում են պետք է չորսը լինեն, որ ավտո ուղարկեն: Բայց ես նույնիսկ հիվանդանոցի գումարի խնդիր ունեմ էդ պահին:

Համայնքների մոտակայքում ապրանք իրացնելու նպատակով անպայման պետք է բացվեն տաղավարներ, որտեղ համայնքի բնակիչները կկարողանան վաճառել իրենց բերքը:

Իրացման խնդիրը մեզ մոտ լուծվում է հետևյալ կերպ, արտադրում ենք այն գյուղմթերքը, որը պահանջված է շուկայում: Խնդիրը կայանում է նրանում, որ մթերողները գյուղմթերքը կամ վերամշակված մթերքը ոչ տրամաբանական գներ են առաջարկում:

Հարժիսում բավականին մեծ ցանքատարածություններ են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել: Գյուղտեխնիկայի և ժամանակի խնդիր ևս կար:

Տեղ համայնքի Կոռնիձոր գյուղում գյուղատնտեսությամբ բոլորն են զբաղվում, որովհետև դրանով են ապրում, բայց եթե մենք ավելացնենք մեր հոնի և թթի տնկատարածքները, իրացման խնդիր կունենանք: Այսինքն կավելացնենք, եթե իրացման հարցը լուծվի:

Ճանապարհները պետք է բացվեն, որ գյուղացիները կարողանան իրենց արտադրանքը արտահանել: Մարդիկ կարտոֆիլը հանել են, տանող չկա: Տեղական շուկայում այդքան կարտոֆիլը հնարավոր չէ իրացնել, արտահանում է պետք:

Գյուղացին շատ է դժվարանում իրացման հարցում: Դրա համար պետք է բրենդավորում լինի, ուսումնասիրվի, թե որ համայնքում ինչն ունի զարգացման պոտենցիալ՝ արդյունքում օգնել գյուղացուն:

Գյուղացին ունի իրացման խնդիր: Նա խոշոր վարկ է վերցնում, ներդնում անասնապահության մեջ, բայց չի կարողանում իրացնել այն գնով, որ օգուտ ստանա, հազիվ ծախսերն են փակվում:

Էկոլոգիապես մաքուր գյուղմթերքն առաջնային է ինձ համար, սակայն շատ մարդիկ նախընտրում են էժանը: Երաշխավորված գինը էկոլոգիապես մաքուր մթերքի համար պետք է առաջարկել:

Օրգանական գյուղմթերքը ինչի արտահանենք, էնա մենք կուտենք:

Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սովետի ժամանակ, Քարակերտում հրանոթները աշխատում էին, կրակում էին, բայց հարցն էն ա, որ ով ծանոթ ուներ, բերեց էդ կայանը դրեց իրա հողի մեջտեղը, պիտի դնեն ամպի ճանապարհին, որտեղ ամպերը կազմավորվում են:

Որոշակի սոցիալական խմբեր առանձնացնելու քաղաքականությունը կարող է երկսայր սուր լինել. օրինակ՝ կանանց կամ երիտասարդներին արտոնություններ տալը կարող է անարդար համարվել այլ խմբերի կողմից:

Պետությունը պետք է խթանի նոր գործարանների բացումը կամ հին գործարանների վերագործարկումը:

Պետությունը պետք է հինգ տարին մեկ գա, հողի անալիզ անի. ճիշտ է իմ հողն է, բայց պետության ունեցվածքն է, անպայման պիտի էդ հողն անալիզ անի:

Ինչ որոշում էլ կայացվի, մարտ ամսին պետք է գյուղացուն ասեն, որ իմանա ինչ անի, ոչ թե տարվա կեսին:

Հայաստանում ծածուկ բան անելը մի շաբաթ է տևում:

Արմավիրի մարզը կերակրում է մեր երկիրը, էստեղ գալիս են տարբեր մարզերից, մեր մարզում այլևս հնարավոր չէ վարձով բնակարան գտնել, մարդիկ գալիս են այստեղ սեզոնային աշխատանք անելու:

Անասնապահությունը արարատյան դաշտավայրում անարդյունավետ է:

Այսօր գյուղացին մեծ քանակությամբ խաղող ու պղպեղ է արտադրել, բայց ներքին շուկայում չի կարողանում սպառել: Արտահանման մասին խոսք չկա անգամ: Պետությունն ունի՞ ինչ-որ ծրագրեր, որոնցով կկարողանա օգնել գյուղացուն նման ճգնաժամային պայմաններում:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

Հարցն էն ա, որ գործ անող մարդը պետության անունը ինչքան հնարավոր ա պիտի քիչ տա: Չորս միլիարդ տալիս ա խաղող մթերողին երկու տարի, զրո տոկոսով: Տարա չունես, տարա էլ ա տալիս, էլ ինչ անի խեղճ պետությունը, կթու կովի նման ա դառել:

Արմավիրի մարզում նպատակահարմար չէ հացահատիկ ցանել, ավելի շատ լեռնային վայրերում են աճեցնում: Իննսունականներին աճեցնում էին հացահատիկ, բայց աստիճանաբար կրճատվեցին:

Շատ գյուղացիներ բանջարեղեն էլ չեն մշակում, հարցնում ես՝ ինչու չես լոլիկ մշակում, ասում է շատ աշխատուժ ու ջանքեր է պահանջում:

Անհասկանալի է սուբսիդավորումը ում է տրամադրվում, ինչ մեխանիզմներով, ինչ չափանիշներով: Գյուղացիները երբեմն դիմում են սուբսիդավորման, ասում են, որ վերջացել է տարեկան սուբսիդավորումը: Որևէ համապարփակ վերլուծություն չի կատարվում:

Այժմ ներդրումների և սուբսիդավորման մեծ մասն աջակցություն է խոշոր հողատերերին, արդյունքում տուժում են փոքր ու միջին գյուղատնտեսները:

Գյուղացին մի բանով չպիտի զբաղվի, դա ճիշտ չի. հա՛մ այգի պիտի մշակես, հա՛մ անասուն պահես:

Տարբեր համայնքներ առանձնանում են որոշակի գյուղմթերքների արտադրությամբ, հնարավոր չէ ընդհանուր պլանավորում անել և ինչ որ բան պարտադրել: Պետությունը պետք է սերտորեն աշխատի համայնքների հետո, լուծի արտաքին քաղաքականության, շուկաներ գտնելու խնդիրները:

Պետությունը կոոպերատիվների աջակցության տարբեր ծրագրեր է անում, բայց սայլը տեղից չի շարժվում, համակարգային փոփոխություն չի տեղի ունենում: Այսինքն պետությունը ոչ թե փող պետք է տա, որ ստեղծվեն կոոպերատիվներ ու հետո չաշխատեն, այլ հասկանա, թե ինչի չեն դրանք աշխատում, ինչ համակարգային փոփոխություններ են պետք:

Թե՛ գյուղացին, թե՛ մսավաճառը խոսում են սպանդանոցի հանդեպ վստահությունից, սակայն տարբեր տեսանկյունից: Գյուղացին ասում է. «Ես ի՞նչ իմանամ իմ միսն են ինձ հետ տալու, թե ուրիշինը», մսավաճառն էլ ասում է, որ որոշ հարցեր լուծվում են, բայց որոշներն էլ բաց են մնում:

Նորությունները միշտ գյուղացիների կողմից ընդունվում է կասկածամտորեն, քանի որ գյուղացին սովոր չէ, որ պետությունը իր համար լավ բան պետք է անի: Այդ իսկ պատճառով պետությունը բոլոր գործողությունները պետք է կատարի քայլ առ քայլ ու մանրամասն բացատրելով: Մեր ժողովրդի մոտ վստահության պակաս կա դեպի նորարությունները:

Պետք է պետությունը վերահսկողություն ունենա մթերող գործարանների նկատմամբ:

Կարկտակայաններ կան, որոնք ԱԻՆ-ի հետ չեն համագործակցում. մեկը զանգում է, թե անձրև է գալու, նոր կրակում են, կամ ամպերը գալիս-գնում են, նոր կարկտակայանն աշխատում է:

ԱԻՆ-ի տեխնիկական զինվածությունը ոչ ոք չունի. Գագիկի էլ լսում ենք, համարյա 100% ճիշտ է ասում: Կարկտակայաններ կան, որոնք կարծես դեռ դուրս են ԱԻՆ-ի վերահսկողությունից: Մինչդեռ եթե ԱԻՆ-ը պատասխանատվություն է վերցնում վերահսկելու, արդեն գիտես ումից ինչ պահանջես:

Մեզ մոտ, Քարակերտում, կա «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը, 2003թ-ին ես իրենց ներկայացրի, որ մեքենատրակտորային կայան ստեղծվի, էն ժամանակ 70 000 դոլարի պատմություն էր: Տերովին տերն ա տարել, անտերին՝ գելը:

Շատ գյուղացիներ առավոտից իրիկուն տանջվում են, ոչ մի արդյունք չեն ստանում ու իրենք որոշում են գնան վարձով վեց հազար դրամով աշխատեն, էդ մարդու ընտրությունն ա:

Մենք չունենք ճանապարհներ ապրանքն արտահանելու համար: Եթե պետությունը նպաստավոր պայմաններ ստեղծի բիզնեսի համար, բնականաբար բիզնեսն էլ կարտահանի ապրանքը, ավելի թանկ կվաճառի:

Գյուղացին սպառման մասին չպետք է մտածի, դրա համար պետք է մեխանիզմներ մշակել ճանապարհների, վերամշակողների հետ կապված:

Գյուղացու ամենագլխավոր խնդիրներից է ցանքսերի պահպանության խնդիրը:

Գյուղացիները բազմաթիվ խնդիրներ ունեն մշակման համար. օրինակ մենք կարտոֆիլի համար էլիտար սերմերի կարիք ունենք, մասնավորից ենք բարձր գնով ձեռք բերում, բայց վստահ չենք, որ իրոք էլիտար է:

Համաճարակի պատճառով երիտասարդները հնարավորություն չունեցան արտագաղթել ու մշակվող հողի տարածքներն աճեցին, բայց ծախս եկամուտ հարաբերակցությունը գյուղացուն ձեռ չի տալիս: Գյուղացին միշտ տուժում է:

Մի շիշ ջուրը 120 դրամ է, մի լիտր կաթը՝ 80 դրամ: Վերամշակման գները պետք է վերանայել և վերահսկել:

Արտագնա աշխատանքով մարդիկ կարողանում են իրենց ապահովել՝ մեքենա են գնում, տուն են կառուցում: Նման ձևով գյուղատնտեսությունը չի կարող ապահովել, պետք է կից ջերմոցներում արտադրություն անեն, իրենց հողամասերում, որ կարողանան արդյունք ստանան:

Մարդիկ նախընտրում են երկու կիլոգրամ կարտոֆիլ գնել, քան մշակել այդ կարտոֆիլը, որովհետև ներդրվող ջանքն ու ռեսուրսը չեն համապատասխանում ստացված շահույթին:

Արդեն մի քանի տասնյակ տարիներ են, որ լեռնային գոտիներում, որտեղ առաջ հացահատիկ էր աճում, հիմա արդեն փուշ է: Հազարավոր հեկտարներով տարածքներ մնում են առանց խոտհարքի: Սա ազդում է նաև անասնապահության վրա:

Կարճաղբյուրում լավ գործարան են սարքել ու մանրաձուկ են աճեցնում, փոխանակ մանրաձուկը լցնեն լիճ, որ լճում եղած էդ օրգանական նյութով սնվի, լցնում են ցանցի մեջ ու մի հատ էլ հավելյալ արհեստական կեր են տալիս:

Այլ երկրներում կովին չեն պահի եթե համապատասխան քանակության կաթ չտա, դրա համար կովին պահում են լավ, մաքուր, խտացված կերեր են տալիս: Կովին դիտարկում են որպես գործարան:

Մեր պայմաններում մեր տեղական տեսակներն են լավը, էդ ձեր ասած ցեղականները կապի վրա պիտի պահես, մենք էդքան անասնակեր չունենք, որ էդ ձեր ասած տեսակները կապի վրա կարողանանք կերակրել: Կամ էդ գոմերը, ո՞վ ա տեսել վեց մետր բարձրությամբ գոմ:

Միևնույն ժամանակ էսօր անասուն պահողը քիչ է, եթե շատ լինեին, էս անասնակերն ընդհանրապես չէր բավարարի ու անասնակերը ոչ թե հազար հինգ հարյուր դրամ կլիներ, այլ երեք հազար: Դե անասնապահությամբ զբաղվելն էլ ձեռնտու չէ, ովքեր կողքից գործ ունեին, հանգիստ հրաժարվեցին անասնապահությունից, ուրիշ գործով ավելի հեշտ ընտանիքը կպահեն:

Գյուղատնտեսության ոլորտում երկու կարևոր խնդիր ունենք: Հողերի հետագա ճակատագիրը խիստ սուր է, դեռևս ինչսունականներից՝ հողի սեփականաշնորհումից, հողերը նշանակալիորեն մասնատվել են, չեն օգտագործվում նշանակալի քանակությամբ հողեր: Երկրորդ, ինչ-որ մեխանիզմներով պետք է չմշակվող հողերը, անգամ եթե ունեն սեփականատերեր, մշակվեն այն գյուղացիների կողմից, ովքեր դրա ցանկությունն ու կարողությունն ունեն:

Մեզ մոտ դաշտերն ազատ մնացել են, սեփականաշնորհումից ի վեր ոչ ոք չի մշակում: Եթե ոչ մեկը չի մշակում, պետությունը պետք է վերցնի, տա այն մարդուն, ով կարող է մշակել:

Փոքր հողատարածք մշակողները պետության կողմից տրամադրվող որևէ ծրագրի չեն դիմում, քանի որ բոլոր ծրագրերը այնպես են կազմված, որ դրան դիմում են հիմնականում մեծ մշակահողեր

ունեցողները: Պատճառներից մեկը նաև այն է, որ վարկի ստացման պրոցեսը շատ երկար է, ինչպես նաև գյուղացին վստահ չէ, որ անհրաժեշտ եկամուտ կստանա:

«Արեգակ» վարկավորման կազմակերպություն կա, որի տված վարկերին եթե նայենք, արդեն ծաղկուն փոքր բիզնես պիտի ունենայինք: Բայց մարդիկ նման վարկերը վերցնում են, գնում Քոբուլեթի: Նման կազմակերպությունները տալիս են փոքր վարկեր, որոնք ստանալը հեշտ է, բայց նպատակային չեն օգտագործվում: Բանկերն ավելի մեծ վարկեր են տալիս, բայց մարդիկ վախենում են մեծ վարկեր վերցնեն, որովհետև չեն կարողանում փակել

Երիտասարդ կանանց համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելը խիստ դժվար է, մեր մարզում դա լուրջ խնդիր է: Մտածելակերպ պետք է փոխվի, միայն ծրագրերով կանանց առաջնայնություն տալը բավարար չէ:

Գեղարքունիքի մարզում և՛ քանակի խնդիր կա, և՛ որակի: Օրինակ՝ մարզում չկա մեկ մարդ, որ արտահանման համար որակյալ կաթ տա արտահանողին:

Գյուղատնտեսական մեծ տարածքներ ունեն, որոնք անմշակ են: Հող մշակելու համար թե՛ մարդ չկա, թե՛ տեխնիկա: Օրինակ՝ տարեցների և փոքր տարածքների համար հարմարեցված տեխնիկա չկա: Երիտասարդների համար ընդհանրապես հրապուրիչ չի գյուղատնտեսությունը:

Երիտասարդներին գյուղում պահելու համար պետք է նրանց համար գայթակղիչ պայմաններ ստեղծել. օրինակ՝ սերմացուի, պարարտանյութի, վառելանյութի, տեխնիկայի վարկավորման հնարավորություններ ընձեռել:

Էսօր գյուղացին շատ խղճալի վիճակում է, քանի որ տեխնիկայի խնդիր կա, համակարգման խնդիր կա:

Ջերմատնային տնտեսությունները սուբսիդավորելը լավ է, բայց պետք է Հայաստանի եղանակային պայմանները, գոտիականությունը հաշվի առնել: Մեզ մոտ դա կա՛ մ չի աշխատի, կա՛մ շատ թանկ կլինի:

Մարդիկ ավելի շատ գումար են վաստակում որպես աշխատանքային միգրանտ, քան որպես գյուղատնտես: Ինչո՞ւ պիտի երկրորդով զբաղվեն:

Կոոպերատիվներ մեզ մոտ կան, ստեղծվել են պետական ծրագրերի շրջանակներում և կան տարբեր համայնքներում: Հատուկ ուսումնասիրության թեմա պետք է լինի այն, թե այս գործընթացներն ինչ արդյունքների են հասցրել: Եթե մենք խոսում ենք այն մասին, որ համայնքները պետք է խոշորանան, այսինքն գյուղատնտեսությունը ևս պետք է խոշորացման գնա:

Մեր մարզում 40000 տղամարդ գնում է արտագնա աշխատանքի, էդ ամբողջ բեռը մնում է կանանց մնա, ովքեր չեն կարողանում այդքան հող մշակել:

Մեզ մոտ էլ, օրինակ, տարածված է մեղվաբուծությունը, բերքը շատ առատ է, լիքը մարդ է դրանով զբաղվում, բայց մեղրի իրացման խնդիր ունենք: Հարազատ-բարեկամներն են առնում, սուպերմարկետներին ապահովում են մեկ-երկու խոշոր ֆերմեր: Լավ կլիներ, որ մտածեին էդ մեղրի իրացման մասին:

Գյուղացին անասապահության հետ կապված ունի իրացման մեծ խնդիր, քանի որ չգիտի, թե որտեղ տանի և իրացնի իր ապրանքը:

Լեռնային գոտիներում հարցի լուծումներն են՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրում, հարմարված սերմերի մշակում, նաև արտադրանքի դիվերսիֆիկացիա:

Լավրենտ ջան, ի՞նչ ա նշանակում մի փոքր դժվարություն ունենք իրացման հարցում: Ես կասեի, իրացումը ամենամեծ պրոբլեմն է: Հիմի որ մտնենք ձեր գյուղ հիսուն տոննա խնձոր կա մնացած-

փչացած, ափսոս չի՞ էդ բերքը: Գոնե ինչ-որ մեկը գա, արտահանող լինի, կազմակերպի էդ արտահանումը:

Պետությունը ոչ միայն պետք է աշխատի իրացման կազմակերպման վրա, այլև՝ փաստաթղթաշրջանառության պարզեցման: Բացի այդ, ներքին արտադրություն պետք է հիմնվի: Օրինակ լավ ծիրանն արտահանում են, իսկ ներքին շուկայի համար մնում է թանկ և անորակ ծիրանը:

Մեր գյուղատնտեսությունում շարժ նկատվում է, ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

2019թ. արտադրած ամբողջ կաղամբը Վաղաշենում թափեցին, որովհետև չկարողացան իրացնել: Պետական ոչ մի աջակցություն այս առումով չեղավ:

Ցանքերի պահպանության խնդիրը, մթերման վերահսկողության խնդիր, փոքր գյուղատնտեսների համար իրացման անհրաժեշտ շուկաներ պետք է ստեղծվել: Գյուղատնտեսի խնդիր ունեն գյուղացիները, տեղեկատվության պակասի խնդիր: Այս ամենը կառավարության խնդիրն է և կառավարությունը պետք է ամեն գնով լուծի այս խնդիրները:

Ես հիմա մի քանի տոննա պանիր ունեմ, բայց իրացման տեղ չունեմ, եթե իրացման խնդիր չլինի, ես 20-30 տոննա կարող եմ դուրս հանել:

Էդ խելացի անասնագոմերի իմաստը ես էլ չեմ հասկանում, ավելի լավ ա գյուղացուն փողը տան, ինքն իր իմացած անասնագոմը կառուցի, մանավանդ մանր անասնապահությամբ զբաղվողը: Դրա արդյունավետությունը մարդիկ պիտի աչքով տեսնեն, բայց ես ոնց հասկանում եմ, էդ խելացի անասնագոմը էդքան արդյունավետ չէ: Օրինակ ես ճագարաբուծությամբ եմ զբաղվում, ինձ խելացի անասնագոմ պետք չի, բայց ճագարաբուծության համար պետությունը ոչ վարկ, ոչ մի աջակցություն չի առաջարկում: Իրացումն էլ ա խնդիր, ես, աջակցության դեպքում, կմեծացնեի իմ ծավալները:

Հողերը կտրտված են: Սեփականաշնորհման առաջին տարին բոլոր ոգևորված գնացին դաշտեր, որովհետև սովխոզները բերքը ցանել էին, գնացին ոգևորված հավաքելու: Մեր տարածքներում մարդկանց բաժին ընկած հողերը հաճախ իրենց բնակավայրից 40կմ հեռավորության վրա է, այդքան ճանապարհ գնալ-գալը մեծ ծախս է և մարդուն ձեռք չի տալիս:

Վաղաշենում 4100 բնակիչ կա, բայց մարդիկ շատ փոքր հողակտորներ ունեն, որոնք միավորելը շատ բարդ է. մարդիկ մի տեսակ չեն վստահում իրար: Այս տարի աշխատանքային միգրացիան տուժեց, բայց գյուղատնտեսությամբ մարդիկ չզբաղվեցին, որովհետև անընդհատ սպասում էին, թե երբ ճանապարհները կբացվեն:

Բրենդ ունենալու գաղափարը ճիշտ է, բայց գնային մրցակցություն չի լինի այդ դեպքում: Պետք է մի քանի բրենդ լինի, որպեսզի ապահովվի մրցակցությունը:

Կալավանի մոդելը համայնքային զարգացման համար իդեալական է, ես հիմա Լճաշենում փորձում եմ էդ մոդելը կիրառել. իհարկե Լճաշենը քառասուն անգամ մեծ է Կալավանից, բայց կարծում եմ պետք է օգտագործել, մուլտիպլիկատիվ էֆեկտով կաշխատի:

Նմանատիպ քննարկումներում անհրաժեշտ է ներգրավել մարզպետարանների ոլորտային մասնագետներին, տնտեսվարողներին և ֆերմերներին: Նրանց միջոցով է միայն հնարավոր գտնել ոլորտի զարգացման լուծումներ:

Պետությունը պետք է աջակցի գյուղատնտեսությանը: Մարտունիի տարածաշրջանում շատ հողեր չեն մշակվում. երբ ես գնում եմ սեփականատիրոջը ասում՝ տուր հողդ մշակեմ, ասում է չէ: Պետությունը

պետք է որոշակի լուծումներ գտնի: Շատ մարդիկ կան, որ պատրաստ են վարձակալությամբ վերցնել, բայց երկարաժամկետ: Եթե այս մարդկանց հնարավորություն տրվի, հաստատ հարյուր հա տարածքի համար ոռոգման խնդիր էլ կլուծեն:

Ուզում էի ՏԻՄ-երի դերին անդրադառնալ. ՏԻՄ-երը շատ բան կարող են անել, մի գյուղացին չի կարող ամեն ինչի մասին մտածել՝ հա՛մ արտադրի, հա՛մ վաճառի, համ մարկետինգով զբաղվի, շատ բաներ պետք է տալ ՏԻՄ-երին, թող ունենան լավ գյուղատնտեսներ, մասնագետներ, թող մի քիչ վերափոխվեն, իրենք էսօր ունակ չեն, չեն պատկերացնում, բայց կարող են վերապատրաստվել և շատ լավ անել էդ գործառույթը:

Երաշխավորված գները թույլ կտան, որ գները գոնե ինքնարժեքից չընկնեն: Բայց անգամ այսքան փոքր Հայաստանում ինքնարժեքը շատ է տարբերվում՝ օրինակ, էկոլոգիապես մաքուր պոմիդորի ու մեծ քանակով արտադրված պոմիդորի գները շատ տարբեր են:

Սեփականաշնորհման արդյունքում մարդկանց փոքր հողատարածքներ բաժանվեցին, մեր մարզում բավականին մեծ թեքության վրա: Դրանք չեն միավորվում, որովհետև մարդիկ չեն վստահում իրար, մի քիչ էլ նախանձում են, համատեղ աշխատելու փորձ չունեն:

Պետք է կառավարությունն ունենա հատուկ ծրագրեր փոքր տնտեսությունների համար, քանի որ շատ համայնքներում փոքր տնտեսությունների բաժինը մեծ է:

Մեր երկրում գյուղատնտեսության ոլորտի զարգացման երկարաժամկետ պլանավորում է պետք, մենք Խորհրդային Միությանը ծաղրում էինք, սակայն պլանավորումը խիստ կարևոր է, որ մարդիկ իմանան, ուր են գնում, ինչի կարող են հասնել:

Մենք չեն արտադրում անասնակեր: Գետնախնձորը, ճակնդեղը, այլ տարբեր տեսակի մշակաբույսեր կան, որ կարող են որպես անասնակեր օգտագործվել և բարձրացնել բերքատվությունը, սակայն չեն արտադրվում: Քանի դեռ արտագնա աշխատանքը կա, անասնապահությունն էլ չի զարգանա:

Մեզ մոտ շատ են կարծրատիպերն այն մասին, որ գյուղատնտեսությունն առանձնապես օգուտ չի տալիս, մարդիկ այն որպես շահութաբեր գործունեություն չեն դիտարկում:

Մեր գյուղը վերջին հիսուն տարվա ընթացքում ոչ մի տեխնիկա ձեռք չի բերել, փորձ ենք արել կոոպերատիվի միջոցով տեխնիկա ձեռքբերել, ընկել ենք քաշքշուկի մեջ, մինչդեռ հողերի մեծ մասը չեն մշակվում:

Կաթնամթերքի պիտակների վրա մակնշման խնդիր կա: Այսօր գրված տեղեկությունները շատ հաճախ ճիշտ չեն:

Հեկտարի հաշվով գարու ու ցորենի վնասը մոտ 150000 դրամ է կազմում Գորիսի տարածաշրջանում:

Տաթև բնակավայրում նույնպես նույն վիճակն է. միրգ չկա, խոտը խնդիր է, երևի անասունների քանակը այս տարի կպակասի:

Ես փորձում եմ ռիսկերը բաժանել երկու մասի. օրինակ՝ եթե ինչ-ինչ խնդիրներ կան Ռուսաստանում, ես սկսում եմ աշխատել Հայաստանի շուկայի համար:

Իշխանությունները փորձում են «հետամնաց» գյուղատնտեսությունը զարգացնել, սպանդանոցների ներմուծումը մի քայլ էր դեպի առաջ:

Ոչխարաբուծությունը շատ ժամանակ է խլում, դրա համար ես մենակ խոզ եմ պահում: Խոզ էլ շատ չունեմ, որովհետև շատ տեղ չունեմ, իսկ դրանք շատ են բազմանում

Հաճախ եմ հետևում ռուսական ագրոբլոկներին, ու եթե հետևում եմ հայ ու ռուս գյուղացիների վարքագծին, նկատում եմ, որ հայ գյուղացին անընդհատ բողոքում է խնդիրներից, իսկ ռուսներ կենսախինդ են, անգամ քաղաքաբնակներն են որոշում գյուղատնտեսությամբ զբաղվել: Ակնհայտ է, որ մեզ մոտ խորը հիասթափություն է:

Գյուղացին պայքարում է, ինչ կարող է անում է, բայց բոլոր տեղերից խաբում են նրան:

Պետությունը գյուղացիներին պետք է լսի ու միշտ կանգնած լինի գյուղացու կողքին:

Ֆերմերը մենակ է մնացել, չի զգում, որ պետությունը իր թիկունքին է:

Արոտավայրերի մակերեսները Սյունիքի լեռնային շրջաններում նվազել են: Մեզ մոտ հնարավորություն կա անասունների գլխաքանակը մեծացնելու, արոտավայրերի քանակը դա թույլ է տալիս: Սակայն գարնանը, օրինակ, գյուղի արոտավայրերում անասունների լուրջ կուտակում է լինում: Կանոններ են անհրաժեշտ, որոշակի հերթի ապահովում, այլապես արոտավայրերի կորուստ կունենանք:

Գյուղացին հող մշակող է, և բրենդի մշակման, արժեշղթայի ստեղծման հարցում պետք է «լաբորատորիաներ» ստեղծվեն, որոնք զբաղվեն այդ հարցով:

Իմ կարծիքով ԳԱՄԿ-ի գործառույթը շատ կարևոր է, բայց իրենք ակտիվություն չեն ցուցաբերում: Պետք է այդ հարցում ավելի նախաձեռնողական լինեն:

Գյուղատնտեսության ոլորտում համալիր խնդիրներ կան: Սկսած արտադրությունից մինչև վաճառք, ջրի ապահովում, բնակլիմայական վնասների մեղմում՝ բազմաթիվ խնդիրներ կան, այս արժեշղթան պետք է ամբողջությամբ դիտարկել:

Անասնաբույժը պայմանագիր է կնքում պետության հետ, սակայն քանի որ նորմալ չի վարձատրվում, իր աշխատանքը նորմալ չի կարող կատարել:

Համայնքների խոշորացման պատճառով Տեղ գյուղը հավաքում է յոթ համայնքի բյուջեն, բայց նախ և առաջ լուծում է իր խնդիրները, նոր այլ համայնքներինը:

Եթե մենք մեր երկիրը դարձնում ենք գյուղատնտեսական ապրանք արտադրող երկիր, ամբողջ բեռը թողնել անհատ գյուղացու վրա սխալ է:

Մեզ մոտ պակասում է կառավարության կողմից հետևողականությունը: Հաճախ թվում է, որ ամեն ինչ արվում է փաստաթղթաշրջանառության համար:

Ես զբաղվում եմ ագրոբիզնեսով և սեփական փորձով կարող եմ ասել, որ գյուղատնտեսությամբ զբաղվողի մոտ պետք է լինի կամք, ցանկություն, ինչպես նաև կարգավորող մարմնի միջամտությունը:

Պետությունն ամեն տեղ չի կարող լինել, պետք է բիզնեսին մոտիվացնել և ներգրավվել:

Կլիման, պահանջմունքները, շուկան անընդհատ փոխվում են. անհատական մակարդակով հաջողություն ունենալը անհնար է, համընդհանուր մոտեցում է պետք ձևավորել:

Կաթնամթերքի պիտակավորումը մեծ խնդիր է: Կառավարությունը պետք է վերահսկի, հաճախակի ստուգումներ իրականացնի:

Գյուղացիների համար շուկաներ պետք է կառուցի Էկոնոմիկայի նախարարությունը, որը նմանատիպ տաղավարներ կառուցում է Երևանում:

Գյուղատնտեսությունը մարվում է, մարդիկ գյուղերը լքում են: Ապագայի հանդեպ վստահություն չկա: Տեխնիկան էլ՝ թանկ է:

Մարդ կա, անցել է պետական վերապատրաստումներ, ձեռք է բերել որակավորում, մշակել բիզնես գաղափար, սակայն մտնում է բանկ ու մերժվում: Այս դեպքում ինչի համար են վերապատրաստման կուրսերն ու սերտիֆիկատը, երբ բանկերը նայում են միայն վճարունակությանը: Փողը չեն տա լավ բիզնես գաղափար ունեցող գյուղացուն, բայց կտան երկու խոզ ու մեծ խանութ ունեցող մարդուն:

Արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծումը շատ դրական քայլ էր, սակայն կան շատ իրարամերժ հարցեր: Որոշ փոքր գյուղերը կոոպերատիվները մեծ շահութաբերությամբ աշխատում են, գումար են վաստակում, իրենց միջոցներով նոր տեխնիկա են ձեռքբերում: Սակայն կան նաև կոոպերատիվներ, որ ի սկզբանե ձեռքբերած գույքն էլ չեն կարողացել նորմալ օգտագործել: Ամեն ինչը կախված է ճիշտ և արդյունավետ կառավարումից:

Պետության կողմից դիզվառելիքի ու պարարտանյութի տրամադրումը առավելություն ուներ՝ էժան էր ստացվում: Խնդիրն այն էր, որ ղեկավար մարմինը առաջին հերթին իր բաժինն էր վերցնում, նոր վերջում մնացածը ուշացած տալիս գյուղացուն: Այսքանից ելնելով՝ կարելի է ամփոփել, որ լավ տարբերակ էր. պետության կողմից վարկ էր տրամադրվում ու գյուղացին ինքն էր որոշում երբ ու ոնց կատարի իր ծախսերը:

Եթե մեր երկիրը գյուղատնտեսությունը ընդունում է որպես գերակա ուղղություն, գյուղատնտեսության նախարարություն ունենալը համալիր մոտեցման ծրագիր ստեղծելու և ոլորտները կանոնակարգելու համար կարևոր է:

Յուրաքանչյուր տարածաշրջան պետք է ունենա իր հիմնական արտադրանքը, և բոլոր տեսակի ներդրումները, ռեսուրսները պետք է ուղղորդվեն կոնկրետ այդ ուղղության զարգացմանը

Քարահունջը Գորիսի համայնքի մեջ է մտնում, մենք գումարներ ենք մուծում համայնքի բյուջե, միգուցե այդ գումարները հնարավոր լիներ օգտագործել անհրաժեշտ պետական ավտոպարկ ստեղծելու համար:

Մարդը ունի մի քանի հեկտար հող, լիզինգի համար պետք է լիքը քաշքշուկի մեջ ընկնի: Կհավաքի բոլոր թղթերը, կվազվզի, վերջում կպարզվի, որ մի կետով չի համապատասխանում: Մարդկանց պետք է օգնել թե թղթարարության, թե տեխնիկա ու վարկեր ձեռքբերելու հարցում, թող գան նստեն գյուղապետարանում ու մարդկանց ուղղություն ցույց տան:

Մասնավորն իր տեխնիկան օգտագործում է նախ իր հողերը մշակելու ու բերքը հավաքելու համար, հետո տրամադրում է այլ գյուղացիներին:

Համայնքը ավելի լավ դարձնելու համար աշխատատեղեր պետք է բացվեն, քանի որ երիտասարդ կանայք և երիտասարդ տղամարդիկ գործազրկության պատճառով անդադար ձգտում են գնալ քաղաք:

Կոռնիձոր համայնքում գյուղացիները ամեն ինչին հասնում են իրենց միջոցներով ու աշխատասիրությամբ, պետությունը ոչինչ չի անում նրանց համար:

Աշխատատեղերի բացակայության պատճառով համայնքները դառնում են ծերացող:

Մեր հողերը բազմաթիվ պատճառներով չեն մշակվում: մշակվող հողերն էլ միշտ չէ որ բերրի են:

Այսօրվա դրությամբ այգիների մշակումը մեզ մոտ ավելի հեռանկարային է քան դաշտավայրային գյուղատնտեսությունը:

Ավելի շատ ուշադրություն է պետք հատկացնել ծառատունկերին:

Ագրոտուրիզմին կողմ եմ, ակտիվացել է վերջին տարիներին:

Հացի մատակարարման առումով մենք կախված ենք արտաքին աշխարհից: Դա արդեն կառավարության հոգածության խնդիր է, ճանապարհները պետք է բաց պահվեն, որ հնարավոր լինի արտաքին մատակարարումը կազմակերպել:

Կաթի որակի չափանիշներ ներմուծելն այս պահին այնքան էլ նպատակահարմար չի: Օրինակ՝ մեր շուկայում հիմնականում սպառվում է չանախ պանրատեսակը, որի արտադրման համար կաթի որակն այնքան էլ էական չէ: Մենք կաթ ենք հավաքում նաև ազատագրված տարածքներից, որտեղ նման չափանիշ դնելն ուղղակի անիմաստ է: Սակայն, մենք աստիճանաբար փորձում ենք ուշադրություն դարձնել նաև որակին:

Իմ ծանոթներից մարդիկ կան, որ վարկերից օգտվել են, բայց ոլորտում զարգացում, միևնույն է, նկատելի չի: Վարկային միջոցները նպատակային օգտագործելու խնդիր ունենք:

4. Սոցիալական երկխոսություն

Այս բաժնում ներկայացված է համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում ստացված անուղղակի՝ միջնորդավորված սոցիալական երկխոսությունը, մասնավորապես քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփման միջոցով:

Ա. ՀՈՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Օրինակ, մենք տեխնիկայի խնդիր անընդհատ ունենք, խոշոր տեխնիկա չունենք մեծ հողակտորների դեպքում: Իսկ ավտոմատ ոռոգումը, ավտոմատ տեխնոլոգիաները, կաթիլայինը և այլն արդյունավետ կլինեն, եթե խոշորանան, միավորվեն ու դա պետք է էնպես արվի, որ մարդը չվախենա միանալ էդ միավորմանը, որ փոքրը չտուժի:

Մենք զարգացնելու փոխարեն ոչնչացրինք կոլեկտիվ գյուղատնտեսությունը, երբ մեծ ֆերմերները իրենց ձեռքը վերցնեն ոլորտի զարգացումը կկարգավորվի:

Կոոպերատիվների առկայության դրական երևույթը այն է, որ դրամական շարժը մեծ է ու դրա շնորհիվ կկարողանան ապահովել իր մասնակիցների խնդիրների լուծումը:

Կոոպերատիվի համար իրացումն ավելի հեշտ է, քան անհատի համար: Բացի այդ վերամշակող ընկերությունները կնախընտրեն մեկ պայմանագիր կնքել կոոպերատիվի հետ, քան հինգ-վեց պայմանագիր առանձին գյուղացիների հետ:
Գյուղացին էսօր շատ գործառույթներ ունի, մտածում է՝ ոնց պլանավորի, մշակի, ոնց բերքը հավաքի, ոնց իրացնի: Եթե կոոպերատիվը պլանավորելու և իրացնելու խնդիրը վերցնի, գյուղացու համար ավելի հեշտ կլինի:

Կոոպերատիվներ մեզ մոտ կան, ստեղծվել են պետական ծրագրերի շրջանակներում և կան տարբեր համայնքներում: Հատուկ ուսումնասիրության թեմա պետք է լինի այն, թե այս գործընթացներն ինչ արդյունքների են հասցրել: Եթե մենք խոսում ենք այն մասին, որ համայնքները պետք է խոշորանան, այսինքն գյուղատնտեսությունը ևս պետք է խոշորացման գնա:

Գյուղական տարածքներում մարդիկ շատ գիտելիքի պակաս ունեն: Կոոպերատիվները պետք է հիմնեն ավելի հմուտ մարդիկ ու

Պետությունը պետք է կարողանա օգնի, աջակցություն ցուցաբերի, բայց դա չլինի համախմբման, կենտրոնացման միջոցով: Այդ մեթոդները օգտագործվել է և օգուտ չի տվել:

Եթե այդքան լավ է կոլեկտիվ համատեղ գյուղատնտեսությունը, ինչն է խանգարում կոլեկտիվները կայացնել, նույն մաքուր անասնագոմերը հիմա ունենալ:

Կոոպերատիվները մեր համայնքներում անօգուտ են ու երբեք չեն կարող աշխատել, քանի որ **կոռուպցիոն ռիսկերը**, միևնույն է, կան:

Կոոպերատիվը չի կայանում մեր մտածելակերպի պատճառով, մենք չենք ուզում համատեղ աշխատել: Երբ ասվում է կոոպերատիվ, մարդիկ վախենում են, մտածում են հետ ենք գնում սովետական միություն, իրենց ձեռքից հողը վերցնելու են:

Եթե գյուղացիները չեն համաձայնվում իրար հետ աշխատել, ոչ մեկը չի կարող գալ դրսից, ստեղծել նրանց միջև գործուն համագործակցություն:

Կոոպերացիաներն ու հողերի խոշորացումն արհեստականորեն չեն կարող ստեղծվել, **պարտադրանքով հնարավոր չէ:** Դեպքեր ունենք, **երկու եղբայր միասին չեն կարողանում հող մշակել,** ոռոգման հարց չեն կարողանում լուծել:

Կոոպերատիվների ստեղծման դեմ լինելու միակ պատճառը **մարդկանց հոգեբանությունն է**, քանի որ ամեն մեկը չի ուզում կրի ուրիշի ռիսկը ու կիսի իր շահույթը:

Կոոպերատիվների խնդիրն այն է, որ ժողովուրդը չի հավատում: Խնդիրներից է այն, որ խնամի-ծանոթ-բարեկամների համար առաջնահերթություն է տրվում: Չկա ուժեղ ղեկավար, ով կկարողանա ճիշտ կառավարել կոոպերացիաները: Մենք պատրաստված կառավարիչների կարիք ունենք:

համակարգեն ողջ գործընթացը:

Մարդիկ կկարողանան իրար հետ համագործակցեն, ստեղծեն կոոպերացիա, եթե տեսնեն, որ արդյունավետություն կա էտ ամենից:

Կոոպերատիվների համար լավագույն տարբերակն այն է, որ ստեղծվի բարեկամների ու հարազատների կողմից:

Կոոպերատիվների դեպքում լավագույն փորձի ուսումնասիրություն և տեղայնացում է պետք: Մարդկանց պետք սովորեցնել, կոոպերատիվը կառավարում և համատեղ սեփականության տնօրինում է պահանջում:

Որակյալ կաթի պահանջարկը չի բավարարվում, որովհետև տնտեսությունները փոքր են:

Խոշոր ֆերմերը օգնության կարիք չունի, ինքն իր գլխի ճարը տեսնում է, թույլերին պետք է օգնել, պետությունը սովորական գյուղացուն պետք է օգնի:

Հողերի խոշորացման հետ կապված ինչքան որ շփվել եմ ֆերմերների հետ, իրենք **ձգտում են խոշորացմանը, որովհետև ծախսերի կրճատում է լինում,** բայց նաև էդ միավորումները **համակարգելու խնդիր կա**, որովհետև համակեցության կանոնները չեն կարողանում սահմանել ու արդյունավետ չի լինում, էստեղ գուցե հաջող փորձ պետք է տեսնել կամ վերապատրաստումներ անցնել: Իրականացնելու ձևի խնդիր կա, թե չէ ցանկություն կա:

Մեր վարկային կազմակերպությունը կոոպերատիվներին միշտ **արտոնյալ պայմաններով էր վարկ տալիս**: Մենք ունեցել ենք ֆոնդեր ու ցածր տոկոսներով վարկեր ենք տրամադրել:

Կոոպերատիվների ստեղծման և գործուն աշխատանքի պարագայում կկարողանան համատեղ **ձեռք բերել տեխնիկա** և օգտագործել:

Տեխնիկական պարկի պահպանումն ու շահագործումը բավականին բարդ է, ուստի դա հնարավոր է իրականացնել միայն կոոպերատիվ ստեղծելով, հատկապես փոքր համայնքների դեպքում:

Տեղ համայնքում կա **ավտոպարկի կոոպերատիվ**, որը նորմալ աշխատում է: Դրական փորձ արդեն իսկ կա:

«Եղունգ ունես, գլուխդ քորի». ոչ ոք չի մտածում միանալու մասին, միասին հոգսը կիսելու մասին: Մարդիկ հեռանկար չեն տեսնում միավորման մեջ: Ինքս փոքրիկ տնտեսություն եմ ստեղծել, փորձում եմ ինքնուրույն ինչ-որ բան անել: Հարջիսը կտրված համայնք է: Պետական մայրուղուց մոտ ինը կիլոմետր ներքև է գտնում, միջհամայնքային տրանսպորտ չկա, և միգուցե սա էլ է թևաթափ անում մարդկանց:

Կոոպերատիվներ չեն կարող ստեղծվել, քանի որ մարդիկ միմյանց նկատմամբ վստահություն չունեն, պատասխանատվություն կիսել պատրաստ չեն:

Կոոպերացիայի վերաբերյալ **ընկալումների ու տեղեկացվածության խնդիր** կա: Մարդիկ վախեր ունեն, սխալ պատկերացումներ՝ պայմանավորված սակավ տեղեկություններով:

Կոոպերատիվների չաշխատելու պատճառներից է, որ կոոպերատիվների անդամները պահանջատեր չեն: Մարդիկ պետք է պահանջատեր լինեն :

Անգամ իրենց հողերը վաղուց լքած մարդիկ են ընդվզում կոոպերատիվի գաղափարևին, ասում են կգանք մի փուշ կցանենք, սեփականությունը կորցնելու վախը գերակշռում է: Կրթության և բացատրելու խնդիր կա:

Պետությունը կոոպերատիվների աջակցության տարբեր ծրագրեր է անում, բայց սայլը տեղից չի շարժվում, համակարգային փոփոխություն չի տեղի ունենում: Այսինքն պետությունը ոչ թե փող պետք է տա, որ ստեղծվեն կոոպերատիվներ ու հետո չաշխատեն, այլ **հասկանա, թե ինչի չեն դրանք աշխատում, ինչ համակարգային փոփոխություններ են պետք**:

Աշխատուժ չկա այսօր գյուղերում: Ընդունենք կոոպերատիվն ուզում է 300-400 գլուխ անասուն պահել: Ո՞վ պետք է խնամքի ու կաթնամթերքի մշակման ողջ գործընթացը կազմակերպի և անի:

Ճամբարակում լեռնային պայմանների պատճառով հասանելի չէ ոռոգումը: Ինչպես նաև տեխնիկայի խնդիրը, կոոպերացիաները չեն գալիս այն մակարդակի, որպեսզի կարողանանք որակյալ աշխատանք իրականացնել: Գյուղացին անդադար «վազում է» տեխնիկայի հետևից: Պետք է տեխնիկայի կառավարման պարկը ճիշտ համակարգել, որպեսզի սեզոնին գյուղացին իր ճիշտ հերթն իմանա:

Փոքր հողակտոր ունեցողները, որոնք վաճառում են իրենց հողերը, դառնում են աշխատող և իրենց ավելի լավ են զգում: Ցանկացած ֆերմեր ավելի լավ պայմաններ է ստեղծում գյուղացու համար ու ավելի բարձր գումար վճարում:

Գյուղացիները կես հեկտարը մշակելով ոչ մի արդյունքի չեն հասնի, եթե խոշորացում է նախատեսվում, պետք է լինի փոխշահավետ:

Գյուղացին հողը չի կորցնում, ստեղծում է կոոպերատիվ և համատեղ է տնօրինում:

Ցանքաշրջանառությունը մեծ հողեր ունեցողներն են ապահովում, փոքրերն անընդհատ նույն բանն են ցանում:

Արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծումը շատ դրական քայլ էր, սակայն կան շատ իրարամերժ հարցեր: Որոշ փոքր գյուղերը կոոպերատիվները մեծ շահութաբերությամբ աշխատում են, գումար են վաստակում, իրենց միջոցներով նոր տեխնիկա են ձեռքբերում: Սակայն կան նաև կոոպերատիվներ, որ ի սկզբանե ձեռքբերած գույքն էլ չեն կարողացել նորմալ օգտագործել: Ամեն ինչը կախված է ճիշտ և արդյունավետ կառավարումից:

Ընկերներ եմ ունեցել, որ ոսկին վաճառել են ու երկու տարի ավելի լավ ոսկի են գնել: Եթե այդ պահին հողի մշակումը չի ստացվում, ինչ անենք, թող աշխատեն, ուրիշ բան փորձեն:

Յուրաքանչյուր կոոպերատիվ միշտ լուծարվում է, քանի որ անհատները տեխնիկան կանգնեցնում են իրենց բակում ու գնի ոչ հստակության պատճառով գյուղացին չի կարողանում հողը մշակել:

Գյուղնշանակության վարելահողերի միավորման ժամանակ մոտ **15% դառնալու է ճանապարհ**, գյուղացին ինչո՞վ է շահագրգռված լինելու իր սեփականությունը հանձնել այդ նպատակով:

Պետական աջակցությունը կոոպերատիվներին տրամադրվում է այսօր, բայց պետական ծրագրերից շատ քչերն են օգտվում: Պետք է հասկանալ իրական պատճառը:

Մեր մարզում կոոպերատիվների փոխարեն վերամշակող տնտեսություններ կարելի է ստեղծել, բայց միևնույն է, մենք իրացնելու խնդիր ենք ունենալու: Եթե պետությունը օժանդակի ապրանքը դուրս բերել երկրից, մենք պատրաստ ենք սկսել:

Խոշորացումն արդեն իսկ ընթանում է գյուղերում. մեկն, ով կարողանում է մշակել, մշակում է, ով՝ ոչ, վաճառում է:

Իրավական դաշտից մարդիկ շատ հաճախ վախենում են, **վախենում են հարկվելուց**: Դա էլ կարող է լինել կոոպերատիվին ընդդիմանալու պատճառ:

Մարդիկ այնքան շատ են պարտքերի տակ, որ **հողերը վաճառելու միտում եմ նկատում,** բայց չի կարելի էս գործընթացն ինքնահոսի թողնել, որովհետև գյուղացին կարող է որևէ այլ կերպ չկարողանալ իր զբաղվածությունն ապահովել:

Կոոպերացիա պետք չի ստեղծել, կարելի է ուղղակի **խոշորացված համայնքներում ունենան իրենց տեխնիկան** ու ժամանակ առ ժամանակ տրամադրեն փոքր հողակտորներ ունեցողներին, ովքեր հնարավորություն չունեն ո՛չ լիզինգ վերցնել, ո՛չ տեխնիկա վարձակալել:

Էլոլան սառնարաններ է տեղադրել գյուղերում, որով կաթի որակը զգալիորեն բարելավվել է: Միջնորդները, օրինակ՝ կոոպերացիաները, կարող են բարձրացնել կաթի գինը: Մեզ համար ավելի շահավետ է աշխատել մեծ ֆերմերների հետ, բայց քանի որ տարածաշրջանում նրանք շատ չեն, մենք աշխատում ենք բոլորի հետ:

Այսօրվա հարկային քաղաքականությունն

այնպիսին է, որ **գյուղացուն ավելի հարմար է վճարել իր սեփականության համար հարկերը**: Եթե այդ հողերը միավորելու խնդիր առաջանա, գյուղապետարանն այնքան փող է ծախսելու, օրինակ, նոտարական գործարքների վրա, որ դա դառնում է **բեռ իր համար** և հետևաբար՝ անցանկալի:

Կոոպերատիվների համար պետք է ստեղծել ճիշտ **օրենսդրական դաշտ,** որը հնարավորություն կտա կոոպերատիվներին աշխատել: Կոոպերատիվները **պետք է եկամուտի համար հարկ չվճարեն,** քանի որ մրցակցությունից դուրս են մնում:

Մարտունիում գյուղատնտեսությունը սիրողական մակարդակի վրա է, մի քանի հոգի է դրանով զբաղվում: Առաջին պատճառը հողերի սեփականաշնորհումն էր 90-ականներին, երբ **մանր-մանր կտորներով բաշխվեցին հողերը:**

Մենք խնդիր ունենք փոքր, մասնատված հողակտորների: **Ագրոտեխնիկական սպասարկումը** փոքր հողակտորների վրա կազմակերպելու համար դասընթացներ են պետք: Ո՞նց կարող է մարդը փոքր հողակտորից եկամուտ ստանալ:

Գեղարքունիքում անասնապահությունը միշտ գերակշռել է: Բուսաբուծությունը միշտ, այսպես ասած, կողմնակի գործունեություն է եղել, և մարդիկ չեն համարձակվում մեծ ֆերմաներ ստեղծել՝ **հողակտորները կտրտված են**, փոքր են:

Գյուղատնտեսության ոլորտում երկու կարևոր խնդիր ունենք: Հողերի հետագա ճակատագիրը խիստ սուր է, դեռևս իննսունականներից՝ հողի **սեփականաշնորհումից**, **հողերը նշանակալիորեն մասնատվել** են, չեն օգտագործվում նշանակալի քանակությամբ հողեր: Երկրորդ, ինչ-որ մեխանիզմներով պետք է չմշակվող հողերը, անգամ եթե ունեն սեփականատերեր, մշակվեն այն գյուղացիների կողմից, ովքեր դրա ցանկությունն ու կարողությունն ունեն:

Կամավոր կոոպերացիան մեզ մոտ անհնար է՝ **հողերը կտրտված** են, հարևանների հետ միավորել չի ստացվի:

Վաղաշենում 4100 բնակիչ կա, բայց մարդիկ շատ փոքր հողակտորներ ունեն, որոնք միավորելը շատ բարդ է. մարդիկ մի տեսակ չեն վստահում իրար: Այս տարի աշխատանքային

Հողերի միավորումն արդյունավետորեն կազմակերպելու համար պետք է ուղղակի հրաման տալ, որ բոլոր այն հողերը, որոնք չեն մշակվում, **հետ են տրվում համայնքին**՝ առանց որևէ փաստաթղթային և ֆինանսական բեռի:

Կոոպերատիվների հիմնումը լավ գաղափար է, բայց մեր համայնքում հողերը խիստ մասնատված են, խնդիրը լուծելու համար պետական ծրագիր է պետք, որ նորից **բաժանում անեն:**

Եթե **համատեղ աշխատանքի դրական օրինակներ լինեն**, մարդիկ միգուցե սկսեն կրկնօրինակել, իրենք էլ միանալ և միասին մշակել հողակտորները:

Կոոպերատիվների ու իրենց աշխատանքի օրինակներ պետք է բերվեն **ոչ թե արտերկրից, այլ մեր իրականությունից**: Մեր մոտ էլ կա նման փորձ կոոպերատիվի միջոցով ցեղատեսակներ ընդլայնելու, կաթնամթերք արտադրելու...

Պետությունը պետք է աջակցի գյուղատնտեսությանը: Մարտունիի տարածաշրջանում շատ հողեր չեն մշակվում. երբ ես գնում եմ սեփականատիրոջը ասում՝ տուր հողդ մշակեմ, ասում է չէ: Պետությունը պետք է որոշակի լուծումներ գտնի: Շատ մարդիկ կան, որ պատրաստ են **վարձակալությամբ վերցնել**, բայց երկարաժամկետ: Եթե այս մարդկանց հնարավորություն տրվի, հաստատ հարյուր հա տարածքի համար ոռոգման խնդիր էլ կլուծեն:

Իրականում ճիշտը **մեծածավալ արտադրություն կազմակերպելն** է, մենք ունենք մեծագույն խնդիր, հողերի կոնսոլիդացման հետ կապված, կոոպերատիվների ստեղծումը ընդամենը մեծածավալ արտադրություն կազմակերպելու ճանապարհներից մեկն է, բայց այս ամենը

միգրացիան տուժեց, բայց գյուղատնտեսությամբ մարդիկ չզբաղվեցին, որովհետև անընդհատ սպասում էին, թե երբ ճանապարհները կբացվեն:

Սեփականաշնորհման արդյունքում մարդկանց փոքր հողատարածքներ բաժանվեցին, մեր մարզում բավականին մեծ թեքության վրա: Դրանք չեն միավորվում, որովհետև մարդիկ չեն վստահում իրար, մի քիչ էլ նախանձում են, համատեղ աշխատելու փորձ չունեն:

Հողերի սեփականաշնորհումը ճիշտ չի արվել. հողերի կտրտվածությունը չի նպաստում դրանց ինտենսիվ մշակմանը: Օրինակ Տեղ համայնքում հողերի հիսուն տոկոսն անմշակ է մնացել:

Կոոպերացիան բավականին դժվար կլինի հողերի խոշորացման դեպքում. մարդիկ հավասար պայմաններում չեն կարող ներգրավվել, **ամեն մեկը մի բան է մշակում**:

Պետությունը ոչ մի կերպ, անգամ արտոնությունների տեսքով, չպետք է խառնվի կոոպերատիվների ստեղծման գործընթացին:

լուծելու համար **օրենսդրական կարգավորումներ** պետք է իրականացվեն:

Եթե կոոպերատիվները **հավելյալ հարկեր չվճարեն**, դա կխթանի, որ ֆերմերները միավորվեն, ստեղծեն կոոպերատիվներ:

Հողերի խոշորացումը կտանի ինտենսիվ այգիների զարգացմանը, բայց դրա համար **պետք է սուբսիդավորել**:

Քարահունջ գյուղում տեխնիկայի մեծ խնդիր կա: Կոոպերացիա չենք ստեղծում ֆինանսական խնդրի պատճառով:

Կոոպերատիվները հնարավորություն չեն ունեցել տեխնիկա գնել, քանի որ բանկերի պահանջներին չեն կարողացել բավարարել:

Խնդիրը պետության աջակցության մեջ չէ, **պետությունը չի կարող վերցնել մարդու հողը**, սա մարդու սահմանադրական իրավունքների խնդիր է: Պետությունը չի կարող ստիպել նաև մարդուն վարձակալության տալ, դա սեփականության իրավունքի խախտում է:

Այսօր խոշորացման տենդենց կա, բայց ինչո՞ւ են պարտադրում գյուղացուն վաճառել իր հողատարածքները՝ տարբեր գործոններով արդարացնելով դա, օրինակ՝ գյուղտեխնիկայի բացակայությամբ:

Փոքր գյուղատնտեսական տնտեսությունները աստիճանաբար վերանում են գյուղից:

Ամբողջ հողերի 70%-ի դեպքում **ժառանգության խնդիր կա**, որն ազդելու է հողերի միավորման վրա՝ ավելացնելով ժառանգորդի ֆինանսական բեռը:

Այն ինչ ընդունելի է քաղաքացու համար, երբեմն անընդունելի է գյուղացու համար. **գյուղացին 10սմ հողի համար կարող է եղբոր հետ կռիվ տալ**: Ու զարմանալի չէ, որ ինքը պատրաստ է 10000 դրամով իր մի քանի քառակուսի մետրը պահել մինչև վերջ՝ մշակի այն, թե ոչ:

Մենք ունեցանք հողերը վաճառելու շատ տխուր դեպքեր, երբ մարդիկ ուղղակի լքեցին գյուղը և հայտնվեցին ավելի աղքատ վիճակում:

Համատեղ սեփականությունը սեփականություն չի, դա ոչ ոքինն է...

Միակ գյուղացին, որ մասնակցում էր այս

	քննարկմանը, ես եմ: Դուք խոսում եք գրքային լեզվով, մենք չունենք լավ խոսք, բայց խնդրում եմ մեզ հետ խոսեք: Ես հենց նոր եմ մշակել մեկ տոննա խաղող, ինչքան փող եք տալու ինձ: էդ վեց հազար դրամով ես ինչ կարող եմ անել, որ խոսում եք կոոպերացիաների մասին, դուք հարցրե՞լ եք գյուղացուն՝ ինքը դա ուզում է, թե չէ: ես նախընտրում են իմ հողատարածքը մշակել, քան տալ մի մեծահարուստի, որ մեծ չարչարանքի դիմաց վեց հազար դրամ է տալու, առանց գրանցումի, առանց արտոնությունների, առանց սոցիալական փաթեթի: Համախմբվելն ու կոոպերացիա ստեղծելն այսօր շատ ռիսկային է, քանի որ մարդուն ձեռ է տալիս հնարավորություններ ստեղծվի իր համար ինքն իր տեխնիկայով իր գործը միայնակ անի, քան մեկ այլ մարդու հետ: Կա սեփականության իրավունք: Երբ ասում ես, վաճառիր քո սեփականությունը, կարծես արհամարհում ես մարդու սեփականության իրավունքը: Կոոպերատիվ պետք է ձևավորվի, եթե բնական կարիք կա, եթե դրա անդամների սեփականության իրավունքը հարգվում է:
Արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծումը շատ դրական քայլ էր, սակայն կան շատ իրարամերժ հարցեր: Որոշ փոքր գյուղերը կոոպերատիվները մեծ շահութաբերությամբ աշխատում են, գումար են վաստակում, իրենց միջոցներով նոր տեխնիկա են ձեռքբերում: Սակայն կան նաև կոոպերատիվներ, որ ի սկզբանե ձեռքբերած գույքն էլ չեն կարողացել նորմալ օգտագործել: Ամեն ինչը կախված է ճիշտ և արդյունավետ կառավարումից:	

Ես իմ ներդրումը արել եմ էնպիսի տեղում, որտեղ կարկուտի ռիսկ չկա, ես թանկ եմ տվել, առել էդ հողերը:

Հակակարկտային կայանները պետք է ավելացնեն ինչքան հնարավոր է շատ, միգուցե այդ դեպքում այդ կայաններն ինչ-որ չափով օգտակար լինեն:

Պետք է անպայման լինի պետություն - համայնք համագործակցություն, որպեսզի հակակարկտային կայանները նորմալ աշխատեն:

Դաշտավարությամբ զբաղվելու դեպքում բնական աղետներից տուժում ենք, բայց չէի ասի, թե դրանք հաճախակի են:

Հակակարկտային կայանները շատ արդյունավետ են, իսկ հակակարկտային ցանցերը պարզապես բիզնես են:

Մարտունու տարածաշրջանում ո՛չ ԽՍՀՄ տարիներին, ո՛չ հիմա չկան հակակարկտային կայաններ, բայց իհարկե, դրանց առկայությունը խիստ կարևոր է:

Հակակարկտային կայանները ընդհանուր առմամբ օգտակար կլինեն, եթե իրականում աշխատեն:

Շողակաթ համայնքում հարյուրավոր հեկտարներով ծիրանի այգի էր ստեղծվել, կարկուտ սակայն ամբողջ տարվա բերքը ոչնչացրեց: Որոշ տարածքներում հակակարկտային ցանցերն արդյունավետ են, բայց հարյուրավոր հեկտարների պարագայում կայաններ են պետք:

Կարկուտի դեմ պետք է մի նոր բան մտածել, թե չէ ամեն տարի մի համայնքում ուժեղ կարկուտ է լինում:

Գյուղացու համար միակ խնդիրն իրացումը չի, մի քանի տարի առաջ գյուղապետի հետ էինք, կարկուտ էր եկել ու ամբողջ գյուղը վնասել, գյուղապետը թողեց կոնֆերանսը ու շտապեց գյուղ: Չէի ուզի կենտրոնանայինք ու նշեինք միայն իրացումը:

Հակակարկտային կայանները ոչ միշտ են արդյունավետ, մյուս մարզերի փորձից կարող եմ ասել:

Հարժիսում բավականին մեծ ցանքատարածություններ են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել: Գյուղտեխնիկայի և ժամանակի խնդիր ևս կար:

Կլիմայական պայմաններն էին վատ, ցորենը չհասցրեց բարձրանալ, որ մեքենան բռնի, նորմալ քաղեն, անասնակեր խոտն էլ չի եղել էս տարի, լուրջ խնդիր են մարդիկ ունենալու.:

Մեզ մոտ՝ Գորիսում ընդհանրապես թութ չկար, մյուս բոլոր մրգերը նույնպես շատ քիչ են: Մեղվապահներն են բողոքում, ունեն մեղուների կորուստ:

Սյունիքի մարզում կարկտահարության դեմ պայքարի որևէ միջոց չկա. կարծես խորթ ծնողի երեխա լինենք:

Հակակարկտային կայանները շատ ժամանակ արդյունավետություն չեն տալիս, որովհետև նրանք տեղադրված չեն նպատակային վայրերում կամ նրանց արդյունավետությունը չի եղել: Դեպքեր են եղել, որ կայանի շրջակա այգում կարկուտը ամեն ինչ վերացրել է:

Ապացուցված փաստ է, որ կարկտացրող կայանները **քիչ ՕԳԳ ունի**, պետք է դադարեցնել այդ ծրագրերի իրականացումը և մտածել այլընտանքային ծրագրեր:

Գազագեներատորային համակարգերը ձևավորված կարկուտը փորձում են հալեցնել, այսինքն՝ կախված կարկտային ամպերի չափերից, հնարավոր է կարկուտ տեղա, կամ

չտեղա: Իսկ սովետական համակարգերը կարկուտը ցրում էին:

Զենիթային համակարգերը պետք է այնքան խիտ դրվեն, որ հինգ հարյուր մետրի վրա կարողանան պաշտպանել կարկուտից:

Պետք է հակակարկտային կայաններից **ավելի հզոր գործիքներ** դնել գյուղերում, որոնք ավելի արդյունավետ լինեն, օրինակ ԽՍՀՄ-ում գործող «Պուշկաները»:

Հակակարկտային կայաններով փոխարինել **հին «հրանոթները»** ամենամեծ սխալն է:

Գյուղացիք բողոքում են, որ կրակում են էդ կայանները, երկու **իրար կողքի գյուղերի** դեպքում մեկին հաստատ վնասում են:

Թուրքիայի սահմանից էն կողմ, Կողբի սարի վրա, որ ամպ եղավ, ինձ մոտ անձրև ա գալիս, մի սմ էն կողմ եղավ էդ ամպը, անձրև չի գա: Հարցը էն ա, որ հակակարկտային կայանների տեղադրումը **չեն համաձայնեցրել օդերևութաբանական կայանների վիճակագրության հետ:**

Կարկտակայաններ կան, որոնք **ԱԻՆ-ի հետ չեն համագործակցում.** մեկը զանգում է, թե անձրև է գալու, նոր կրակում են, կամ ամպերը գալիս-գնում են, նոր կարկտակայանն աշխատում է:

Պետք է **ճիշտ հետևեն** թե կարկտաբեր ամպերը ինչ հեռավորության վրա են ու **ճիշտ կրակեն** որպեսզի օգուտ լինի: Միայն կայանի առկայությունը քիչ է, պետք է դրանց ճիշտ օգտագործման **մասնագիտական օժանդակություն** էլ լինի:

Կարկտապաշտպան ցանցերից նույնպես չեն օգտվում գյուղացիները՝ քանի որ **տեղյակ չեն, և ձեռնտու չի գյուղացու համար:**

Հակակարկտային ցանցերի տեղադրումը պետք է **մի փոքր էժանացնել**, որ բոլորը կարողանան հնարավորություն ունենան տեղադրել:

Պետությունը պետք է հակակարկտային ցանցերի գնման հիսուն տոկոս ծախսը իր վրա վերցնել, եղած **սուբսիդավորումը** շատ քիչ է:

Գորիսում չկան հակակարկտային կայաններ: Պետք է **պետությունը ներդրում կատարի** ու կայանները տեղադրեն. գյուղացիները չպետք է

	գումար հավաքեն դրա համար: Սյունիքի մարզում չկան ո՛չ հակակարկտային ցանցերը, ո՛չ հակակարկտային կայաններ: Առաջարկում ենք, որպեսզի պետությունը գյուղացու տված հարկերից գումար տրամադրեն ու ստեղծեն մեր ցանցերը ու կայանները, բայց գումարի **մի փոքր մասը պետք է գյուղացին տա**, որպեսզի պատասխանատվություն ունենա ցանցերի և կայանների նկատմամբ: Այգիների համար ձեռնտու է հակակարկտային ցանցեր լինեն, բայց բարձր գնի պատճառով ձեռ չի տալիս գյուղացուն, պետք է գնի վերանայում տեղի ունենա:
Ջերմատնային տնտեսությունները սուբսիդավորելը լավ է, բայց պետք է Հայաստանի եղանակային պայմանները, գոտիականությունը հաշվի առնել: Մեզ մոտ դա կա՛ մ չի աշխատի, կա՛մ շատ թանկ կլինի:	Մարտունու տարածաշրջանում մենք տարեցտարի, եղանակով պայմանավորված, խնդիրներ ենք ունենում. տարին չորային էր, գարունը ուշ սկսվեց և խոտը հինգ անգամ պակաս ստացվեց, անցած տարի էլ էր նույն խնդիրը, էս տարի էլ ունենք անասնակերի խնդիր, էլ չեմ ասում, որ գինն էլ է թանկացել:
Կալավանը, օրինակ, հասկացավ, որ ծառը բնի վրա ավելի շահեկան է, քան եթե կտրեն: Դրա համար էլ իրենք **գնացին անտառահատների դեմ**, ճանապարհ փակեցին: Անտառահատումների մասին: Պավլովյան ծառատեսակի մասին էի ուզում ասել, որ կարող են օգնել հողերի մաքրմանը, ինքը դեգրադացված հողերի վրա է աճում ու սողանքների դեմն է առնում իր խորը գնացող արմատներով: Լավ կլինի ուսումնասիրենք, հասկանանք՝ ինչ կարելի է տնկել: Ընդհանրապես էկոլոգիական հարցերը, անտառների պահպանման հարցը շատ լուրջ է, ես կուզեի, որ էկոհամակարգը թույլ տա, որ ես ապրեմ Սևանում, ոչ թե գամ ապրեմ Երևանում: Եթե մենք ձգտում են տնտեսական աճի, պետք է անպայման մտածենք շրջակա միջավայրի մասին: Թող **արևային համակարգով, հոսանքով** տաքանան, մեխանիզմներ պետք է ստեղծել, որ մարդիկ գոմաղբը չվառեն ու դա հող վերադառնա, որովհետև գոմաղբը նաև չի թողնում, որ ջուրը գոլորշիանա, խոնավությունն է պահում: Էկոհամակարգերի խնդիրները լրջագույն են: Անհրաժեշտ է շատացնել ծառատունկերը հատկապես այն տարածքներում, որտեղ հողն անմշակ է: Փայտը կարելի է ներկրել դրսից կամ	Զուկը ձվադրման ժամանակ բարձրանալու է ձվադրավայր, բայց չի կարող գնալ, բնադրավայրերի վրա ՀԷԿ-եր են կառուցված: Մարդիկ ստիպված են օգտագործել և ունենալ վառելափայտ: Գազը կարող է կտրվել, թանկանալ, այդ պատճառով մարդիկ նախընտրում են փայտ վառել: Խնդիր է այն, որ փայտը թանկացավ, թեև գազը, վառելիքը չէին թանկացել: Հարցն էն ա, որ մենք պետք ա ունենանք լավ **էկոլոգներ**, Սևանի դեպքում էդ **պակասը զգացվում է,** նայեք մեր Մանկավարժականի էկոլոգիականի ուսանողները ինչ են անում, գուցե արտասահմանի մեր հայրենակիցներին՝ էկոլոգներին հրավիրենք աշխատելու, Սևանը աղետալի իրավիճակում է, հենց էդ արհեստական կերի պատճառով նաև:

օգտագործել այլ բիովառելիք: Բիովառելիքի գնային քաղաքականությունը պետք է վարվի այնպես, որ մարդիկ կարողանան օգտվել:

Անտառային տնտեսությունը կարող է վարվել գրագետ կերպով. վառելիք կարող են դառնալ վնասված ծառերը: Քաղաքային տնտեսությունները ներկայում գրեթե չեն օգտագործում վառելափայտ, գյուղական տնտեսություններն էլ պետք է սովորեն վառելափայտը օգտագործել՝ հնարավորինս քիչ վնաս տալով բնությանը:

Գյուղատնտեսությունը ՀՀ-ում գերակա ուղղություն է, և եղանակային այս կատակլիզմների պարագայում մտածելու կարիք կա. մենք բոլորս պետք է մասնակցենք առաջին հերթին շրջակա միջավայրի պահպանության, և հետո՝ գյուղատնտեսական բարիք ստանալու գործին:

Փայտանյութ քիչ սպառելու համար պետք է գյուղացուն այլընտրանքային էլեկտրաէներգիա առաջարկել, օրինակ արևային էներգիայի կայաններ օգտագործել:

Որոշ գյուղացիներ իրենք են որոշում արևային էներգիան օգտագործել, բայց դեպքերի մեծամասնությունում աջակցություն և արտոնյալ պայմաններ պետք է առաջարկվեն գյուղացիներին՝ արևային էներգիայի օգտագործումը խթանելու համար:

Ունենք շատ խորքային հորեր: Թեև դրանց համատարած օգտագործումը նույնպես կարող է շատ լուրջ բնակլիմայական խնդիրներ առաջացնել: Սրանով կարող ենք օգտագործել այն հողերը, որոնք ավանդաբար անմշակ են եղել:

Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրությունից **գյուղացին անպայման կշահի:** Օրինակ՝ 2015թ. կարկուտից գյուղը զգալի վնաս կրեց, սակայն պետությունը միայն փող տվեց, որով գրեթե ոչինչ հնարավոր չեղավ անել... Միայն չորս տարի հետո նոր ծառերը սկսեցին բերք տալ, իսկ այդ ընթացքում գյուղացին ուղղակի տուժում էր, որովհետև տրված գումարով գրեթե ոչ մի վնաս չկարողացանք փակել:

Եթե անգամ սպասվող բերքի **30-40% արժեքը փոխհատուցեն,** գյուղացին շատ գոհ կլինի:

Պարտադիր ապահովագրության դեպքում գյուղացին լուրջ խնդիրներ կունենա:

Պարտադիր ապահովագրությու՞ն, ո՞վ պարտադրի՝ պետությու՞նը, մենք էսօր ուզում ենք անթիվ անհամար ծառեր դնենք, ես հինգ հազար ծառ ունեմ խփած, ոչ մեկը ինձ չի ասում ապրես, արի քեզ տարեկան մի դրամ փող տամ: Ես ինչքա՞ն թթվածին եմ ստեղծում իմ 17 հա այգով:

Գյուղերում ապահովագրությունից չեն օգտվում, որովհետև բոլորի տարածքները փոքր են և

Մեքենայի ապահովագրությունն էլ սվիններով դիմավորեցին, բայց աստիճանաբար մարդիկ հասկացան, որ դա ճիշտ քաղաքականություն էր: Նույնն էլ լինելու է գյուղատնտեսական ապահովագրության դեպքում:

Գյուղատնտեսական ապահովագրությունն իհարկե ռիսկային է, և վտանգները տարբեր են՝ քամի, կարկուտ, անձրև: Ապահովագրության դեպքում գյուղացուն հնարավորություն են տալիս շարունակել իրենց գործունեությունը: Այս ապահովագրությունը նման է մեքենայի ապահովագրությանը. այն պետք է պարտադիր լինի, թեև կարող է որոշ դժգոհություն առաջացնել սկզբում:

Գյուղացու համար **կարևոր և նպատակային** ձև է ապահովագրությունը, որովհետև գյուղատնտեսությունը մեծ ռիսկայնություն ունի: Վատ է այն, որ ապահովագրական գումարը միանգամից են ուզում գյուղացուց, պիտի փուլային սարքեն, որ կարողանան վճարել:

Սպանդանոցների իրավիճակը շատ նման է ապահովագրության ներդրմանը. **ինքնըստինքյան դա լավ քաղաքականություն է**, պետք է ներդրել, որովհետև դա առնչվում է սննդի անվտանգությանը:

Պետք է ոչ թե ապահովագրություն տան գյուղացուն, այլ **անվերադարձ գումարներ**՝ իրենց հողատարածքը մշակելու համար:

Ապահովագրականից մեզ մոտ էլ են եկել, հանդիպել են, բացատրել են, **շատ մարդիկ էին ցանկանում, բայց գումար չունեին**, թեկուզ տարատեսակ վճարում լիներ, մարդիկ գուցե չվախենային ապահովագրել:

Պարտադիր ապահովագրությունը կախված է **գումարի չափից**, օրինակ էնպիսի գումար չսահմանեն, որ մարդիկ չկարողանան վճարել:

Կամավոր ապահովագրություն ցանկացողները այսօր էլ շատ են, բայց **գումարի խնդիր** ունեն:

Ապահովագրության ծրագրի շուրջ այսօր մեծ աշխուժություն կա. ապահովագրական ընկերությունները ևս ակտիվորեն ներառվում են ծրագրի մեջ, ավելացվում են մշակաբույսերի տեսակները:

ապահովագրման անհրաժեշտություն չկա:

Ապահովագրությունից գյուղացիները չեն օգտվում, քանի որ թերահավատորեն են վերաբերվում կառավարությանը:

Ապահովագրությունը անում են ցրտահարություն, կարկտահարության, հրդեհի համար առանձին: Շատ այգիների համար սա ձեռնտու չէ: Եթե ես ցրտահարության համար եմ պայմանագիր կազմել, եթե կարկուտ է գալիս, ես ոչինչ չեմ ստանում: Այնպիսի **միջինացված** բան է պետք մտածել, որ գյուղացին կարողանա ճիշտ օգտվել:

Ցրտահարության հետ կապված ոչ մի խնդիր պետությունը չի կարող լուծել: Դրա համար ապահովագրական **շահավետ տարբերակներ** է պետք մտածել:

Կուզեի, որ ապահովագրությունն էլ ավելի **մատչելի ու համապարփակ** լիներ, որ գյուղացիները օրինակ **կարկուտից շատ չտուժեն**:

Ապահովագրություն-գյուղացի-կառավարություն համակարգ է պետք կազմել. մենք վերցնենք գումարը, տանք ապահովագրողին, ով բանկում կփակի մեր գումարը: Այսինքն մտցնել **սուբսիդավորվող համակարգ:**

Շուկայում ապրանք ունեցողը գնում ա վաճառողի մոտ, չէ՞, ես ունեմ հինգ հա ծիրանի այգի, որից 410 կգ եմ հավաքել, անցած տարի 24 տոննա եմ ունեցել, ցրտահարվեց էս տարի, ապահովագրական ծառայությունները չեկան ինձ ասեն՝ Գևորգ ջան, քո գումարը տուր, քո ապրանքը ես ապահովագրեմ:

Գյուղատնտեսության ապահովագրությունը **տարբեր համայնքների համար տարբեր ցուցանիշներ են գործում**, սա պետք է վերանայվի:

Փոխհատուցումը վնասի չափից է կախված լինելու. պարզ է, որ ապահովագրողները հարյուր տոկոսով չեն փոխհատուցի վնասը: Բայց սանդղակը կախված պետք է լինի ներդրված աշխատանքից ու կրած վնասից: Օրինակ՝ այս տարի ցրտահարություն եղավ, և շատ լավ էր, որ որոշ չափով ծիրանից կրած վնասը փոխհատուցվեց:

Մեզ մոտ երրորդ սովխոզ կա, իրենք ապահովագրել են, բայց ապահովագրողները չեն համագործակցում, ապահովագրողները տեղյակ

Մոտ 200000 դրամի հասնող ապահովագրության պարտադիր վճարը մոտ 10000 դրամ կարող է լինել, ասենք 1-2%: Սա կարող է **դիմադրություն առաջացնել**: Օրինակ՝ եթե գարի ես ցանել, կամավորի դեպքում սկսելու ես մտածել, որ մեծ գումար է: Իսկ եթե **պարտադիր լինի ապահովագրությունը**, դժգոհելով կվճարես, բայց **մեծ հաշվով օգուտը մեծ կլինի:**

Ինչպես **մեքենաների ապահովագրության դեպքում**, այնպես էլ գյուղատնտեսության պարտադիր ապահովագրության ներդրումը **դժգոհություն է առաջացնելու**, բայց մարդիկ հիմա արդեն տեսնում են առաջինի օգուտները: Կդժգոհեն, հետո **կհասկանան նաև սրա օգտակարությունը**:

Գեղարքունիքի մարզում տարվա կեսը ձմեռ է, կեսը կիսաձմեռ է: **Երկրագործությունը շատ ռիսկային է,** վերջին տարիներին անոմալ եղանակները շատ են խանգարում, նույնիսկ ամռան ընթացքում կարող է ցրտահարություն գրանցվել: Ապահովագրությունը կարող է լուծում լինել:

Զարգացած ապահովագրության համակարգն այն գլխավոր գործոնն է, որը կարող է լուծել գյուղացիների շատ խնդիրներ:

Եթե հնարավոր լինի գյուղատնտեսությունը որոշ ոլորտներով ապահովագրել, **գյուղացին ռիսկի պատճառով հետ չի մնա գործունեություն ծավալելու ցանկությունից**:

Կերի գնային տատանումներից կուզեինք ապահովագրություն լիներ, **համաճարակներից** գոնե ապահովագրվեինք:

Մեզ ապահովագրություն առաջարկող չի եղել: Ես մեքենայի ապահովագրության գրասենյակում հարցրել եմ, ասում են՝ **գյուղապահովագրություն չեն անում:**

Գեղարքունիքի տարածաշրջանում ոչ միայն կարտոֆիլ և կաղամբ ենք մշակում, այլև այլ կուլտուրաներ, օրինակ՝ լոբի**, որոնց որակը չի վերականգնվում:** Մեկ այլ օրինակ՝ այս տարի **շատ չորային էր եղանակը**, խոտ չկա, մեկ տուկը, որը նախկինում 600 դրամով էր վաճառվում, այս տարի 1000-1600 են գնում դաշտից: Եթե ապահովագրություն լիներ, նման խնդիրների առջև չէինք կանգնի:

չեն ես ինչ ծախսեր եմ արել:

Ծիրանի դեպքում մարդիկ 40-50 հազար դրամի ներդրում արեցին ապահովագրության համար, բայց ցրտահարության դեպքում անգամ մինչև 70 հազար դրամի փոխհատուցում ստացան: Ճիշտ կլինի, որ **անցնեն բերքի ապահովագրությանը, ոչ թե ծախսի ապահովագրությանը:**

Ապահովագրությունը **բոլոր տեսակ աղետների դեպքում** պետք է առաջարկվի, ոչ թե ինչ-որ մի բնական աղետի դեպքում:

Ապահովագրում է ոչ թե բերքը, որը գյուղացին պետք է ստանա, այլ քո աշխատանքը: Այս դեպքում ապահովագրությունը շատ անիմաստ է ստացվում: Ապահովագրությունը փոխհատուցում է միմիայն կատարված ծախսերը, այլ ոչ հավանական ստանալիք բերքի ողջ գումարը, իսկ դա գյուղացու համար ձեռնտու չէ:

Եղել են մարդիկ, որ ապահովագրել են, իրենց աշխատանքի գումարն է փոխանցվել, այլ ոչ թե բերքի համար վճարվող գումարը: Գյուղացին եթե մի տոննա բերք ունի, դրա համար պետք է ստանա գումար:

Աշխատանքի ապահովագրությունից գյուղացին ոչ մի օգուտ չի ստանում:

Եթե ապահովագրում են միայն հրդեհի դեպքում, դա վտանգավոր նախադեպ կարող է լինել, քանի որ երբեմն փոխհատուցման գումարներն ստանալու համար մարդիկ կարող են նաև վառել իրենց այգին:

Ապահովագրությունը վերաբերել է խաղողագործությանը, բայց դե գիտեք, Սյունիքում խաղողագործություն չկա: Ապահովագրությունը միայն խոշոր ֆերմերին է ձեռնտու, ո՞նց կարող է փոքր հողակտոր ունեցողը մտնել էդ **բյուրոկրատիայի** տակ, էդ գումարների տակ: Ոչ մի անհատ, իմ կարծիքով, չի ապահովագրում իրեն:

Հիմա ասեմ, որ ապահովագրությունը աշխատի, նախ պետք է **պարզեցվեն բոլոր փաստաթղթերը**, չլինի էնպես, որ հսկայական պայմանագիր գրեն էն վարկայինների նման, որ չես էլ կարդում, պիտի շատ **մատչելի լինեն** ու կարճ, տասներորդ դասարանցու մակարդակի, մոռանում ենք, որ մեր մարդիկ էդքան **գիտելիք չունեն:**

Այսօր ոչ մի գյուղացի ռիսկ չի անի

ապահովագրության համակարգի մեջ մտնի, քանի որ տնտեսությունները փոքր են:

Պետության կողմից տրված **փոխհատոցումները գյուղացուն աննշան են լինում**:

Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Որոշ տնտեսվարողներ նախկինում վարկեր են վերցրել, սակայն ինչ-ինչ պատճառներով նրանց գործունեությունը դեռևս կիսատ էլ մնացել: Հիմա, **ունենալով վարկային ոչ այնքան լավ պատմություն**, նրանք չեն կարողանում նոր վարկեր վերցնել, որովհետև նոր կառավարությունը նախընտրում է վարկավորել սկսնակ տնտեսվարողներին: Սակայն կան տնտեսություններ, որոնց շարունակականությունը շատ կարևոր է:

Ծովինար համայնքում ոռոգման ջրի խնդիր չունենք: Երիտասարդներին խրախուսելու կարիք կա, օրինակ՝ սուբսիդավորմամբ: Բայց երիտասարդներին վարկեր չեն տրամադրում՝ ասելով, թե **վարկային պատմություն** չունես, կամ նայում են ընտանիքի այլ անդամների պատմությանը և մերժում, թե «հայրդ վատ վարկային պատմություն ունի»:

Էդ գյուղատնտեսական վարկերը չեն ստանում մարդիկ, բոլորը **սև ցուցակում են**, էդ որ ասում են հանել են սև ցուցակից, էդպես բան չկա:

Ապրանքը մթերում են պարտքով, վարկերի տակից դուրս չեն գալու գյուղացիք, **սև ցուցակից են դուրս չեն գալու:**

Ե՛վ պետությունը, և՛ բանկերը կարծես ստիպում են, որ մարդիկ գնան խոշորացման: **Փոքր հողակտոր ունեցողները** ստիպված դուրս են մնում, որովհետև **չունեն նորմալ վարկային պատմություն:** Արդյունքում՝ թողնում են հողն ու հեռանում գյուղից:

Գյուղացիական տնտեսություններ կան, որոնք **վատ վարկային պատմության** պատճառով չեն կարողանում իրենց լավ գաղափարներն առաջ տանեն, քանի որ բանկից այն կողմ ոչ մի այլ քայլ չեն կարողանում անել. բանկը մերժում է վարկը և ծրագիրը դառնում է անիմաստ:

Ասում են կառավարությունը հինգ միլիոն ա տալիս, եթե տա ես հենց հիմա մեծ ջերմոց կկառուցեմ, բայց ես **նախկին վարկը չեմ**

Իրավական դաշտից մարդիկ շատ հաճախ վախենում են, **վախենում են հարկվելուց**: Դա էլ կարող է լինել կոոպերատիվին ընդդիմանալու պատճառ:

Ռուսաստանում ԱԱՀ-ն 10% է, մեզ մոտ՝ 18%: Պարզ է, որ ես նախընտրում եմ արտահանել:

Ռուսաստանում **սուբսիդավորման և այլ գործիքներով արտադրողին շատ են օգնում**, մեզ մոտ ամեն ինչ խնդիր է: Դրա համար էլ ես ձգտում եմ նվազեցնել այդ խնդիրների թիվն ու զբաղվում արտահանմամբ:

Սպանդանոցի փոխարեն յուրաքանչյուր համայնքում կարելի էր մորթի կետեր ստեղծել և որակի ապահովման նպատակով վերահսկողություն սահմանել: Սպանդանոցի հիմնական նպատակը մսի շուկան հարկային դաշտ տանել էր:

Շատ ողջունելի կլիներ, եթե պետությունը **հարկային արտոնություններ** տրվեին, որովհետև գյուղատնտեսական արտադրության իրացումից գյուղացին կկարողանա պետությանն այսպես ասած «հետ վերադարձնել արված զեղչերը»:

Հարկային արտոնությունները կարևոր են գյուղացու համար: Այսօր կաթի փոշի է ներկրվում: Հարկային արտոնությունները թույլ կտան գյուղացուն ավելի շատ կաթ արտադրել:

Պետությունը ոչ միայն պետք է աշխատի իրացման կազմակերպման վրա, այլև՝ **փաստաթղթաշրջանառության պարզեցման:** Բացի այդ, **ներքին արտադրություն** պետք է հիմնվի: Օրինակ, լավ ծիրանն արտահանում են, իսկ ներքին շուկայի համար մնում է թանկ և անորակ ծիրանը:

Սուբսիդիաների համար այնքան **պայմաններ** են դնում մարդկանց առաջ, որ քչերն են կարողանում օգտվել այդ ծրագրերից:

Շատ ծրագրերից չօգտվելու **խնդիրը գրավն է**:

կարողացել մարել, ինչ պետք է անեմ:

Գյուղացիների համար տրվելիք վարկերից գյուղացին չի կարողանում օգտվել, քանի որ հիմնականում **չունեն անհրաժեշտ գույք գրավ դնելու համար:**

Լիզինգով մեխանիզմներ ձեռք չեն բերվում: Գյուղացիները **տարիներով կուտակված վարկեր** ունեն ու չեն ուզում ռիսկի դիմեն նոր վարկ վերցնելով:

Խնդիրն այն է, որ **գոնե տուժած մարդիկ կարողանան օգտվել վարկերից**, քանի որ իրենց ընտանիքի եկամուտը օղին ու մեղրն էր, որով կարողանում էին հոգալ իրենց ծախսերը:

Մեր գյուղատնտեսությունն այնքան անկում է ունեցել, որ **զրո տոկոսով վարկ տրամադրելը կամ լիզինգը լուծում չի կարող լինել**:

Երկարատև վարկեր պետք է տրամադրեն, բայց՝ նպատակային, որ կարողանանք գյուղատնտեսության վիճակը փոխել:

Մեկ մլն դրամ շատերն են ստացել, երեք ամիս հետո սկսելու է մայր գումարը փակելը, **ժամկետները գոնե թող երկարացնեն**, երեք ամիսը քիչ է:

Էդ խելացի անասնագոմերի իմաստը ես էլ չեմ հասկանում, **ավելի լավ ա գյուղացուն փողը տան, ինքն իր իմացած անասնագոմը կառուցի**, մանավանդ մանր անասնապահությամբ զբաղվողը: Դրա արդյունավետությունը մարդիկ պիտի աչքով տեսնեն, բայց ես ոնց հասկանում եմ, էդ խելացի անասնագոմը էդքան արդյունավետ չէ: Օրինակ ես ճագարաբուծությամբ եմ զբաղվում, ինձ խելացի անասնագոմ պետք չի, բայց ճագարաբուծության համար պետությունը ոչ վարկ, ոչ մի աջակցություն չի առաջարկում: Իրացումն էլ ա խնդիր, ես, աջակցության դեպքում, կմեծացնեի իմ ծավալները:

Ես գյուղացի եմ ու հասկանում եմ բարձր տեխնոլոգիաներից: Ոչ մի գյուղացու վարկ չի հասնում, քանի որ նախկին վարկը չի վճարել: Եթե ես ունեմ հինգ միլիոն դրամ, կբերեմ ու կկիրառեմ բարձր տեխնոլոգիա, ավելի քիչ չարչարանքով ավելի մեծ արդյունք կստանամ:

Պետությունը մթերող կազմակերպություններին վարկեր է տրամադրում, այդ **վարկերը պետք է տրամադրվեն գյուղացիներին**, օրինակ ամեն

Պետք է Երևանում տուն ունենաս, որ գրավ դնես:

Անհատական մակարդակով գյուղացին չի կարողանում շատ ծրագրերից օգտվել բարդ ընթացակարգերի պատճառով:

Փոքր հողատարածք մշակողները պետության կողմից տրամադրվող որևէ ծրագրի չեն դիմում, քանի որ բոլոր ծրագրերը այնպես են կազմված, որ դրան դիմում են հիմնականում մեծ մշակահողեր ունեցողները: Պատճառներից մեկը նաև այն է, որ **վարկի ստացման պրոցեսը շատ երկար է**, ինչպես նաև գյուղացին վստահ չէ, որ անհրաժեշտ եկամուտ կստանա:

Գյուղացի-բանկ-պետություն հարաբերությունները պետք է լինի անթերի ու պետության վերահսկողության տակ լինի այդ ամենը:

Եթե ուզում ես հող գնել, այնքան արգելանքներ կան հողակտորի վրա, որ չես կարող գնել կամ գրանցել: Դրանք հիմնականում բանկերի տնօրինության տակ են:

Եթե կոոպերատիվները **հավելյալ հարկեր** չվճարեն, դա կխթանի, որ ֆերմերները միավորվեն, ստեղծեն կոոպերատիվներ:

Վարկերը նպատակին պիտի ծառայեն: Ես ինքս հիմնականում օգտագործում եմ հողագործության և անասնապահության նպատակներով: Անասնապահությունն ավելի արագ արդյունք է տալիս, որով կարողանում եմ ապահովել բուսաբուծական արտադրությունը և դրա համար վերցված վարկերը:

Կա անձ, ով ոչ մի վարկային պատմություն չունի, գնում է բանկ ու բանկը վարկ չի տալիս: Նման մոտեցումը ճիշտ չէ:

«Արեգակ» վարկավորման կազմակերպություն կա, որի տված վարկերին եթե նայենք, արդեն ծաղկուն փոքր բիզնես պիտի ունենայինք: Բայց մարդիկ նման վարկերը վերցնում են, գնում Քոբուլեթի: **Նման կազմակերպությունները տալիս են փոքր վարկեր,** որոնք ստանալը հեշտ է, բայց նպատակային չեն օգտագործվում: Բանկերն ավելի մեծ վարկեր են տալիս, բայց մարդիկ **վախենում են մեծ վարկեր վերցնեն, որովհետև չեն կարողանում փակել**:

Գյուղացին **վարկը վերցնում է գյուղատնտեսության անունով**, բայց ծախսում է հարսանիքի, բանակի քեֆի վրա: Արդյունքում՝

կգ-ի դիմաց կարող է **հիսուն դրամ** տրամադրվել:

Պետությունը **մթերող կազմակերպություններին վարկեր** է տրամադրում, այդ վարկերը պետք է տրամադրվեն գյուղացիներին, օրինակ ամեն կգ-ի դիմաց կարող է հիսուն դրամ տրամադրվել:

Նորավան համայնքում առաջին խնդիրը գարնանը **տեխնիկայի** գումար գյուղացիները չեն կարողանում վճարել, վարկ են վերցնում, մտնում վարկի տակ: Լավ կլինի մեր պաշտոնյաները գարնանը այցելեն գյուղեր, **նվազ տոկոսներով վարկեր առաջարկեն:**

Պետք է **սուբվենցիոն վարկերը մեծացնել**, բայց, միևնույն է, ցանկալի է ոչ թե անտոկոս վարկեր տան, այլ անվերադարձ, որպեսզի գյուղացին կարողանա ոտքի կանգնել:

Պետք է գյուղատնտեսական **վարկերը հասնեն բոլորին ու բոլորը վարկերը լինեն անտոկոս**:

Պետությունը մեզ պիտի հովանավորի, սուբսիդավորի, թե չէ գյուղացին աշխատելու է, հողն անտեր չի թողնելու:

Շատ լավ կլինի որ **անտոկոս վարկերը** ոչ միայն այս տարի լինեն, այլ հետագայում ևս:

Գյուղատնտեսական վարկերը պետք է տրամադրվեն **ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ**: Միայն դա կարող է այսօր գյուղացուն շահագրգռել, այսօր գյուղացիները դուխից ընկած են: Գյուղատնտեսությունը ռիսկային աշխատանք է, անհրաժեշտ են պահպանման, արտահանման նպաստավոր պայմաններ:

Մեր վարկային կազմակերպությունը **կոոպերատիվներին միշտ արտոնյալ պայմաններով էր վարկ տալիս**: Մենք ունեցել ենք ֆոնդեր ու ցածր տոկոսներով վարկեր ենք տրամադրել:

Գյուղացին մտածում է, որ պետությունը հնարավորություն չունի աջակցել իրեն:

Սուբսիդավորման երկրորդ խնդիրը նաև այն է, որ **սուբսիդավորելու համար գրավ են ուզում**, եթե վարկային պատմությունը իդեալական չէ:

գյուղատնտեսությունը այս վիճակում է հայտնվել: Արդյո՞ք ստուգում են վարկի նպատակայնությունը:

Մարդ կա, անցել է պետական վերապատրաստումներ, ձեռք է բերել որակավորում, մշակել բիզնես գաղափար, սակայն մտնում է բանկ ու մերժվում: Այս դեպքում ինչի համար են վերապատրաստման կուրսերն ու սերտիֆիկատը, երբ **բանկերը նայում են միայն վճարունակությանը:** Փողը չեն տա լավ բիզնես գաղափար ունեցող գյուղացուն, բայց կտան երկու խոզ ու մեծ խանութ ունեցող մարդուն:

Պետք է **վերահսկողությունը խստացվի բանկերի կողմից** տրվող գյուղական վարկերի վրա:

Գյուղացիներին պետք է **սուբսիդավորում տրամադրվի,** այլապես բանջարեղենի և պտուղների մշակումը կվերանա:

Իմ ծանոթներից մարդիկ կան, որ վարկերից օգտվել են, բայց ոլորտում զարգացում, միևնույն է, նկատելի չի: Վարկային միջոցները **նպատակային օգտագործելու խնդիր** ունենք:

Տեխնիկայի մաշվածության առումով և **վարկերի ոչ նպատակային ծախսերի** հետևանքով գյուղացին շատ է տուժում:

Սուբսիդավորումը թեև լավ մոտեցում է, բայց պրակտիկայում շատ թերություններ ունի: Օրինակ՝ **հասցեականության հարցը**: Այդ գործառույթը տրված է բանկերին, բայց գյուղացիները հաճախ չգիտեն, թե ինչպես աշխատել բանկերի հետ: Օրինակ՝ եթե աշխատավարձդ այդ բանկից չես ստանում, կամ հաճախորդ չես, չես կարող օգտվել քեզ հասանելի ծառայությունից: Սա խնդիր է, անգամ կոռուպցիա կա այստեղ:

Պետության և սուբսիդավորման թիրախային խմբերի միջև կապն ուղղակի պետք է լինի: **Բանկերը, որպես միջնորդներ**, խաթարում են այդ կապը:

Քարակերտ համայնքում շատ դրական են գնահատում պետության կողմից վարվող **սուբսիդավորման քաղաքականությունը** գյուղատնտեսության ոլորտում:

Այս տարի խոտի պակասի հետ կապված **դիմել**

Ինչպես նաև շատ քիչ է սուբսիդավորման քանակը: Պետք է սուբսիդավորման տոկոսը լրիվ զրոյացնեն:

Սուբսիդավորումը պետք է **հավասարակշռված լինի**, պետք է հստակ **հաշվի առնել կոնկրետ դեպքերը,** որպեսզի սուբսիդավորումն իսկապես արդյունավետ լինի: Օրինակ՝ կան դեպքեր, երբ պետք է ֆինանսավորել սկսնակ գյուղատնտեսական գործունեությունը, սակայն կան դեպքերը, երբ պետք է սուբսիդավորել զարգացման ծրագրերը:

Զարգացման ծախսերն անում են այն մարդիկ, ովքեր արդեն իսկ հիմնական խնդիրները լուծել են: Մինչդեռ **աջակցության կարիք ավելի շատ ունեն տնտեսվարողները**, որոնք այսպես ասած «յոլա են գնում», **որոնց տնտեսությունները դեռևս կայացած չեն:** Վերջիններիս սուբսիդավորելն ավելի արդար է:

Այժմ ներդրումների և սուբսիդավորման մեծ մասն աջակցություն է խոշոր հողատերերին, արդյունքում **տուժում են փոքր ու միջին գյուղատնտեսները:**

Սուբսիդավորումն ավելի անհրաժեշտ է այն տնտեսվարողներին, որոնք դեռ նոր են իրենց տնտեսությունն սկսում:

Պետությունը սուբսիդավորում է այն դեպքում, երբ կազմակերպությունն է բերում տեղադրում այդ ցանցերը: Պետությունը **պետք է գումարը տա գյուղացուն** ու ինք իրա ուժերով դա տեղադրի. այս դեպքում 30-40 տոկոսով գինը կիջնի:

Գորիսը կարող է գաստրոտուրիզմի ուղղությամբ զարգանա, մեր տարածաշրջանում այդ հեռանկարը կարող է լինել, եթե **գյուղատնտեսության զարգացման պետական աջակցության** ծրագրերը շատանան և որոշակի աջակցություն ցուցաբերեն: Լավ ցուցանիշներ կարող ենք ունենալ գաստրոտուրիզմի զարգացման առումով:

Պետության կողմից դիզվառելիքի ու պարարտանյութի տրամադրումը առավելություն ուներ՝ էժան էր ստացվում: Խնդիրն այն էր, որ ղեկավար մարմինը առաջին հերթին իր բաժինն էր վերցնում, նոր վերջում մնացածը ուշացած տալիս գյուղացուն: Այսքանից ելնելով՝ կարելի է ամփոփել, որ լավ տարբերակ էր. **պետության կողմից վարկ էր տրամադրվում ու գյուղացին ինքն էր որոշում երբ ու ոնց կատարի իր ենք բանկ ու սուբսիդավորում ստացել ենք**:

Նոր կառավարության օրոք որոշակի **դրական փոփոխություններ կան:** Օրինակ՝ Էլոլան սարքավորումների և հումքի **սուբսիդավորման համար դիմել է կառավարությանը և օժանդակություն ստացել**, որի համար շնորհակալ եմ: Գյուղատնտեսությունը մի քիչ անշնորհակալ գործ է, արդյունքը բավականին ուշ ես տեսնում, մինչդեռ մինչև այդ արդյունքին հասնելը հսկայական գործ ես անում:

Ջերմատնային տնտեսությունները սուբսիդավորելը լավ է, բայց **պետք է Հայաստանի եղանակային պայմանները, գոտիականությունը հաշվի առնել:** Մեզ մոտ դա կա՛ մ չի աշխատի, կա՛մ շատ թանկ կլինի:

Պետությունը պետք է **քաղաքականություն մշակի, նպաստավոր պայմաններ** ստեղծի, աջակցության ծրագրեր առաջարկի, սակայն չի կարող միջամտել մարդու սեփականության իրավունքի իրացմանը:

Թեև ինքս քաղաքում եմ ապրում, բայց կարծում եմ, որ **պետությունը պետք է սուբսիդավորի գյուղացուն**, որովհետև ինքս նկատում եմ, թե որքան աշխատանք է տարվում գյուղատնտեսական մթերքի արտադրության վրա և որքան չնչին է դրա արժեքը շուկայում:

Քրոջս ընտանիքը զբաղվում է **մրգային օղիների արտադրությամբ**: Գորիսում հիմնականում դա բիզնես է, թեև առանց փաթեթավորման: Մենք որոշել էինք որպես բիզնես դա զարգացնել, այգիներ ունեցող բնակիչներից թութ էինք առնում: Կորոնավիրուսի պատճառով շատ տուժեցինք ու փակեցինք բիզնեսը: Ալկոհոլային խմիչքների արտադրություն էն ոլորտն է, որը ամենաքիչն է օգտվում պետական աջակցության ծրագրերից:

Հողերի խոշորացումը **կտանի ինտենսիվ այգիների զարգացմանը**, բայց դրա համար պետք է **սուբսիդավորել**:

Գյուղացիներին նորից **պետք է սուբսիդավորել**, բայց անհատական սուբսիդավորման եղանակով, որպեսզի **գյուղացին ինքը ընտրի այն, ինչ իրեն է պետք:**

Ջերմոցային տնտեսություն ստեղծելու համար պետության կողմից՝ մեկ քառակուսի մետրի համար տրվող **գումարը չի բավարարում**:

ծախսերը:	**Սուբսիդավորումը** միանշանակ անհրաժեշտ գործոն է **գյուղատնտեսության մեջ**: Գյուղացիների մեծ մասը **տեղյակ չէ սուբսիդավորման** ծրագրերից և չեն կարողանում օգտվել դրանցից: Դաշտավարությունն ու անասնապահությունը Վաղաշենում գրեթե հավասարապես են բաժանված: Ձմեռային սեզոնը Արարատյան դաշտում գրեթե մեկ ամիս է, մեզ մոտ՝ 6-7 ամիս: Որքանո՞վ է նպատակահարմար մեզ մոտ անասնապահությամբ զբաղվելը: **Պետությունն անգամ 100%-ով սուբսիդավորի, չի արդարացնի այդ զբաղմունքը:**
Լիզինգի դեպքում բացի տոկոսը, նաև ժամկետն էլ է շատ մեծ խնդիր, լիզինգը գոնե պետք է տրամադրվի 15-20 տարում, որ գյուղացուն ձեռնտու լինի: **Լիզինգային** ծրագրի դեպքում յուրաքանչյուր տեխնիկայի գինը հիսուն տոկոսով ավելանում է: Գյուղացին ունի կանխավճարի խնդիրը ու չի կարողանում նույնիսկ **լիզինգով** տեխնիկա ձեռք բերի: **Լիզինգից** այս պահին կարողանում են օգտվել միմիայն խոշոր տնտեսությունները: Իրականում պետական քաղաքականություն վարելը շատ ճիշտ է, որ գյուղատնտեսական մթերքների **ներմուծման այնպիսի մաքսատուրքեր** պետք է սահմանվեն, որ կրճատվեն ներմուծման ծավալները:	Գյուղտեխնիկան օգտագործվում է առաջին տարին, մյուս տարի այն **դառնում է մետաղի ջարդոն:** Այդ **տեխնիկայի մասերը** թանկ հաճույք են, որ գյուղացին իրեն չի կարող թույլ տալ: Եթե մարդ վարկ է վերցրել, ու չի կարողացել բերք ստանալ, ինքը չի կարողանա այդ ծախսերը հոգալ: Տեխնիկայի հետ հարցերն այժմ լուծման մեջ է, եթե համեմատենք տաս տարի առաջվա հետ, ապա տեխնիկան մաշված էր: **Փոքր լիզինգային ծրագրի շնորհիվ ոչ թանկ տեխնիկան հնարավոր է ձեռք բերել:**

Մյասնիկյան համայնքում ջրի խնդիրը կա, մեր հողատարածքների 30 տոկոսն է ոռոգվում, համ **ջուրն ա քիչ**, համ **համակարգն ա վատ**, եթե Մաստարայի ջրամբարը կառուցվի, ջրի խնդիրը կլուծվի:

Ջուր չլինելու պատճառով մարդիկ տարեցտարի թողնում են իրենց տարածքները և գերադասում են գնալ վարձով աշխատել:

Մենք Մարտունիում ունենք մոտ 300 հեկտար լավ հող, որը չի մշակվում, դրա պատճառը հողերի մասնատվածությունը և **ոռոգման բացակայությունն է:**

Այսօր Արմավիրում համար մեկ խնդիր ոռոգման խնդիրն է, սա պետք է լինի պետության առաջնահերթությունը: Բարձր տեխնոլոգիաների կիրառումը առաջիկա տաս տարվա համար չեն կարող լինել առաջնահերթություն: Գյուղացին հասարակ տեխնիկա ձեռք բերելու և աշխատելու խնդիր ունի էսօր:

Համայնքի բնակիչների ներուժը կհերիքի անմշակ բոլոր հողերը մշակել, **եթե ոռոգման խնդիրը** ամբողջական լուծում ստանա:

Կիսախողովակների հարցը շատ կարևոր է ջրօգտագործողների համար, քանի որ դրանց առկայությամբ **ջրի կորուստը** աննկարագրելի շատ է:

Երվանդաշատում ամենագլխավոր խնդիրն այն է, որ գյուղացիները հնարավորություն ու **թույլտվություն չունեն մոտենալ նույնիսկ Արաքսի ափին:**

Հողերի կտրվածությունը, որակյալ սերմացուի և տեխնիկայի բացակայությունը**, ոռոգման համակարգերի բացակայությունը** լուրջ խնդիրներ են:

Որպես կաթնամշակման գործարանի տնօրեն, կարող եմ ասել, որ **ոռոգման խնդիրները մեզ այնքան էլ չեն հուզում:** Փոխարենը հարկային դաշտի հետ կապված խնդիրներն առաջնային են:

Մեր համայնքում հազար հինգ հարյուր հեկտար տարածությունից ոչ մի հեկտարը չի ոռոգվում, **անջրդի հողեր** են, իսկ մյուս մասն էլ չի մշակվում սողանքների պատճառով:

Ոռոգման ջրի հետ կապված ամենագլխավոր խնդիրը **կորուստներն են**: Կորուստների հարցը եթե կարողանանք կառավարել, լավ կլիներ:

Անհրաժեշտ է փոխել խողովակների համակարգը, որովհետև մինչև ջուրը հասնում է, **մեծ կորուստներ** են լինում: Դրա համար մեծ գումարներ է պետք ներդնել:

Փոքր տարածքներում կաթիլային համակարգը հարմար է, բայց պետք է **ջրի կորուստը նվազեցնել,** խողովակները փոխել:

Հողից ջրատարներ կան, որոնց մինչև 50% **կորուստ** են տալիս: Մինչև դրանք չփոխվեն, ջրի խնդիրը մնալու է:

Խնդիրները շղթայական են. ջուր չլինելը մի խնդիր է, ջուրն օգտատերին հասցնելը մի այլ խնդիր: **Ջրի կորուստը հսկայական է**:

Պետք է մտածենք ոռոգման համակարգի արդիականացման մասին: Մեր առուների մեծ մասը **հողային հունով առուներ** են, և ջրի մեծ կորուստ է լինում: Ոռոգման համակարգի վրա **ներդրումներ** չեն արվում, մինչդեռ ոռոգման ջրի **կորուստն** ամենալուրջ խնդիրներից է:

Ոռոգման համակարգում փոփոխելու շատ բան կա. տեղեր կան, որ **ջուրը գնում կորում է**, իսկ տեղեր կան՝ **ջուրը չի հասնում ոռոգման համար**:

Ոռոգման համակարգի խնդիրների լուծում առայժմ չեմ տեսնում Գորիսին կից համայնքներում: Եղածը ոչ բարվոք վիճակում է: Մեր ոռոգման ցանցը Որոտան ԳԷՍ-ից է գալիս, անցնում է մի քանի համայնքներով, **մինչև մեզ է հասնում, արդեն ոռոգման ջուր էլ չի լինում**: Մայիս-սեպտեմբեր ենք միայն ոռոգման ջուր ունենում, որն ազդում է բերքի վրա: Խնձորեսկում որոշակի աշխատանքներ անելուց հետո խնդիրը կարող է լուծվել, բայց առայժմ որևէ նախաձեռնություն չկա:

Մեր ամենամեծ խնդիրը ոռոգման ջուրն է, ջրագիծը հին է, բայց աշխատում է, գետի վրա էնքան **ՀԷԿ** են դրել, որ մեզ ջուր չի հասնում, նոր տնկած ծառերը չորանում են: Գորիսում տասնհինգ-քսան գյուղ ջուր չունի, գրաֆիկով մի քիչ առավոտ, մի քիչ՝ երեկոյան ջուր են տալիս, մարդիկ սկսում են կենցաղային նպատակով օգտագործման համար հավաքել, էլ ժամանակ չի մնում, որ ոռոգման համար էլ հավաքես:

Ոռոգման ջրի նորմալ մատակարարման դեպքում գյուղացին հնարավորություն կունենա **տարբեր մշակաբույսեր ցանել:**

Մեր բնակավայրերից մեկում լավ զարգացած է հացահատիկային բույսերի մշակումը, բայց **ոռոգման համակարգը լավ վիճակում չէ:** Եթե լինի լավ համակարգ, մեծ պոտենցիալ ենք տեսնում այդ ոլորտի զարգացման հարցում:

Տաթևի համայնքում լոբի, կարտոֆիլ, վարունգ, պոմիդոր, գրեթե **ամեն ինչ կարելի է աճեցնել,** բայց ոռոգման **ջրի բացակայության պատճառով** ավելին չենք կարող անել: Տնամերձերը մոտ 1000 քառակուսի մետր են, բայց կան նաև չօգտագործված հողեր, որոնք կարելի է մշակել:

Մեր գյուղում բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ ենք զբաղվում, բայց ոռոգման համակարգի խնդիր ունենք. **սեզոնային ընդհատումներ են լինում,** արդյունքում՝ օգուտ չենք ստանում, ինչքան էլ որ ներդրում ենք անում:

Եթե ամբողջ տարին ջուր լինի, երկրորդ, անգամ երրորդ բերք կարող ենք ստանալ, բայց ջուր չունենք: Թե՛ ներքին, թե՛ մայր ջրագծի խնդիր է:

Հարժիս բնակավայրում՝ Տաթևի համայնք, **ընդհանրապես ոռոգման ջուր չկա**: Մարդիկ չեն էլ կարող գյուղատնտեսությամբ զբաղվել: Ով որքան կարողանում է, խմելու ջրով մի փոքրիկ հատված է մշակում: Կաթ ենք մշակում, պանիր, իսկ մնացած գյուղատնտեսական ապրանքները փոխանակման միջոցով ենք ձեռք բերում:

Ես աշխատում եմ կանանց ռեսուրս կենտրոնում, ամուսինս զբաղվում է այգեգործությամբ, խոզաբուծությամբ, նաև հացահատիկային կուլտուրաներ ենք մշակում, **մեր հացահատիկայինը անջրդի է, ոռոգման խնդիր ունենք,** քանի որ Տեղ համայնքում է գտնվում, իսկ այգիները խմելու ջրով ենք ջրում: Մենք, օրինակ չգիտեինք, որ կառավարությունը ֆինանսավորում է ինտենսիվ այգիներ ստեղծելու ծրագիր: Վարկային ծրագրերից էլ չենք օգտվել, թեև հետաքրքրված ենք:

Գորիսի շրջակա գյուղերի բնակիչների հետ որ խոսում եմ, իրենց համար **ոռոգման խնդիրը ամենաառաջնայինն** է, հատկապես Տաթև և Տեղ համայնքների համար, Խոզնավար բնակավայրը

Գոնե էդ **ՀԷԿ**-երը ջրի մի մասը վերադարձնեն հուն, ինչ-որ գիծ սարքվի, որ մարդիկ կարողանան ջրել: Դուք պատկերացնու՞մ եք գյուղ, որ բանջարեղեն էլ չկարողանա իր դռան առաջ ցանել: Սրանից հետո էլ մեծ բաներից, գյուղատնտեսություն զարգացնելուց չենք կարող խոսել: Օրինակ, Շինուհայրում ամբողջ գյուղը բողոքում է, բայց բանի տեղ դնող չկա:

Ամենամեծ խնդիրն էն է, որ **ջրովի հող չունենք, ամբողջն անջրդի** է: Միայն Որոտանի հատվածում յոթ-ութ **ՀԷԿ** կա դրած:

Ցանքս էլ չենք անում, որովհետև ոռոգման խնդիր ունենք, նախկինում ջուրը պոմպակայաններով էին վերցնում, տալիս մեզ, հիմա որ **ՀԷԿ-երը կառուցել են**, ջուր էլ չունենք:

Եղել են դեպքեր, երբ գյուղացիները չեն կարողացել հողերը մշակել, վաճառել են խոշոր հողատերերին՝ ուրախանալով, որ ոռոգման համակարգ է քաշվելու, իրենք էլ կօգտվեն: Էն էլ չգիտեին, որ **ոռոգման համակարգը փակ է լինելու,** առանց ջուր են իրենք մնալու:

Արարատյան դաշտավայրում ջուրը շատ մոտ է, ամբողջ **ձկնաբուծությունը կենտրոնացրեցին մարզում**, բայց դա խիստ վնասեց գյուղատնտեսությանը: Հեշտ ձևը գտել էին, շահագործում էին դաշտավայրի ռեսուրսները:

Ձուկը պետք է աճի էնտեղ, որտեղ բերք ու բարիք հնարավոր չի աճեցնել, ձուկը պիտի Սևանում աճեցնել, Արարատյան դաշտին պետք է հանգիստ թողնել, ոչ թե ստեղից ջուր տանել, էնտեղ աճեցնել:

ՋՕԸ-երը միայն փող հավաքող կազմակերպություններ են: Ոչ մի ներդրում, մի խողովակ անգամ չեն փոխել մեր գյուղում: Ես սպասարկման գումար եմ տալիս, ես ջուրը բացում եմ, լցվում է դաշտը, բա ինքն ի՞նչ է անում...

Հասանելի ջրի դեֆիցիտ ունենք: Ունենք մեծագույն խնդիր **մենեջմենթի** առումով: ՋՕԸ-երի աշխատանքը պետք է ճիշտ համակարգվի:

Բաղրամյանի շրջանում ոռոգման ջրերն Ախուրյանից են գալիս, **խորքային ջրերի հետ կապված խնդիրներ չունենք**:

Ունենք շատ **խորքային հորեր**: Թեև դրանց համատարած օգտագործումը նույնպես կարող է

նաև, իրենք ոչ միայն ոռոգման ջրի խնդիր ունեն, այլ նաև խմելու ջրի խնդիր ունեն: Օրինակ Գորիսի խնդիրը հիմնականում **խողովակաշարերի վիճակի** հետ է կապված Վեոլիա ջուրը չի կարողանում ապահովել, իսկ ոռոգման խնդիրը ջրային կորուստների պատճառով է, դարձյալ խողովակաշարերի վիճակն է վատ:

Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղում հիմնական խնդիրը ջուրն է, ջուր ունենք, բայց **նասոսներ չունենք:**

Խողովակը կողքներովս գնում ա, ջուր չունենք:

Ճանբարակում լեռնային պայմանների պատճառով **հասանելի չէ ոռոգումը**:

Ոռոգման համակարգերում ունենք **տեխնոլոգիաների խնդիր:** Կառավարության սուբսիդավորումը լավ է, բայց արդյունքը տեսնելու ենք տարիներ անց: Կարող ենք արձանագրել, որ ճիշտ ուղու վրա ենք:

Ոռոգման խնդրի պատճառով անմշակ են մնում **մեծ հողատարածքները**, քանի որ մեծ հողատարածքի դեպքում գյուղացին պետք է իր միջոցներով իրականացնի ոռոգումը ու իրացման խնդրի պատճառով գյուղացին ռիսկի չի դիմում:

Մենք էլ հող ունենք, 20 տարի է չենք մշակում, ժամանակին կտավատ ենք ցանել, կարտոֆիլ, բայց բերք չէին ստանում, բաց տարածք էր, չէր պահպանվում, անասունները վնասում էին, բացի այդ ոռոգման ջուր չկար: Ու նման կերպ շատերը հրաժարվեցին այդ տարածքում մշակելուց: Հիմա եթե ինչ-որ մեկ ուզի վարձակալությամբ վերցնել, ես կտամ: Եթե **պահպանության ու ջրի հարցը լուծվի**, մարդիկ հաստատ կմշակեն:

Ոռոգման ջուրը Վաղաշենում մեծ խնդիր է դեռ խորհրդային տարիներից: Մինչև չապահովենք, ինչպե՞ս պիտի պահանջենք, որ գյուղատնտեսությամբ զբաղվեն:

Նոր ջրամբարներ պետք է կառուցենք: Շատ համայնքներ ունենք մեր մարզում, որոնք ունեն բնական ու արհեստական ջրամբարներ, որոնք այս եղանակին արդեն դատարկ են: Մինչդեռ այդտեղ կարելի է ջուր կուտակել:

Մեր համայնքները սնվում են Ախուրյանի ջրամբարից, օղորմի Սովետական միությանը, Արագածի ջուրը թունելով եկավ ինքնահոս: Թուրքիան երկրորդ մեծ ջրամբարն է կառուցում, դրա համար Ախուրյանում ջուր չմնաց: **Թող**

շատ լուրջ **բնակլիմայական խնդիրներ** առաջացնել: Սրանով կարող ենք օգտագործել այն հողերը, որոնք ավանդաբար անմշակ են եղել:

Մեր գյուղատնտեսությունում **շարժ նկատվում է,** ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Մենք ոռոգման խնդիր չունենք, օրինակ, ծովի ջրով, նասոսով ոռոգում ենք, բայց մենք խնդիր ունենք գյուղտեխնիկայի մասով: Քաղի սեզոնը գալիս է, տեխնիկա չկա, որ քաղես, սա պետական մակարդակով պետք է լուծվի:

Մարտունիում մարդիկ կամ տնամերձ հողերն են մշակում կամ մի քանի անասուն պահում: **Ոռոգման ջրի խնդիր չունենք**, բայց մեխանիկական միջոցներով ենք ոռոգում, ինչը **ջրի գինը թանկացնում է**, արդյունքում՝ գյուղատնտեսությունն այդպես էլ չի զարգանում:

Ծովինար համայնքում **ոռոգման ջրի խնդիր չունենք:**

Կաթիլային ոռոգման համակարգի օգտակարությունը չի երևում նույնիսկ փորձարկման փուլում:

Ես առաջարկում եմ, որ ջուրը տեղափոխելու հարցում մրցակցություն լինի, ֆերմերները սուբսիդավորվեն, ինչպես **կաթիլային համակարգի համար են սուբսիդավորվում**, որ ջրի կորուստ չլինի:

Ես ընդունում եմ **կաթիլային համակարգը**, դա

ժողովուրդը սոված մնա, բայց պետությունը ջրամբարը կառուցի:

Ինքնահոս ոռոգման ջրագծերի բարելավումը խիստ կարևոր է Հայաստանում գյուղատնտեսությունը զարգացնելու համար:

Ոռոգման ջուրը ձմռան ընթացքում չպետք է կտրվի, մեր մոտ նոյեմբեր ամսին փակվում է, մինչդեռ այդ ջուրը կարող է լցվել այդ ջրամբարները:

Գյուղատնտեսության համար ջուրը պետք է բավարար լինի, եթե **ձկնաբուծությունն է դրան խանգարում**, պետք է այնպիսի բան մշակել, որ ոչ մեկը չտուժի:

Պետական աջակցության լավ ծրագրեր կան, օրինակ՝ **ջրատար առուներ** են սարքում: Աստիճանաբար այդ ծրագրերը կընդլայնվեն:

Օրինակ՝ նոր ջրատար սարքեցին, բայց ջրի ծավալն այնքան քիչ էր, որ արդյունավետությունը չնչին էր: **Փոխարենը կարելի է գյուղերի ջրագծերը փոխել**:

Ոռոգման համակարգի, պարարտանյութերի և այլ գործողությունների համար, պետք է լինի **կենտրոնացված համակարգ,** այսինքն մարդը հստակ տեղեկացված լինի, թե գյուղաշխատանքները երբ պետք է իրականացնի: Գյուղմասնագետների մեծ պակաս ունի գյուղը:

Երկրորդը ոռոգման խնդիրն է, ԽՍՀՄ-ի տարածքում ունեցել ենք ոռոգման զարգացած համակարգ, այս համակարգը այսօր քանդված է, պետք է քայլեր ձեռնարկել, **ջրամբարներ կառուցել, շեշտը դնել ինքնահոս ջրամատակարարման վրա**: Այսօր մենք բնական տարբեր ջրամբարներ ունենք, որ արդյունավետորեն կարող են օգտագործվել:

Կարելի է ստեղծել **համակարգող մարմին՝** չմշակվող, բայց ոռոգելի հողերը հաշվառելու ուղղությամբ: Խորհրդատվություն տրամադրի, թե այդ տարածքներով ինչ տեսակի մշակաբույսեր աճեցնի: Պետությունը կարող է նաև պարտավորություն վերցնել համապատասխան մշակաբույսերի որոշակի քանակություն իրացնելու ուղղությամբ:

արդարացված է, ջուրն էլ **խնայողաբար կօգտագործվի**, բայց մենք ուրիշ պրոբլեմներ ունենք, որ բերքի ավելացումը միայն ջրից չի կախված. պարարտացում, բերքի իրացում և այլն...

Կաթիլային համակարգը ոչ բոլոր մշակաբույսերի համար է հարմար կիրառել:

Նոր տեխնոլոգիաները լավ են, ոգևորիչ են: Ես՝ որպես համայնքի ղեկավար մասնակցել եմ նման ծրագրի ներկայացումներ: Օրինակ խնձորի ինտենսիվ այգու գաղափար կա, կաթիլային ոռոգմամբ, որը սակայն ենթադրում է **հսկայական գյուղատնտեսական վարկեր** վերցնել, որը գյուղացին իրեն չի կարող տալ:

Օրինակ, մենք տեխնիկայի խնդիր անընդհատ ունենք, խոշոր տեխնիկա չունենք մեծ հողակտորների դեպքում: Իսկ ավտոմատ ոռոգումը, ավտոմատ տեխնոլոգիաները, կաթիլայինը և այլն արդյունավետ կլինեն, եթե խոշորանան, միավորվեն ու դա պետք է էնպես արվի, որ մարդը չվախենա միանալ էդ միավորմանը, որ փոքրը չտուժի:

Ջրատարների հիմնական խնդիրը որ լուծվի, **կաթիլային ոռոգման** պրակտիկան ավելի կընդլայնվի:

Կաթիլային ոռոգման հետ կապված Զարթոնքի բնակիչը չէր կարողանում արդյունք ստանալ, գնաց Էջմիածնի տարբեր գյուղերում հողեր է վարձում, կաթիլային ոռոգմամբ մշակում ու արդյունք է ստանում: Քաղաքի բնակիչներն էլ օրը վեց հազար դրամով վարձով աշխատում են իր մոտ:

Ենթադրենք՝ մարդ տնկել է ծառ, տասնհինգ տարի ջրել է առուներով: Եկել է պահ, որ ջուրը սուղ է, պետք է ջրենք **կաթիլային ոռոգմամբ**: Այդ ծառի արմատային համակարգն այնպես է զարգացած, որ կաթիլային ոռոգմամբ, հնարավոր է, այլևս բերք ստանալ չկարողանանք:

Էսօր մեր կողքով Արաքսն է գնում, բայց մենք իսկի **նասոսներ չունենք ջրելու համար**: **Արդյո՞ք պետք է խոսել կաթիլային ոռոգման մասին**:

Կաթիլային ոռոգում պետք է կիրառվեն **նոր այգիներում**, հին այգիների պարագայում այս մեխանիզմը հնարավոր չէ կիրառել:

Կաթիլային ոռոգումը հնարավոր է դարձնում

Սպանդանոցի փոխարեն յուրաքանչյուր համայնքում կարելի էր մորթի կետեր ստեղծել և որակի ապահովման նպատակով վերահսկողություն սահմանել: Սպանդանոցի հիմնական նպատակը մսի շուկան հարկային դաշտ տանել էր:

Ժողովուրդն իր կենդանիների «ձեռքը կրակն» է ընկել: Պետք է ստեղծվի **շրջիկ սպանդանոցներ**, որպեսզի գյուղացին չտանի անասունը սպանդանոց, այլապես եկամուտ չի ստանա:

Սպանդանոցների ծրագիրը արվում է գյուղացու հաշվին, **գյուղացին միշտ տուժում է**:

Սպանդանոցները մեր համայնքում **շահավետ**

ջուրը խնայել:

Կաթիլային ոռոգման ծրագիրը պետք է ակտիվացնել հողամասերում, իսկ դաշտերում ու արտերում այդ ծրագիրը իրականացնելը կարելի է համարել անհնար:

Ջերմոցատնտեսության մեջ **կաթիլային ոռոգման** անցնելը ձեռնտու է: Տեղեկատվության պակասի պատճառով շատերը չեն օգտվում ծրագրից:

Մեզ մոտ **կաթիլային ոռոգում** իրականցվում է Արարատյան դաշտում, որովհետև խորքային հորերից է ջուրն ստացվում: Իսկ Գեղարքունիքում ինքնահոս համակարգեր են պետք: Այստեղ ոռոգման ներքին ցանցը բաց ցանց է, կաթիլայինին անցնելու համար պիտի փակ ցանցից օգտվելու հնարավորություն տաս գյուղացուն: Ժապավենները 1-2 տարի ես կարողանում շահագործել, իսկ դրա համար մաքուր, ֆիլտրված ջուր է պետք. չտաս, փչանում են:

Մեր մարզում **անհրաժեշտություն է կաթիլային և հակակարկտային համակարգը**, լուրջ ներդրումներ են պահանջվում այս ուղղությամբ:

Գյուղացուն պետք է ցույց տալ, թե ինչպես կարելի է ավելի արդյունավետ տնտեսություն վարել: Օրինակ՝ ես հակակարկտային ցանցով պատված ազնվամորու դաշտ եմ մշակել, կաթիլային համակարգով: Իմ արածի արդյունքն եմ ուզում ցույց տալ, և դրա հիմքի վրա մյուսներին խրախուսել, թփեր տալ ուրիշներ, կաթիլային համակարգի մասին ուսուցանել:

Գյուղատնտեսությունը զարգացնելու համար խիստ կարևոր է ոռոգման **ջրի տնտեսումը**:

Մեծածախ շուկաներ տանող **ճանապարհների խնդիր** կա: Օրինակ Մեյմանդարի շուկա տանող ճանապարհին այնքան շատ «պառկած ոստիկաններ» կան, որ բեռնված մեքենաները հաճախ փչանում են:

Գյուղացին **սպառման** մասին չպետք է մտածի, դրա համար պետք է մեխանիզմներ մշակել **ճանապարհների, վերամշակողների հետ կապված**:

Սովետի ժամանակ, կոլխոզ-սովխոզներն իրենց **ճանապարհները** սարքում էին, դե խոտհարքները բարձրլեռնային հատվածներում են, հիմա էդ ճանապարհները պետք է բացել,

չեն, քանի որ մենք մեր անասուններին վաճառում ենք մինչև մորթելը:

Սպանդանոցները պետք է **գյուղերին մոտ տարածքներում լինեն:**

Սպանդանոցների առումով մարդիկ շատ թերահավատ էին սկզբում. **ինչպե՞ս եմ հասցնելու ապրանքը սպանդանոց**, ես իմ բակում եմ ամեն ինչ կազմակերպում, թող գան, վերահսկեն, ինչո՞ւ եմ ես գնալու... Առայժմ մեր համայնքում դեռ չի ներդրվել այս քաղաքականությունը, տեսնենք ինչ կստացվի:

Սպանդանոցի միտքն ինքնին շատ լավն է, բայց կարևոր խնդիր է **անասունների մորթի ժամանակի և տեղափոխման հարցը**: Առաջինը հատկապես կապված է վարկերի մարման հետ: Օրինակ՝ գյուղացին կարող է անասունը մորթել, վարկը փակել:

Այսօր գյուղական համայնքներում գերխնդիր է **անասնաբույժների** հարցը: Նրանք ծառայություն են մատուցում, բայց շատ քիչ են վճարվում: Գյուղացին դեռ չի հասել այն մակարդակին, որ հասկանա՝ ամեն ինչի համար պետք է վճարել:

մարդիկ առաջ լեռնային հատվածներում ցորեն ունեին ցանած, ճանապարհը էնպես էր սարքած, որ կոմբայնը բարձրանում էր, հիմա ճանապարհ չկա, սա պետությունը պետք է անի:

Եթե գյուղամիջյան ճանապարհները ևս վերակառուցվեն, **գյուղմթերքի ինքնարժեքը կիջնի:**

Նախիրը չպետք է ասֆալտով գնա, ծրագրի շրջանակներում հարյուր քսան կմ երթուղի է նախատեսվում անասունների համար: Ճանապարհի եզրով անասունների խնամքի համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքները պետք է լինեն, անասունները այդ ճանապարհները պետք է անցնեն մեկ ամսում: Նման մոտեցմամբ արոտավայրերի խնդիրը որոշ չափով կլուծվի:

Արոտավայրերը գյուղից հեռու են, այդ իսկ պատճառով կան սորտեր, որոնք չեն կարողանում մեր համայնքում գոյատևեն:

Անասունին հարյուր կմ քշես, քաշ է գցելու: Ավելի լավ է մտածել խոտը, ոչ թե անասունին տեղափոխելու մասին:

2. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ

Տեխնիկայի հետ հարցերն այժմ լուծման մեջ է, եթե համեմատենք տաս տարի առաջվա հետ, ապա տեխնիկան մաշված էր: Փոքր լիզինգային ծրագրի շնորհիվ ոչ թանկ տեխնիկան հնարավոր է ձեռք բերել:

Մեր գյուղատնտեսությունում շարժ նկատվում է, ոռոգման համակարգերն են փոխվել, **տեխնիկայի վրա են ներդրումներ արվում**, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Քարահունջը Գորիսի համայնքի մեջ է մտնում, **մենք գումարներ ենք մուծում համայնքի բյուջե**, միգուցե այդ գումարները հնարավոր լիներ օգտագործել անհրաժեշտ պետական ավտոպարկ ստեղծելու համար:

Ամեն համայնք պետք է ունենա մեկ երկու մեխանիզմներ, որոնք **պետք է նոր լինեն ու ժամանակակից,** որոնցից կարող են օգտվել համայնքում բոլորը:

Գյուղատնտեսության **արդիականացումը ու**

Մեր համայնքում այս պահին **թարմացված չի ավտոպարկը**: Հին տեխնիկայով գյուղացիները շատ դժվար են աշխատում:

Շատ լավ կլիներ, եթե համայնքում **ավտոպարկ լիներ**, գումարը մուծեի, բերքահավաքի ժամանակ ինձ օգնեին հավաքել բերքը: Բերքահավաքի ժամանակ բերքի կեսը մնաց դաշտում...

Մեզ մոտ, Քարակերտում, կա «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը, 2003թ-ին ես իրենց **ներկայացրի, որ մեքենատրակտորային կայան ստեղծվի**, էն ժամանակ 70 000 դոլարի պատմություն էր: Տերովին տերն ա տարել, անտերին՝ գելը:

Գյուղատնտեսությունը մարվում է, մարդիկ գյուղերը լքում են: Ապագայի հանդեպ վստահություն չկա: **Տեխնիկան էլ՝ թանկ է**:

Այս պահին **շատ վատ վիճակում է տեխնիկական բազան** ու շատ մեծ խնդիրների առաջ ենք կանգնում այդ տեխնիկայի

վերազինումը պարտադիր պետք է, հատկապես տեխնիկապես վերազինումը, քանի որ մեր հողերը շատ քարքարոտ են:

Տեխնիկայի արդիականացման շնորհիվ գյուղացիներն ավելի շատ ու սիրով կկատարեն իրենց աշխատանքը:

Այսօր գյուղատնտեսությունը պետք է **ժամանակակից տեխնիկա ունենա, որ բերքատվությունն ու որակն ավելանան**:

Քարակերտում մի չորս-հինգ մեծ հողատերեր կան, որ մինչև հիսուն հա ունեն**, բոլորը նոր տեխնիկա ունեն, իրենց գործն անում են**:

բացակայության պատճառով:

Տեխնիկայի հարցը ամենաարդիական հարցն է: Մեր համայնքում տեխնիկան շատ քիչ է: Օրինակ խոտքաղի ժամանակ մեր համայնքի **տեխնիկան չի բավարարում:**

Փոքր հողամասերում աշխատելու համար **տեխնիկա գրեթե չկա**:

Էսօր գյուղացին շատ խղճալի վիճակում է, քանի որ **տեխնիկայի խնդիր կա**, համակարգման խնդիր կա:

Մասնավորն իր տեխնիկան օգտագործում է նախ իր հողերը մշակելու ու բերքը հավաքելու համար, հետո տրամադրում է այլ գյուղացիներին:

Գյուղատնտեսական մեծ տարածքներ ունեն, որոնք անմշակ են: Հող մշակելու համար թե՛ մարդ չկա, թե՛ տեխնիկա: Օրինակ՝ տարեցների և փոքր տարածքների համար հարմարեցված **տեխնիկա չկա**: Երիտասարդների համար ընդհանրապես հրապուրիչ չի գյուղատնտեսությունը:

Հայաստանում բոլոր համայնքները ունեն **գյուղտեխնիկայի պակաս**, գյուղերում առկա տեխնիկան չեն հերիքում երբեք:

Գյուղացին փոքր հողակտորներ ունի, բայց **տեխնիկա չունի**: Մինչև կողքի համայնքից տեխնիկա ենք բերում, բերքը փչանում է:

Համայնքների մեծ մասում **չկան կոմբայններ**:

Գյուղերի մեծ մասն ունի **կոմբայնի հետ կապված խնդիր,** ինչպես քանակի, այնպես էլ՝ մաշվածության:

Էսօր գնային առաջարկից բացի, կա նաև մեխանիզմի որակ: Ես Բելառուս ունեմ, որ խաղողս վարում եմ ընդամենը 10 լիտր սայլարկայով: **Պետք է մեխանիզմն էլ մրցունակ լինի:**

Երբեմն որպես օգնություն տեխնիկա են տրամադրում, կարճ ժամանակ անց տեխնիկան չի աշխատում, որովհետև **որակյալ չէ**:

Մեխանիզմների **արդիականացումը** օրհասական խնդիր է:

Գյուղտեխնիկայի խնդիրը ոչ միայն դրա առկայությանն է վերաբերում, այլև **դրա շահագործմանն ու պահպանմանը**, որը ևս բավականին բարդ խնդիր է. օրինակ՝ պահեստամասերի ծախսը:

Մյասնիկյանի համայնքապատկան **ՄՏԿ կա, անտեր մնացած, գցած ա**, կողքից անցնում ես, ցավդ գալիս ա:

Գյուղտեխնիկան օգտագործվում է առաջին տարին, մյուս տարի **այն դառնում է մետաղի ջարդոն**: Այդ **տեխնիկայի մասերը թանկ հաճույք են**, որ գյուղացին իրեն չի կարող թույլ տալ: Եթե մարդ վարկ է վերցրել, ու չի կարողացել բերք ստանալ, ինքը չի կարողանա այդ ծախսերը հոգալ:

Տեխնիկայի մաշվածության առումով և վարկերի ոչ նպատակային ծախսերի հետևանքով գյուղացին շատ է տուժում:

Հարժիսում բավականին մեծ ցանքատարածություններ են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել: **Գյուղտեխնիկայի** և ժամանակի խնդիր ևս կար:

Մեր հիմնական խնդիրը **գյուղտեխնիկայի հնությունն է:**

Սահմանամերձ գյուղերում քայքայվել է գյուղատնտեսությունն ու տնտեսությունը: Դաշտերը դարձել են անմշակ, բերքատվությունը՝ խիստ ցածր: Դե դուրս եկեք, դաշտերը նայեք, **հին տեխնիկան** նայեք: Թեև այսքանից հետո սահմանամերձ համայնքի բնակիչները պայքարում են:

Գյուղացու տեխնիկան հնացած է, բայց կառավարությունն ու **բանկերը մեզ աջակցում են** լիզինգի միջոցով տեխնիկա ձեռք բերել:

Մարդը ունի մի քանի հեկտար հող, լիզինգի համար պետք է լիքը քաշքշուկի մեջ ընկնի: Կհավաքի բոլոր թղթերը, կվազվզի, վերջում կպարզվի, որ մի կետով չի համապատասխանում: **Մարդկանց պետք է օգնել** թե թղթարարության, թե տեխնիկա ու վարկեր ձեռքբերելու հարցում, թող գան նստեն գյուղապետարանում ու մարդկանց ուղղություն ցույց տան:

Հույս ունենանք, որ կգա մի ժամանակ, երբ լիզինգային **վարկավորումը ավելի ձեռնտու կլինի** ու բոլորը կկարողանան թարմացնել իրենց տեխնիկան:

Լիզինգային ծրագրի դեպքում **յուրաքանչյուր տեխնիկայի գինը հիսուն տոկոսով ավելանում է**:

Գյուղացին ունի կանխավճարի խնդիրը ու չի կարողանում նույնիսկ **լիզինգով տեխնիկա ձեռք բերի:**

Գյուղացին սեփականությունից կառչած մարդ է:

Երիտասարդներին գյուղում պահելու համար պետք է նրանց համար գայթակղիչ պայմաններ ստեղծել. օրինակ՝ սերմացուի, պարարտանյութի, վառելանյութի, **տեխնիկայի վարկավորման հնարավորություններ ընձեռել:**

Փոքր հողատարածքների մշակման համար նախատեսված տեխնիկան մոտ 3000 դոլար արժե, սակայն մեզ մոտ վաճառվում է 10000-ով: **Պետությունը պետք է սա վերահսկի:**

Ես մի 400 քառակուսի մետր հողատարածք ունեմ, որն ասում են եղած տեխնիկայով մշակել չի լինի: Բայց դա այդպես չէ: **Կա նման տեխնիկա, բայց այնքան թանկ** է, որ գրեթե անհնարին է ձեռք բերել:

Տեխնոլոգիաների առումով աշխարհն այսօր գնում է գլոբալացման: **Առանց տեխնոլոգիաների և գյուղատնտեսական սարքավորումների մենք հետ ենք մնալու համաշխարհային տենդենցից**:

Լեռնային գոտիներում **հարցի լուծումներն են՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրում**, հարմարված սերմերի մշակում, նաև արտադրանքի դիվերսիֆիկացիա:

Միակ մտավախությունս այն է, որ բարձր **տեխնոլոգիաների** կիրառումը կարող է հանգեցնել **աշխատուժի կրճատման**:

Նորագույն սարքավորումներ չենք կարողանում ձեռք բերել, քանի որ **սարքավորումներ արտադրող ընկերությունների մեծ մասը Հայաստանում չունեն ներկայացուցչություններ**, օրինակ՝ բրդի մշակման համար սարքավորում:

Ես գյուղացի եմ ու հասկանում եմ բարձր տեխնոլոգիաներից: Ոչ մի գյուղացու վարկ չի հասնում, քանի որ նախկին վարկը չի վճարել: Եթե ես ունեմ հինգ միլիոն դրամ, կբերեմ ու կկիրառեմ բարձր տեխնոլոգիա, ավելի քիչ չարչարանքով ավելի մեծ արդյունք կստանամ:

Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Գորիսի տարածաշրջանում ապահովագրության վերաբերյալ ինֆորմացիայի պակաս կա: Մարդիկ չգիտեն, թե ինչ չափով են **ապահովագրելու**, ինչ պայմաններով:

Կարկտապաշտպան ցանցերից նույնպես չեն օգտվում գյուղացիները՝ քանի որ **տեղյակ չեն**, և ձեռնտու չի գյուղացու համար:

Գյուղացիների մեծ մասը **տեղյակ չէ** սուբսիդավորման ծրագրերից և չեն կարողանում օգտվել դրանցից:

Սուբսիդավորումը թեև լավ մոտեցում է, բայց պրակտիկայում շատ թերություններ ունի: Օրինակ՝ հասցեականության հարցը: Այդ գործառույթը տրված է բանկերին, բայց **գյուղացիները հաճախ չգիտեն, թե ինչպես աշխատել բանկերի հետ**: Օրինակ՝ եթե աշխատավարձդ այդ բանկից չես ստանում, կամ հաճախորդ չես, չես կարող օգտվել քեզ հասանելի ծառայությունից: Սա խնդիր է, անգամ կոռուպցիա կա այստեղ:

Ես գյուղատնտեսական ոլորտի զարգացումը տեսնում եմ ոչ ֆորմալ կրթությամբ: Եթե ունենք այսօր մի քանի տասնյակ ձեռներեցներ, որ այսօր զբաղվում են գյուղատնտեսությամբ, վաղը նրանք կարող են չլինել:

Միջգյուղային ճանապարհները պետք է լինեն բարեկարգ վիճակում, մարդիկ հեշտությամբ պետք է կարողանան հանգիստ գնալ քաղաք: Պետք է **գիտելիք տալ գյուղացուն**՝ իր համայնքի աշխարհագրական դիրքի, կարիքների, հնարավոր արտադրանքների մշակման, իրացման հեռանկարների, ֆինանսներ ու տեխնիկա հայթայթելու տարբերակների մասին:

Երիտասարդներին պետք է բացատրել գյուղատնտեսության հնարավորությունների, իրենց անձնական շահի, հեռանկարների մասին, շահագրգռել վերջիններիս, որպեսզի զբաղվեն գյուղատնտեսությամբ:

Բացի ավտոպարկը թարմացնելուց, պետք է ներդնել նաև այնպիսի համակարգ, որ

Նոր մշակաբույսերի վերաբերյալ գիտելիքի կարիք կա: Օրինակ՝ Մարտունու համայնքներում բրոկոլի էին մշակել, որն ավելի լավ վաճառվեց, քան կաղամբը: Բայց **շատերը չգիտե**ն, թե ինչպես պետք է մշակել նոր կուլտուրաները, գնում են, ցանում, բայց հետո չեն կարողանում բերք ստանալ:

Գյուղական տարածքներում մարդիկ շատ **գիտելիքի պակաս ունեն**: Կոոպերատիվները պետք է հիմնեն ավելի հմուտ մարդիկ ու համակարգեն ողջ գործընթացը:

Անհատը չի կարողանում արտահանել իր արտադրանքը, քանի որ **տեղեկատվության պակաս կա:**

Անգամ իրենց հողերը վաղուց լքած մարդիկ են ընդվզում կոոպերատիվի գաղափարևին, ասում են կգանք մի փուշ կցանենք, սեփականությունը կորցնելու վախը գերակշռում է: **Կրթության և բացատրելու խնդիր կա:**

Գյուղացին հող մշակել չգիտի, դրա համար եկամուտ չի ստանում, այլ գոյատևում է: Եթե գյուղացին հասկանա՝ ինչպես ճիշտ վարել իր հողը, ապա նա հնարավորություն ունի մեծ եկամուտներ ստանալ մեր երկրում:

Էն մարդիկ, որոնք մինչև հիմա զբաղվել են գյուղատնտեսությամբ, հարյուր տարի մենակ կարտոֆիլ են ցանում ու էլ **ոչ մի բան չգիտեն**, հաշվի չեն առնում, որ կլիման փոխվել է, շարունակում են ցանել ու ստանում են վատ բերք:

Գյուղացին հաշվարկ անել չի սիրում. ինչպես հին մեթոդներով անասնապահությունը կազմակերպել էր, այդպես էլ շարունակում է:

Շատ **դժվար է տոհմային անասնապահություն իրականացնել**: Եղել են մարդիկ, որ փորձել են, բայց բոլոր անասունները սատկել են: Իհարկե, լավ կողմերը շատ են, բայց ռիսկերն ավելի շատ են:

Բոլոր գյուղացիները զբաղվում են գյուղատնտեսությամբ Արմավիրի մարզում, որովհետև աշխատատեղ չկա: Երեք գյուղացի աշխատում են, երկուսը իրենց չարչարանքից մեծ արդյունք են ստանում, երրորդը՝ չէ: Պարտադիր չէ, որ բոլորն զբաղվեն գյուղատնտեսությամբ:

երիտասարդներին կդրդի որպեսզի սկսեն սովորել մեքենավարությունը և տեխնիկայի սպասարկումը: Սա օրհասական խնդիր է մեր գյուղերում, քանի որ մասնագետներն արդեն ծերանում են, իսկ նոր մասնագետներ չկան. մեր երիտասարդներին հետաքրքիր չէ այս մասնագիտությունը:

Շատ լավ գաղափար է **երիտասարդներին մոտիվացնելը**, իրենք ավելի առաջադեմ են և հետաքրքիր գաղափարներ են ունենում:

Դասընթացներ են պետք գյուղացիների համար, որ իմանան ռիսկերի մասին, խնդիրների մասին ու էդ դասընթացների արդյունքում էլ կհասկանան ու՞մ աջակցել՝ ուժեղներին, թե՞ թույլերին:

Մենք խնդիր ունենք փոքր, մասնատված հողակտորների: Ագրոտեխնիկական սպասարկումը փոքր հողակտորների վրա կազմակերպելու համար **դասընթացներ** են պետք: Ո՞նց կարող է մարդը փոքր հողակտորից եկամուտ ստանալ:

Գյուղացիների համար պարտադիր **դասընթացներ պետք է լինեն**, որ վարկ վերցնողը վստահ լինի՝ ինչի համար է վերցնում, ինչպես օգտագործի:

Գյուղերում **սեմինարներ արեք**, շատ մարդիկ կան, որ ոնց հարյուր տարի արել են, էդպես էլ շարունակում են աշխատել: Անհրաժեշտ է թարմացնել գիտելիքը:

Պետք է ԿԳՆ-ն ծրագիր մշակի 18-ից բարձր անձանց կրթելու համար:

Կրթելու ոլորտն առանձին կազմակերպությունների պարտականությունը չէ, այլ **ԿԳՆ-ի պարտականությունն** է: Կրթությունը և կադրերի պատրաստումը պետք է սկսվի դպրոցներում և բուհերում:

Գյուղացուն անպայման **պետք է ցույց տաս**, թե ինչպես է դա լինելու, փորձնական, պիլոտային անես ու ցույց տաս, մինչև չտեսնի, մինչև չհամոզվի, որ գրպանը փող է մտնում, չի գնա նոր բան անելու:

Մեր գյուղատնտեսներին **պետք է սովորեցնել** այլ՝ ոչ ավանդական կուլտուրաներ մշակել,

Մարդիկ կան **չեն կարողանում գրագետ աշխատել:**

Մարդիկ **տեղյակ չեն իրենց իրավունքներից**, իրենց շահերը չեն կարողանում պաշտպանել և կոռուպցիայի բախվելու դեպքում հիասթափվում են:

Գյուղացուն ցանկացած հարցում լիքը թղթեր են ներկայացվում, նա իրավաբանական կրթություն չունի, որ հատ-հատ հասկանա, թե ինչ է գրված այդտեղ:

օրինակ՝ ազնվամորու մեկ հեկտարից 10000կգ բերք կարելի է ստանալ: Պետք է սովորեցնել, թե ինչպես նոր կուլտուրաներ կարելի է մշակել:

Պետք չէ խելացի ֆերմա սարքել, այլ **պետք է խելացի անասնապահ ունենալ:**

Մարդկային մեծ ներուժի խնդիր կա: **Պետք է ճիշտ կադրեր պատրաստել**, ճիշտ մարդկանց նշանակել պատասխանատու պաշտոններում:

Պետք է ուղեցույցներ լինեն, որտեղ հասկանալի լեզվով պետք է գրված լինի, թե ինչ քայլեր կատարես, որպեսզի քո ապրանքն ինքդ արտահանես:

Մարդիկ պետք է պարարտանյութերի օգտագործման **գիտելիք ունենան**:

Պետությունը պետք է ծրագրեր մշակի տեղական արտադրությունը խթանելու համար: Շուկայում վաճառվում են բրազիլական արտադրության հավեր, մինչդեռ կարելի է խթանել նույն մթերքների տեղական արտադրությունը, սովորեցնել մարդկանց:

Խորհրդատվական ծառայությունների անհրաժեշտությունը մեր երկրում կա և՛ անասնապահական, և՛ ագրո ոլորտում:

Գյուղացիներին օդուջրի պես խորհրդատվություն է պետք մասնագետների կողմից, քանի որ գյուղում ապրելը դեռ չի նշանակում, որ դու ամեն ինչից հասկանում ես:

Գյուղացիներին միանշանակ հարկավոր է **մասնագիտական խորհրդատվություն**:

Գյուղատնտեսությամբ զբաղվում են տարեց մարդիկ ու իրենց **խորհրդատվություն է պետք**. նրանք համացանցից չեն կարողանում օգտվել:

Գյուղացին **ինֆորմացիայի և խորհրդատվության** կարիք ունի անկախ նրանից, որ նախարարությունը աշխատանքներ է իրականացնում: Ես այսպիսի խնդիր ունեցել եմ, ցանկանում էի կերի ճակնդեղ աճեցնել և շատ դժվարությամբ կարողացա գտնել համապատասխան տեղեկատվություն: Նման շատ խնդիրների են գյուղացիները բախվում և այստեղ է, որ պետությունն անելիք ունի:

Սյունիքում գյուղատնտեսության վիճակը լավ չի, մարդիկ ոչ մի բանից տեղյակ չեն, ես էլ եմ ուզում այգի հիմնել, բայց ոչ մի ինֆորմացիա չունեմ՝ որտեղից լավ տնկի ձեռք բերեմ, իմ հողում

Մարզերում արդեն տասնյակ տարիներ գործում են խորհրդատվական ծառայություններ, սակայն չեն օգտվում մարդիկ, տեղեկացված չեն: Ու եթե անգամ լինեն ծառայություններ, որ գյուղացուն ասեն՝ ինչ ցանել: Մարդիկ չեն լսելու, նայելու են՝ հարևանը ինչ է ցանել, որ իրենք էլ ցանեն: Խնդիր է նաև այն, որ պետական ծրագրերին չեն վստահում, կասկածանքով են վերաբերվում:

Կլիմայական փոփոխություններին հարմարվելու համար պետության աջակցությունն է անհրաժեշտ, բայց **ոչ միայն խորհրդատվական ծառայություններ**ի, այլ կոնկրետ քայլերի միջոցով:

Ըստ գյուղացիների՝ **համայնքապետարանն ու պատկան մարմինները** պետք է իրենք նախաձեռնեն ու տեղեկացված լինեն գյուղացիների խնդիրներով և ըստ անհրաժեշտության տան անհրաժեշտ տեղեկատվություն:

Սուբսիդավորման աջակցության ծրագրերի վերաբերյալ **գյուղացիները տեղեկատվական վակուումի մեջ են**: Գյուղացին երբեք ինքը չի հետաքրքրվելու մանրամասն, պետք է **համայնքապետարանը** յուրաքանչյուր ծրագրի համար անհատապես մոտենա գյուղացիներին ու տեղեկացնի:

կաճի՞, չի՞ աճի: Հիմա փորձնական երեք հազար հինգ հարյուր մետրի վրա տնկել եմ, տեսնեմ կաճի՞: **Խորհրդատվության խնդիր ունենք**:

Մարդը ունի մի քանի հեկտար հող, լիզինգի համար պետք է լիքը քաշքշուկի մեջ ընկնի: Կհավաքի բոլոր թղթերը, կվազվզի, վերջում կպարզվի, որ մի կետով չի համապատասխանում: **Մարդկանց պետք է օգնել** թե թղթարարության, թե տեխնիկա ու վարկեր ձեռքբերելու հարցում, թող գան նստեն գյուղապետարանում ու **մարդկանց ուղղություն ցույց տան:**

Էն որ մարդիկ ստանում են էդ վարկը, լավ ա, բայց մեր ժողովուրդը չգիտի, թե ոնց վարվի էդ վարկերի հետ, **պետք է խորհրդատվություն տալ** էդ մարդկանց, կրթական ծրագրեր արվեն զուգահեռ, որ վարկերը արդյունավետ օգտագործվեն: Կրթված հանրությունը կոռուպցիայի զոհ ավելի քիչ է դառնում:

Գյուղացուն **պետք է ցույց տալ,** թե ինչպես կարելի է ավելի արդյունավետ տնտեսություն վարել: Օրինակ՝ ես հակակարկտային ցանցով պատված ազնվամորու դաշտ եմ մշակել, կաթիլային համակարգով: Իմ արածի արդյունքն եմ ուզում ցույց տալ, և դրա հիմքի վրա մյուսներին խրախուսել, թփեր տալ ուրիշներ, կաթիլային համակարգի մասին ուսուցանել:

Գյուղացուն **պետք է ցույց տալ** այլ մշակաբույսեր մշակելու օգուտները: Հիշում եմ. մեր գյուղում մեկը մյուսին նայելով սկսեցին սխտոր ցանել, սխտորի գինը ընկավ: Աստիճանաբար հրաժարվեցին սխտոր ցանելուց, այսօր արդեն գինը բարձրացել է: Մինչդեռ խորհրդատվություն տրամադրելու դեպքում կարելի հնարավոր դարձնել գյուղում բազմազանության ապահովումը:

Պետք է ամեն ինչ անել, որպեսզի գյուղացին կարողանա **ճիշտ հողում ճիշտ սերմ օգտագործել:**

Շուկայում ապրանքային լճացում չունենալու համար **պետք է մասնագիտական օժանդակություն գյուղացուն**, որպեսզի վերջինս իմանա, թե որ ապրանքը որ եղանակին ինչքան պետք է ցանի:

Մեր մարզում հիմնականում կարտոֆիլի, կաղամբի մշակումն է զարգացած: Եթե ուրիշ բան

Համայնքապետարան-գյուղացի վատ կոնտակտի պատճառով գյուղացիների մեծ մասը չգիտի, որ գոյություն ունի սուբսիդավորման որևէ ծրագիր:

Պետությունը շատ ավելի մեծ կարողություն ունի՝ գիտելիք ու հմտություն, քան գյուղացին: Մենք չենք կարողանում անգամ մեր կարտոֆիլը պաշտպանել, իսկ **պետությունը մասնագետներ ունի, որոնք կարող են ասել**, թե ինչպես պետք է մշակել այս կամ այն կուլտուրան:

ուզենք մշակել, **պիտի ինֆորմացիա ստանանք** մշակման առանձնահատկությունների վերաբերյալ:	
Անտառահատումների մասին: Պավլովյան ծառատեսակի մասին էի ուզում ասել, որ կարող են օգնել հողերի մաքրմանը, ինքը դեգրադացված հողերի վրա է աճում ու սողանքների դեմն է առնում իր խորը գնացող արմատներով: **Լավ կլինի ուսումնասիրենք,** հասկանանք՝ ինչ կարելի է տնկել: Գյուղատնտեսության զբաղվելու հետ կապված **ունենք ոլորտի ուսումնասիրությունների լուրջ պակաս**՝ հասկանալու համար ոլորտում ինչ է տեղի ունենում: Հայաստանում միայն Կալավանում է, որ մեղրի ունի օրգանիկի սերտիֆիկատ, իրենք հողի, օդի, ջրի անալիզներ արեցին ու կարողացան շատ լավ դա կազմակերպել, պետությունը կարող է իր **գիտական ոլորտը ներգրավի էդ գործի մեջ, անալիզներ անեն**: Ուսանողների դիպլոմային աշխատանքները, որ կարդում ես, հրաշալի առաջարկներ կան, բայց մնում են թղթի վրա: **Անհրաժեշտ է կանխատեսել**, թե ամեն տարի ինչ կուլտուրա է նպատակահարմար մշակել: Գյուղացին սովորաբար նայում է կողքինին ու ինքն էլ նույնն անում. ես կաղամբ եմ մշակել, ինքն էլ է կաղամբ մշակում: Երբեմն բացի խորհրդատվական ծառայություններից, հարկավոր է նաև որոշակի **պլանավորում կատարել** պահանջարկին համապատասխան մշակաբույսերի քանակի վերաբերյալ: Գյուղացին պետք է կարողանա **պլանավորի**, թե ինչ մթերքներ պետք է մշակի: Եթե մի տարի սմբուկի գինը բարձր է լինում, բոլորը հաջորդ տարի սմբուկ են աճեցնում: **Մասնագիտացում չի գնում**, որ մեկը կաթը արտադրի, մյուսը կերը արտադրի, բոլորը նույն բանն են անում, դրա համար տաս տարի չէ, երեսուն տարի հետո էլ փոփոխություն չենք ունենա էս ոլորտում:	Ինքս սուբսիդավորման միջոցով պարարտանյութ եմ գնել, բայց այնքան անորակ էր, որ հողին օգուտ տալու փոխարեն, վնաս տվեցի և անգամ **չգիտեմ, թե որտեղ կարող եմ հողի նմուշը հանձնել անալիզի համար**: Անհրաժեշտ է վերահսկել սուբսիդավորվող գործընթացը:
Նոր տեխնոլոգիաներն ավելի արդյունավետ են աշխատում, տեխնոլոգիաների թարմացման կարիք ունի գյուղերը: Մեր համայնքում սուբսիդավորումը օպտիմալ չի բաշխվում, ծրագիրը իր նպատակին չի ծառայում:	Կան գյուղացիներ, որ իրենց փոքր հողատարածքում, ջերմոցում անընդհատ մտածում են ինչ **նորարարություն** կիրառեն: **Գյուղացիներ կան, որ հեռատես են,** օրինակ

Այսօր շատ **նորարարական սարքեր** կան, որոնցից գյուղացին չի օգտվում, օրինակ մի սարք կարող են առնել, ծախսերը կրճատել, ճիշտ հաշվարկել ու շահույթը ավելացնել: Դրա համար այս ոլորտում պիտի մարդիկ կրթվեն:

Գյուղացուն պետք է **նոր տեխնոլոգիաներին** ծանոթացնել, եթե օրինակ կա մի կազմակերպություն, որ հեշտ ձևը գտել է, մարդիկ չեն հավատում, իրենց պապական մեթոդներով են շարունակում անել:

Նորությունները միշտ գյուղացիների կողմից ընդունվում է կասկածամտորեն, քանի որ գյուղացին սովոր չէ, որ պետությունը իր համար լավ բան պետք է անի: Այդ իսկ պատճառով պետությունը բոլոր գործողությունները պետք է կատարի քայլ առ քայլ ու մանրամասն բացատրելով: Մեր ժողովրդի մոտ **վստահության պակաս կա դեպի նորարությունները:**

սկսել են բրոկոլի աճեցնել և մեծ արդյունքներ են գրանցում:

Սերմերի վիճակն է շատ վատ, շատ անհասկանալի սերմեր են, սերմը պիտի սերտիֆիկատ ունենա, որ մարդիկ իմանան ինչ են օգտագործում, մարդը պիտի իմանա իր հողին ինչ էլեմենտներ են անհրաժեշտ: Սերմնաբուծությունը պետք է զարգացել մեր գյուղատնտեսությունում, քանի որ այն օգնում է ավելի արդյունավետ ու նպատակային օգտագործել մեր հողատարածքները: Առաջներում սերմացուն կարող էին չորս-հինգ տարի օգտագործել, իսկ հիմա մեզ էնպիսի սերմացու են առաջարկում, որ մի տարի ես օգտագործում, հետո բերքատվությունն ընկնում է: Կառավարությունը ինչ-որ ծրագիր պիտի մշակի, որ էնպիսի սերմացու ստանանք, որ գյուղացուն էլ ձեռնտու լինի, ամեն տարի չմտածի սերմացուի մասին: Հացահատիկի **սերմի ներկրումը** պետք է պետությունը աներ, այլ ոչ թե մասնավորի ձեռքը տար, որը սովոր է խաբելուն:	Կառավարությունը պիտի աջակցի, որ տեղում էլիտար սերմեր արտադրվեն: Տասը տարի առաջ Ծովագյուղում մի խելացի ֆերմեր տեղական սորտերից էլիտար սերմացու էր ստացել, բայց էդ մարդուն ոչ մեկը չօգնեց, որ զարգացներ: Իսկ **դրսի սերմացուն գենետիկորեն մոդիֆիկացված է հիմնականում:**
Գեղարքունիքում մկները սարերում արոտավայրերը փոքրիկ հողակտորների են վերածել. առանց կրծողների դեմ պայքարի անասնապահության զարգացման մասին խոսք չի կարող լինել: Նախկինում աշնանն սկսվում էր դրանց դեմ պայքարը, հիմա ոչինչ չի արվում: Խոտհարքների բարելավման, կրծողների դեմ պայքարի խնդիր ունենք Վաղաշենում: Արոտավայրերի և խոտհարքների հետ կապված, երևի իննսունականներից հետո, մեր տարածաշրջանում ոչ մի անգամ վնասատուների ու կրծողների դեմ պայքար չի եղել: Հիմա որ գնաս, դաշտերում ամբողջությամբ մկան բներ են: Թեև երկոտանի կրծողներ էլ ունենք, բայց դե գոնե էն մյուսների դեմ պետք է պայքարել, որ որակյալ անասնակեր ունենանք, դա մասնավորը չի կարող անել, դա պետությունը պետք է անի:	Այս տարի Հայաստան **լավ պարարտանյութ** չի ներմուծվել: **Պարարտացումն է շատ կարևոր**. մեր տարածաշրջանում պարարտացում չի արվում, գոմաղբը այրվում է, մարդիկ ձմեռը գոմաղբ են այրում, իսկ դուք պատկերացնում ե՞ք դա ինչ նշանակություն կարող է ունենալ հողի համար:
Միջազգային շուկա դուրս գալու միակ ճանապարհը **մաքուր արտադրանք** տալն է: Մենք որ տուրիստներ ենք ընդունում, իրենք շատ հետաքրքրված են **մաքուր սննդով**, տեղական խոհանոցով, սա կարելի է զարգացնել ֆերմերների հետ աշխատելով: Մեզ մոտ աստիճանաբար զարգանում է պտղաբուծությունը: Զարգացումը հեռանկարային է, հիմա ամբողջ **աշխարհը նորմալ սննդի հարցի առաջ է կանգնած**, իսկ Հայաստանն ունի այդ պոտենցիալը:	Կաթի գնագոյացման համար շատ կարևոր է կաթի որակը, օրինակ՝ գինը պետք է արտահայտի կաթում յուղայնության կամ օրինակ՝ սպիտակուցների պարունակությունը: Գինը պետք է տարբերվի ըստ այս չափանիշների: Կաթնամշակման գործարանի համար կաթը գյուղացուց ենք հավաքում, բայց հիմնականում ապրանքափոխանակություն ենք անում, չենք ներկայացնում **կաթի որակի նկատմամբ չափանիշներ:**

Վերամշակման դեպքում սննդի անվտանգության և **վերահսկողության խնդիր** կարող է առաջանալ, ալկոհոլային վերջին թունավորումը դրա օրինակ էր: Մարդը գրանցված բիզնես չէր, համապատասխան թեստավորում չէր անցել, ինչը մարդկային կյանքեր արժեցավ:

Կաթնամթերքի պիտակների **վրա մակնշման խնդիր կա**: Այսօր գրված տեղեկությունները շատ հաճախ ճիշտ չեն:

Ես մարդիկ գիտեի, որ իրենց մեղրը արտահանում էին Ֆրանսիա, որովհետև **ստուգված էր, սերտիֆիկատ ուներ**: Ֆրանսիայում նորից ստուգում էին, եթե համապատասխանում էր սերտիֆիկատին, էդ մարդը ստանում էր իր փողը, եթե չէ՝ թափում էին, կամ քիչ էին վճարում: Նույնն էլ մեզ մոտ է պետք անել:

Հայաստանում միայն Կալավանում է, որ մեղրի ունի **օրգանիկի սերտիֆիկատ**, իրենք հողի, օդի, ջրի անալիզներ արեցին ու կարողացան շատ լավ դա կազմակերպել, պետությունը կարող է իր գիտական ոլորտը ներգրավի էդ գործի մեջ, անալիզներ անեն: Ուսանողների դիպլոմային աշխատանքները, որ կարդում ես, հրաշալի առաջարկներ կան, բայց մնում են թղթի վրա:

Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ

Պետությունը շատ լավ բաներ է ասում, բայց մի գլխավոր խնդիր կա. **իրացման շուկա չունենք**: Պետությունը չգիտես ինչի չի մտածում նաև իրացման մասին: Պետությունը բերում է նոր ծրագրեր է ներդնում հետո «տեր չի կանգնում:»

Մարդիկ կան, որ տանում են Երևանում վաճառում, բայց ոչ բոլորն ունեն այդ հնարավորությունը:

Մեր երկրում **բրդի մթերում** չկա ընդհանրապես, դրա համար էդ ցեղատեսակներն էլ են փչացել: Դրա համար ոչխարաբուծությամբ էլ ձեռնտու չի զբաղվել:

Մեր տարածաշրջանում խնդիրն այն է, որ միայն Գորիսում կա 130 հզ խոշոր եղջերավոր անասուն: Նախկինում յորղան-դոշակ էին սարքում **բրդով**, հիմա **պահանջարկը մեծ չէ,** թափում են, աղտոտում են շրջակա միջավայրը: Մինչդեռ բուրդը խիստ թանկարժեք ապրանք է:

Կաթի հավաքմամբ զբաղվող ընկերությունները չեն կարողանում շուկայում իրացնել իրենց ապրանքը, այդ իսկ պատճառով ընկերությունն էլ չի կարողանում վճարել գյուղացուն կաթի համար:

Ավելի լավ է, որ **գյուղացին լինի գյուղմթերք արտադրող**, այլ ոչ թե մտածի, թե ոնց է իրացնելու:

Իրացման խնդիր չունենք, ոչ պանիրն ա ավել լինում, ոչ լոբին, ոչ էլ մնացած գյուղմթերքները:

Մենք **սպառելու ծանր խնդիր չունենք**, սպառողը նախքան արտադրելը պետք է մտածի, կկարողանա՞ սպառել իր արտադրանքը, թե՞ ոչ: Իրենց սահմանած գինը լինելու է այն հնարավոր ամենացածր գինը, որին ես միայն ծանր հանգամանքներում եմ հիմա համաձայնում: Լավ ու վատ նռան դիմաց նույն գինն են առաջարկում:

Իրացման խնդիրը մեզ մոտ լուծվում է հետևյալ կերպ, **արտադրում ենք այն գյուղմթերքը, որը պահանջված է շուկայում**: Խնդիրը կայանում է նրանում, որ մթերողները գյուղմթերքը կամ վերամշակված մթերքը ոչ տրամաբանական գներ են առաջարկում:

Մեր հիմնական խնդիրն աշխատուժն է, դժվար ենք մարդ գտնում, իսկ **իրացումը մեր միջոցներով ենք անում:**

Պիտի աշխատենք նվազեցնել կլիմայի վրա ազդեցությունը և կարողանանք հարմարվել էդ կլիմային: Լճաշենում պատկերը շատ տարբեր է Մարտունիից, մեր մոտ ավելի շատ անասնապահությամբ են զբաղվում, բայց քանի որ կլիման թույլ է տալիս, շատ գյուղացիներ արդեն սկսել են ունենալ կեռասի այգիներ ու մեզ մոտ հասնում է էն ժամանակ, երբ որ

Իրացման հարցը ցավալի հարց է գյուղացու համար: Օրինակ մենք ցորեն ունենք, տեխնիկայի պատճառով որակը ցածր է, իրացումն էլ, բնականաբար, դժվար: Գյուղացին բնամթերքի ձեռքը կրակն է ընկել:

Նախանցած տարի Ծառուկյանը հանդիպել էր գյուղացիներին, գյուղացիները լացում էին, որ տոննաներով իրենց **խաղողը չեն կարում իրացնեն:** Ծառուկյանը խոստացավ 140-ով վերցնել: Հիմա հո չեն գոռում՝ ուռա-ուռա: Լուրջ եմ ասում, լացս եկավ:

Սյունիքի մարզում շատ մեծ է **բրդի իրացման խնդիրը:**

Մսամթերքի իրացման խնդիր ունենք: Մեր համայնքի ամենահեռավոր գյուղն է, անասունին սպանդանոց հասցնելը պրոբլեմ է: Զանգում եմ մի անասունի համար, ասում են պետք է չորսը լինեն, որ ավտո ուղարկեն: Բայց ես նույնիսկ հիվանդանոցի գումարի խնդիր ունեմ էդ պահին:

Հարժիսում բավականին մեծ **ցանքատարածություններ** են եղել, բայց հիմնական հացահատիկային կուլտուրան անձրևներից վնասվել է, և **գյուղացին իրացման խնդիր ունի, քանի որ ցորենի որակն է տուժել**: Գյուղտեխնիկայի և ժամանակի խնդիր ևս կար:

Տեղ համայնքի Կոնիձոր գյուղում գյուղատնտեսությամբ բոլորն են զբաղվում, որովհետև դրանով են ապրում, **բայց եթե մենք ավելացնենք մեր հոնի և թթի տնկատարածքները, իրացման խնդիր կունենանք:** Այսինքն կավելացնենք, եթե իրացման հարցը լուծվի:

Գյուղացին ունի **իրացման խնդիր**: Նա խոշոր **վարկ է վերցնում**, ներդնում անասնապահության մեջ, բայց չի կարողանում իրացնել այն գնով, որ օգուտ ստանա, հազիվ ծախսերն են փակվում:

Ես ապրում եմ գյուղում, արտադրում եմ, մշակում: Նոր մշակաբույսեր եմ մշակում, որոնք **մեր տարածաշրջանում շատ լավ աճում են**: Ամենամեծ խնդիրն այն է, որ գյուղացին գարնանը մշակում է ու չգիտի՝ ինչ է լինելու իր մթերքի ճակատագիրն աշնանը: Մարդիկ հաճախ թափում են իրենց աճեցրածը:

Գյուղատնտեսության խնդիրների հաղթահարման տեսանկյունից հատկապես **կարևոր է իրացման խնդրի լուծումը**: Որպեսզի Արարատյան դաշտում վերջացած է լինում և մենք **իրացման խնդիր չունենք:**

Որակյալ կաթի **պահանջարկը չի բավարարվում,** որովհետև տնտեսությունները փոքր են:

Սպիտակ սոխը մշակելն ավելի հեշտ է, դրա համար բոլորն անցան սպիտակ սոխին: Այն ժամանակ, երբ ճանապարհները փակ էին, **արտադրանքը իրացվում էր երկրում**, ավելի էժան գներով:

Գյուղացին էլ է գլուխ հանում ազատ շուկայական հարաբերություններից: Գյուղացիները իրենք էլ են խոսում իրար մեջ, այս տարի կաղամբի գինը լավ էր, մյուս տարի բոլորը կցանեն, գինը կընկնի: Մտածում են ցանեն, թե չցանեն: Եթե մթերող գա ասի սմբուկ ցանի կցանեն, բայց դժվար լսեն որևէ հետազոտողի, որ գալու է ասի՝ էս մեկը ցանի, էն մեկը մի ցանի:

Պետք է ասվի, թե **ինչ պահանջարկ է սպասվում**, որ այս տարի այսինչ բանը ցանեք, այսինչ քանակությամբ:

գյուղացին շահագրգռված լինի մշակել, պիտի անպայման ապահովված լինի իրացման հարցում:

Գյուղատնտեսության զարգացում շղթայական խնդիրների լուծում է, միայն մշակելը չէ, **պետք է պատվիրելու հարցն էլ լուծվի:**

Գյուղատնտեսությամբ զբաղվելու հիմնական խոչընդոտը **գյուղմթերքի իրացման խնդիրն է**: Տեղափոխումն ու մթերումը հատկապես մեծ խնդիր են:

Կորոնավիրուսի հետևանքով արտագնա աշխատանքի մեկնողներ չեղան, մարդիկ այստեղ սկսեցին հող մշակել, արդյունքում՝ բերքն ավելացավ, բայց **իրացումն ավելի բարդացավ**:

Հարցեր կան, որ գլոբալ պետք է լուծվեն, օրինակ, ես միշտ **դեմ եմ եղել, որ արտադրողը տանի իր ապրանքը ծախի:** Շատ ընտիր սցենար եք գրել, ես երեք օր ա, կարդում եմ:

էսօր Քարակերտում մոտ հինգ հարյուր տոննա **խաղողի ավելցուկ կա**:

Իմ ծիրանից ես չիր չեմ սարքի, որովհետև դա քո գործն ա, դու պիտի գաս ինձ փայփայես-տանես, նույնն էլ խաղողն է, **իմ գործը աճեցնելն է,** կոնյակի գործարանը մեզ քաշեց, չի կարելի մի տարի գլուխս շոյի, մյուս տարի քացով տա հետևիս:

Գյուղացու համար **խնդիր է նույնիսկ ցածր գնով ապրանքը վաճառելը**: Գինն էական չէ այս պահին:

Երկու հազար թվականներին գյուղացին էլի կանգնած էր խաղողի մթերման խնդրի առջև, կային խաղողի տեսակներ, որ խմիչքի պատրաստման համար չէին օգտագործվում: Այդպիսին էր մեղրաբույր սորտը, մենք հրաժարվեցին էդ տեսակից, սկսեցինք ուրիշ սորտեր աճեցնել: **Չիրացնելու դեպքում մարդիկ կհրաժարվեն բերք մշակելուց:**

Հոկտեմբերյանի մեր պահածոների գործարանն ուներ իրացնելու մեծ հնարավորություններ, այսօր այն չի աշխատում: Մեր հայկական կարմիր սոխը կհիշեք՝ համով ու որակով, մատակարարում էին բանակին, էսօր վերացրել են: **Եթե մթերումը չկազմակերպվի, խաղողի այգիներն էլ են վերանալու:**

Շատ կարևոր է հասկանալ գյուղատնտեսական **արտադրանքի և դրա իրացման շղթան:** Օրինակ՝ մեր գյուղում այգիներ կային, որոնք վերջին մի հինգ տարվա ընթացքում գյուղացիները դարձրեցին բերրի, իսկ հիմա կանգնել են արդեն իրացման խնդրի առջև:

Գյուղացու **միակ խնդիրը իրացումն է**, ուրիշ պրոբլեմ մենք չունենք, պրոբլեմներ սահմանելուց առաջ խոսեք մեզ հետ:

Գյուղացին պետք է **գյուղմթերք արտադրող լինի,** ոչ թե գյուղմթերք ծախող: Գյուղացին չպետք է չքնի, ու մտածի, ոնց իրացնի, ինչ անի:

Գյուղացու հիմնական խնդիրը **ապրանքի իրացումն է:** Բոլոր քայլերը դառնում են անիմաստ, եթե գյուղացին վերջում չի կարողանում վաճառել իր ապրանքը: Գյուղացին իր մշակն իրականացնելուց պետք է չմտածի՝ ոնց է վաճառելու:

Գյուղացին սպառման մասին չպետք է մտածի, դրա համար պետք է մեխանիզմներ մշակել ճանապարհների, վերամշակողների հետ կապված:

Մեր մարզում կոոպերատիվների փոխարեն **վերամշակող տնտեսություններ** կարելի է ստեղծել, բայց միևնույն է, մենք իրացնելու խնդիր ենք ունենալու: Եթե պետությունը օժանդակի **ապրանքը դուրս բերել երկրից**, մենք պատրաստ ենք սկսել:

Նոր բիզնես եմ հիմնադրել, ջերմոցում լավ որակի սերմերից սածիլներ ենք արտադրելու և վաճառելու գյուղացիներին՝ պայմանավորվելով, որ **իրենց ստացած ողջ բերքը մենք գնելու ենք**: Նմանատիպ մեխանիզմներն աշխատող են և գյուղացիները մեծ պատրաստակամության մասնակցում են:

Մթերող կազմակերպությունները, Երևանի կոնյակի գործարանը մթերող կազմակերպությունների պայմանագրերը հիսուն տոկոսով կրճատել է, մինչդեռ այս տարի բերքը շատ է: Պռոշյանի մթերող գործարանը ավելի էժան է մթերում, եթե Արմավիրի տեղամաս այցելեք, բեռնատարների մեծ հերթ կտեսնեք: Այլ մթերող ընկերություններ վճարումները ուշ են կատարում: Սա աղետ է այն մեծ թվով գյուղացիների համար, ովքեր ֆինանսական և վարկային պարտավորություններ ունեն

Շաքի գյուղի մոտ մայրուղու վրա **շուկա** որ կառուցվեր, հարակից գյուղերի բնակիչներն իրենց ապրանքի սպառումը կապահովեին:

Գյուղացիների համար շուկաներ պետք է կառուցի Էկոնոմիկայի նախարարությունը, որը նմանատիպ տաղավարներ կառուցում է Երևանում:

Համայնքների մոտակայքում ապրանք իրացնելու նպատակով անպայման պետք է բացվեն **տաղավարներ**, որտեղ համայնքի բնակիչները կկարողանան վաճառել իրենց բերքը:

Գեղարքունիքում **մեծածախ շուկայի առկայությունը** հիմնականում օգտակար է գնորդի համար:

Մարտունու շուկան հերիքում է իրենց ունեցած գյուղարտադրանքի համար, բայց մյուսները **մեծածախ շուկաների** կարիք հաստատ ունեն:

Գեղարքունիքը շուկայից հեռու է: «Գեղեցկուհի» տանձը 300 դրամով աշտարակցին գնում է, արագ վաճառում: Մենք դա չենք կարող անել հեռավորության պատճառով՝ սառնարանից

Մթերող կազմակերպությունները, Երևանի կոնյակի գործարանը մթերող կազմակերպությունների **պայմանագրերը հիսուն տոկոսով կրճատել է**, մինչդեռ այս տարի բերքը շատ է: Պռոշյանի մթերող գործարանը ավելի էժան է մթերում, եթե Արմավիրի տեղամաս այցելեք, բեռնատարների մեծ հերթ կտեսնեք: Այլ մթերող ընկերություններ վճարումները ուշ են կատարում: Սա աղետ է այն մեծ թվով գյուղացիների համար, ովքեր ֆինանսական և վարկային պարտավորություններ ունեն

Վերամշակող գործարանների ծավալը չի բավարարում: Խաղող արտադրողն ստիպված 40-50 դրամով խաղող է մթերում, բայց որտե՞ղ, ինչպե՞ս, ի՞նչ որակով... Թիրախային ծրագրեր կառավարությունն իրականացնելո՞ւ է արդյոք:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

Պետությունը գնի համար պատասխանատու չէ, բայց լիցենզիա տալիս պայմանագիրը պետք է կապի այնպես, որ գյուղատնտեսական ճյուղը զարգանա, օրինակ նշում անի՝ **ամեն տարի կոնկրետ քանակի բերք պետք է ընդունես**, որ բիզնեսն իր կամքը չթելադրի գյուղացուն:

Անցյալ տարի ես ունեցա խնձոր, յոթ հարյուր կգ, զանգեցի Կարբի, տնկի տվողին ասացի, դու ինձ կարո՞ղ է քաշես, ասաց, հանգիստ եղիր, մյուս տարի քառասուն տոննա խնձոր ունեցա, սառնարան սարքեցի, շուխուր գցեցի, որ գան խնձորս տանեն, մեկը եկավ, որ խնձորս տանի, մետրն ու դանակը ձեռքին: Ասում է՝ 65մմ-ից պակաս չպիտի լինի: Ասում է՝ ռուսական շուկայում **ստանդարտը** էսպես ա ու ինքը ուներ երեք ստանդարտ:

Մեր կառավարությունը շատ լավ որոշում կայացրեց, որ հայկական կոնյակը պիտի արտադրվի միայն **հայկական խաղողից**, բայց կոնյակի գործարանը գալիս ա իմ խաղողը հավանում է, բայց պլան ունի, իր պլանը հարյուր տոննա է, իմ խաղողը՝ քառասուն, բայց ամեն օր խաղող եմ հավաքում, արդեն ցայտնոտի մեջ եմ, թե ինչ անեմ իմ խաղողը:

Խաղողի մթերումն է այսօր խնդիր, այլ գյուղմթերքների իրացումը: Մթերող կազմակերպություններում լարված վիճակ է, **ամբողջ ծավալով չեն մթերում**: Եթե էսպես մի հանեցիր, արագ պիտի վաճառես, չէ՝ ստիպված ես թափել:

Մարտունու տարածաշրջանում **բացօթյա շուկաները** բավականին լավ են աշխատում, և մյուս մարզերում պետք է նման շուկաներ ստեղծվեն: Իրացման հարցով մեծ խնդիրներ կան, քանի որ տեղափոխման ժամանակ միջնորդներ են առաջանում, ովքեր գինն արհեստականորեն բարձրացնում են:

Եթե մարդը զբաղվում է գյուղատնտեսությամբ, իրա համար ամենադժվար խնդիրը այժմ իրացումն է: Պետք է այնպիսի աջակցություն լինի պետության կողմից, որ Մարտունուց կամ հեռու մարզերից գյուղացին չհասնի մայրաքաղաք ու **վաճառքը տեղի պետք է ունենա տեղում:**

Գյուղմթերքի հիմնական շուկան Երևանն է: **Գեղարքունիքում մեծածախ շուկա ունենալու** դեպքում անգամ արարատցին իր բերքն այստեղ մեծածախ գներով չի վաճառելու:

Մեր մարզն ամենամեծն է, ու շատ դժվար է էս մարդկանց համար գնալ Մարտունու շուկայում ու առևտուր անել, լավ կլիներ, որ օրինակ, նույն Սևանի կամ Ճամբարակի համար շուկա լիներ, համ էլ դրանից նաև Տավուշի մարզը կօգտվեր:

Համայնքներում պետք է լինեն շատ **շուկաներ,** ինչի շնորհիվ կաճի մրցակցությունը: Շուկաների բազմազանությունը գյուղացու համար միայն օգուտ է:

Մեծածախ շուկաների կենտրոնացումն այնքան էլ նպատակահարմար չէ: Ներկայում երեք շուկա կա, որը մրցակցություն է ստեղծում, իսկ գնորդին հնարավորություն է ընձեռում ընտրել իրեն ամենահարմար շուկան:

երկու ամիս շարունակվի, աղետի առաջ կկանգնենք: Պետական այրերն ու պատասխանատուները չեն մասնակցում էս խնդիրների լուծմանը, լուծման մոտակա ուղիներ չեն երևում:

Այս տարի բերքատվությունը բարձր է, բայց իրացումը գլխավոր խնդիրն է, պայմանագրային պարտավորությունները **գնորդները չեն կարողանում կատարել:** Կառավարությունը պետք է արագ գործի:

Ապրանքը **մթերում են պարտքով**, վարկերի տակից դուրս չեն գալու գյուղացիք, սև ցուցակից են դուրս չեն գալու:

Խաղողի մթերման հետ կապված երկու խնդիր կա՝ առաջին՝ **հերթերը**, երկրորդ՝ որ **մթերողները առաջնահերթություն են տալիս գինիների համար պիտանի խաղողին:**

Պետք է **ընդունման կետեր լինեն**, եթե կաղամբը հիսուն դրամով էսօր մթերվի, ոչ մի գյուղացի չի բողոքի:

Մթերող գործարանները **գումարների վճարումները կատարում են մեծ ինտերվալով**, որը գյուղացուն գցում է վարկի մարման դժվար խնդրի առաջ: Պետությունը պետք է վերահսկի այդ գումարների վճարումը նույնպես:

Կաթնամթերքի վերամշակման համար **կաթը վերցնում ենք բոլորից.** փորձում ենք կաթ վերցնել և՛ նրանից, ով շատ քիչ ունի, և՛ նրանից, ով շատ է արտադրում: Փորձում ենք օգնել ում կարող ենք: Հայաստանում շատ դժվար է գյուղատնտեսությամբ զբաղվելը:

Երաշխավորված գները մեր երկրում հենց հիմա հիմք չեն կարող համարվել: Հեռուստացույցով տեսնում ենք, թե ինչպես մարդկանց ցածր գին են առաջարկում խաղողի դիմաց. ասում ՝ էս ա, ուզում ես ուզի, չէ՝ հետ տար: Էդպիսի մի բան էլ լինելու է երաշխավորված գների համակարգը:

Երաշխավորված գներ ունենալու պրոբլեմը մեզ մոտ չկա. երբեք մեղվաբույծները ճանապարհ չեն փակել այն պատճառով, որ չեն կարողանում մեղրը իրացնել:

Երաշխավորված գների համակարգը **չի աշխատում:**

Պետք է **գնի ֆիքսում տեղի ունենա**, պետք է պայմանագրով ամեն ինչ լինի, որպեսզի գյուղացին վստահ իմանա, որ հետագայում ֆիքսված գնով կգնեն իր արտադրանքը:

Տարբեր **կուլտուրաների գներն այնպիսին են**, որ չես էլ ուզում դրանք աճեցնել. արված գործն ու դրա դիմաց վարձատրությունը ոչ մի կերպ չեն համապատասխանում իրար:

Եթե **որոշակի արտադրատեսակների համար** նախապես երաշխավորված գների սահմանում լինի, տնտեսությունը ավելի կայուն, կանխատեսելի կդառնա, դրա հաշվին կկարողանա ընդլայնել իր գործունեությունը: Նվազագույն գների հետ կապված ասեմ, որ

	պետությունը պետք է առաջնային դեր ունենա: Պետությունը ուղղորդողի դերում պետք է լինի, բայց մեծ շուկաներում էլ ապրանքը ստանդարտներ ունի, պիտի էդ ստանդարտով արտադրես: Կառավարությունը ուշադրություն պետք է դարձնի գյուղապրանքների գնային տատանումներին և **թույլ չտա** տարբեր սեզոններին մինչև 500 տոկոս **տատանումները:** Երաշխավորված գինը հասկանում եմ այսպես, կաղամբը **հարյուր դրամից պակաս չպետք է լինի:** Գինը այստեղ ամենակարևորն է, եթե **ռեալ գին լինի, կաշխատի:** Երաշխավորված գնումների քաղաքականությունը շատ արդյունավետ կլինի. օրինակ՝ նախկինում կարագը, կաղամբն ու սոխը ռազմավարական ապրանքատեսակ էին համարվում: Հիմա միգուցե **պետք է ընդլայնել ցանկը**, ներառել խաղողն ու սպիրտը: **Երաշխավորված գինը** պետք է **շուկայական գնին մոտ լինի:** Ու եթե անգամ որևէ մթերող կազմակերպություն փորձի էժան մթերել, գյուղացին պետք է իմանա, որ պետությունն ավելի բարձր գնով գնելու է: Մեզ մոտ եզդիները ոչխար են պահում, ժամանակին կով շատ էին պահում, բայց կաթը ջրից էժան է, դրա համար իմաստ չունի, «մեկին-մեկ տակ ա տալը»:
Բրենդինգի առումով **որակ է պետք ապահովել**, որ մրցունակ լինենք: Բրենդինգը բարդ ընթացակարգ ու կապեր է ենթադրում, դրա մեջ մասնակցություն պետք է ունենան նաև **դիվանագիտական ներկայացուցիչները:**	Գյուղացին շատ է դժվարանում իրացման հարցում: Դրա համար պետք է **բրենդավորում լինի**, ուսումնասիրվի, թե որ համայնքում ինչն ունի զարգացման պոտենցիալ՝ արդյունքում օգնել գյուղացուն: **Մեր մեղրի անունը**, որպես լավ անուն ունեցող, արդեն դուրս է եկել, հնարավոր է էդտեղից բռնել ու զարգացնել դա:
Կաթնամթերքի արտադրանքի **20% արտահանում ենք:** Սուպերմարկետների կողմից ԱԱՀ-ի պահանջը չենք կարողանում բավարարել: ԵԱՏՄ-ով պայմանավորված պարզեցումները դրականորեն են ազդել **արտահանման** վրա: **Պետությունը պետք է աջակցի** անհատներին, որպեսզի նրանք կարողանան իրենց ապրանքը վաճառել արտասահմանյան շուկայում:	**Պետությունը պետք է** պարտավորություն վերցնի, որ նա **կիրացնի գյուղացու արտադրանքը**, ցույց կտա շուկաների տեղը, այլապես ինքը պետք է գնի գյուղացու արտադրանքը: Պետք է առկա լինի գյուղատնտեսական արտադրանքի պատվեր, որպեսզի գյուղատնտեսությունը զարգանա: Խորհրդային միությունում, օրինակ, **պատվիրատուն**

Անհատը չի կարողանում **արտահանել իր արտադրանքը**, քանի որ տեղեկատվության պակաս կա:

Այսօր գյուղացին մեծ քանակությամբ **խաղող ու պղպեղ** է արտադրել, բայց ներքին շուկայում չի կարողանում սպառել: Արտահանման մասին խոսք չկա անգամ: Պետությունն ունի՞ ինչ-որ ծրագրեր, որոնցով կկարողանա օգնել գյուղացուն նման ճգնաժամային պայմաններում:

Խաղողի սեղանի սորտերի բերքը ևս հնարավոր չէ պլանավորել: Շատերն ունեն **բազմամյա խաղող**, սրա **խնդիրն արտահանումն է**: Էսօր սահմանը փակ է: Եթե գյուղացին որոշում է արտահանել, պետք է բերքի հետևից հասնի Ռուսաստան:

Պետության դերը շատ մեծ է արտահանման շուկաներ գտնելու հարցում:

Հիմա, օրինակ, արաբները մեզ մոտ ֆըստըխ են խփում, դրա գինը արաբական երկրներում ահագին թանկ ա: Օրինակ, ես սալորը տալիս էի հարյուր դրամով, ինձնից եկան **սալորի կորիզը** հարյուր դրամով տարան: Գիտեի՞ք, որ սալորի կորիզը օծանելիքի և էդ տիպի արտադրության մեջ է օգտագործվում:

Ստորները մեր խաղողի հյութը ծախում էին վրացուն, որը իրա գինու անվան տակ է վաճառում, ես ի՞նչ ճզմիչ կայան սարքե՞մ, ծախե՞մ վրացուն, որ իրա գինու անունը հռչակվի, ցիստեռներով հյութը գնում է Վրաստան:

Պետք է խթանել **անհատական արտահանումը,** միջնորդավորված արտահանման դեպքում գյուղացին չի կարողանում գին թելադրել:

Հիմնական միրգը դրսում է վաճառվում, դրա համար դրսի հավաքագրողների հետ է պետք պայմանավորվածություններ ձեռք բերել: **Ով ծանոթ ու կապեր ունի, կարողանում է ապրանքը ծախել:**

Պետությունը մթերող կազմակերպություններին վարկեր է տրամադրում, այդ վարկերը պետք է տրամադրվեն գյուղացիներին, օրինակ **ամեն կգ-ի դիմաց կարող է հիսուն դրամ տրամադրվել:**

Օգտվում են էն արտահանողները, **որոնք դրսում ունեն կապեր, ռեսուրսներ**, այդ **պետությունն էր:**

Էն «Մենք ենք մեր սարեր»-ի նման, որ ասում է. **«Ես ոչխար ծախող չեմ, պետությունն է առնողը»**: Պետք է այ էս իրացման հարցը լուծել:

Հիշում եմ՝ գյուղացիները ձմռանը տանջվելով կաղամբ աճեցրին, գարնանը թափում էին ճամփեքին: **Պետք է ճիշտ կազմակերպել**: Հիշում եմ ժամանակին թթու էին պատրաստում, **բանակին մատակարարում**, նույնը կարելի է հիմա անել:

Խաղողի մթերումը մեզ մոտ օրախնդիր է: Հարց եմ տալիս, ինչու մեր **զինվորի սեղանին** չպետք է լինի խաղող, եթե մենք ունենք աննախադեպ բերք: Ծիրանը նույնպես կարող է լինել սեղանին՝ հյութի տեսքով:

կազմակերպությունները գին են թելադրում: Երբեմն վերամշակող ընկերություններ են հիմնադրում, վերջիններս սկզբում գյուղացիներից են գնում, հետո նախընտրում են իրենց հողերն առնել, իրենք էլ մշակում են գյուղմթերքը, տուժում են գյուղացիները:	
Պետությունը պետք է խրախուսի **սառնարանային տնտեսությունների հիմնադրումը**, դա պետք է դիտարկվի որպես բիզնեսի առանձին ձև: Մթերքը կարելի է պահեստավորել և արտահանել ավելի հարմար ժամանակի: Մեծ բիզնեսների ներգրավումը այս առումով շատ օգտակար կարող է լինել: Էլոլան **սառնարաններ է տեղադրել գյուղերում**, որով կաթի որակը զգալիորեն բարելավվել է: Միջնորդները, օրինակ՝ կոոպերացիաները, կարող են բարձրացնել կաթի գինը: Մեզ համար ավելի շահավետ է աշխատել մեծ ֆերմերների հետ, բայց քանի որ տարածաշրջանում նրանք շատ չեն, մենք աշխատում ենք բոլորի հետ: Մարդիկ իրենց կաթնամթերքը ինքնուրույն են մշակում, իսկ եթե **սարերում սառնարաններ լինեն**, կաթը մթերվի, անասնապահությամբ զբաղվելն ավելի արդյունավետ կլինի:	**Ճանապարհները պետք է բացվեն**, որ գյուղացիները կարողանան իրենց արտադրանքը արտահանել: Մարդիկ կարտոֆիլը հանել են, տանող չկա: Տեղական շուկայում այդքան կարտոֆիլը հնարավոր չէ իրացնել, արտահանում է պետք: Եթե ծիրանի դեպքում **արտահանում կա**, ապա կաղամբի պարագայում **խնդիր է:** Այսօր գյուղացին արտադրելու խնդիր չունի, եթե ինքն իմանա, որ արտադրածը վաճառվելու է, անպայման անհրաժեշտ ֆինանսական միջոցները կհայթայթի:
Մենք պետք է մեր կառավարությանը հասցնենք մի բան. ժողովրդին ասում ենք մշակեք, վերջում մի երկու մեծահարուստներ նույն ապրանքից դրսից էժան գնով բերում են, մեր գյուղացու արտադրանքը չի իրացվում: **Պետք է թույլ չտալ**, որ **դրսի արտադրանքը տեղականին դուրս մղի շուկայից**:	

Սուբսիդավորումը պետությունն է կատարում, սակայն **վերահսկողությունը**, թե որքանով **արդյունավետ** էր ներդրումը, գրեթե չի կատարվում:

Կառավարությունը **սուբսիդավորում** է վարկերը, բայց պետք է գա դրանց հետևից, տեսնի, թե գյուղացի՞ն է ստացել, ի՞նչ նպատակով է օգտագործում:

Ինքս սուբսիդավորման միջոցով պարարտանյութ եմ գնել, բայց այնքան անորակ էր, որ հողին օգուտ տալու փոխարեն, վնաս տվեցի և անգամ չգիտեմ, թե որտեղ կարող եմ հողի նմուշը հանձնել անալիզի համար: Անհրաժեշտ է վերահսկել սուբսիդավորվող գործընթացը:

Իմ ծանոթներից մարդիկ կան, որ վարկերից օգտվել են, բայց ոլորտում զարգացում, միևնույն է, նկատելի չի: Վարկային միջոցները **նպատակային օգտագործելու խնդիր ունենք**:

«Արեգակ» վարկավորման կազմակերպություն կա, որի տված վարկերին եթե նայենք, արդեն ծաղկուն փոքր բիզնես պիտի ունենայինք: Բայց **մարդիկ նման վարկերը վերցնում են, գնում Քոբուլեթի:** Նման կազմակերպությունները տալիս են փոքր վարկեր, որոնք ստանալը հեշտ է, բայց նպատակային չեն օգտագործվում: Բանկերն ավելի մեծ վարկեր են տալիս, բայց մարդիկ վախենում են մեծ վարկեր վերցնեն, որովհետև չեն կարողանում փակել:

Ցանքերի պահպանության խնդիրը, **մթերման վերահսկողության խնդիր**, փոքր գյուղատնտեսների համար իրացման անհրաժեշտ շուկաներ պետք է ստեղծվել: Գյուղատնտեսի խնդիր ունեն գյուղացիները, տեղեկատվության պակասի խնդիր: Այս ամենը կառավարության խնդիրն է և կառավարությունը պետք է ամեն գնով լուծի այս խնդիրները:

Գյուղացիները բազմաթիվ խնդիրներ ունեն մշակման համար. օրինակ մենք կարտոֆիլի համար **էլիտար սերմերի կարիք ունենք**, մասնավորից ենք բարձր գնով ձեռք բերում, բայց վստահ չենք, որ իրոք էլիտար է:

Սուբսիդավորումը թե՛ մասնավորի, թե՛ պետության կողմից պիտի նաև **սոցիալական կողմ ունենա**, ոչ միայն տնտեսական:

Պետության կողմից դիզվառելիքի ու պարարտանյութի տրամադրումը առավելություն ուներ՝ էժան էր ստացվում: Խնդիրն այն էր, որ ղեկավար մարմինը առաջին հերթին իր բաժինն էր վերցնում, նոր վերջում մնացածը ուշացած տալիս գյուղացուն: Այսքանից ելնելով՝ կարելի է ամփոփել, որ լավ տարբերակ էր. **պետության կողմից վարկ էր տրամադրվում ու գյուղացին ինքն էր որոշում երբ ու ոնց կատարի իր ծախսերը**

Իշխանությունները փորձում են «հետամնաց» գյուղատնտեսությունը զարգացնել, սպանդանոցների ներմուծումը մի քայլ էր դեպի առաջ:

Իմ կարծիքով ԳԱՄԿ-ի գործառույթը շատ կարևոր է, բայց իրենք ակտիվություն չեն ցուցաբերում: Պետք է այդ հարցում ավելի նախաձեռնողական լինեն:

Մեր **գյուղատնտեսությունում շարժ նկատվում** է, ոռոգման համակարգերն են փոխվել, տեխնիկայի վրա են ներդրումներ արվում, սակայն նման փոփոխություններին նայելով դժվար է ասել՝ արդյոք դեպի զարգացում ենք գնում, թե չէ:

Պետությունն ամեն տեղ չի կարող լինել, պետք է **բիզնեսին** մոտիվացնել և ներգրավվել:

Մասնավորն իր տեխնիկան օգտագործում է նախ իր հողերը մշակելու ու բերքը հավաքելու համար, հետո տրամադրում է այլ գյուղացիներին:

Քարահունջը Գորիսի **համայնքի** մեջ է մտնում, մենք գումարներ ենք մուծում համայնքի բյուջե, միգուցե այդ գումարները հնարավոր լիներ օգտագործել անհրաժեշտ պետական ավտոպարկ ստեղծելու համար:

Գյուղատնտեսության ոլորտում համալիր խնդիրներ կան: Սկսած արտադրությունից մինչև վաճառք, ջրի ապահովում, բնակլիմայական վնասների մեղմում՝ բազմաթիվ խնդիրներ կան, այս արժեշղթան պետք է ամբողջությամբ դիտարկել:

Մարդ կա, անցել է **պետական վերապատրաստումներ**, ձեռք է բերել որակավորում, մշակել բիզնես գաղափար, սակայն մտնում է բանկ ու մերժվում: Այս դեպքում **ինչի համար են վերապատրաստման կուրսերն ու սերտիֆիկատը, երբ բանկերը նայում են միայն վճարունակությանը**: Փողը չեն տա լավ բիզնես գաղափար ունեցող գյուղացուն, բայց կտան երկու խոզ ու մեծ խանութ ունեցող մարդուն:

Կլիման, պահանջմունքները, շուկան անընդհատ փոխվում են. անհատական մակարդակով հաջողություն ունենալը անհնար է, **համընդհանուր մոտեցում** է պետք ձևավորել: Եթե մեր երկիրը գյուղատնտեսությունը ընդունում է որպես գերակա ուղղություն, գյուղատնտեսության նախարարություն ունենալը **համալիր մոտեցման ծրագիր** ստեղծելու և ոլորտները կանոնակարգելու համար կարևոր է:

Անասնաբույժը պայմանագիր է կնքում պետության հետ, սակայն քանի որ նորմալ չի վարձատրվում, իր աշխատանքը նորմալ չի կարող կատարել:

Համայնքների խոշորացման պատճառով Տեղ գյուղը հավաքում է յոթ համայնքի բյուջեն, բայց նախ և առաջ լուծում է իր խնդիրները, նոր այլ համայնքներինը:

Պետությունը գյուղացիներին պետք է լսի ու միշտ կանգնած լինի գյուղացու կողքին:

Եթե մենք մեր երկիրը դարձնում ենք գյուղատնտեսական ապրանք արտադրող երկիր, ամբողջ բեռը թողնել անհատ գյուղացու վրա սխալ է:

Ֆերմերը **մենակ է մնացել**, չի զգում, որ

Հարցն էն ա, որ **գործ անող մարդը պետության անունը ինչքան հնարավոր ա պիտի քիչ տա**: Չորս միլիարդ տալիս ա խաղող մթերողին երկու տարի, զրո տոկոսով: Տարա չունես, տարա էլ ա տալիս, էլ ինչ անի խեղճ պետությունը, կթու կովի նման ա դառել:

Հաճախ եմ հետևում ռուսական ագրոբլոկներին, ու եթե հետևում եմ հայ ու ռուս գյուղացիների վարքագծին, նկատում եմ, որ հայ գյուղացին

պետությունը իր թիկունքին է:

Պետք է կառավարությունն ունենա հատուկ ծրագրեր փոքր տնտեսությունների համար, քանի որ շատ համայնքներում փոքր տնտեսությունների բաժինը մեծ է:

Պետությունը պետք է աջակցի գյուղատնտեսությանը: Մարտունիի տարածաշրջանում շատ հողեր չեն մշակվում. երբ ես գնում եմ սեփականատիրոջը ասում՝ տուր հողդ մշակեմ, ասում է չէ: Պետությունը պետք է որոշակի լուծումներ գտնի: Շատ մարդիկ կան, որ պատրաստ են վարձակալությամբ վերցնել, բայց երկարաժամկետ: Եթե այս մարդկանց հնարավորություն տրվի, հաստատ հարյուր հա տարածքի համար ոռոգման խնդիր էլ կլուծեն:

Այժմ ներդրումների և սուբսիդավորման մեծ մասն աջակցություն է խոշոր հողատերերին, արդյունքում **տուժում են փոքր ու միջին գյուղատնտեսները:**

Խոշոր ֆերմերը օգնության կարիք չունի, ինքն իր գլխի ճարը տեսնում է, **թույլերին պետք է օգնել**, պետությունը սովորական գյուղացուն պետք է օգնի

Պետությունը պետք է խթանի նոր գործարանների բացումը կամ հին գործարանների վերագործարկումը:

Պետությունը պետք է հինգ տարին մեկ գա, հողի անալիզ անի. ճիշտ է իմ հողն է, բայց պետության ունեցվածքն է, անպայման պիտի էդ հողն անալիզ անի:

Պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի, համոզի մթերող կազմակերպություններին, արտոնություններ տա:

Պետությունը կոոպերատիվների աջակցության տարբեր ծրագրեր է անում, բայց սայլը տեղից չի շարժվում, համակարգային փոփոխություն չի տեղի ունենում: Այսինքն պետությունը ոչ թե փող պետք է տա, որ ստեղծվեն կոոպերատիվներ ու հետո չաշխատեն, այլ **հասկանա, թե ինչի չեն դրանք աշխատում, ինչ համակարգային փոփոխություններ են պետք:**

Նորությունները միշտ գյուղացիների կողմից ընդունվում է կասկածամտորեն, քանի որ գյուղացին սովոր չէ, որ պետությունը իր համար լավ բան պետք է անի: Այդ իսկ պատճառով անընդհատ բողոքում է խնդիրներից, իսկ ռուսներ կենսախինդ են, անգամ քաղաքաբնակներն են որոշում գյուղատնտեսությամբ զբաղվել: Ակնհայտ է, որ մեզ մոտ խորը հիասթափություն է:

Ես զբաղվում եմ ագրոբիզնեսով և սեփական փորձով կարող եմ ասել, որ գյուղատնտեսությամբ զբաղվողի մոտ պետք է լինի **կամք, ցանկություն**, ինչպես նաև կարգավորող մարմնի միջամտությունը:

Մեզ մոտ շատ են կարծրատիպերն այն մասին, որ գյուղատնտեսությունն առանձնապես օգուտ չի տալիս, **մարդիկ այն որպես շահութաբեր գործունեություն չեն դիտարկում:**

Շատ գյուղացիներ բանջարեղեն էլ չեն մշակում, հարցնում ես՝ ինչու չես լոլիկ մշակում, ասում է շատ աշխատուժ ու ջանքեր է պահանջում:

Գյուղացին մի բանով չպիտի զբաղվի, դա ճիշտ չի. հա՛մ այգի պիտի մշակես, հա՛մ անասուն պահես:

Համայնքը ավելի լավ դարձնելու համար **աշխատատեղեր պետք է բացվեն**, քանի որ երիտասարդ կանայք և երիտասարդ տղամարդիկ գործազրկության պատճառով **անդադար ձգտում են գնալ քաղաք:**

Մարդիկ ավելի շատ գումար են վաստակում որպես **աշխատանքային միգրանտ**, քան որպես գյուղատնտես: Ինչո՞ւ պիտի երկրորդով զբաղվեն:

Երիտասարդներին գյուղում պահելու համար պետք է նրանց համար **գայթակղիչ պայմաններ** ստեղծել. օրինակ՝ սերմացուի, պարարտանյութի, վառելանյութի, տեխնիկայի վարկավորման հնարավորություններ ընձեռել:

Աշխատատեղերի բացակայության պատճառով համայնքները դառնում են ծերացող:

Գյուղատնտեսությունը մարվում է, մարդիկ գյուղերը լքում են: Ապագայի հանդեպ **վստահություն չկա**: Տեխնիկան էլ՝ թանկ է:

Թե՛ գյուղացին, թե՛ մսավաճառը խոսում են **սպանդանոցի հանդեպ վստահությունից**, սակայն տարբեր տեսանկյունից: Գյուղացին ասում է. «Ես ի՞նչ իմանամ իմ միսն են ինձ հետ տալու, թե ուրիշինը», մսավաճառն էլ ասում է, որ

պետությունը բոլոր գործողությունները պետք է կատարի քայլ առ քայլ ու մանրամասն բացատրելով: Մեր ժողովրդի մոտ **վստահության պակաս կա** դեպի նորարությունները: Կոռնիձոր համայնքում գյուղացիները ամեն ինչին հասնում են իրենց միջոցներով ու աշխատասիրությամբ, պետությունը ոչինչ չի անում նրանց համար: Համաճարակի պատճառով երիտասարդները հնարավորություն չունեցան արտագաղթել ու մշակվող հողի տարածքներն աճեցին, բայց **ծախս եկամուտ հարաբերակցությունը գյուղացուն ձեռ չի տալիս: Գյուղացին միշտ տուժում է:**	որոշ հարցեր լուծվում են, բայց որոշներն էլ բաց են մնում: Վաղաշենում 4100 բնակիչ կա, բայց մարդիկ շատ փոքր հողակտորներ ունեն, որոնք միավորելը շատ բարդ է. **մարդիկ մի տեսակ չեն վստահում իրար:** Այս տարի աշխատանքային միգրացիան տուժեց, բայց գյուղատնտեսությամբ մարդիկ չզբաղվեցին, որովհետև անընդհատ սպասում էին, թե երբ ճանապարհները կբացվեն: Սեփականաշնորհման արդյունքում մարդկանց փոքր հողատարածքներ բաժանվեցին, մեր մարզում բավականին մեծ թեքության վրա: Դրանք չեն միավորվում, որովհետև **մարդիկ չեն վստահում իրար**, մի քիչ էլ նախանձում են, համատեղ աշխատելու փորձ չունեն: Գյուղացին պայքարում է, ինչ կարող է անում է, բայց **բոլոր տեղերից խաբում են** նրան: Էսօր գյուղացին շատ **խղճալի վիճակում է**, քանի որ տեխնիկայի խնդիր կա, համակարգման խնդիր կա: Մեզ մոտ պակասում է կառավարության կողմից հետևողականությունը: Հաճախ թվում է, որ ամեն ինչ արվում է փաստաթղթաշրջանառության համար: Արտագնա աշխատանքով մարդիկ կարողանում են իրենց ապահովել՝ **մեքենա են գնում, տուն են կառուցում:** Նման ձևով գյուղատնտեսությունը չի կարող ապահովել, պետք է կից ջերմոցներում արտադրություն անեն, իրենց հողամասերում, որ կարողանան արդյունք ստանան: Մարդիկ նախընտրում են **երկու կիլոգրամ կարտոֆիլ գնել, քան մշակել այդ կարտոֆիլը**, որովհետև ներդրվող ջանքն ու ռեսուրսը չեն համապատասխանում ստացված շահույթին:
Արոտավայրերի մակերեսները Սյունիքի լեռնային շրջաններում նվազել են: Մեզ մոտ հնարավորություն կա անասունների գլխաքանակը մեծացնելու, արոտավայրերի քանակը դա թույլ է տալիս: Սակայն գարնանը, օրինակ, գյուղի արոտավայրերում անասունների լուրջ կուտակում է լինում: Կանոններ են անհրաժեշտ, որոշակի հերթի ապահովում, այլապես արոտավայրերի կորուստ կունենանք: **Ոչխարաբուծությունը շատ ժամանակ է խլում**, դրա համար ես մենակ խոզ եմ պահում: Խոզ էլ շատ չունեմ, որովհետև շատ տեղ չունեմ, իսկ	Մեր հողերը բազմաթիվ պատճառներով **չեն մշակվում:** Մշակվող հողերն էլ **միշտ չէ որ բերրի են:** Այսօրվա դրությամբ այգիների մշակումը մեզ մոտ ավելի հեռանկարային է քան **դաշտավայրային գյուղատնտեսությունը:** Գյուղատնտեսական մեծ տարածքներ ունեն, որոնք անմշակ են: Հող մշակելու համար թե՛ մարդ չկա, թե՛ տեխնիկա: Օրինակ՝ տարեցների և փոքր տարածքների համար հարմարեցված տեխնիկա չկա: Երիտասարդների համար

դրանք շատ են բազմանում:

Մեր պայմաններում մեր **տեղական տեսակներն** են լավը, էդ ձեր ասած ցեղականները կապի վրա պիտի պահես, մենք էդքան անասնակեր չունենք, որ էդ ձեր ասած տեսակները կապի վրա կարողանանք կերակրել: Կամ էդ գոմերը, ո՞վ ա տեսել վեց մետր բարձրությամբ գոմ:

Էդ **խելացի անասնագոմերի իմաստը ես էլ չեմ հասկանում**, ավելի լավ ա գյուղացուն փողը տան, ինքն իր իմացած անասնագոմը կառուցի, մանավանդ մանր անասնապահությամբ զբաղվողը: Դրա արդյունավետությունը մարդիկ պիտի աչքով տեսնեն, բայց ես ոնց հասկանում եմ, էդ խելացի անասնագոմը էդքան արդյունավետ չէ: Օրինակ ես ճագարաբուծությամբ եմ զբաղվում, ինձ խելացի անասնագոմ պետք չի, բայց ճագարաբուծության համար պետությունը ոչ վարկ, ոչ մի աջակցություն չի առաջարկում: Իրացումն էլ ա խնդիր, ես, աջակցության դեպքում, կմեծացնեի իմ ծավալները:

Միևնույն ժամանակ էսօր **անասուն պահողը քիչ** է, եթե շատ լինեին, էս անասնակերն ընդհանրապես չէր բավարարի ու անասնակերը ոչ թե հազար հինգ հարյուր դրամ կլիներ, այլ երեք հազար: Դե **անասնապահությամբ զբաղվելն էլ ձեռնտու չէ**, ովքեր կողքից գործ ունեին, հանգիստ հրաժարվեցին անասնապահությունից, ուրիշ գործով ավելի հեշտ ընտանիքը կպահեն:

Մենք չեն արտադրում անասնակեր: Գետնախնձորը, ճակնդեղը, այլ տարբեր տեսակի մշակաբույսեր կան, որ կարող են որպես անասնակեր օգտագործվել և բարձրացնել բերքատվությունը, սակայն չեն արտադրվում: Քանի դեռ արտագնա աշխատանքը կա, **անասնապահությունն էլ չի զարգանա**:

Լեռնային գոտիներում հարցի լուծումներն են՝ **նորագույն տեխնոլոգիաների** ներդրում, **հարմարված սերմերի** մշակում, նաև **արտադրանքի դիվերսիֆիկացիա**:

ընդհանրապես հրապուրիչ չի գյուղատնտեսությունը:

Արդեն մի քանի տասնյակ տարիներ են, որ լեռնային գոտիներում, որտեղ **առաջ հացահատիկ էր աճում,** հիմա **արդեն փուշ է:** Հազարավոր հեկտարներով տարածքներ մնում են առանց խոտհարքի: Սա ազդում է նաև անասնապահության վրա:

Կարճաղբյուրում լավ գործարան են սարքել ու **մանրաձուկ** են աճեցնում, փոխանակ մանրաձուկը լցնեն լիճ, որ լճում եղած էդ օրգանական նյութով սնվի, լցնում են ցանցի մեջ ու մի հատ էլ հավելյալ արհեստական կեր են տալիս:

Այլ երկրներում կովին չեն պահի եթե համապատասխան քանակության կաթ չտա, դրա համար կովին պահում են լավ, մաքուր, խտացված կերեր են տալիս: Կովին դիտարկում են որպես գործարան:

Մեր մարզում 40000 տղամարդ գնում է արտագնա աշխատանքի, էդ ամբողջ **բեռը մնում է կանանց մնա**, ովքեր չեն կարողանում այդքան հող մշակել:

Երիտասարդ կանանց համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելը խիստ դժվար է, մեր մարզում դա լուրջ խնդիր է: Մտածելակերպ պետք է փոխվի, միայն ծրագրերով կանանց առաջնայնություն տալը բավարար չէ:

Որոշակի սոցիալական խմբեր առանձնացնելու

	քաղաքականությունը կարող է երկսայր սուր լինել. օրինակ՝ **կանանց կամ երիտասարդներին արտոնություններ տալը** կարող է անարդար համարվել այլ խմբերի կողմից:
Հացի մատակարարման առումով մենք կախված ենք արտաքին աշխարհից: Դա արդեն կառավարության հոգածության խնդիր է, ճանապարհները պետք է բաց պահվեն, որ հնարավոր լինի արտաքին մատակարարումը կազմակերպել:	Կալավանի մոդելը համայնքային զարգացման համար իդեալական է, ես հիմա Լճաշենում փորձում եմ էդ մոդելը կիրառել. իհարկե Լճաշենը քառասուն անգամ մեծ է Կալավանից, բայց կարծում եմ պետք է օգտագործել, մուլտիպլիկատիվ էֆեկտով կաշխատի: Նմանատիպ քննարկումներում անհրաժեշտ է ներգրավել մարզպետարանների ոլորտային մասնագետներին, տնտեսվարողներին և ֆերմերներին: Նրանց միջոցով է միայն հնարավոր գտնել ոլորտի զարգացման լուծումներ: Ուզում էի ՏԻՄ-երի դերին անդրադառնալ. **ՏԻՄ-երը շատ բան կարող են անել,** մի գյուղացին չի կարող ամեն ինչի մասին մտածել՝ հա՛մ արտադրի, հա՛մ վաճառի, համ մարկետինգով զբաղվի, շատ բաներ պետք է տալ ՏԻՄ-երին, թող ունենան լավ գյուղատնտեսներ, մասնագետներ, թող մի քիչ վերափոխվեն, իրենք էսօր ունակ չեն, չեն պատկերացնում, բայց կարող են վերապատրաստվել և շատ լավ անել էդ գործառույթը:
Տարբեր համայնքներ առանձնանում են որոշակի գյուղմթերքների արտադրությամբ, **հնարավոր չէ ընդհանուր պլանավորում անել** և ինչ որ բան պարտադրել: Պետությունը պետք է սերտորեն աշխատի համայնքների հետո, լուծի արտաքին քաղաքականության, շուկաներ գտնելու խնդիրները: Արմավիրի մարզում **նպատակահարմար չէ հացահատիկ ցանել,** ավելի շատ լեռնային վայրերում են աճեցնում: Ինսուլիններին աճեցնում էին հացահատիկ, բայց աստիճանաբար կրճատվեցին: Անասնապահությունը արարատյան դաշտավայրում անարդյունավետ է: Յուրաքանչյուր տարածաշրջան **պետք է ունենա իր հիմնական արտադրանքը**, և բոլոր տեսակի ներդրումները, ռեսուրսները պետք է ուղղորդվեն կոնկրետ այդ ուղղության զարգացմանը	Մեր երկրում գյուղատնտեսության ոլորտի զարգացման **երկարաժամկետ պլանավորում է պետք**, մենք Խորհրդային Միությանը ծաղրում էինք, սակայն պլանավորումը խիստ կարևոր է, որ մարդիկ իմանան, ուր են գնում, ինչի կարող են հասնել: **Պետք է ասվի, թե ինչ պահանջարկ է սպասվում**, որ այս տարի այսինչ բանը ցանեք, այսինչ քանակությամբ: Գյուղացին էլ է գլուխ հանում ազատ շուկայական հարաբերություններից: **Գյուղացիները իրենք էլ են խոսում իրար մեջ**, այս տարի կաղամբի գինը լավ էր, մյուս տարի բոլորը կցանեն, գինը կընկնի: Մտածում են ցանեն, թե չցանեն: Եթե մթերող գա ասի սմբուկ ցանի կցանեն, բայց դժվար լսեն որևէ հետազոտողի, որ գալու է ասի՝ էս մեկը ցանի, էն մեկը մի ցանի: Ինչ որոշում էլ կայացվի, **մարտ ամսին պետք է գյուղացուն ասեն, որ իմանա ինչ անի**, ոչ թե տարվա կեսին:

Հավելված 1. Գունային կոդավորում

ՀՀ Արմավիրի մարզ, 23 սեպտեմբերի, 2020թ.

ՀՀ Սյունիքի մարզ, 24 սեպտեմբերի, 2020թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, 25 սեպտեմբերի, 2020թ.

Հավելված 2. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավոր զարգացումների քննարկման սցենարները

Սցենար 1. «Մայրիկը հենց այսպես էլ նկարագրում էր քեզ...» («Տղամարդիկ»)

2020-2030 թվականներին, շարունակաբար վատթարացող բնակլիմայական պայմաններին և արտաքին շուկաներում աննպաստ զարգացումներին զուգընթաց, գյուղատնտեսությունը ձևավորել է Հայաստանի ՀՆԱ-ի շուրջ 15%-ը, (ագրովերամշակման հետ միասին՝ շուրջ 25%-ը), որի շուրջ 60%-ը՝ բուսաբուծության, 40%-ը՝ անասնապահության ճյուղում: Մինչ երկրի յուրաքանչյուր երրորդ բնակիչ աղքատ է, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը 60%-ը չի գերազանցում:

Գյուղատնտեսությունում ֆինանսական միջոցների անբավարարության, ցածր եկամտաբերության, մեքենայական աշխատանքների դժվարամատչելիության, հողակտորների կտրտվածության, գյուղարտադրանքի իրացման դժվարությունների, սահմանամերձ համայնքներում նաև հողի մշակման վտանգների պայմաններում վարելահողերի 1/3-ը նպատակային չի օգտագործվում, իսկ ավելի քան 230 հազ. հեկտար ոռոգելի հողատարածքներից ոռոգվում է շուրջ 155 հազարը: Թեև տարեկան կապիտալ ներդրումները ոռոգման համակարգում կազմել են ՀՆԱ-ի 0.3%-ը, իսկ 37 ՋՕԸ-ի և 2 ՓԲԸ-ի ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը սուբսիդավորվել է ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ տարեկան շուրջ 6.4 մլրդ դրամ ծավալով, ոռոգելի տարածքները 2020-2030թթ. գրեթե չեն ընդլայնվել: Միաժամանակ, գործող համակարգերում բարելավվել են ջրամատակարարման ծառայությունները, բարձրացել է սակագների ծախսածածկումը: Ջանքեր են գործադրվել ոռոգման մեխանիկական եղանակից ինքնահոսին անցնելու, դեգրադացված հողերը շրջանառության մեջ ներառելու, ոռոգման ջրի բարձր պահանջարկ ունեցող հողատարածքներում մշակաբույսերի ճիշտ ընտրության և մշակության ջրախնայողական տեխնոլոգիաների կիրառման ուղղություններով: ՀՀ պետական բյուջեի հաշվին 2 մլրդ դրամ ծավալով սուբսիդավորվել են տարեկան 1600 հա հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալված հողերի բարելավման ծրագրի շնորհիվ շուրջ 8 հազ. հա հողատարածքներում կարգավորվել են գրունտային ջրերի մակարդակները, կանխարգելվել է երկրորդային աղակալումը, կանխվել է բնակավայրերի ջրակալումը:

Հաշվի առնելով գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը՝ պետբյուջեի հաշվին ապահովագրական վճարի մասնակի սուբսիդավորման շնորհիվ աստիճանականորեն ներդրվել է նախ, կամավոր, ապա, պարտադիր ապահովագրական համակարգը: Արտահանող ընկերությունները ապահովագրվում են նախաարտահանման և մատակարարված ապրանքի դիմաց գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից:

Բնակլիմայական ռիսկերի մեղմելուն նպաստել են մասնագիտական, աղետների ռիսկերի կառավարման և այլ ուղղություններով խորհրդատվական ծառայությունները, այդ թվում՝ սերմնաբուծության և սերմնարտադրության, սերմերի որակի ստուգման ու փորձարկման, բարձր վերարտադրության սերմերի օգտագործման, ցածրորակ սերմերի և տնկանյութի օգտագործումը կանխելու, նոր բնակլիմայական պայմաններին հարմարվող սորտերի կազմի ընդլայնման, բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրերի, անասնապահության ոլորտում տնտեսությունների խոշորացման և առևտրային կազմակերպությունների ձևավորման, կոոպերացիային ուղղված գիտահետազոտական ծրագրերի իրականացման, նորամուծություններին, տեխնիկական վերազինմանը և տեխնոլոգիական գործընթացների արդիականացմանն ուղղված ծրագրերը:

Աղքատության բարձր մակարդակի պայմաններում վառելափայտը մնում է գյուղական և քաղաքային բնակչության ստվար շերտերի գոյատևման մատչելի միջոց: Անտառային ռեսուրսներից համայնքների մեծ կախվածության և գերշահագործման արդյունքում խիստ վտանգված են անտառային էկոհամակարգերը: Ապօրինի հատումները տասնապատիկ գերազանցում են թույլատրված ծավալները: Թեև մեղվաբուծությունը և դեղաբույսերի, հատապտուղների, վայրի պտուղների, սնկերի հավաքումը, վերամշակումը և իրացումը զգալի եկամուտներ են ապահովում գյուղական բնակչության համար, այդուհանդերձ, բնափայտի գերհատումները և անտառպաշտպանական միջոցառումների բացակայությունը, անտառային հողերի օգտագործումը հողագործության, անասնապահության, արդյունաբերության նպատակներով, վնասատուներն ու հիվանդությունները, գերարածեցումը, անվերահսկելի հրդեհները, հողմերն ու երաշտը հանգեցրել են անտառների ընդհանուր կենսազանգվածի և պաշարների կորստի, կլիմայական պայմանների փոփոխության, հողերի դեգրադացման և անապատացման:

2026թ. ապրիլին Հայաստանի սահմաններին սկսված լայնածավալ ռազմական գործողությունները նոր մարտահրավեր դարձան երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ստեղծված իրավիճակում երկրի գյուղատնտեսությունը պիտի արձագանքեր պարենային անվտանգության մարտահրավերին:

Սցենար 2. «Բա կարծում ես մի մարդով եզ շուռ տալը հե՞շտ է» («Մենք ենք, մեր սարերը»)

Շուրջ 340,000 գյուղացիական տնտեսություններից յուրաքանչյուրին միջինում բաժին է ընկնում 1.4 հա հողատեսք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող, ինչը բացառում է ինտենսիվ տեխնոլոգիաներն ու արդյունավետ տնտեսավարումը: Շուրջ 1,2 մլն մասնատված 3-4 հողակտորի վրա ցածր մրցունակությամբ բնամթերային տնտեսություններն արտադրում էին գյուղարտադրանքի շուրջ 97%-ը: Գյուղաշխատանքների մեքենայացման ցածր մակարդակի, ագրո- և զոո-տեխնիկական կանոնների թերի կատարման, փոխառու և հիմնական միջոցների սղության, արդիական տեխնոլոգիաների ներդրման դանդաղ տեմպերով պայմանավորված՝ աշխատանքի արտադրողականությունը խիստ ցածր էր, ինչը մարտահրավեր էր իրացմանը: 2022-2028թթ. բնակլիմայական նպաստավոր պայմաններում անգամ գյուղարտադրության բարձր ռիսկայնության և ապահովագրության բացակայության, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և սպասարկող ենթակառուցվածքների ձևավորման դանդաղ տեմպի պատճառով ներդրողների համար ոլորտը գրավիչ չէր: Գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղություններ դարձան պետական ֆինանսական աջակցությունն արտադրությանը, վերամշակմանն ու արտահանմանը և կոոպերացիայի խթանումը:

Պետական բյուջեն սուբսիդավորում էր գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույքը. համապատասխան ուսուցում անցած տնտեսվարողներին մինչև 10 մլն դրամ վարկը տրամադրվում էր 5% տոկոսադրույքով: Տարեկան շուրջ 1.1 մլրդ դրամով սուբսիդավորվում էր 90 մլրդ դրամ ընդհանուր ծավալով շուրջ 100,000 վարկ: Մասնակիորեն սուբսիդավորվում էր հողօգտագործողների՝ հանքային պարարտանյութերի և դիզվառելիքի ձեռքբերման ծախսը, տարեկան համապատասխանաբար 2.5 մլրդ և 330 մլն դրամ ծավալով: Արդյունքում 1 կգ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութը հասանելի էր 140 դրամով, իսկ 1լ դիզվառելիքը՝ 380 դրամով: Մասնակիորեն սուբսիդավորվում էր ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի, առվույտի բարձր վերարտադրության սերմերի ձեռքբերումը, ինչի արդյունքում ցորենի ինքնաբավության մակարդակը 2029թ. հասավ 65%-ի: Մասնակիորեն սուբսիդավորվում էին նաև տոհմային անասնագլխաքանակի ձեռքբերման, արհեստական սերմնավորման և թռչնամսի արտադրության ծախսերը, կաթիլային ոռոգման համակարգերի և հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքը, արդիական տեխնոլոգիաների ձեռքբերումը և գյուղտեխնիկայի լիզինգը, ոռոգման ջրի արժեքը, չմշակվող, դեգրադացվող հողերի վերականգնման և օրգանական գյուղատնտեսության զարգացման ծախսերը, վնասատուների դեմ պայքարի միջոցների և նոր հիմնվող մինչև 500մ2 ջերմատների, կաթի հավաքման սառնարանային կետերի և վերամշակման արտադրամասերի կառուցման ծախսերը: Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը մասնակիորեն սուբսիդավորում էր հումքի մթերման նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերը, կաթնամթերքի վերամշակման, մրգերի և բանջարեղենի պահածոյացման, գինու արտադրության, ձկնաբուծության և թռչնաբուծության, սառնարանային և ջերմոցային տնտեսությունների ծախսերը: Սուբսիդավորման արդյունքում վարկառուի կողմից վճարվող տարեկան տոկոսադրույքը չէր գերազանցում 3%-ը: Մասամբ սուբսիդավորվում էին գյուղապահովագրական վճարներն ու կանխավճարները, արտահանմանն ուղղված վարկի տոկոսադրույքը: 2026թ. ստեղծվեց Գյուղատնտեսական վարկերի երաշխիքային հիմնադրամ: Արդյունքում, գյուղատնտեսության վարկավորման ծավալն անցավ՝ 150 մլրդ դրամը, իսկ դրա հարաբերակցությունը ՀՆԱ-ին՝ 20%-ը: Մտահոգիչ էր մնում գործընթացի թափանցիկությունը և կոռուպցիան:

Ապրանքարտադրողների արտոնյալ վարկավորման, նյութատեխնիկական ռեսուրսների տրամադրման և պետական աջակցության տարբերակված քայլերն ուղղվել են խթանելու հողերի և բնական ռեսուրսների համատեղ օգտագործումը, տնտեսությունների միավորումն ու խոշորացումը, կամավոր կոոպերացիան: Մինչև 2030թ. ստեղծվել են սպառողական, արտադրական, մատակարարման, վերամշակող, իրացնող, սպասարկող, այգեգործական, արոտօգտագործողների ավելի քան 500 գյուղատնտեսական կոոպերատիվներ: Մասնակից ֆերմերներին տրամադրվել են սերմեր, տնկիներ, անասուններ, պարարտանյութ, վառելիք, գործիքներ, ագրոտեխնիկա, սարքավորում, լաբորատոր և փաթեթավորման սարքեր, համապարփակ դասընթացներ և խորհրդատվություն, մշակվել են ապրանքանիշեր՝ արժեշղթաներ ներկայացնող կոոպերատիվների համար: Երկրում ստեղծվել են գյուղարտադրանքի առաջնային պահպանման և վերամշակման նոր ենթակառուցվածքներ՝ սառնարաններ, սպանդանոցներ, չորանոցներ, փոխադրման նոր ավտոշարակազմեր: Հիմնանորոգվել են ավտոճանապարհներ, հատկապես հեռավոր լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում: Այդուհանդերձ, խոշորացումը տևական գործընթաց է: Արտադրողականության բարձրացման արդյունքում շատ ֆերմերներ դարձել են վարձու աշխատող, գյուղատնտեսական կոոպերատիվները հայտնվել են ավելացված արժեքի հարկման դաշտում և անհավասար մրցակցային պայմաններում:

2020-2022թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նոր ալիքը, նավթի գների անկումը, ՌԴ-Վրաստան հարաբերությունների վատթարացման նոր ալիքը, երկրի հյուսիսարևելյան սահմանին լարվածության սրացումը լրջագույն մարտահրավերներ ստեղծեցին Հայաստանի գյուղատնտեսության համար:

Սցենար 3. «Կեղնի՞ մե օրմ, օր տեսնիմ էս աշխարհն ինչի՞ է ըսպես ծուռ...» («Մեր մանկության տանգոն»)

Աշխարհագրական դիրքի, ուղղաձիգ գոտիականության, ռելիեֆի կտրտվածության, սակավահողության և հողի ոչ բավարար խոնավության պատճառով Հայաստանը երկրագործության համար ծայրահեղ ռիսկային երկիր է: Հողերի ավելի քան 70%-ը ենթակա է անապատացման և դեգրադացիայի: 2020-2024թթ. գյուղատնտեսությանը աննախադեպ կորուստներ ու վնաս հասցրին տարերային, տեխնածին և կլիմայի փոփոխության հետ կապված աղետները, դրանց քանակն ու ինտենսիվությունը զգալիորեն ավելացան: Երաշտից, կարկուտից, հեղեղումներից, գարնանային ցրտահարություններից և սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը կազմեց ավելի քան 40 մլրդ դրամ: Տարեկան վնասվում էր մշակաբույսերի և բազմամյա տնկարկների շուրջ 40,000 հա տարածք՝ հիմնականում մարտ-հոկտեմբեր ամիսներին, յուրաքանչյուր 5-րդ համայնքում, կարկտահարության պատճառով: Բերքը կորցնում էր ապրանքային տեսքը, իրացումը՝ դժվարանում, եկամուտները՝ նվազում, իսկ միջին լեռնային գոտում բերքի կորուստը կազմեց մինչև 100%: Այգիների վերականգնումը պահանջում էր ավելի քան մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ: Հովտային գոտիներում կտրուկ ավելացան ուշ գարնանային ցրտահարությունների հաճախականությունն ու ինտենսիվությունը, վնասվում էին մատղաշ մշակաբույսերի սածիլները, ծիլերը, բույսերի ծաղիկները: Կլիմայի փոփոխության արդյունքում կրճատվեցին ջրային ռեսուրսները: Վտանգվեցին բուսաբուծության արտադրանքի շուրջ 70%-ը ապահովող ոռոգվող հողերը. շուրջ 10%-ով կրճատվեց արոտավայրերի մակերեսն ու բերքատվությունը, իսկ ենթալպյան և ալպյան գոտու առավել արժեքավոր արոտավայրերինը՝ 20%-ով: Շուրջ 10%-ով նվազեց խոտհարքների բերքատվությունը, կրճատվեցին կերարտադրության ծավալները, ավելացան կենդանիների հիվանդությունները, բնական-օջախային և տարափոխիկ վարակների տարածումը: Աննախադեպ վնաս պատճառեցին մի կողմից մշակաբույսերի աճի առաջին փուլի հետ համընկնող գարնանային երաշտները, մյուս կողմից՝ գարնանային վարարումներն ու հեղեղումները: Հորդառատ անձրևների հետևանքով սողանքներն ու սելավները շուրջ 100 հազար հա հողերի տարեկան շուրջ 25 մլն ԱՄՆ դոլարի վնաս էին հասցնում: Արարատյան հարթավայրում ձկնաբուծական տնտեսությունների աննախադեպ տեմպերով զարգացումը հանգեցրեց Արարատի և Արմավիրի մարզերում ոռոգման, խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող բազմաթիվ խորքային հորերի թողունակության նվազմանը:

Աղետների կառավարումը, կանխումն ու կանխարգելումը, հետևանքների նվազեցումն ու վաղ ազդարարումը դարձան գյուղարտադրանքի կորուստների նվազեցման գերակա ուղղություն: 2022-2026թթ. ավելացան հակակարկտային հրթիռային համակարգերը, գազագեներատորային և ազդանյութով աշխատող կայանքները վերազինվեցին և տեղակայվեցին սահմանամերձ գոտիներում՝ կանխելով մթնոլորտային ճակատային գործընթացների հետագա զարգացումը, պաշտպանելով մշակվող տարածքների 20%-ը և կրճատելով կարկտահարության պատճառած միջին տարեկան կորուստները ավելի քան 90%-ով: ԵԱՏՄ անդամ երկրներից մատչելի պայմաններով ձեռք բերվեցին նոր սերնդի պայքարի միջոցներ: Հակակարկտային կայանքների պաշտպանությունից դուրս մնացած գոտիներում վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման շնորհիվ (վարկը տրամադրվում էր 2% տոկոսադրույքով) հակակարկտային պոլիմերային հիմքով ցանցերով 100% արդյունավետությամբ պաշտպանվել է շուրջ 1000 հա խաղողի և պտղատու այգի:

Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի պետական սուբսիդավորման արդյունքում հանրապետության բարդ ռելիեֆ ունեցող հողատարածքների զգալի մասը ոռոգվում էր: Ջրի տնտեսումը հասավ ավելի քան 70%-ի, ոռոգման ծախսերը էականորեն կրճատվեցին, իսկ բերքատվությունն ավելացավ 20-50%-ով:

Զարգացավ բնակլիմայական պայմաններին հարմարված սերմացուների սերմնաբուծությունը և ավելացավ անասնագլխաքանակը, բարելավվեցին տոհմային ու մթերատու հատկանիշները: Գետերի ափերին և դաշտերի եզրերին տնկվեց ավելի քան 50,000 ծառ: Բանջարաբուծության մեջ ծավալվեց վաղ գարնանը պոլիէթիլենային թաղանթների տակ բույսերի աճեցումը: Մասնակիորեն սուբսիդավորվում էր փոքր ջերմատների կառուցումը, իսկ արևային էներգիայով աշխատող մեծ ջերմատնային տնտեսությունների կառուցման համար անհրաժեշտ հիմնական սարքավորումների և կոնստրուկցիոն նյութերի ներմուծման համար հարկային էական արտոնություններ սահմանվեցին: Հարկային արտոնություններ և սուբսիդավորում էր տրամադրվում նաև գյուղարտադրության և վերամշակման կոոպերատիվներին՝ լեռնային և սահմանամերձ համայնքներում վերականգնվող՝ արևի, հողմի, երկրի ընդերքի, ջրի էներգիայի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու համար:

Շրջադարձային նշանակություն ունեցավ դաշտային պայմաններում բերքի ստացման ավտոմատ կառավարման համակարգի ներդրման համար կոոպերատիվներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի պետական սուբսիդավորումը (վարկեր՝ 0.5% տոկոսադրույքով): Ավելի քան 300 կոոպերատիվ հնարավորություն ստացավ վեգետացիայի ընթացքում ՏՀՏ տեխնոլոգիաներով հետևել բույսերի աճին ու զարգացմանը, ավտոմատ կարգավորել խոնավությունն ու ոռոգումը, սնուցումն ու պարարտացումը, բուժումը:

Սցենար 4. «Էդ մեքենան ինչքան քոնն է, էդքան էլ իմն է, հասկացա՞ր...» («Խոշոր շահում»)

2020-2027թթ. յուրաքանչյուր երրորդ հայաստանցի բնակվում էր գյուղում: Գյուղատնտեսությունում զբաղված էր շուրջ 400,000-ը՝ երկրում զբաղվածների մեկ երրորդը, գյուղերում զբաղվածների 80%-ը: Գյուղարտադրանքը թողարկում էին հիմնականում տնային տնտեսությունները: Տնտեսությունների փոքր չափերի պատճառով, սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէր, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և վճարովի ծառայություններ է տրամադրում: Փոքր հողակտորների և մասնատվածության պայմաններում մեծանում էր ագրեգատների պարապ ընթացքը: Գյուղտեխնիկայի շուրջ 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել էր: Մաշված և անսարք մեքենատրակտորային հավաքակազմը, նորոգման և տեխսպասարկման մեծ ծախսերը, վառելանյութի և քսայուղերի գերածախսը, բերքի գերնորմատիվային կորուստները տեխնիկայի օգտագործումը ցածր արտադրողական և թանկ էր դարձնում: Մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով մշակության մի շարք գործընթացներ չէին կատարվում կամ կատարվում էին ձեռքով՝ խիստ բարձրացնելով աշխատատարությունը:

Գյուղտեխնիկայի ձեռք բերման ֆինանսական վարձակալության՝ լիզինգի մասնակի սուբսիդավորման (վարկը՝ 2% տոկոսադրույքով) արդյունքում գյուղկոոպերատիվները ձեռք բերեցին տրակտորներ, կոմբայններ, հավաքիչ-մամլիչներ, տրակտորային շարքացաններ, գութաններ, խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ և քանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզներ, սրսկիչներ, այդ թվում՝ լեռնային տեղանքին հատուկ: Ի լրումն մեքենայական աշխատանքների՝ կոոպերատիվները մատուցում էին արտադրատեխնիկական սպասարկման և մարկետինգի ծառայություններ: 2022-2028թթ. արդյունավետ մենեջմենթ և նոր տեխնիկական միջոցներ ունեցող գյուղմեքենայական աշխատանքներ իրականցնող տասնյակ կոոպերատիվների շնորհիվ շուրջ 30%-ով բարձրացավ արտադրողականությունը, 20%-ով՝ մշակաբույսերի բերքատվությունը, նվազեց մեքենայական աշխատանքների ծախսը, մշակաբույսերի ցանքատարածությունները դարձան 450,000 հա, ավելացան տեղական արտադրանքի և վերամշակման ծավալները, տեղական արտադրանքը դարձավ ավելի մրցունակ:

Պետությունը մասնակիորեն սուբսիդավորեց առնվազն 15 հա հողատարածք ունեցող տասնյակ կոոպերատիվների՝ գարնանացան ցորենի, ոլոռի, սիսեռի, ոսպի, գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի և հնդկացորենի ցանքաշրջանառությունների կիրառմամբ արտադրության ծախսերը: Արդյունքում ավելացավ համախառն բերքը, հացահատիկային, հատիկաընդեղենի և կերային մշակաբույսերի բերքի ինքնաբավությունը, նվազեց ներկրումը, զարգացավ արտադրման, վերամշակման և սպառման արժեշղթան:

Մասնակիորեն սուբսիդավորվում էր նաև սերմնաբուծությունն ու արհեստական սերմնավորման կայանների վերազինումը, բարձր վերարտադրության սերմերի և տոհմային անասնագլխաքանակի ձեռքբերումը: Համատարած սկսեց կիրառվել արհեստական սերմնավորումը: Խստացվեց գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների հսկողությունը, դրանց բռնկումների կանխարգելման աշխատանքները:

Կաթի հավաքման սառնարանների, սպանդանոցների, անասնաբուժական դեղամիջոցների տեղական արտադրությունը սուբսիդավորելու, ալպիական արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման, տարածաշրջաններում պետական անասնաբուժական ծառայությունների ապապետականացման, մասնավոր անասնաբուժական ծառայությունների վարկավորումը սուբսիդավորելու, Սիմենթալ, Հոլշտեն, Շվից ցրտադիմացկուն, անասնաշենքերի պահանջ չունեցող, անգամ ձյունածածկ տարածքներում բնական կերահանդակներում արածեցվող Հայլենդյան ցեղերի տավարի ներմուծման, իրանական սպառողների պահանջարկը բավարարելու պայմանների ստեղծման, բրդի և կաշվի պահանջարկը խթանող գորգագործության, կոշիկի և հագուստի արտադրության զարգացման արդյունքում խոշոր և մանր եղջերավորների գլխաքանակը 2027 թվականին կրկնապատկվեց՝ հասնելով շուրջ 3 միլիոնի:

Նախընտրելի մասնագիտացումը խթանելու նպատակով 2022-2026թթ. սուբսիդավորման բոլոր ծրագրերն իրականացվեցին՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները և համաչափ զարգացման սկզբունքը, գոտիականության տարբերակված, հասցեական մոտեցումները. սուբսիդավորվում էր առավել բարենպաստ պայմաններ ունեցող և տվյալ գոտու համար համեմատաբար բարձր ավելացված արժեք ապահովող մթերքների արտադրությունը: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման արդյունքում վարկերը տրամադրվում էին 3% տոկոսադրույքով:

Սցենար 5. «Ուրեմն ես՝ Փարսադանի տղա Մուրադս, գամ հասնեմ էստեղ՝ ինձ ասեն «նյե՞տ»...» («Հարսնացուն հյուսիսից»)

2022-2028թթ. գյուղատնտեսության ոլորտում իրականացված մի շարք պետական ծրագրեր նպաստեցին տնտեսությունների խոշորացմանն ու կոոպերացիային, ոռոգման համակարգերի բարելավմանը, արտադրության, վերամշակման և կառավարման նոր տեխնոլոգիաների ներդրմանն ու հզոր ենթակառուցվածքների ստեղծմանը, տեխնիկական վերազինման ու բնակլիմայական աղետների ռիսկերի կառավարմանը, կամավոր ապահովագրական համակարգի ներդրմանը:

Գյուղատնտեսությանը պետական ֆինանսական աջակցությունն ու սուբսիդիաները տրվում էին բացառապես կոոպերատիվների միջոցով: Այգեգործության, ձկնաբուծության և մեղվաբուծության նորաստեղծ կոոպերատիվներին, միավորումներին և ընկերություններին տրամադրվում էր հսկայածավալ աջակցություն: Երիտասարդ և կին ֆերմերների համար սահմանվեցին վարկերի տրամադրման արտոնյալ պայմաններ: Տնտեսությունների խոշորացման արդյունքում հարկային դաշտում հայտնված ֆերմերների միավորումների և վերամշակող ընկերությունների միջև երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունները դարձան համատարած պրակտիկա: Արդյունքում ավելացան լոլիկի, պտղի, խաղողի և կաթի արտադրության ծավալները: Նշված ժամանակահատվածում ավարտվեց գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը, ստեղծվեց հավաքման կետերի և գյուղմթերքների իրացման տեղեկատվական կենտրոնների ազգային ցանց: Երևանում, Գյումրիում և Վանաձորում ստեղծվեցին գյուղմթերքի մշտական տոնավաճառներ:

2024թ. ներդրվեց կարևորագույն գյուղմթերքների երաշխավորված գների համակարգը: Պետությունը կոոպերատիվներից երաշխավորված գնով և չափաքանակով գնում էր գյուղարտադրանքը՝ կանխելով սահմանված նվազագույնից գների նվազումը: Մսամթերքի և կաթնամթերքի շուկայի կարգավորման նպատակով սահմանված գներով վերամշակողներից պետական պահուստի համար գնվում էր կարագ և մսամթերք: Վերջինները կաթ և միս արտադրողներին վճարում էին սահմանված նվազագույն գինը: Երաշխավորված գների և չափաքանակների մասին գյուղմթերք արտադրողները տեղեկացվում էին տարվա սկզբից երեք ամիս առաջ: Ոչ բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող գոտիներում պետությունն իր վրա վերցրեց գյուղվարկերի ևս 2%-ի մարումը: Այդուհանդերձ, անգամ տարածաշրջանում հարաբերական կայունության պայմաններում գյուղմթերքի արտահանումը մնում էր սահմանափակ:

2025 թվականից պետական աջակցությունը մեծապես ուղղվեց արտաքին շուկաներում գյուղմթերքի մրցունակության բարձրացմանն ու արտահանման խթանմանը: Արտաքին շուկաների պահանջներին բավարարող որակի, սառեցման, փաթեթավորման և պահեստավորման ապահովման նպատակով Գյուղատնտեսության զարգացման ներդրումային հիմնադրամի միջոցով իրականացվում էին վենչուրային ծրագրեր: Պետական աջակցությամբ ձևավորվեց հայկական ապրանքանիշ: Արտերկրի ցուցահանդեսներում հայկական գյուղմթերքի գրավիչ ներկայացման նպատակով պետությունը համաֆինանսավորում էր տաղավարի ծախսը: Մեղվաբույծներին տրամադրվում էր խորհրդատվական և տեխնիկական, ինչպես նաև մեղրի և զուգակցվող արտադրանքների (մեղրամոմ, մեղվի թույն) արտադրության և արտահանման աջակցություն:

Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցով սուբսիդավորվում էին արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերությանը, պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրությանն ուղղվող վարկերը՝ 3%, իսկ սահմանամերձ բնակավայրերում՝ 7% տոկոսային կետի չափով: Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը տրամադրում էր ապահովագրություն՝ գյուղմթերք արտահանող ընկերությունների կողմից մատակարարված ապրանքի դիմաց գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից: Արտահանողներին առաջարկվում էր նաև նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայություն՝ վկայագրի հիման վրա, առանց գրավի, բանկային կարճաժամկետ ֆինանսավորման ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Միաժամանակ, Հայաստանը կատարել է ԱՄԿ առջև ստանձնած պարտավորությունները, գյուղարտադրանքի արտահանման համար լրավճար չի տրամադրել, առանձին ապրանքներին աջակցությունը չի գերազանցել գյուղարտադրության արժեքի 5%-ը: Կատարվել են նաև ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ գյուղապրանքներ արտադրողներին ուղղակի վճարումներ չեն կատարվել, ԵԱՏՄ անդամ-պետությունների գնորդներին գյուղապրանքներ չեն առաջարկվել դրանց շուկայում գներից ցածր գներով: Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում միջպետական և

միջազգային, այդ թվում՝ ԵԱՏՄ և ԵՄ ստանդարտների ներդրմանը զուգահեռ, հստակեցվեցին և պարզեցվեցին գյուղմթերքների արտադրության, վերամշակման փաստաթղթաշրջանառությունը, մակնշման, սերտիֆիկացման և արտահանման մի շարք կարևոր ընթացակարգեր, թույլտվություններ: Շատ դեպքերում կիրառվում էր մաքսային պարզեցված ռեժիմ: Արդյունքում, Հայաստանի արտահանման կառուցվածքում գյուղարտադրանքի տեսակարար կշիռը 2029թ. հասավ շուրջ 40%-ի:

Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Հավելված 5. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները

Անորոշություններ/առանցքներ

1. Ներմուծման փոխարինման և/կամ արտահանման շուկաներում պայմաններ՝ գլոբալ և տարածաշրջանային ճգնաժամեր և զարգացումներ (նպաստավոր-աննպաստ)
2. Բնակլիմայական պայմաններ (նպաստավոր-աննպաստ)

Կոոպերացիայի առկայությունը և արդյունավետությունը

- Կոոպերացիայի միջոցով մասնակիցների մրցունակության բարձրացմանը նպաստող իրավական կարգավորումը.
- Կոոպերացիայի մասնակիցների կարողություններ.
- Լիդերի դերը կոոպերացիայում.
- Ֆինանսական միջոցների հասանելիություն (ուղիղ ներդրումներ, սուբսիդիաներ, մատչելի փոխառու միջոցներ).

Պետական օժանդակության ծրագրեր (բարելավում)

- Առկա ծրագրեր.
- Առկա նախաձեռնություններ.

Ենթակառուցվածքներ

- Ոռոգման համակարգ.
- Ֆիզիկական ենթակառուցվածք (ջրագծեր, պոմպակայաններ).
- Կառավարում, ՋՕԸ.
- Հաշվառում և հավաքագրում.
- Ջրի և ջրամատակարարման որակ.

Տրանսպորտային ենթակառուցվածքներ

- Ավտոմոբիլային (ներհամայնքային, միջհամայնքային, հանրապետական).
- Միջդաշտային.
- Օդային տրանսպորտ (գին).
- Երկաթգիծ (գին, ծածկույթ). ներպետական և միջպետական.
- Սահմանային անցակետեր (ընթացակարգեր, ֆիզիկական հասանելիություն (օր. Է Լարս)).

Առաջնային պահպանման և վերամշակման ենթակառուցվածքներ

- Կաթի պահպանման սառնարան, միս՝ սպանդանոց, միրգ՝ չորանոց, սառնարան, ներառյալ մեքենաներով փոխադրումը.

Արտադրությանը նպաստող միջոցներ

- Ժամանակակից գյուղտեխնիկա, արտադրության այլ/լրացուցիչ միջոցներ.
- Արհեստական սերմնավորման կայաններ.
- Սերմնաբուծարաններ, տնկարաններ.

Վարչարարություն

- Ընթացակարգեր՝ փաստաթղթեր, թույլտվություններ, սերտիֆիկացիա, մակնշում, ներքին շուկա, սննդի անվտանգություն, երաշխիքներ.

- Պետական գնումների մրցույթների մասնակցություն՝ ընթացակարգեր, էլեկտրոնային գնումների համակարգ (մեխանիզմներ).
- Առկա ընթացակարգերի վերաբերյալ իրազեկում, իրազեկվածություն.
- Սննդի անվտանգության երաշխիքներ (ներդրումներ ապահովելու առումով միջոցներ և գիտելիք).

<u>Մարքեթինգ և իրացում (հանրային ծառայություններ բիզնեսին)</u>

- Արտադրական միջոցների ձեռքբերման այլընտրանքների առկայություն և դրանց մասին իրազեկում.
- Տեղեկատվական ենթակառուցվածքներ (ձեռքբերման).
- Շուկաների մասին տեղեկություններ.
- Տեղեկատվության հասանելիություն.
- Շուկաների վերլուծություններ (որտեղ են ապրանքները մրցունակ).
- Իրացման կազմակերպման պայմանագրային հարաբերությունների զարգացում/խթանում/խրախուսում և օրենքի գերակայություն (contract enforcement), պայմանագրերի իրականացման երաշխիքներ (արդարադատություն և ֆինանսական համակարգ՝ բիզնես օմբուցմեն, արբիտրաժ).
- «սուբսիդավորում» (անուղղակի).
- Իրացման կանխատեսելիության խնդիր. իրացման գործընթացում որոշակիության ավելացում.
- Մարքեթինգային գրասենյակներ. մթերման, հավաքման կայաններ, փոքր ֆերմերներից հավաքում, փաթեթավորում.
- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մարզային կառույցներ.
- Գյուղմթերքի ձեռքբերման և արտահանման գործընթացում մրցակցային պայմաններ (մոնոպոլիա, արտոնություններ, օլիգոպոլիա, հակամրցակցային պրակտիկա (օր.՝ կաթնամթերքի ոլորտում), արտահանման խոչընդոտներ ներքին միջավայրում).
- ԵԱՏՄ (արտահանման և վերաարտահանման պրակտիկա՝ Թուրքիա-Ռուսաստան շղթա).
- ԵՄ՝ ներդրումների ստանդարտներին համապատասխանեցման համար (սերտիֆիկացում, ստանդարտներ), միջնորդներ (շուկայի միջնորդավորում), շուկայում դիրքի խնդիր
- Փոխադարձ երաշխիքների խնդիրը ողջ շղթայում.
- Արտահանման պայմաններին պետական աջակցության մեխանիզմներ.
- Փոքր vs. մեծ. ստանդարտների խնդիր (ստանդարտներ պահպանման կատարման ապահովում).

<u>Գոտիական առանձնահատկություններ</u>

- Բնակլիմայական պայմաններ.
- Ենթակառուցվածքներ՝ գոտուն բնորոշ.
- Տեխնոլոգիաներ.
- Պետական աջակցություն՝ ըստ գոտիների (այդ թվում՝ ֆինանսներ, արտոնություններ).
- Ունիվերսալ vs. մոդելներ.
- Մշակույթ, սովորություններ, ավանդույթներ, պրակտիկա.
- Մրցակցային առավելություններ (օր՝. ջրի, օդի, հողի որակ, որը հիմք կարող է հանդիսանալ օրգանական գյուղատնտ. համար).

<u>Կանանց ներգրավվածությունը գյուղատնտեսությունում</u>

- Որոշումների կայացում.

<u>Երիտասարդների ներգրավվածություն</u>

<u>Ժամանակակից տեխնոլոգիաներ</u>

- Կարկտապաշտպան ցանցեր.

- Հիդրոպոնիկա.
- Ինտենսիվ այգիներ.
- Վերականգնվող էներգիայի կիրառում.
- Արևային էներգիայով ջերմոցներ.
- ՏՀՏ կիրառում գյուղատնտեսական գործունեությունում.

Բնապահպանական խնդիրներ

Գյուղատնտեսության հարկում

- Գյուղատնտեսական առաջնային արտադրանքի հարկում (մարտահրավերներ և հնարավորություններ).
- Նպատակային սուբսիդավորումներ.

Գյուղատնտեսության ապահովագրում

- Ռիսկերի դիվերսիֆիկացիա (ռիսկերի պատասխանատվության բեռի վերաբաշխում, արտադրող, պետություն, ապահովադիր, ապահովագրող).
- Ապահովագրությունը որպես ծախս.
- Պետության դերը.
- Ճիշտ իրազեկում և օգուտների ներկայացում (ինչ է շահում գյուղացին).

Գյուղատնտեսական կրթություն

Գյուղատնտեսական խորհրդատվություն

- Նոր հմտություններ և գիտելիք.
- Պրակտիկա.
- Նորարարություն.
- Մասնագիտական կադրերի առկայություն.

Գլոբալ և տարածաշրջանային ճգնաժամեր և զարգացումներ

- ՌԴ ճգնաժամի օրինակը.

Ֆինանսավարկային խոչընդոտներ

Բնակլիմայական աղետներ

- Երաշտ, ցրտահարություն, կարկտահարում.

Հակամարտություն, լարվածության սրում կոնկրետ տարածքներում

Լայնածավալ ռազմական գործողություններ

Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը